Թամարա Տոնոյան

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Ք Ո Լ Ե Ջ

ԵՐԵՎԱՆ
2003

© Copyright Ֆինանսաբանկային քոլեջ

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26

Հեռ. (3 741) 537788
Հեռ./ֆաքս (3 741) 537767
Web-site: http//:www.fbc-edu.am
E-mail: staff@fbc-edu.am

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© ՖԲՔ (Ֆինանսաբանկային քոլեջ)

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

ՀայաստանիՀանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ
Թ. Տոնոյանի «Տնտեսագիտության հիմունքներ» ուսումնական նյութի

Հեղինակը չորս բաժնով ներկայացնում է «Տնտեսագիտության հիմունքներ» առարկան:

Առաջին բաժնում շարադրված է տնտեսագիտության տեսության ձևավորման և զարգացման, արդի տնտեսության ընդհանուր բնութագիրը, հիմնական հասկացությունները, որոնք հիմք կամ ուղեցույց են հանդիսանում ընթերցողների համար հաջորդ գլուխներում մեկնաբանվող միկրո և մակրոտնտեսագիտության էության մեջ խորանալիս: Տեսական առումով զգացվում է հեղինակի ջանասերտ վերաբերմունքը խնդրո առարկա հարցին, խնդիրը ամբողջությամբ ներկայացնելու ձգտումը: Առանձնահատուկ վերաբերմունքի է արժանի Հայաստանի Հանրապետությունում վարվող տնտեսական քաղաքականության և տնտեսության առանձին ոլորտներում դրա իրականացման վերլուծության և ամփոփման հեղինակի փորձը, որը կարևոր է ընթերցողների մասնագիտական պատրաստվածության խորացման, Հայաստանի տնտեսական իրավիճակի մասին ընդհանուր պատկերացումների ձևավորման տեսանկյունից: Նյութի տեղայնացումը ներդաշնակվում է վերջին հատվածում ներկայացվող խնդրի միջազգային ասպեկտների հետ:

Ուսումնական նյութը առավել կիրառական և գործնական են դարձնում յուրաքանչյուր հատվածում բերվող ինքնաստուգման հարցերը:

Շարադրանքի հետ ծանոթացումը ցույց է տալիս, որ թերևս ուսումնական նյութը ունի զարգացման զգալի հնարավորություններ: Մասնավորապես, հետագա զարգացման կարիք ունի նյութի նպատակաուղղումը ուսանողների մասնագիտական կարողությունների խորացման և ստացած գիտելիքների կիրառելիության աստիճանի, շատ դեպքերում նաև մատչելիության աստիճանի բարձրացման առումով: Ուսումնական նյութը կշահեր նաև առանձին հասկացությունների ներկայացմամբ պարզ գործնական օրինակների ավելացման միջոցով, որը, կարծում եմ, հեղինակը լրացնում է դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում:

Ընդհանուր առմամբ, ուսումնական նյութի ներկայիս շարադրանքով մատուցումը ընթերցողներին կնպաստի վերջիններիս տեսական պատրաստվածության և մասնագիտական գիտելիքների խորացմանն, ինչպես նաև քոլեջի շրջանավարտների հետագա արդյունավետ աշխատանքային գործունեությանը: Գիրքը նախատեսված է ընթերցողների ավելի լայն շրջանակների համար և կարող է կիրառվել տնտեսագիտական մասնագիտություններ դասավանդող բուհերում:

Հայներարտբանկի
Գլխավոր տնօրենի խորհրդական
Տնտեսագիտական գիտությունների թեկնածու **Բ. Ասատրյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ 3
Հարգարժան ընթերցող 4
կենտրոնական բանկի խորհուրդ 4
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ 5
Թ. Տոնոյանի «Տնտեսագիտության հիմունքներ» 5
ուսումնական նյութի 5
ԲԱԺԻՆ I. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 7
ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 7
1.1. Տնտեսագիտության տեսության ծագումը և զարգացման հիմնական ուղղությունները 7
1.2. Տնտեսագիտության տեսության առարկան, ֆունկցիաները և մեթոդը 9
Ինքնաստուգման հարցեր *13*
ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔԵՐԸ 14
2.1. Տնտեսագիտության տեսության հիմնական հասկացությունները 14
2.2. Տնտեսական համակարգերը, նրանց տիպերը և մոդելները: Անցումային համակարգը Հայաստանի Հանրապետությունում 17
2.3. Սեփականության տնտեսական մեկնաբանումը: Սեփականաշնորհման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում 20
Ինքնաստուգման հարցեր *27*
ԲԱԺԻՆ II. ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 28
ԳԼՈՒԽ 3. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ 28
3.1. Շուկայի տեսության հիմունքները: Մարքեթինգ: Շուկայական տնտեսության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում 28
3.2. Առաջարկի և պահանջարկի տեսություն: Առաձգականություն: 34
3.3. Գների էությունը, գործառույթները և համակարգը 41
3.4. Մրցակցությունը և նրա տիպերը 43
Ինքնաստուգման հարցեր *45*
ԳԼՈՒԽ 4. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 46
4.1. Արտադրության ծախքեր և շահույթ 46
4.2. Ձեռներեցության տնտեսական բնույթը, գործառնությունները և ակտիվացման պայմանները 47
4.3. Ֆիրման՝ որպես շուկայական տնտեսության օղակ 54
4.4. Բիզնեսի կազմակերպման ձևերը և առանձնահատկությունները տարբեր երկրներում 56
4.5. Ձեռնարկատիրական գործունեության հիմունքները և զարգացման միտումները ՀՀ-ում 66
Ինքնաստուգման հարցեր *68*
ԲԱԺԻՆ III. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 69
ԳԼՈՒԽ 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ: ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ: 69
5.1. Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները: Համախառն ներքին արդյունքի դինամիկան Հայաստանի Հանրապետությունում 69
5.2. Տնտեսական աճ և անկայունություն 73
5.3. Զբաղվածություն և գործազրկություն: Դրանց դինամիկան Հայաստանի Հանրապետությունում 76
5.4. Դրամը և գնաճը: Գնաճի դինամիկան Հայաստանի Հանրապետությունում 82
Ինքնաստուգման հարցեր *92*
ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 93
6.1. Ֆինանսների էությունը և գործառույթները: Ֆինանսական շուկա 93
6.2.Պետբյուջե: Հայաստանի Հանրապետության պետբյուջեն 97
6.3. Հարկերը, դրանց գործառույթները և տեսակները 101
6.4. Դրամավարկային քաղաքականություն և դրամավարկային համակարգ: ՀՀ դրամավարային քաղաքականությունը: 106
Ինքնաստուգման հարցեր *120*
ԲԱԺԻՆ IV. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 121
ԳԼՈՒԽ 7. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 121
7.1. Տնտեսության գլոբալացման միտումները 121
7.2. Համաշխարհային շուկա: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 122
7.3. Ժամանակակից միջազգային արժութային հարաբերությունները 128
7.4. Միջազգային տնտեսական ինտեգրացիան 133
Ինքնաստուգման հարցեր *134*
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 135
ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ 137
ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ 139

ԲԱԺԻՆ I. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1.1. Տնտեսագիտության տեսության ծագումը և զարգացման հիմնական ուղղությունները

Տնտեսագիտության տեսությունը, որպես ինքնուրույն գիտություն, ձևավորվել է XVII դարում կապիտալիզմի ծագման հետ միասին: Սակայն տնտեսական գիտության սաղմերը գոյություն են ունեցել դեռևս անտիկ աշխարհում Արիստոտելի, Քսենոֆոնի, Պլատոնի և ուրիշների ստեղծագործություններում: Նրա հիմնական խնդիրն էր բացահայտել պետության հարստացման աղբյուրը:

Տնտեսագիտության տեսությունն իր զարգացման ընթացքում անցել է որոշակի փուլեր: Գոյություն ունեն տարբեր ուղղություններ և դպրոցներ, որոնց գիտական դասակարգման հիմքում ընկած են վերլուծության մեթոդների, առարկայի հասկացության և խնդիրների հետազոտման տարբեր մոտեցումներ: Այդ բաժանումը շատ դեպքերում պայմանական է: Մեկ ուղղության շրջանակներում կարող են գոյություն ունենալ մի քանի դպրոցներ:

Մենք հնարավորություն չունենք հանգամանորեն կանգ առնել բոլոր ուղղությունների ու դպրոցների վրա, ցույց տալ դրանց էվոլյուցիան և ժառանգորդությունը: Միայն նշենք, որ այս կամ այն հայացքների և հիմնադրույթների ի հայտ գալէը միշտ սերտորեն կապված է եղել տնտեսական պրակտիկայի օբյեկտիվ պայմանների և պահանջների հետ:

XV-XVII դդ տնտեսական մտքի որոշիչ ուղղություն հանդիսացավ ***մերկանտիլիզմը*** (իտալ. merkante - վաճառական բառից): Տնտեսագիտության տեսության այս դպրոցը ծագեց Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ռուսաստանում և այլ երկրներում, որոնցում արագ զարգանում էր միջազգային առևտուրը: Նրա ներկայացուցիչները (Անտուան Մոնկրետյեն, Թովմաս Մեն, Վիլյամ Ստաֆորդ, Աֆանասի Նասչոկին, Յուրի Կրիժանիչ, Իվան Պոսոշկով, Շահամիր Շահամիրյան և ուրիշներ) հարստության աղբյուրը համարում էին առևտուրը:

Վաղ մերկանտիլիզմին (XV-XVIդ կեսերը), որն անվանվեց մոնետար համակարգ, բնորոշ էր ակտիվ դրամական հաշվեկշռի ստեղծումը: *Ուշ մերկանտիլիզմը* (XVI դ երկրորդ կես-XVIIդ), հանդես եկավ փողի արտահանման դեմ (այն պաշտպանում էր ակտիվ առևտրական հաշվեկշիռը): Այսպիսով, մերկանտիլիստներն իրենց գլխավոր խնդիրը տեսնում էին ապրանքային և դրամական շրջանառության գործընթացների հետազոտության մեջ:

Տնտեսագիտության տեսության զարգացման հաջորդ փուլը դասական քաղաքատնտեսությունն է, որի մեջ ձևավորվեցին երկու դպրոցներ՝ ֆրանսիական (ֆիզիոկրատներ) և անգլիական:

Ֆիզիոկրատների (հուն. physis - բնություն, kratos - ուժ, իշխանություն) դպրոցը ծագեց XVIII դ կեսերին Ֆրանսիայում և տարածում ստացավ Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլ երկրներում: Այս դպրոցի հիմնադիրները (Ֆրանսուա Քենեն և Աննի Տյուրգոն) գտնում էին, որ երկրի հարստացման աղբյուրը գյուղատնտեսությունում լրացուցիչ «զուտ արդյունքի» ստեղծումն է: Ի տարբերություն մերկանտիլների, նրանք ուսումնասիրությունը փոխադրեցին շրջանառության ոլորտից նյութական արտադրության ոլորտ, սահմանափակվելով երկրագործությամբ: «Վերարտադրություն» տերմինն առաջին անգամ օգտագործել է Քենեն: Նրա փայլուն նվաճումներից էր «Տնտես Շահառու ական աղյուսակների» ստեղծումը, որտեղ հեղինակը առաջին անգամ զարգացնում է վերարտադրության և իրացման՝ որպես անընդհատ գործընթացի միտքը որոշակի տնտեսական համամասնությունների առկայության պայմաններում:

Անգլիական դասական քաղաքատնտեսության դպրոցը ծագեց և զարգացավ XVII-XVIII դդ: Այդ դպրոցի հիմնադիրներն էին Վիլյամ Պետտին, Ադամ Սմիթը և Դավիթ Ռիկարդոն: Նրանք մի քայլ առաջ անցան իրենց նախորդներից, գտնելով, որ հարստությունը ստեղծվում է ոչ միայն գյուղատնտեսությունում, այլ նաև նյութական արտադրության մնացած բոլոր ճյուղերում: Նրանք ցույց տվեցին, որ հարստության համընդհանուր ձևը ապրանքներում և փողի մեջ մարմնացած արժեքն է:

Արժեքն ստեղծվում է ապրանքներ արտադրող աշխատողների աշխատանքով, հետևաբար, աշխատանքը հանդիսանում է հարստության կարևորագույն աղբյուր: Ըստ Վ. Պետտիի, «բնությունը հարստության մայրն է, իսկ աշխատանքը՝ հայրը»:

Տեսության դասական ուղղության մեջ մեծ ներդրում ունի Ադամ Սմիթը, որի գլուխգործոցն է «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների հետազոտությունը» (1776թ.): Ա. Սմիթը մարդու և հասարակության փոխազդեցության վերլուծությունը դրեց «տնտեսական մարդ» («homo economicus») հասկացության ձևակերպման հիմքում: Սմիթը գտնում էր, որ մարդու տնտեսական ակտիվության հիմնական խթանը մասնավոր շահն է, որը նա կարող է իրականացնել աշխատանքի բաժանման գործընթացում: Ձգտելով հասնել իր նպատակին՝ բավարարել իր պահանջմունքները, մարդը հաճախ ավելի էականորեն ծառայում է հասարակության շահերին, դրանց իրացմանը:

Դավիթ Ռիկարդոն (XIXդ) գտնում էր, որ արժեքի օրենքը տնտեսագիտության տեսության հիմքն է, իսկ արտադրության ոլորտը՝ արժեքի և եկամտի աղբյուրն է: Նա իր բաշխման հիմնադրույթում ցույց տվեց տնտեսական կյանքի դինամիզմը, գտնելով, որ շահույթի նորման կապիտալիստական արտադրության հիմնական նպատակն ու խթանն է:

Քաղաքի և գյուղի մանր բուրժուազիայի շահերը պաշտպանում և արտահայտում էր ***մանր բուրժուական քաղաքատնտեսությունը*** (Ս.Սիսմոնդի, Պրուդոն՝ XIXդ): Քննադատելով կապիտալիզմի հակասությունները, նրանք առաջարկում էին հետ վերադառնալ տնտեսական կյանքի ավանդական ձևերին: Ըստ Սիսմոնդիի, քաղաքատնտեսությունը կոչված է լուծելու հասարակության սոցիալական մեխանիզմի կատարելագործման խնդիրները: Սիսմոնդին տնտեսագիտության տեսության մեջ ներդրեց վերարտադրության ճգնաժամերի, թերսպառման և «երրորդ անձի», մանր ապրանքային արտադրության իդեալականացման տեսությունները:

Տնտեսագիտության տեսության մեջ իր ներդրումն ունի ***ուտոպիական սոցիալիզմը***, որի հիմնադիրներն ու ականավոր ներկայացուցիչներն էին Կ. Սեն-Սիմոնը, Շ. Ֆուրյեն, Ռ. Օուենը: Նրանք գրում էին այն ժամանակվա հասարակության արմատական վերափոխման և արդարացի կառուցվածքի հաստատման մասին:

Կապիտալիզմին փոխարինող համակարգը Սեն-Սիմոնն անվանեց ինդուստրիալիզմ, Ֆուրյեն՝ հարմոնիկ, Օուենը՝ կոմունիզմ: Ապագա հասարակարգի տեսաբանները ելնում էին մասնավոր սեփականության վերացման, մտավոր և ֆիզիկական աշխատանքի, գյուղի և քաղաքի միջև հակասության վերացման անհրաժեշտությունից, դրանով իսկ ապահովելով, ըստ նրանց, արդար սոցիալական համակարգի հիմքերը:

Տնտեսագիտության տեսության մեջ կարևոր ներդրում են կատարել մարքսիստները (Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և ուրիշներ): Նրանք XIXդ զարգացրին դասական քաղաքատնտեսության դրույթները, վերագնահատելով դրանք, գտնելով, որ կապիտալիզմի ներհատուկ հակասությունները պետք է հանգեցնեն նրա կործանմանը: Դրան էր նվիրված Կ.Մարքսի «Կապիտալ» աշխատությունը: Կ. Մարքսը տվեց հավելյալ արժեքի տեսությունը, բացահայտեց աշխատանքի երկակի բնույթը: Նրա գիտության հիմնական դրույթներից են նաև՝ պատմության մատերիալիստական հասկացությունը, կապիտալիստական կուտակման տեսությունը, հավելյալ արժեքի մասին ուսմունքը, շահույթի միջին նորմայի և արտադրության գնի տեսությունը:

XIXդ 2-րդ կեսին ձևավորվեց ***մարժինալիզմի*** (անգլ.marginal-սահմանային) տեսությունը: Նախ և առաջ, այն ձևավորվեց մարժինալիստական հեղափոխության արդյունքում, որը ծնեց սահմանային օգտակարության և սահմանային արտադրողականության կամ մարժինալիզմի տեսությունը: Այդ տեսությունը հիմնված է առանձին տնտեսավարող սուբյեկտի գործունեության հոգեբանական և տնտեսական վերլուծության վրա: Ըստ այդ տեսության, առանձին սուբյեկտը, նախ և առաջ, ղեկավարվում է սահմանային շահի և վնասի սեփական գնահատականով, որով էլ պայմանավորված են առաջարկը և պահանջարկը, արտադրության ծախքերը և գինը: Այս տեսության հիմնադիրներից են ավստրիական դպրոցի ներկայացուցիչները (Կ. Մենգեր, Օ. Բեմ-Բավերկ, Ֆ. Վիզեր և ուրիշներ), որոնք առաջ քաշեցին ապրանքի արժեքի և գնի գնահատման սուբյեկտիվ-հոգեբանական հիմնադրույթը, որը հակադրեցին արժեքի աշխատանքային տեսությանը: Ըստ նրանց, օգտակար իրերի յուրաքանչյուր լրացուցիչ միավորի հետ, բավարարման աստիճանը դրանց օգտագործումից պակասում և հասնում է սահմանային մեծության («հագեցման կետի»): Սպառողական բարիքների սահմանային օգտակարության հիմնադրույթը նրանք լրացրին աշխատանքի և կապիտալի սահմանային արտադրողականության տեսությամբ: Մարժինալիզմը հենվում է քանակական վերլուծության վրա և օգտագործում տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ:

Տեսության մեջ սահմանային մեծությունների գնահատումը հանգեցրեց տնտեսագիտության մեջ մաթեմատիկական դպրոցի ծագմանը (ներկայացուցիչները՝ Ու. Ջեվոնս, Լ. Վալրաս, Վ. Պարետտո): Մաթեմատիկական մեթոդների օգնությամբ նրանց հաջողվեց հայտնաբերել մի շարք ֆունկցիոնալ (քանակական) կախվածություններ արտադրությունում, շուկայում և սպառման ոլորտում: Այդպիսի մեթոդները թույլ տվեցին որոշել արտադրական հնարավորությունների արդյունավետ օգտագործման օպտիմալ տարբերակները՝ սահմանափակ ռեսուրսների պայմաններում:

Տնտեսագիտական մտքի ժամանակակից գլխավոր ուղղությունները, որոնք ձևավորվել են XIX դ. վերջին և XX դ. սկզբին ներկայացված են դիրքորոշումների, հայացքների և հիմնադրույթների բազմազանությամբ:

XIXդ. երկրորդ կեսին ծագեց տնտեսագիտության տեսության ***նեոդասական*** (հուն. neos-նոր) ուղղությունը: Տնտեսագիտության տեսության մեջ նեոդասական հեղաշրջում կատարվեց տարբեր երկրների գիտնականների կողմից: Այդ պատճառով պահանջվեց ամփոփել և սիստեմավորել դրա արդյունքները: Այդ խնդիրը լուծեց անգլիացի տնտեսագետ Ա. Մարշալը: Նրա ներդրումը նեոդասական ուղղության մշակումներում տնտեսական ուսմունքների որոշ պատմաբաններ անվանեցին մարշալյան հեղափոխություն:

Ա. Մարշալը գտնում էր, որ պետք է հրաժարվել տեսության ավանդական «քաղաքատնտեսություն» անվանումից: Իր հիմնական աշխատությունը նա վերնագրեց «Տնտեսագիտական գիտությունների սկզբունքները» (1890թ.), որը տնտեսագիտության տեսության նեոդասական նոր ամբողջական շարադրանքն էր:

XXդ. 20-ական թվականներից այս ուղղությունը անգլո-ամերիկյան տնտեսագիտական գրականության մեջ ստացավ «էկոնոմիկս» (անգլ.economics-տնտեսագիտական գիտություններ) անվանումը: Էկոնոմիկայի հետազոտումը ֆունկցիոնալ փոխկապվածությունների հիման վրա դուրս մղեց «քաղաքատնտեսություն» տերմինը: Այս ուղղության շրջանակներում մշակվեց և արագ տարածվեց տնտեսական գործընթացների ֆունկցիոնալ հարաբերակցության սկզբունքը:

Ա. Մարշալը հայտնի է որպես գնային տեսության հիմնադիր: Նա գտնում էր, որ առաջարկն ու պահանջարկը շուկայական գնագոյացման մեխանիզմի հավասարազոր տարրեր են: Ա.Մարշալը կիրառեց շուկայական հավասարակշռվածության հասկացությունը առաջարկի և պահանջարկի հաշվեկշռի բնութագրման համար, մշակեց առաձգական պահանջարկի հիմնադրույթը, որը մինչև հիմա արդիական է շուկայական երևույթների բացատրման համար:

Տեսական մշակումների և նոր հիմնախնդիրների ուսումնասիրման հետագա խորացումն իրականացվում է, մասնավորապես, նեոդասական սինթեզի դպրոցի ներկայացուցիչների կողմից (Դ. Խիկս, Պ. Սամյուելսոն և ուրիշներ):

Տնտեսագիտության տեսության նեոդասական ուղղությունը ներկայացված է ժամանակակից մոնետարիզմի և նեոլիբերալիզմի տեսություններով:

Մոնետարիզմը - տնտեսագիտության ուղղություն է և տնտեսության կայունացման տեսություն, որի համաձայն դրամական զանգվածի մեծությունը և փոփոխությունը էականորեն ազդում են երկրի տնտեսության վրա, այսինքն որոշիչ դեր են կատարում դրամական գործոնները: Մոնետարիստները և, մասնավորապես, ամերիկացի տնտեսագետ Միլթոն Ֆրիդմենը գտնում են, որ տնտեսության կառավարումը, նախ և առաջ, պետք է իրականացվի դրամական զանգվածի, դրամի էմիսիայի, շրջանառությունում և պաշարներում գտնվող փողի

քանակի, պետբյուջեի հավասարակշռությունը ապահովելու, ինչպես նաև բարձր բանկային տոկոսադրույքներ սահմանելու միջոցով:

«Նոր մոնետարիստական դպրոցի» առաջնորդ Մ. Ֆրիդմենի կարծիքով, բոլոր խոշորագույն տնտեսական ցնցումները բացատրվում են դրամական քաղաքականության հետևանքով, այլ ոչ թե շուկայական էկոնոմիկայի անկայունությամբ, ուստի պետությունը պետք է որքան հնարավոր է քիչ և զգուշորեն միջամտի շուկայական հարաբերություններին:

Նեոլիբերալիզմը տեսություն է, համաձայն որի անհրաժեշտ է կրճատել պետության միջամտությունը տնտեսությանը, քանզի մասնավոր ձեռներեցությունը ունակ է դուրս բերել տնտեսությունը ճգնաժամից և ապահովել նրա վերելքը, ինչպես նաև բնակչության բարեկեցությունը:

Տնտեսության մեջ պետական միջամտության սահմանափակման դիրքերում կանգնած տնտեսագետների (Լ. Միզես, Ֆ. Խայեկ, Վ. Օյկեն, Լ. Էռխարդ և ուրիշներ) առաջարկները տնտեսական գիտության մեջ և տնտեսական գործունեության կառավարման պրակտիկայում պաշտպանում էին տնտեսության ավելորդ կարգավորումից ազատված, ինքնակարգավորման սկզբունքը: Ըստ Լ. Միզեսի՝ լիբերալիզմը միակ բանական տնտեսական քաղաքականությունն է: Իսկ Ֆ. Խայեկը իր «Ճանապարհ դեպի ստրկատիրություն» գրքում ապացուցում է, որ հրաժարվելը տնտեսական ազատությունից, շուկայական գնագոյացումից տանում է դիկտատուրայի և տնտեսական ստրկատիրության:

Հենվելով նեոլիբերալիզմի տեսության վրա, գերմանական տեսաբան պետական և քաղաքական գործիչ Լ. Էռխարդը ստեղծեց սոցիալական կողմնորոշման շուկայական տնտեսության իր սեփական տեսությունը և իրականացրեց այն հետպատերազմյան Գերմանիայում: Այդ տեսության հիմնական դրույթներն են՝ ազատ գների, ազատ մրցակցության, առաջարկի և պահանջարկի հավասարակշռության, տնտեսության հավասարակշռվածության անհրաժեշտությունը: Պետությունը կոչված է երաշխավորելու այդ պայմանները շուկայական տնտեսությունում և ապահովելու նրա զարգացման սոցիալական ուղղվածությունը:

Տնտեսագիտության տեսության ***քեյնսյան*** ուղղությունը, որի հիմնադիրն է անգլիացի տնտեսագետ Ջ. Քեյնսը, հանդիսանում է զարգացած շուկայական էկոնոմիկայի պետական կարգավորման կարևորագույն տեսական հիմնավորումը: Այդպիսի կարգավորման օգնությամբ կարելի է ազդել սղաճի, զբաղվածության վրա, վերացնել ապրանքների առաջարկի և պահանջարկի անհավասարությունը, կանխել տնտեսական ճգնաժամերը: 1936 թ. Ջ. Քեյնսը հրատարակեց իր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» ամենահայտնի աշխատությունը, որը հիմք հանդիսացավ քեյնսականության համար:

Քեյնսը ձևակերպեց ազգային եկամտի, ներդրումների, սպառման, խնայողությունների և այլ համախառն ցուցանիշների փոխպայմանավորվածության մակրոտնտեսական վերլուծությունը: Նրան հռչակեցին «կապիտալիզմի փրկիչ», իսկ նրա տեսությունը՝ «քեյնսյան հեղափոխություն»: Տնտեսության իրավիճակից կախված, առաջարկվում է օգտագործել պետական կարգավորման քեյնսյան խորհուրդները (օրինակ, մուլտիպլիկատորի և աքսելերատորի հիմնադրույթները):

Նեոքեյնսականները ելնում են տնտեսական գործընթացների դինամիկայի, ոչ մնայուն գործոնների ավելի լրիվ հաշվառման անհրաժեշտությունից: Օրինակ, Ջ. Ռոբինսոնը, որը անկատար մրցակցության տեսության հեղինակն է ապացուցում է, որ ֆիրմաները վաճառելով իրենց ապրանքները ավելի բարձր գներով, քան կատարյալ մրցակցության ժամանակ, ստանում են ավելի շատ շահույթ, իսկ սպառողը կրում է վնասներ: Դա հանգեցնում է լճացած երևույթների, արտադրության անկման և գործազրկության:

Ժամանակակից տնտեսագիտության տեսության ուղղություն է նաև ***ինստիտուցիոնալ - սոցիոլոգիական*** (լատ.«institutum – հիմնարկություն բառից) ուղղությունը, որի ներկայացուցիչներն են Տ. Վեբլենը, Ջ. Կոմոնսը, Ու. Միտչելը, Ջ. Գելբրեյտը: Նրանք դիտարկում են էկոնոմիկան որպես համակարգ, որտեղ հարաբերությունները տնտեսվարող սուբյեկտների միջև դրսևորվում են տարբեր տնտեսական և ոչ տնտեսական գործոնների ազդեցության տակ: Ըստ որում, բացառիկ դեր են կատարում տեխնիկատնտեսական գործոնները, որոնց բացարձականացումը թույլ տվեց առաջ քաշել ***կոնվերգենցիալի*** տեսությունը (Ջ. Գելբրեյտ, Ռ. Արոն, Յ. Տինբերգեն):

Նեոինստիտուցիոնալիզմը բնութագրվում է մարդու նկատմամբ մեծ ուշադրությամբ, սոցիալական հիմնախնդիրներով (Ռ. Կոուզ, Ջ. Բյուկենեն և ուրիշներ) նրա հիմնական գաղափարը ոչ միայն մարդու աճող դերի հաստատման, այլև անհատի բազմակողմանի զարգացումը ապահովելու մեջ:

1.2. Տնտեսագիտության տեսության առարկան, ֆունկցիաները և մեթոդը

Ժամանակակից տնտեսագիտության տեսությունն իր ուսումնասիրման առարկայով, մեթոդոլոգիայով, հիմնախնդիրների քննարկման շրջանակով և գործնական եզրակացություններով սկզբունքորեն տարբերվում է ավանդական քաղաքատնտեսությունից:

Նախ՝ տնտեսագիտության տեսությունն ամփոփում է բոլոր տնտեսական գիտությունների նվաճումները ու բացահայտում տնտեսական զարգացման սկզբունքները, օրենքները (օրինակ, բիզնեսի օրենքները) և դրանց իրականացման մեխանիզմը, մշակում տնտեսավարման մեթոդները, տնտեսական քաղաքականության հիմքերը, պրակտիկ գործունեության հիմնախնդիրներն ու հակասությունները էկոնոմիկայի ցանկացած ոլորտում:

Երկրորդ՝ տնտեսագիտության տեսությունը ուսումնասիրում է մարդկանց տնտեսական վարքագիծը նյութական բարիքների և ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացում (տնտեսական հարաբերությունների համակողմանի վերլուծությունն է)՝ սահմանափակ ռեսուրսների պայմաններում:

Երրորդ՝ տնտեսագիտության տեսությունը կարևորում է մարդուն իր պահանջմունքներով և ուսումնասիրում է սահմանափակ արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կամ նրանց կառավարման

հիմնահարցերը մարդու նյութական պահանջմունքների առավելագույն բավարարման նպատակով (ոչ թե անհատական, այլ հասարակական տեսանկյունից):

Ավանդական քաղտնտեսությունը կարևորում է օբյեկտիվ տնտեսական օրենքները և կատեգորիաները: Տնտեսական օրենքները տնտեսական հարաբերությունների անհրաժեշտ, հաստատուն, կրկնվող, էական պատճառահետևանքային և ֆունկցիոնալ կապերն ու փոխկապվածություններն են: Դրանք դասակարգվում են առանձնահատուկ, ընդհանուր և համընդհանուր տնտեսական օրենքների: Տնտեսական կատեգորիաները գիտական հասկացություններ են, որոնք արտացոլում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունները, դրանց տարբեր արտահայտումները և կողմերը:

Չորրորդ՝ ավանդական քաղաքատնտեսությունը հիմնվում է արժեքի աշխատանքային տեսության վրա (արժեքի հիմքում ընկած են հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերը): Ի հակակշիռ դրան, տնտեսագիտության տեսությունը ելնում է մարժինալիստական տեսությունից, ըստ որի արժեքը որոշվում է սահմանային օգտակարության արդյունքով, իսկ գինը՝ հավասարակշռման կետի դիրքով առաջարկի և պահանջարկի միջև:

Հինգերորդ՝ քաղաքատնտեսությունը հիմնականում չի կարևորում մասնավոր սեփականության առաջադիմական դերը և տնտեսության շուկայական կազմակերպման ապագան այն դեպքում, երբ ժամանակակից տնտեսագիտության տեսությունը չի տեսնում իմաստ հասարակական կազմակերպման այլ ձևում, քան մշտական զարգացման մեջ գտնվող շուկայական տնտեսությունն է:

Տարբերությունների այս ցանկը կարելի է շարունակել, սակայն հարցի կարճ շարադրման շրջանակներում այսքանը բավական է:

Օբյեկտի ուսումնասիրության տեսակետից տնտեսագիտության տեսության մեջ գոյություն ունեն վերլուծության երկու բոլորովին տարբեր մակարդակներ, որոնց հիման վրա կարելի է դուրս բերել տնտեսական վարվելաձևի օրենքները, և որոնք պայմանականորեն կարելի է անվանել «միկրոտնտեսագիտություն» և «մակրոտնտեսագիտություն»:

1. ***Մակրոտնտեսագիտական*** վերլուծության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության վերլուծությունն ամբողջությամբ կամ նրա հիմնական բաղկացուցիչ ստորաբաժանումներով և ագրեգատներով վերցված: Ագրեգատն ամբողջի մեջ յուրահատուկ տնտեսական միավորների միասնությունն է, օրինակ, մասնավոր ձեռնարկությունների ամբողջությունը՝ որպես մասնավոր հատված: Այլ կերպ՝ մակրոէկոնոմիկան ուսումնասիրում է ոչ թե «ծառերը, այլ անտառը»: Այն ընդգրկում է այնպիսի ցուցանիշների վերլուծությունը, ինչպիսիք են արտադրանքի և գների ընդհանուր մակարդակը, եկամտի ընդհանուր ծավալը, զբաղվածության, գների դինամիկայի և մի շարք ամփոփ այլ ցուցանիշների կապերն ու որոշում պետության տնտեսական քաղաքականության օրինաչափությունները և այլն:

2. ***Միկրոտնտեսագիտական*** վերլուծության մակարդակը կապված է կոնկրետ տնտեսական միավորների (առանձին ճյուղ, ֆիրմա, տնտեսություն, արտադրություն, կոնկրետ արտադրանքի գին, բանվորների թվաքանակ կամ հասույթ, առանձին ֆիրմայի եկամուտ, ընտանիքի ծախսեր և այլն) գործունեության պատճառների, ձևերի, օրինաչափությունների և հետևանքների վերլուծության արդյունքների հետ:

Վերջին տարիներին վերլուծության կարևոր բնագավառներում տեղի է ունեցել 1 և 2 մակարդակների միաձուլում, քանի որ տնտեսագիտության տեսության շատ թեմաներ և բաժիններ ընդգրկվում են այդ երկու մակարդակներում, օրինակ, 15-20 տարի առաջ գործազրկությունը դիտվում էր մակրոտնտեսագիտական մակարդակով, ներկայումս նաև՝ միկրոտնտեսագիտական, քանի որ գործազրկության որոշակի մակարդակում կարևոր նշանակություն ունեն նաև իրենց համար ուրիշ աշխատանք փնտրող աշխատողների անհատական որոշումները:

Տնտեսագիտության տեսությունը սերտորեն կապված է ուրիշ շատ գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, վիճակագրության, պատմության, մաթեմատիկայի, իրավագիտության և այլնի հետ:

Տնտեսագիտության տեսությունն ունի իր որոշակի ***գործառույթները,*** որոնց նպատակը՝ որպես տնտեսական քաղաքականության տեսական հիմքի, հանդիսանում է տնտեսական հիմնահարցերի ձևավորումը և դրանց լուծման ուղիների առաջարկումը: Նրա առաջին և կարևոր գործառույթը *ճանաչողականն (իմացաբանական) է*: Տնտեսագիտության տեսությունն ուսումնասիրում և բացահայտում է հասարակության տնտեսական կյանքի գործընթացներն ու երևույթները, խորը և բազմակողմանի վերլուծում նյութական բարիքների և ծառայությունների արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը մարդկային հասարակության ողջ պատմության ընթացքում: Նրա շնորհիվ ճանաչվում են հասարակության զարգացման օբյեկտիվ տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները:

Երկրորդը *քննադատական* ***գործառույթն է,*** քանի որ տնտեսագիտության տեսության միջոցով բացահայտվում են տարբեր տնտեսական համակարգերի ինչպես նվաճումները, այնպես էլ թերությունները: Ընդ որում, այն հնարավորություն է տալիս պարզել, թե ինչու պատմական այս կամ այն արտադրաեղանակ, կատարելով իր պրոգրեսիվ դերը, սկսում է հնանալ և արգելակել տնտեսական զարգացումը, իր տեղը զիջելով առավել առաջադեմ արտադրաեղանակին:

Երրորդը *կանխատեսման (պրոգնոստիկ)* ***գործառույթն է,*** որը ժամանակակից պայմաններում գնալով մեծ նշանակություն է ստանում, քանի որ ենթադրում է գիտական կանխատեսումների մշակում, հասարակական զարգացման հեռանկարների բացահայտում:

Չորրորդը *պրակտիկ* (գործնական կամ կիրառական) ***գործառույթն է,*** որի օգնությամբ մշակվում են տվյալ երկրի տնտեսական զարգացման հեռանկարները կամ գիտականորեն հիմնավորվում պետության տնտեսական քաղաքականությունը: Այն պետք է ղեկավար սկզբունք լինի և ծառայի հասարակության վերակառուցման գործնական նպատակներին:

Հինգերորդը *մեթոդաբանական* ***գործառույթն է,*** քանի որ այն տեսական հիմք է հանդիսանում մյուս բոլոր տնտեսական գիտությունների համար (ճյուղային, ֆունկցիոնալ և խառը բնույթի):

Եվ, վերջապես, *տնտեսագիտական մտածելակերպի ձևավորման* ***գործառույթը***, քանի որ այն օգնում է մարդկանց, տնտեսավարող սուբյեկտներին հանգելու ճիշտ եզրակացությունների: Տնտեսագիտության տեսությունը բացահայտում է մտածելակերպի փոփոխման շարժառիթները և ուղղություն տալիս տնտեսագիտական հիմնահարցերի փոխկապվածությանը և լուծմանը: Տնտեսագիտական մտածելակերպը կարող է ձևավորվել որոշակի գիտելիքներ ու տեղեկատվություն ունենալու պայմաններում: Այդ դեպքում է միայն հնարավոր ճիշտ ընտրություն կատարել և խելացի որոշումներ կայացնել:

Տնտեսագիտության տեսությունն օգտագործում է մեթոդների լայն շրջանակ, որոնք իրենցից ներկայացնում են ուսմունք իրականության գիտական իմացության եղանակների և մոտեցումների մասին: Մինչև այդ մեթոդներին ծանոթանալը, նշենք, որ ***տնտեսական մտածողությունը*** լինում է երկու տիպի՝ առօրյա (սովորական) և գիտական:

Առօրյա տնտեսական մտածողությունն արտացոլում է անմիջականորեն մարդու կենսական դիտումները: Դրա շնորհիվ նրա մոտ հստակ համոզմունք է ձևավորվում, որ այն, ինչ ինքը տեսել է, միակ ճիշտ պատկերացումն է տնտեսության մասին: Առօրեական տնտեսական մտածողությունն ունի սուբյեկտիվ բնույթ, ոչ լրիվ ու կցկտուր տեղեկություններ, միակողմանիություն և իրադարձությունների պատկերման մակերեսայնություն:

Գիտական տնտեսական մտածողությունը բացահայտում է օբյեկտիվ ճշմարտությունը, արտաքին աշխարհն արտացոլում է այնպիսին, ինչպես նա կա իրականում, բազմակողմանիորեն և ամբողջությամբ պարզաբանելով տնտեսական երևույթների ներքին բովանդակությունը և օրգանական կապերը: Վերը նշվածը կարելի է ցույց տալ հետևյալ սխեմայով: Տես՝ նկար 1

Տնտեսական մտածողության տիպերը	
Առօրյա	Գիտական
- սուբյեկտիվ մոտեցում էկոնոմիկային	- օբյեկտիվ տեղեկություններ իրականության վերաբերյալ
- կցկտուր և միակողմանի տեղեկություններ	- բազմակողմանի, ամբողջական տեսակետ
- մակերեսային պատկերացումներ իրադարձությունների մասին	- երևույթների էության բացահայտում

Նկար 1. Տնտեսական մտածողության տիպերը

Ցանկացած գիտության մեջ օգտագործվում են ուսումնասիրման համալիր ***մեթոդներ:*** Դրանք ստորաբաժանվում են. ա) *համընդհանուր* (փիլիսոփայական), որոնք զինում են իմացության բոլոր բնագավառները (օրինակ, մետաֆիզիկական և դիալեկտիկական), բ) *համագիտական* (պատմական, տրամաբանական, մաթեմատիկական և այլն) և գ)*յուրահատուկ, սպեցիֆիկ* (գիտության յուրաքանչյուր բնագավառի համար):

Տնտեսագիտության տեսության մեջ կիրառվում են երկու հակադիր փիլիսոփայական մեթոդներ՝ մետաֆիզիկան և դիալեկտիկան: Այսինքն, տնտեսական երևույթները և գործընթացները քննարկվում են ինչպես ստատիկ (հանգիստ և անփոփոխ) վիճակում, այնպես էլ դինամիկայում (անընդհատ շարժման և զարգացման մեջ):

Օբյեկտիվ իրականության ճանաչողության գործընթացներն ընթանում են կենդանի հայեցողությունից (կամ կոնկրետից) դեպի ընդհանուր վերացական մտածողությունը և այնտեղից էլ դեպի գործնականը, տես՝ նկար 2:



Նկար 2. Իրականության ճանաչողության ուղին

Նկարը ցույց է տալիս, որ սկզբից տնտեսագետ հետազոտողը բացահայտում և հավաքում է տվյալ տնտեսական հիմնախնդրին վերաբերող փաստեր: Այդ գործողությունը տնտեսագիտության մեջ ստացել է նկարագրական կամ էմպիրիկ մեթոդ անվանումը: Դրանից հետո բացահայտվում են առանձին փաստերի ներքին կապն ու կախվածությունը, պարզում դրանց գործողության սկզբունքները, որոնց տրամաբանական արդյունքը որոշակի տնտեսական գիտական հետևություններն են և դրանց ստուգումը պրակտիկայում: Հետևապես, տնտեսագետները ձևավորում են տնտեսական սկզբունքները, որոնք նպաստում են տնտեսական հիմնահարցերի լուծման քաղաքականության մշակմանը: Հետազոտման ընթացքում տնտեսագետը շարժվում է փաստից տեսություն և տեսությունից փաստ գծով: Դա նշանակում է, որ նա կիրառում է ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: *Ինդուկցիան* ընդհանուր հիմնադրույթների դուրսբերումն է փաստերից, այսինքն՝ ուղիղ փաստերից դեպի տեսությունը, մասնակիից (եզակիից) ընդհանուրը: *Դեդուկցիան* հետազոտման ընթացքն է տեսությունից դեպի փաստերը կամ ընդհանուրից մասնակին: Այսինքն *դեդուկտիվ* կամ *հիպոթետիկ* մեթոդն այն է, երբ հենվելով պատահական դիտարկման, տրամաբանության կամ ինտուիցիայի վրա, ձևակերպվում է նախնական, չստուգված սկզբունքը՝ հիպոթեզը, իսկ այնուհետև այդ հիպոթեզի ճշտությունը ստուգվում է համապատասխան փաստերի սիստեմատիկ և բազմակողմանի ուսումնասիրություններով: Մեթոդները պատկերված են նկար 3-ում:



Նկար 3. Ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները

Դեդուկցիան և ինդուկցիան հետազոտման իրար լրացնող մեթոդներ են: Այսպիսով, տնտեսական վարքագծի մասին ընդհանուր հասկացությունը, որը ձևավորվում է տնտեսական սկզբունքների հիման վրա, կարող է այնուհետև օգտագործվել քաղաքականության մշակման համար, այսինքն՝ այն միջոցների և լուծումների, որոնք ապահովում են հետազոտվող հիմնախնդրի ճշգրտումը կամ վերացումը:

Հասարակական կյանքի իրականության խոր ճանաչման համար մեծ նշանակություն ունի *գիտական աբստրակցիայի մեթոդը*: Գիտական աբստրակցիաներն ընդհանրացված հասկացություններ են, որ մարդիկ մշակում են ուսումնասիրվող երևույթի անմիջական կոնկրետությունից վերացյալ մտածողությամբ: Աբստրակտ (վերացական) մտածողության փուլում մենք ստանում ենք իդեալական, այսինքն՝ մտովի պատկերացված, բայց իրականում գոյություն չունեցող իրականություն, քանի որ ռեալ իրականությունն այնքան հարուստ է և բազմազան, որ այն ուղղակի անհնար է նկարագրել ինչ-որ իդեալական մոդելի օգնությամբ: Այսպիսով, աբստրակցիայի մեթոդի էությունն այն է, որ առարկայի, երևույթի կամ համակարգի հետազոտման ժամանակ վերանում են ոչ էականից, երկրորդականից, թողնելով առավել էականը: Աբստրակցիայի մեթոդի օգնությամբ կազմվում են տնտեսական մոդելները (օրինակ, «կատարյալ մրցակցության մոդել», «զուտ մենաշնորհի մոդել» և այլն): Այս առումով հարկ է շեշտել ֆունկցիոնալ վերլուծության դերը: Ուսումնասիրելով ֆունկցիաները, մենք հետազոտում ենք կոնկրետ և դրանց միջոցով նկարագրվող երևույթներ, ընդ որում, միևնույն ֆունկցիան կարող է նկարագրել բացարձակապես տարաբնույթ երևույթներ:

Աբստրահումը (վերացարկումը) տնտեսական հետազոտման կարևորագույն տարր է, որի ժամանակ բարդ, ամբողջական, միասնական տնտեսական գործընթացը կամ համակարգը մասնատվում է բաղադրիչ մասերի, կամ առանձին պարզ տարրերի, կամ ենթահամակարգերի՝ ենթարկվելով մանրակրկիտ հետազոտության: Տնտեսական հետազոտության այդ մեթոդն անվանում են *վերլուծության կամ անալիզի մեթոդ,* քանի որ վերլուծվում են ամբողջի առանձին կողմերը, հատկությունները և տարրերը, աբստրակցիայի միջոցով ստեղծելով սպեցիֆիկ տնտեսական կատեգորիաներ և հասկացություններ: Դրանից հետո, երբ յուրաքանչյուր տարրի դերը բացահայտված է, համակարգը կամ գործընթացը ուսումնասիրվում է ամբողջությամբ վերցված, ներքին կապ է հաստատվում նրա բոլոր տարրերի միջև: Տնտեսական հետազոտության այս մեթոդն անվանվում է *համադրման կամ սինթեզի մեթոդ,* որը կապված է առանձին աբստրակցիաների, հասկացությունների և դատողությունների միացման հետ՝ տեսական տնտեսական գիտելիքների միասնական համակարգում, և որի շնորհիվ երևույթի մասին կազմվում է ընդհանուր պատկերացում: Վերլուծությունը և համադրումը հիմնված են տրամաբանական և պատմական, որակական և քանակական հետազոտման մեթոդների միասնության օգտագործման վրա:

Տրամաբանական և պատմական մեթոդները, ինչպես արդեն նշել ենք, համագիտական մեթոդներ են, որոնք կարևոր դեր են կատարում էկոնոմիկայի ուսումնասիրման մեջ: *Պատմական մեթոդը* թույլ է տալիս հետազոտել տնտեսական համակարգերն իրենց հատուկ պատմական զարգացման հաջորդականության մեջ: Այսպիսի մոտեցումն օգնում է կոնկրետ և ակնառու պատկերացնել յուրաքանչյուր համակարգի բոլոր առանձնահատկությունները նրա պատմական զարգացման տարբեր փուլերում:

Տրամաբանական մեթոդը թույլ է տալիս ճիշտ կիրառել ընդհանուր նշանակության մտքի ձևերը (հասկացությունները, դատողությունները, հետևությունները, եզրակացությունները) և մտածողության միջոցները

(սահմանումները, մտավոր գործունեության օրենքները, մեկ դատողությունից կամ հետևությունից մյուսին անցնելու կանոնները): Այն օգնում է հասնել արտահայտված դրույթների և եզրակացությունների իսկությանը:

Յուրաքանչյուր տնտեսական գործընթաց կամ երևույթ կարող են բնութագրվել և՛ որակական, և՛ քանակական գնահատումով, այսինքն տնտեսագիտության տեսությունն օգտվում է նաև որակական և քանակական վերլուծության մեթոդից: Քանակական վերլուծության համար տնտեսագիտության տեսությունը բավականին լայնորեն է օգտագործում *վիճակագրական և մաթեմատիկական մեթոդները*: Տնտեսական փաստերի աբստրակտ ընդհանրացումը, հիմնված մաթեմատիկայի կիրառման վրա, մարմնավորվում է մոդելների մեջ:

Մոդելավորումը՝ տնտեսագիտության տեսության մեթոդի ավելի գործնական մասն է, որը թույլ է տալիս որոշել տնտեսագիտական երևույթների փոփոխման պատճառները, այդ փոփոխությունների օրինաչափությունները և հետևանքները, ներկայացնել փոփոխումների հնարավոր տարբերակները տնտեսական հարաբերություններում, ինչպես նաև հնարավոր է դարձնում տնտեսական գործընթացների կանխատեսումը: Սակայն քանակական փոփոխությունների կուտակումը, վերջին հաշվով, բերում է տնտեսական փոխկապվածությունների որակական փոխակերպմանը: Ուստի տնտեսական գործընթացները և երևույթները պետք է ուսումնասիրվեն նրանց քանակական և որակական բնորոշումների անխզելի կապվածության մեջ:

Ժամանակակից պայմաններում *գրաֆիկական մեթոդի* (տարբեր տնտեսական գործոնների միջև ֆունկցիոնալ կախվածության և կապի ցուցադրական պատկերի արտահայտչական միջոց) կիրառումը գնալով ավելի ու ավելի լայն չափեր է ստանում, որովհետև տնտեսական գործընթացների միջև եղած կապերն անընդհատ բարդանում են:

Տնտեսագիտության տեսության համար կիրառելի են նաև պոզիտիվ և նորմատիվային մեթոդները: *Պոզիտիվ մեթոդով* սահմանվում է երևույթների, հարաբերությունների էությունը, քանի որ պոզիտիվ վերլուծությունն ուսումնասիրում է տնտեսական երևույթների փոխկապվածությունները. «ինչ որ նրանք կան իրականում»: Օրինակ, ապրանքների գների աճը հանգեցնում է պահանջարկի նվազմանը (այլ անփոփոխ պայմանների դեպքում): Այս դեպքում գնահատության դատողություններ և եզրակացություններ չեն կատարվում, այլ ուղղակի երևույթների նկարագրումով բերվում են փաստեր: *Նորմատիվային մոտեցումը* հիմնված է այն հետազոտությունների վրա, թե «ինչպես պետք է լինի»: Այդ պատճառով էլ այս մեթոդի դեպքում կատարվում են գնահատումներ (արդարացի է, թե՞ ոչ, լավ է, թե՞ վատ, ընդունելի է, թե՞ ոչ և այլն): Օրինակ, երբ մենք կարծիք ենք հայտնում, թե գործազրկության մակարդակը անթույլատրելի բարձր է երկրում: Պոզիտիվ և նորմատիվային մեթոդները փոխադարձաբար լրացնում են միմյանց:

Այնուամենայնիվ, հետևությունների արդյունքների ճշմարտության բարձրագույն չափանիշը պրակտիկան է, այդ պատճառով էլ իրականության ճանաչման գործընթացը սկսվում և ավարտվում է պրակտիկայով:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են տնտեսագիտության տեսության ծագման և զարգացման փուլերը:
3. Որո՞նք են տնտեսագիտության տեսության զարգացման ուղղությունները:
4. Որո՞նք են տնտեսագիտության տարբերությունները ավանդական քաղաքատնտեսությունից:
5. Ո՞րն է տնտեսագիտության տեսության առարկան:
6. Որո՞նք են մակրոտնտեսագիտական և միկրոտնտեսագիտական վերլուծությունների նպատակները:
7. Որո՞նք են տնտեսագիտության տեսության գործառույթները:
8. Որո՞նք են տնտեսագիտության տեսության ուսումնասիրման մեթոդները:

ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔԵՐԸ

2.1. Տնտեսագիտության տեսության հիմնական հասկացությունները

Հասարակության ամեն մի հասուն անդամ իր գործունեության ընթացքում առնչվում է բազմաբնույթ և բազմաթիվ տնտեսական երևույթների և հասկացությունների (կատեգորեաների) հետ (օրինակ, աշխատավարձ, հարկ, եկամուտ, ինքնարժեք, գին, բյուջե և այլն), ընդունելով դրանք որպես իրական կյանքի փաստեր: Սակայն այդ փաստերը տնտեսական բարդ բնույթ ունեն և առանց տնտեսագիտության տեսության չեն կարող մատչելի լինել հասարակության անդամների համար, որով էլ հենց պայմանավորված է տնտեսագիտության անհրաժեշտությունը:

Տնտեսության զարգացման ցանկացած փուլի համար օբյեկտիվ պայման են հասարակության պահանջմունքները և ռեսուրսները:

Պահանջմունքը բավարարում պահանջող կարիք է: Մարդու պահանջմունքները բազմազան են և անընդհատ փոխվում են՝ ժամանակից և հանգամանքներից կախված: Ըստ բավարարման աստիճանի դրանք լինում են՝

- **կենսականորեն** անհրաժեշտ պահանջմունքներ, որոնց բավարարումն անհրաժեշտ է մարդու կենսագործունեությունը պահպանելու համար (սնունդ, հագուստ և կացարան, օդ և ջուր, առողջ շրջակա միջավայր և այլն)
- **հոգևոր** պահանջմունքներ, որոնք որոշում են մարդու կուլտուրական մակարդակը և կյանքի հարմարավետ պայմաններ ստեղծում (գրքեր, նկարներ, երաժշտական ստեղծագործություններ, պերճանքի առարկաներ և այլն):

Այն առարկաները, որոնք բավարարում են մարդկանց պահանջմունքները, կոչվում են ***բարիքներ***: Դրանց մի մասը գոյություն ունի անսահմանափակ քանակով (օրինակ, օդը), իսկ մյուս մասը՝ սահմանափակ է: Վերջիններս կոչվում են *տնտեսական բարիքներ* (ապրանք կամ ծառայություն): Դրանց ստացման համար անհրաժեշտ են համապատասխան ռեսուրսներ: Այն պահանջմունքները, որոնք բավարարվում են ապրանքների և ծառայությունների սպառումով, անվանվում են *տնտեսական պահանջմունքներ:*

Պահանջմունքների բավարարման նպատակով ռեսուրսների ծախսման հետ են կապված տնտեսական զարգացման բոլոր հիմնախնդիրները, որոնց լուծումները հիմնվում են երկու տնտեսական հանրահայտ ճշմարտությունների վրա:

Հասարակության պահանջմունքներն անսահմանափակ են:

Հասարակության ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ծառայությունների տրամադրման և ապրանքների արտադրության համար, սահմանափակ են:

Նշված հակասությունը լուծվում է ընտրության միջոցով:

Տնտեսական բարիքների արտադրության համար անհրաժեշտ աղբյուրները կոչվում են ***արտադրական ռեսուրսներ***: Նրանք լինում են չորս հիմնական տիպի:

1. Մարդկային. մարդկանց ֆիզիկական և մտավոր ունակությունները, պրոֆեսիոնալ հմտությունը, ձեռներեցական ունակությունը (արտադրության բոլոր գործոնների առավել արդյունավետ օգտագործման ունակությունը):

2. Բնական. հողն ու նրա ընդերքը (վարելահողերը, անտառները, օգտակար հանածոների հանքավայրերը, ջրային ռեսուրսները և այլն): Այդ ռեսուրսների մի մասը սպառվում է արտադրության ընթացքում, մյուսները ինքնավերականգնվում են, իսկ երրորդները կարող են վերականգնվել միայն մարդկանց գիտակցական ջանքերով:

3. Նյութական. մարդու աշխատանքով ստեղծված բոլոր տեսակի արտադրության միջոցները՝ շենքերը, սարքավորումները, մեքենաները, մեխանիզմները և այլ օբյեկտները: Առկա նյութական ռեսուրսների և դրանց օգտագործման եղանակների ամբողջ բազմազանությունը կախված է տեխնոլոգիական բազայից, որն իր հերթին արտացոլում է գիտատեխնիկական գիտելիքների մակարդակը և նրա զարգացմանն ուղղված այլ ռեսուրսների քանակը:

4. Ֆինանսական. դրամական այն միջոցներն են, որոնք հասարականությունը ի վիճակի է տրամադրել արտադրություն կազմակերպելու համար:

Ի տարբերություն ռեսուրսների, գործոնները դառնում են այդպիսին, շնորհիվ նրանց փոխգործակցության գործառույթի: Արտադրությունը միշտ էլ եղել և մնում է տարբեր գործոնների փոխադարձ կապերի միասնություն:

Տնտեսագիտության տեսությունը արտադրության հիմնական գործոնները բաժանում է երեք խմբի:

1. «Հողը»՝ որպես արտադրության գործոն, ունի եռակի նշանակություն.

- լայն իմաստով դա նշանակում է, որ արտադրության գործընթացում օգտագործվող բոլոր տեսակի հողերը բնական ռեսուրս են
- մի շարք ճյուղերում (ագրարային,արդյունահանող արդյունաբերություն և այլն) հողը հանդես է գալիս որպես տնտեսվարման օբյեկտ, որտեղ նա միաժամանակ և՛ աշխատանքի առարկա է և՛ աշխատանքի միջոց
- տնտեսության մասշտաբով հողը կարող է հանդես գալ որպես սեփականության օբյեկտ:

2. «Կապիտալը» նյութական և ֆինանսական ռեսուրսներն են, որոնք օգտագործվում են արտադրության գործընթացում:

3. «Աշխատանքը» որպես արտադրության գործոն, մարդկանց այն մասն է, որն անմիջապես մասնակցում է արտադրության գործընթացին կամ իրականացնում որոշակի ծառայություններ:

Այս գործոնի մեջ է ներառվում նաև ձեռներեցությունը՝ մարդկանց առանձին խմբի գործունեությունը, որոնք ունեն կազմակերպչական և այլ ունակություններ:

Ինչպես արդեն նշել ենք, տնտեսագիտության տեսությունը ուսումնասիրում է սահմանափակ ռեսուրսների պայմաններում հասարակության և նրա անդամների պահանջմունքների առավել լրիվ բավարարումը: Դա

յուրաքանչյուր արտադրության նպատակն է: Հետևաբար, այն գիտություն է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին կամ արդյունավետության մասին:

Արդյունավետություն նշանակում է կորուստների բացակայություն կամ տնտեսության ռեսուրսների հնարավորին չափ արդյունավետ օգտագործում: Արտադրության արդյունավետությունն իրացվում է, երբ հասարակությունն ի վիճակի չէ որևէ ապրանքի արտադրությունը մեծացնել, առանց կրճատելու մեկ ուրիշի արտադրությունը:

Արդյունավետ տնտեսությունը գտնվում է իր արտադրության հնարավորության սահմանի (ԱՀՍ) վրա, որը ցույց է տալիս արտադրանքի այն առավելագույն քանակությունը, որ տնտեսությունը կարող է ստանալ տրված առկա տեխնոլոգիական գիտելիքների ու ներդրումների քանակության պայմաններում: ԱՀՍ-ն ներկայացնում է հասարակությանը մատչելի ընտրությունների ցանկը: Վերը նշվածը կարելի է պատկերել հետևյալ կերպ (նկար 4):



ա) բ)

Նկար 4. Արտադրության և հնարավորության սահման

Այլ կերպ, այս կորն անվանում են ***արտադրական հնարավորությունների կոր***: Յուրաքանչյուր կետ այդ կորի վրա իրենից ներկայացնում է երկու ցանկացած արդյունքների արտադրության առավելագույն ծավալը: Հասարակությունը ստիպված է որոշել արդյունքների այն զուգակցությունը (կոմբինացիան), որն ինքը ցանկանում է (օրինակ, ավելի շատ սննդամթերք, թե՞ պերճանքի առարկա): Ռեսուրսների սահմանափակությունն անիրագործելի է դարձնում արդյունքների արտադրության ցանկացած զուգակցում, որը գտնվում է ԱՀՍ-ի կորից դուրս տեղադրված կետում: Օրինակ, եթե վերցնենք W կետը (տես՝ նկար 4բ) ԱՀՍ-ի ներսում, ապա կտեսնենք, որ տնտեսությունը բոլորովին չի գտնվում իր արտադրության և հնարավորության սահմանի վրա, առկա են չօգտագործվող ռեսուրսները և անարդյունավետությունը: Իսկ U կետը գտնվում է սահմանից դուրս՝ «անհնար տիրույթում», քանի որ մենք չենք կարող «X» արդյունքից ավելացնել, առանց հրաժարվելու «Y» արդյունքի որոշ քանակից:

Հիմնական միջոցների և աշխատուժի աճող ներդրումների ու կատարելագործված տեխնոլոգիայի արդյունքում ԱՀՍ-ն տեղաշարժվում է կորից դեպի դուրս: Երկիրը տնտեսության աճի հետ մեկտեղ բոլոր ապրանքներից կարող է ավելի շատ ունենալ: Ընդ որում, աղքատ երկրները պետք է իրենց ռեսուրսների զգալի մասը հատկացնեն սննդամթերքների արտադրությանը, մինչդեռ հարուստ երկրները արտադրական հնարավորության աճին զուգընթաց կարող են թույլ տալ ավելի մեշ շքեղություններ: Տես՝ նկար 5 և 6:





Նկար 5. Աղքատ երկրի ԱՀՍ **Նկար 6. Զարգացած երկրի ԱՀՍ**

Սակավության և ընտրության հիմնահարցերից բացի, կարևոր է մեկ անգամ ևս հիշել տնտեսական գործունեության ընթացքում մարդու վարքագծի ռացիոնալության մասին, այսինքն՝ ծախսերի նվազեցումը և առավելագույն օգուտի ստացումը, որն էլ հանդիսանում է ռացիոնալ տնտեսական վարքագծի էությունը: «Արդյունք-ծախսեր» հարաբերությունը ոչ այլ ինչ է, քան ***արդյունավետության (էֆեկտիվության) (էֆ)*** ամփոփ ցուցանիշ: Այն կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝ էֆ = արդյունք/ծախքեր: Արտադրության արդյունավետության բանաձևը բազմատարբերակ է: Այն բնութագրվում է ցուցանիշների մի ամբողջ համակարգով:

Աշխատանքի արտադրողականություն. Այն որոշվում է միավոր ժամանակում ստացված արդյունքով: Աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա ազդում են աշխատողների որակավորման աստիճանն ու արտադրական փորձը, արտադրության կազմակերպման մակարդակը, նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրումը: Այն բնութագրում է արդյունքի (Ա) մեծության հարաբերությունը կենդանի աշխատանքի ծախքերին ($Ա_ծ$) (ԱԱ=Ա/$Ա_ծ$): Դրա հակադարձ մեծությունն ***աշխատանքի աշխատատարությունն է*** (ԱՏ=$Ա_ծ$/Ա):

Նյութահատույց, որը բնութագրում է արդյունքի (Ա) մեծության հարաբերությունը աշխատանքի առարկաներում մարմնացած ծախքերին ($Ն_ծ$) (ՆՀ=Ա/$Ն_ծ$): Դրա հակադարձ մեծությունը՝ արտադրանքի ***նյութատարությունն է*** (ՆՏ=$Ն_ծ$/Ա), որը ցույց է տալիս միավոր արտադրանքի վրա նյութերի, վառելիքի, հումքի, էներգիայի և այլ ռեսուրսների տեսակարար ծախսումները արդյունքի միավորի մեջ: Նյութատարության իջեցումը ժամանակակից պայմաններում արտադրության արդյունավետության բարձրացման գլխավոր ուղղություններից մեկն է:

Ֆոնդահատույցը, որը բնութագրում է հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը, չափվում հիմնական ֆոնդերի մեծությանն ընկնող արտադրանքի քանակով և արտահայտվում է արդյունքի (Ա) մեծության հարաբերությունով հիմնական արտադրական ֆոնդերի (Ֆ) արժեքին (ՖՀ=Ա/Ֆ): Դրա հակադարձ մեծությունն է ***ֆոնդատարությունը՝*** (ՖՏ=Ֆ/Ա): Հիմնական արտադրական ֆոնդերի արդյունավետ օգտագործումը բնութագրում է նաև ***ֆոնդազինվածությունը՝*** (ՖԶ), որն արտահայտվում է հիմնական արտադրական ֆոնդերի և կենդանի աշխատանքի ծախսերի (աշխատողների թվի) հարաբերությամբ (Ֆ/$Ա_թ$) կամ ՖԶ = Ֆ/$Ա_ծ$:

Գոյություն ունի սերտ կապ ֆոնդահատույցի (ՖՀ), աշխատանքի արտադրողականության (ԱԱ) և ֆոնդազինվածության (ՖԶ) միջև, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝ ՖՀ=ԱԱ/ՖԶ: Այստեղից երևում է, որ ֆոնդահատույցն աճում է այն դեպքում, երբ աշխատանքի արտադրողականությունն աճում է ավելի արագ, քան ֆոնդազինվածությունը և, ընդհակառակը, ֆոնդահատույցն իջնում է, երբ աշխատանքի արտադրողականության դինամիկան հետ է մնում ֆոնդազինվածության աճից:

Թվարկված մասնակի ցուցանիշներն արտադրության արդյունավետության հիմնական գումարելիներն են և կարող են փոփոխվել տարբեր ուղղություններով: Այդ պատճառով էլ շուկայական տնտեսության ուսումնասիրության կենտրոնում դրվում է արդյունավետության հիմնահարցը, ինչպես սահմանափակ ռեսուրսների պայմաններում հասնել արտադրական ծախսումների առավելագույն հատույցի: Արտադրության արդյունավետության բնութագրման համար օգտվում են ընդհանուր (ինտեգրալ) բանաձևից.

$$ԷՖ = Ա / Ա_{շ.ք.} + K_1Նծ + K_2Ֆ$$

որտեղ՝

ԷՖ - ն արդյունավետությունն է

Ա-ն արդյունքը

$Ա_{շ.ք.}$-ն զբաղված աշխատողների թիվը

Նծ-ն նյութական ծախքերը

Ֆ-ն հիմնական արտադրական ֆոնդերի արժեքը

K_1 և K_2 - նորմատիվային գործակիցները, որոնցով նյութական ծախքերն ու հիմնական արտադրական ֆոնդերի արժեքը բերվում են միևնույն միավորի աշխատողների թվի հետ:

Այսպիսով, հասարակական արտադրության արդյունավետությունը բնութագրվում է մասնավոր, ամփոփ ու կոմպլեքս ցուցանիշների ամբողջությամբ, որը և լուծում է հասարակական արտադրության արդյունավետության ամբողջական արտահայտության խնդիրը, տալիս այս հիմնախնդրի բոլոր կողմերի բազմակողմանի և կոմպլեքս ուսումնասիրման հնարավորությունը:

Ցուցանիշների այս ամբողջության օգտագործումը նպաստում է հասարակական արտադրության արդյունավետության բազմակողմանի բացահայտման, հաշվառման և, հետևաբար, աճի հնարավորությունների լրիվ օգտագործմանը:

2.2. Տնտեսական համակարգերը, նրանց տիպերը և մոդելները: Անցումային համակարգը Հայաստանի Հանրապետությունում

Մարդկային հասարակության պատմությանը հայտնի է տնտեսության կազմակերպման երկու հիմնական ձև՝ ***բնափակ*** և ***ապրանքային:*** Ընդ որում, միևնույն ձևը կարող է գոյություն ունենալ արտադրության տարբեր տնտեսական համակարգերում: Այսպես, բնատնտեսությունը կազմակերպատնտեսական հարաբերությունների այնպիսի համակարգ է, որի ժամանակ աշխատանքի արդյունքները նախատեսվում են արտադրողի սեփական պահանջմունքների բավարարման, ներտնտեսական սպառման համար: Այն բնորոշ է արտադրության մինչկապիտալիստական բոլոր եղանակներին: Մինչև 50-ական թ. բնատնտեսությամբ էին զբաղված զարգացող երկրների բնակչության 50-60%-ը:

Ապրանքային արտադրությունը կազմակերպատնտեսական հարաբերությունների այնպիսի համակարգ է, որի ժամանակ արդյունքները ստեղծվում են շուկայում վաճառելու համար: Ապրանքային ձևը, ծագելով դեռևս նախնադարյան համայնակարգի քայքայման պայմաններում, կապիտալիզմի ժամանակ դառնում է տիրապետող, նպաստելով հասարակության տնտեսական առաջընթացին:

Ապրանքային արտադրության առաջացման և գոյության նյութական պայմանը ***աշխատանքի հասարակական բաժանումն է*** և ***մասնագիտացումը*** տարբեր տնտեսական միավորների միջև, իսկ նրա անմիջական պատճառը՝ արտադրողների ***տնտեսական մասնատվածությունն*** է իրարից:

Ապրանքային արտադրությանը հիմնականում բնորոշ է ընդլայնված վերարտադրությունը, իսկ բնատնտեսությանը՝ պարզ վերարտադրությունը:

Տնտեսության կազմակերպման բնափակ և ապրանքային ձևերը հակադիր են միմյանց և տարբերվում են հետևյալ հատկանիշներով՝

- աշխատանքի հասարակական բաժանման զարգացածությամբ կամ ոչ զարգացածությամբ
- տնտեսության մեկուսացմամբ կամ բացվածությամբ
- արտադրվող արդյունքի տնտեսական ձևով, բարիքներ արտադրողների և սպառողների միջև տնտեսական կապերի ձևերով (բնափակի ժամանակ նրանք զարգանում են «արտադրություն-բաշխում-սպառում», իսկ ապրանքայինի՝ «արտադրություն-փոխանակություն-սպառում» բանաձևով): Տես՝ նկար 7 և 8



Նկար 7. Բնափակ տնտեսության հիմնական գծերը



Նկար 8. Ապրանքային տնտեսության հիմնական գծերը

Սակայն պետք է նշել, որ տնտեսության կազմակերպման երկու ձևերն էլ ունեն և ընդհանուր հատկանիշներ, երկու դեպքում էլ աշխատանքի արդյունքը բարիք է, որը բավարարում է մարդու այս կամ այն պահանջմունքը:

Տնտեսական համակարգը (տնտեսավարման կարգ)՝ սեփականության հարաբերությունների և կազմակերպահրավական ձևերի հիման վրա իրականացվող բոլոր տնտեսական գործընթացների ամբողջությունն է: Հասկանալով նրա էությունը, կարելի է հասկանալ նաև հասարակության տնտեսական կյանքի շատ օրինաչափություններ:

Ցանկացած տնտեսական համակարգի կարևոր տարրերն են *սոցիալ-տնտեսական հարաբերությունները*, որոնք հիմնվում են՝

- տնտեսական ռեսուրսների և գործունեության արդյունքների սեփականության ձևերի վրա
- տնտեսական գործունեության կազմակերպական ձևերի վրա
- տնտեսական մեխանիզմի վրա
- ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև կոնկրետ տնտեսական կապերի վրա:

Վերջին 1.5-2 հարյուրամյակներում աշխարհում գործում են տնտեսական համակարգերի տարբեր տիպեր:

Երկու շուկայական տիպի համակարգեր՝

- ***Ազատ մրցակցության շուկայական (զուտ կապիտալիզմ),*** որին բնորոշ են ռեսուրսների մասնավոր սեփականությունը, ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսական գործունեության կարգավորման շուկայական մեխանիզմը, բազմաթիվ ինքնուրույն գործող գնորդների և վաճառողների առկայությունը:
- ***Ժամանակակից շուկայական (ժամանակակից կապիտալիզմ),*** որին բնորոշ են ճկուն շուկայական համակարգը, զարգացած արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները, պետության ակտիվ միջամտությունը ազգային տնտեսության կարգավորմանն ու զարգացմանը: Դրա հետ կապված, անընդհատ փոփոխվում են տնտեսական մեխանիզմները, տնտեսական գործունեության կազմակերպական ձևերը և տնտեսավարող սուբյեկտների միջև տնտեսական կապերը:

Ինչպես նաև երկու ոչ շուկայական տիպի համակարգեր՝

- ***Ավանդական,*** որին բնորոշ են տեխնիկական առաջընթացի կտրուկ սահմանափակումը և ձեռքի աշխատանքի լայն տարածումը, լճացումը՝ սոցիալ-տնտեսական հարաբերություններում, տնտեսության բազմակացութաձևությունը և այլն:
- ***Վարչահրամայական***, որին բնորոշ են հանրային սեփականությունը, սպեցիֆիկ ձևերով էկոնոմիկայի մենաշնորհացումը և բյուրոկրատացումը, կենտրոնացված տնտեսական պլանավորումը, որպես տնտեսական մեխանիզմի հիմք:

Բացի այդ, նախկին սոցիալիստական երկրների (ԱՊՀ, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների, ինչպես նաև Չինաստանի և Վիետնամի) անցումը շուկայական հարաբերություններին հանգեցրեց ***անցումային տիպի*** տնտեսական համակարգերի ձևավորմանը:

Պետք է նշել, որ ռեալ իրականության մեջ աշխարհում ոչ մի տնտեսական համակարգ հանդես չի եկել զուտ ձևով: Նրանցից յուրաքանչյուրն օգտագործում է ռեսուրսների բաշխման համամասնությունները որոշող և տնտեսության հիմնական որոշումների վրա ազդող մեխանիզմների տարբեր զուգակցումներ:

Դրա հետ մեկտեղ, գոյություն ունեցող համաշխարհային տնտեսական համակարգերից շատերը XX դարի վերջին տասնամյակներում հիմնավոր փոփոխություններ են կրել: Օրինակ, ավանդական համակարգի տարրերն առավել ակնհայտ են դրսևորվում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրների գյուղական վայրերում: Սակայն այդ երկրները իրենց վրա զգացել են շուկայական կամ վարչական տնտեսության ազդեցությունը, իսկ Չինաստանում, որը համարում է իրեն վարչական տիպի տնտեսության երկիր, գոյություն ունեն ավանդական և շուկայական տիպի տարրեր: Այսինքն՝ ձևավորվում են ***խառը*** կամ ***հիբրիդային համակարգեր***:

Այս կամ այն տնտեսական համակարգի շրջանակներում գոյություն ունեն առանձին երկրների և ռեգիոնների տնտեսական զարգացման տարբեր մոդելներ: Այսպես, վարչահրամայական համակարգում գոյություն ունեին սովետական, չինական և ուրիշ մոդելներ: Իսկ էկոնոմիկայի պետական և մասնավոր հատվածների փոխազդեցության վրա հիմնված ժամանակակից շուկայական տնտեսությունը՝ կախված այդ ազդեցության ինտենսիվության աստիճանից և պետության կողմից լուծվող առաջնային խնդիրներից, առանձնացնում է ժամանակակից շուկայական տնտեսության երեք խոշոր մոդել՝ սոցիալական շուկայական տնտեսություն (գերմանական մոդել), խառը տնտեսություն (ամերիկյան մոդել) և կորպորատիվ տնտեսություն (ճապոնական, հարավ-կորեական և շվեդական մոդել):

Ցանկացած հասարակությունում գոյություն ունեցող տնտեսության կազմակերպման ազգային մոդելները կարող են կրել ամենատիպիկ երկրի անվանումը, քանի որ երկրները տարբերվում են իրենց պատմությամբ, տնտեսական զարգացման մակարդակով, սոցիալական և ազգային պայմաններով:

Դիտարկենք այս մոդելներից մի քանիսը:

Ամերիկյան մոդելը լիբերալ շուկայական կապիտալիստական մոդել է, որը կառուցված է անհատականության, ձեռնարկատիրական ակտիվության, բնակչության առավել ակտիվ մասի հարստացումն ամենայն կերպ խրախուսելու համակարգի վրա: Բնակչության անապահով խմբերի համար մասնակի արտոնությունների և նպաստների հաշվին ստեղծվում է կյանքի ընդունելի մակարդակ: Սոցիալական հավասարության կամ արդարության խնդիր այստեղ ընդհանրապես չի դրվում: Այս մոդելը հիմնված է մասնավոր սեփականության, շուկայական մրցակցային մեխանիզմի, կապիտալիստական դրդապատճառների, աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակի և անձնական հաջողության նվաճման մասսայական կողմնորոշման վրա: Ամերիկյան մոդելին ամբողջությամբ վերցված բնորոշ է նաև պետական ներգործությունը, որն ուղղված է կայուն ենթակառուցվածքի և տնտեսական հավասարակշռության պահպանմանը:

Գերմանական մոդելը սոցիալական - շուկայական տնտեսության մոդել է, որում մրցակցային սկզբունքների ընդարձակումը կապվում է հատուկ սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման հետ, որը մեղմացնում է շուկայի և կապիտալի թերությունները, ձևավորում բազմաշերտ ինդուստրիալ սոցիալական քաղաքականության սուբյեկտներ: Այն ձևավորվել է հիտլերյան ժամանակների կոնցեռների վերացման և տնտեսության բոլոր ձևերին (խոշոր, միջին, մանր) կայուն զարգացման հնարավորության տրամադրման շնորհիվ: Պետությունն ակտիվորեն ազդում է գների, մաքսատուրքերի և տեխնիկական նորմաների վրա և կոչված է երաշխավորելու ազատ գներ և մրցակցություն, շուկայական տնտեսության հավասարակշռվածություն և ապահովել նրա զարգացման սոցիալական ուղղվածությունը:

Շվեդական մոդելը իր դասական ձևով սոցիալական մոդել է, որը տարբերվում է բնակչության ամենաանապահով շերտերի օգտին ազգային եկամտի վերաբաշխմամբ, ունեցվածքային անհավասարության կրճատմանն ուղղված ուժեղ սոցիալական քաղաքականությամբ: Այստեղ պետության ձեռքում է գտնվում հիմնական ֆոնդերի ընդհամենը 4%-ը, սակայն պետական ծախսերի բաժինը 90-ական թ. կազմել է շուրջ 70% (համախառն ներքին արդյունքի): Ընդ որում, այդ ծախսերի կեսից ավելին ուղղվում է սոցիալական կարիքներին: Չնայած տնտեսական գործունեության 90%-ից ավելին իրականացնում են մասնավոր ֆիրմաները, կառավարությունը եռանդուն մասնակցում է տնտեսական կայունության ապահովմանը և եկամուտների վերաբաշխմանը: Բնականաբար, դա հնարավոր է միայն հարկավորման բարձր նորմայի պայմաններում: Այդպիսի մոդելը ստացել է «ֆունկցիոնալ սոցիալիզացիայի» անվանումը, որի ժամանակ արտադրության ֆունկցիան ընկնում է մրցակցային շուկայական պայմաններում գործող մասնավոր ձեռնարկությունների վրա, իսկ բարձր կենսամակարդակի (ներառյալ զբաղվածությունը, կրթությունը, սոցիալական ապահովագրումը) և ենթակառուցվածքի բազմաթիվ տարրերի (տրանսպորտի, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների) ապահովման գործառույթը՝ պետության վրա:

Ճապոնական մոդելի հիմքում ընկած է կոլեկտիվիզմի, փոխադարձ օգնության սկզբունքը: Բնակչության բարձր կենսամակարդակը ապահովվում է աշխատավարձի նկատմամբ աշխատանքի արտադրողականության առավել բարձր աճի տեմպերով, որի հաշվին նվաճվում է արտադրանքի ինքնարժեքի իջեցում և համաշխարհային շուկայում նրա մրցունակության կտրուկ բարձրացում: Ունեցվածքային շերտավորմանը խոչընդոտներ չեն դրվում: Այդպիսի մոդելը հնարավոր է միայն ազգային ինքնագիտակցության զարգացման բացառիկ բարձր մակարդակի, կոնկրետ մարդու շահերի համեմատությամբ ազգային շահերի գերակայության դեպքում, երբ բնակչությունը պատրաստ է երկրի բարգավաճման համար գնալ որոշակի նյութական զոհաբերությունների:

Հարավ-կորեական մոդելը շատ ընդհանուր գծեր ունի ճապոնականի հետ: Մասնավորապես դա վերաբերում է երկրի բնակչության հոգեբանական խառնվածքի առանձնահատկություններին, նրա բարձր աշխատասիրությանը և պատասխանատվությանը: Երկու մոդելների համար էլ ընդհանուր է պետական մարմինների ակտիվ մասնակցությունը տնտեսության վերակառուցմանը: Յուրահատկությունը կայանում է նրանում, որ շուկայական հարաբերությունների թույլ զարգացվածության հետևանքով հարավ-կորեական պետությունը նպատակաուղղված նպաստեց շուկայական տնտեսության հզոր հենակետի (պլացդարմի) ստեղծմանը՝ խոշոր կորպորացիաների ձևով, որոնք հետագայում վերածեցին ֆինանսաարդյունաբերական կոնգլոմերատների: Բացի դրանից, պետությունը մեծ ուշադրություն է դարձնում փոքր և միջին բիզնեսին: Վերջապես, այստեղ առկա է գործառույթների հստակ բաժանումը կենտրոնի և ծայրամասերի միջև, որը նույնպես նպաստեց հզոր շուկայական տնտեսության ստեղծմանը:

Չինական մոդելը ձևավորվել է «մաքուր սոցիալիզմի» տնտեսությունից անցումային պայմաններում: Շուկայական մեխանիզմը և ոչ պետական հատվածը վերափոխման տարիներին զգալիորեն ուժեղացրին իրենց դիրքերը, սակայն սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ պետական կարգավորումն «ուղղորդիչ պլանավորման» ձևով և սոցիալական երաշխիքները մնում են որպես առաջնային: Այդպիսի մոդելը կարող է որոշվել որպես գերազանցապես սոցիալիստական մոդել՝ խառը տնտեսությամբ:

Հայաստանի Հանրապետությունում այսօր ձևավորվում է այսպես կոչված, ***անցումային տնտեսական համակարգ,*** որն իրենից ներկայացնում է վարչահրամայական տարրերի և ժամանակակից շուկայական համակարգերի խառնուրդ (որոշ երկրներում դրան են խառնված նաև շուկայական ազատ մրցակցության և ավանդական համակարգի տարրերը: Որո՞նք են անցման շրջանի տնտեսության բնորոշ գծերը.

- սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի տնտեսական օրենքների յուրահատուկ զուգորդումը (դրանց մասնակիորեն չեզոքացումը), ինչպես նաև անցման շրջանի սեփական օրենքների առկայությունը
- ժամանակակից շուկայական տնտեսության տարրերի աստիճանական ուժեղացումը և վարչահրամայական համակարգի տարրերի թուլացումը
- հարկային և դրամավարկային քաղաքականության սկզբունքների ոչ լիարժեք գործողությունը
- ազգային հարստության թալանը, կաշառակերության ուժեղացումը, մեծ չափերի հասնող ստվերային տնտեսության առկայությունը և այլն:

Տնտեսական բարեփոխումների առաջին փուլի գլխավոր արդյունքը Հայաստանում հանդիսացավ նախկին տնտեսական համակարգից կտրուկ խզումը և շուկայական տնտեսության հիմքերի ձևավորումը: Սակայն կառուցվածքային փոփոխությունները համեմատաբար այդքան էլ խորը չեն, որքան որ անհրաժեշտ է շուկայական տնտեսության լայն գործողության համար:

ՀՀ-ում շուկային անցման ճանապարհին ձեռք բերված ոչ այնքան լիարժեք հաջողությունները բավականին թանկ նստեցին հասարակության վրա (տնտեսության և կենսամակարդակի կտրուկ անկում, աշխատունակ բնակչության զգալի մասի և կապիտալի արտահոսք, խոշոր չափերի հասնող փոխադարձ չվճարումներ, ստվերային տնտեսության ծաղկում, գիտական ներուժի քայքայում և այլն): ՀՀ տնտեսության այսպիսի վիճակի հիմնական պատճառներն են՝

- ամբողջատիրական կառավարման համակարգից շուկայական էկոնոմիկային անցումը
- արդյունաբերության ճյուղային կառուցվածքի անհամապատասխանությունը շուկայական տնտեսությանը
- դրամական և հարկային քաղաքականության, ինչպես նաև տնտեսական համակարգի վերակառուցումը
- ԽՍՀՄ փլուզումը և նախկին միութենական հանրապետությունների հետ տնտեսական կապերի խզումը կամ մեծ չափով թուլացումը
- երկրաշարժի հետ կապված ավերածությունները և դրանց վերականգնման բարդությունները
- պատերազմական գործողությունները Արցախում և հանրապետության շրջափակումը
- հանրապետության տնտեսության զարգացման համար բազային նշանակության արտադրությունների (ատոմային էլեկտրակայան, Նաիրիտ, պղնձաձուլական կոմբինատ և այլ ձեռնարկություններ) տնտեսապես չհիմնավորված փակումը
- հանրապետության մեծ տեսակարար կշիռ ունեցող ռազմաարդյունաբերական համալիրի չծրագրավորված կոնվերսիան և այլ մակրոտնտեսական գործոններ (նկար 9):



Նկար 9. Տնտեսական համակարգեր և տնտեսության կազմակերպման մոդելներ

2.3. Սեփականության տնտեսական մեկնաբանումը: Սեփականաշնորհման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

Սեփականությունը տնտեսական իմաստով արտահայտում է արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման գործընթացում մարդկանց միջև օբյեկտիվորեն կազմավորված այն հարաբերությունները, որոնցում իրականացվում է այս կամ այն բարիքի յուրացումը:

Սեփականության բազմակողմանի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պարզել երեք սոցիալ-տնտեսական հարց.

1. Ո՞վ (տնտեսական ինչպիսի՞ սուբյեկտ) է տիրում տնտեսական իշխանությանը, յուրացնում արտադրության գործոնները և արդյունքները:

2. Ի՞նչպիսի տնտեսական կապեր են նպաստում արտադրության պայմանների լավ օգտագործմանը:

3. Ո՞ւմ են բաժին ընկնում տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

Դրան համապատասխան սեփականության տնտեսական հարաբերությունների միասնական համակարգը ներառում է հետևյալ տարրերը՝

ա) արտադրության գործոնների և արդյունքների յուրացում

բ) նյութական և այլ միջոցների տնտեսական օգտագործում

գ) սեփականության տնտեսական իրացում:



Նկար 10. Սեփականության հարաբերությունների միասնական համակարգ

Պատմությանը հայտնի են սեփականության տարբեր ձևեր, որոնց կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է տնտեսության տարբեր ոլորտներում արտադրողական ուժերի զարգացման, աշխատանքի հասարակական բաժանման և կազմակերպատնտեսական հարաբերությունների հասունացման աստիճանով: Սեփականության այս կամ այն ձևը, որը ծագում, ամրապնդվում և վերանում է պատմական ասպարեզից, կարող է խթանել կամ արգելակել հասարակության զարգացումը:

Սեփականության յուրաքանչյուր ձև ունի իր բովանդակությունը, որը պայմանավորված է այդ ձևին վերաբերող սեփականության որոշակի օբյեկտներով ու սուբյեկտներով:

Օբյեկտ են այն իրերը, առարկաները կամ տնտեսական համակարգի օղակները, որոնց վրա տարածվում է տվյալ սեփականությունը (գործիքները, հողը, ապրանքը, ստրուկը, ճորտը և այլն):

Սուբյեկտ են այն մարդիկ, կոլեկտիվները, հասարակության կառուցվածքի այն օղակները, որոնք տնօրինում և օգտագործում են սեփականության տվյալ օբյեկտները (տոհմային ավագանին, ստրկատերը, ֆեոդալը, տնայնագործը, մանրապրանքարտադրողը, մոնոպոլիստը, պետությունը և այլն):

Սեփականության բոլոր տարատեսակները և ձևերը կարելի է առանձնացնել երկու խոշոր խմբում:

I. ***Անհատական սեփականություն,*** որտեղ սեփականության որոշակի օբյեկտներ տնօրինվում և օգտագործվում են առանձին անհատների կողմից: Նրա տարատեսակներից են մասնավոր սեփականությունը և անձնական սեփականությունը:

II. ***Ընդհանուր սեփականություն,*** որտեղ տարբեր խմբերում միավորված մարդիկ որոշակի օբյեկտներ համարում են որպես իրենց համատեղ պատկանելության առարկա: Այն իր հերթին կարելի է բաժանել ընդհանուր մասնային (բաժնեմասնային) սեփականության և ընդհանուր միասնական (համատեղ) սեփականության: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր տարատեսակները: Տես՝ նկար 11:



Նկար 11. Սեփականության ձևերը

Սեփականատիրական հարաբերությունների վերակառուցումը տնտեսական բարեփոխումների հիմքն է:

Տնտեսավարման արդյունավետ ձևերին անցնելուն մեծապես նպաստում են սեփականության նախ ապապետականացումը, ապա՝ բազմաձևությանն անցնելը:

Ապապետականացման տակ, բառի ամենալայն իմաստով, պետք է հասկանալ տնտեսական վերափոխումների այն գործընթացը, որը տանում է պետության՝ որպես տնտեսական հարաբերությունների անմիջական սուբյեկտի, ֆունկցիոնալ դերի աստիճանաբար փոփոխմանը, ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում նրա ձեռնարկատիրական գործունեության կրճատմանը: Ավելի նեղ իմաստով, դա պետական կամ մունիցիպալ սեփականության ազատումն է պետական խնամատարությունից, վճարով կամ անվարձահատույց հանձնելն է մասնավոր սեփականատերերին, բաժնետերերին, կոլեկտիվներին, արտասահմանյան ֆիրմաներին և ուրիշներին:

Ապապետականացումը կարող է կրել տարբեր բնույթ.

- քողարկված
- մասնակի
- ապազգայնացման:

ՀՀ-ում անկախության հռչակումից հետո, իրականացված կառուցվածքային բարեփոխումները, սեփականության ձևերի փոփոխությունը, հատկապես մասնավոր սեփականության ձևավորումը հանդիսացել է անցումային շրջանի հիմնական խնդիրը: Ինչպես գիտենք, ՀՀ-ում իրականացվել է սեփականաշնորհում և այն շարունակվում է: 2001թ. վերջի դրությամբ սեփականաշնորհվել էր 8620 օբյեկտ, որից միայն 174-ը սեփականաշնորհվել էր 2001թ. ընթացքում:

Աղյուսակ 1. Սեփականաշնորհումը Հայաստանում

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ						
Ընդամենը	1994-2001	1997	1998	1999	2001	2000
	8620	2481	824	256	89	174
Ձեռնարկություններ	1643	397	217	54	40	89
Փոքր օբյեկտներ	6927	2058	603	196	43	78
Անավարտ շին. օբյեկտ	50	26	4	6	6	7

Մտահոգիչ միտում էր այն ձեռնարկությունների բաժնի աճը, որոնցում սեփականաշնորհումը չէր կայանում առաջին կամ երկրորդ անգամ:

2001-2003թթ. կառավարությունը հավանություն է տվել 883 ձեռնարկության սեփականաշնորհման, որոնցից յուրաքանչյուրում պետության բաժինը կազմում է մինչև 50%:

Հանրապետությունում շուկայական տնտեսահարաբերությունների կայացման ժամանակաշրջանի մասնավոր հատվածի զարգացման դինամիկան 1990-2001թթ. բնութագրվում էր ստորև բերված տվյալներով:



Նկար 12. Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (ՀՆԱ= 100, տոկոսներով)

Բերված տվյալներից երևում է, որ մասնավոր հատվածի տեսակարար կշիռը 1990-2001թթ. բարձրացել է 7.1 անգամ: Միաժամանակ, հարկ է նշել, որ մասնավոր հատվածի բաժինը գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում ունի ավելի մեծ տեսակարար կշիռ, քան արդյունաբերության մեջ:

Տնտեսական հարաբերությունների վերափոխման առումով ՀՀ հիմնական ուղին անցումն է սեփականության բազմաձևության հիման վրա ազատ շուկայական տնտեսության: Դրա գլխավոր արդյունքն ինքնուրույն և արդյունավետ գործող տնտեսական համակարգի ձևավորումն է: Այդ տեսակետից ՀՀ-ում իրականացված սեփականաշնորհումը կրել է էքստենսիվ բնույթ, երբ պետական ձեռնարկությունները չնչին գումարներով (հիմնականում վաուչերներով) գնվել են առանձին «ձեռներեցների» կողմից և փաստորեն վերածվել անշարժ գույքի ու թալանվել:

Սեփականաշնորհվող օբյեկտների արժեքի 30%-ի չափով բնակչությանը բաժանվեց 3.183 հազար սերտիֆիկատ (վաուչերներ): Մեկ սերտիֆիկատի անվանական արժեքը սկզբնական փուլում գնահատվել էր 10 հազար դրամ, հետագայում՝ 20 հազար դրամ: Բացի այդ, 1994թ. պետական ձեռնարկությունների հաշվեկշռային արժեքի 20%-ը անհատույց տրվեց աշխատավորական կոլեկտիվներին: Դեռ 1997թ. դեկտեմբերի դրությամբ սեփականաշնորհման սերտիֆիկատով վճարումները կազմել էին 57928 մլն դրամ կամ էլ վճարված ողջ գումարի մոտ 95%-ը (նկար 13):



1998թ. ընթացքում սեփականաշնորհման տեմպերը բավականին դանդաղ ընթացան, ինչը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ պատճառներով.

- վարվող խելամիտ քաղաքականությամբ, մասնավորապես՝ միջազգային աճուրդների լայն կիրառմամբ, որը պահանջում էր իրականացման ավելի երկար ժամանակ
- շրջանառության մեջ սեփականաշնորհման սերտիֆիկատների քիչ քանակով և դրանց բարձր շուկայական գնով, որը հավասարվել էր անվանական արժեքին (նկար 14):



Նկար 14. Սեփականաշնորհման սերտիֆիկատների շուկայական գնի դինամիկան

Սեփականաշնորհման գործընթացի սկզբից մինչև 2001թ. վերջը սեփականաշնորհված ձեռնարկությունների, «փոքր» օբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների դիմաց գանձվել է 133 մլրդ դրամ, որից 63.8 մլրդ դրամը վճարվել է սեփականաշնորհման սերտիֆիկատներով, իսկ 69.2 մլրդ դրամը՝ դրամական տեսքով: 1998-2001թթ. սեփականաշնորհումը հիմնականում իրականացվել է դրամական վճարումների ճանապարհով: Այդ թվում՝ միայն 2001թ. այն կազմել է 2.5 մլրդ. դրամ:

2001թ. վերջին սեփականաշնորհումից ստացված եկամուտները արտահայտվում են հետևյալ տվյալներով:

Աղյուսակ 2. Սեփականաշնորհումից ստացված եկամուտներ

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԻՑ ԱՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ (մլրդ դրամ)				
	Առ 1.01.2002	1997	1998	2001
Ընդամենը	133.0	19.4	48.6	2.5
Փոքրով	69.2	0.5	43.8	2.5
Սերտիֆիկատով	63.8	18.9	4.8	0

Բաշխված սեփականաշնորհման սերտիֆիկատների օգտագործման վերջին ժամկետ էր սահմանվել 1998թ. դեկտեմբերի 31-ը: Սերտիֆիկատների մարումը կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Փոքր օբյեկտներ Անավարտ շինարարություն Ձեռնարկություններ

Նկար 15. Սեփականաշնորհման սերտիֆիկատների մարումը 1998 թվականին

1997թ. համեմատ 1998-ին նվազել էին գյուղատնտեսության և քաղաքաշինության ոլորտներում սեփականաշնորհված ձեռնարկությունների տեսակարար կշիռները՝ կազմելով համապատասխանաբար 13.4% և 20.7%՝ նախորդ տարվա 27% և 28.1%-ի դիմաց, աճել էր արդյունաբերության ոլորտինը՝ կազմելով 42.5%՝ նախկին 32.8%-ի դիմաց (նկար 16):



Նկար 16. Սեփականաշնորհումը ըստ ոլորտների

Սեփականաշնորհված ձեռնարկություններում հիմնականում դեռևս չեն իրականացվում կառուցվածքային փոփոխություններ, չեն կատարվում ներդրումներ առավել արդյունավետ ճյուղերում, որն էլ սեփականաշնորհման գործընթացն իր նպատակին չի ծառայեցնում:

Սեփականաշնորհված ձեռնարկությունների տնտեսական գործունեության խոչնդոտներից են՝ շուկայի բացակայությունը, հարկային բեռը և այլն:

Սեփականաշնորհման կայացման գործում կարևորվում է արժեթղթերի երկրորդային շուկայի զարգացումը տնտեսությունում ֆինանսական հոսքերի կարգավորման առումով, որը պահանջում է կապիտալի շուկայի զարգացում, ոչ բանկային ֆինանսական հաստատությունների արդյունավետ գործունեություն: Այս բնագավառի ինստիտուտներից կարևոր է Երևանի ֆոնդային բորսայի զարգացումը, որը հնարավոր է միայն ֆինանսական լծակների կատարելագործմամբ: Սեփականաշնորհման գործընթացին, հատկապես, երբ այն ընթանում է սերտիֆիկատների թողարկմամբ, զգալի աջակցություն պետք է ցուցաբերեն ինվեստիցիոն հիմնադրամները:

Իրականում շրջանառությունից դուրս բերված 3 մլն սերտիֆիկատներով սեփականաշնորհմանը մասնակցել է բնակչության միայն 7%-ը: Փաստորեն բնակչության գերակշռող մասը սերտիֆիկատները չնչին գումարով (3-4 հազար դրամ) վաճառել է և չի մասնակցել սեփականաշնորհմանը: Այս ամենը խիստ բացասական հետևանք ունեցավ, ուժեղացնելով սոցիալական բևեռացումը, ոչնչով չնպաստելով թե՛ տնտեսական աշխուժացմանը և թե՛ պետական բյուջեի դեֆիցիտի կրճատմանը:

Փորձելով բարձրացնել սեփականաշնորհման արդյունավետությունը, ՀՀ կառավարությունը սեփականաշնորհմանը մասնակից է դարձնում նաև արտասահմանյան կապիտալին:

Սեփականության բոլոր ձևերը Հայաստանում գրանցվում և պաշտպանվում են օրենքով: Սակայն դռևս բացակայում են օրենքների իրագործման մեխանիզմները: Չնավորվել է խոշոր բյուրոկրատական ապարատ, որի միջին և ստորին օղակները շահագրգռված չեն մանր ու միջին բիզնեսի զարգացմամբ: Միաժամանակ, սոցիալական գերբևեռացման պայմաններում տեղի է ունենում որոշ ոլորտների մենաշնորհում, որին նպաստում է հակամենաշնորհային օրենսդրության բացակայությունը:

Ապապետականացումը, որպես կանոն, ուղղակի կամ անուղղակի ձևով (մասնակիորեն) կապակցված է ***մասնավորեցման*** գործընթացի զարգացման հետ, որն այդ գործընթացի մի մասն է, իսկ նրա էությունը ցանկացած սեփականության ձևափոխությունն է մասնավորի:

ՀՀ-ում սկզբում մասնավորեցվեցին հողը և հանրային անասունները (հողը՝ կադաստրային գներով, իսկ անասունները՝ հիմնական ֆոնդերում գրանցված արժեքներով տրվեցին գյուղացուն անժամկետ, մասնավոր սեփականության, ժառանգության, վարձակալության և օտարելու իրավունքով), այնուհետև առևտրի օբյեկտները, մանր ու միջին ձեռնարկությունները, ապահովագրական ընկերությունները: Խոշոր ձեռնարկությունները՝ բաժնետիրական ընկերությունների կազմավորման միջոցով:

Անցումը շուկայական տնտեսությանը չի կարող իրականացվել առանց մասնավորեցման: Հայաստանում տնտեսավարման արդյունավետ ձև ճանաչվեց մասնավոր արտադրությունը: Խնդիրն այն է, թե ինչպես անել, որ մասնավորեցումը կատարվի արագ, առողջ ֆինանսական հիմքի վրա, սոցիալական սկզբունքների պահպանմամբ: Այս բոլորը պետք է հաշվի առնվի մասնավորեցման մեխանիզմները որոշելիս:

Մասնավորեցումը կարելի է կատարել մի շարք մեթոդներով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դրական և բացասական կողմերը (նկար 17):



Նկար 17. Մասնավորեցման մեթոդները

ՀՀ-ում մասնավորեցման ընթացքում առաջ են եկել մի շարք հիմնահարցեր, որոնցից կարելի է առանձնացնել.

- մասնավորեցված փոքր օբյեկտների և վարձակալած գույքի դիմաց տարաժամկետ վճարումների չկատարումը, որը կարգավորելու համար ընդունվեց տարաժամկետ վճարումների սանդղակը 10 տարի սահմանող նոր որոշում
- մրցույթների չկայացումը, ներդրողների սակավությունը՝ կապված ներդրումային դաշտի բարձր ռիսկայնությամբ
- անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման դժվարությունները՝ կապված կից հողատարածությունների բացակայության, բարձր արժեքի և դրանց վերաբերյալ հանրապետությունից դուրս տեղեկությունների հրապարակման անհնարինության հետ:

Ըստ էության, սեփականաշնորհման գործընթացը չունեցավ ակնկալվող արդյունավետությունը՝ կապված գործող մեխանիզմի անկատարության հետ:

Դեռևս կարևորվում է նախորդ տարիներից ժառանգած՝ սեփականաշնորհված ձեռնարկությունների հետագա գործունեության և զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրների բացակայության խնդիրը, որը պայմանավորված է.

- սեփականաշնորհված ձեռնարկությունների ծանր ֆինանսական վիճակով
- ազգային խնայողությունները խթանող ինստիտուտների բացակայությամբ:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են պահանջմունքի, բարիքի, արտադրական ռեսուրսների բնորոշումները:
2. Ի՞նչպես կարելի է դասակարգել պահանջմունքները, բարիքները և արտադրական ռեսուրսները:
3. Ի՞նչպես կարելի է պատկերել արտադրական հնարավորությունների կորը:
4. Ո՞րն է արտադրության արդյունավետության բնորոշումը:
5. Որո՞նք են արտադրության արդյունավետության հիմնական ցուցանիշները:
6. Ո՞րն է արտադրության արդյունավետության ընդհանուր (ինստեգրալ) բանաձևը:
7. Որո՞նք են բնափակ եւ ապրանքային տնտեսությունների հիմնական գծերը:
8. Որո՞նք են տնտեսական համակարգի տիպերը:
9. Որո՞նք են տնտեսության կազմակերպման մոդելները:
10. Որո՞նք են անցման շրջանի տնտեսության բնորոշ գծերը:
11. Ի՞նչպիսին է ՀՀ-ում շուկային անցման ճանապարհին տնտեսության ներկա վիճակը:
12. Ո՞րն է սեփականության տնտեսական մեկնաբանումը:
13. Որո՞նք են սեփականության օբյեկտի եւ սուբյեկտի բնորոշումները:
14. Որո՞նք են սեփականության ձևերը:
15. Ո՞րն է ապապետականացման բնորոշումը:
16. Ի՞նչպիսին է սեփականաշնորհման գործընթացը ՀՀ-ում:
17. Որո՞նք են մասնավորեցման մեթոդները:

ԲԱԺԻՆ II. ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԽ 3. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

3.1. Շուկայի տեսության հիմունքները: Մարքեթինգ: Շուկայական տնտեսության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Հասարակական արդյունքի վերարտադրության մեջ փոխանակության ոլորտը չափազանց կարևոր տեղ է զբաղեցնում, քանի որ առանց դրա ժամանակակից էկոնոմիկան պարզապես չի կարող գոյություն ունենալ: Փոխանակությունը ազգային և միջազգային տնտեսության մեջ կատարում է մի շարք գործառույթներ, որոնց շարքում հիմնականը՝ սպառումը (արտադրական և անձնական) արտադրության հետ կապելու գործառույթն է:

Փոխանակային հարաբերությունների այս գործառույթն իր կոնկրետացումը ստանում է շուկայում և շուկայական հարաբերությունների միջոցով: Համաշխարհային փորձը ցույց տվեց, որ ժամանակակից շուկայական համակարգն ավելի լավ է հարմարեցված ԳՏԱ-ի նվաճումների կիրառմանը, արտադրության ինտենսիվացմանը և, վերջին հաշվով, հասարակության պահանջմունքների ավելի լրիվ բավարարմանը, քան մյուսները:

Կարելի է տալ շուկայի շատ սահմանումներ.

- Շուկան այն համակարգն է, որտեղ ծավալվում է տնտեսական սուբյեկտների, կազմակերպությունների, ինչպես նաև հասարակության անդամների գործունեությունը՝ կապված աշխատանքի արդյունքների արտադրության և իրացման հետ:
- Շուկան տնտեսական սուբյեկտների միջև այն տնտեսական կապերի համակարգն է, որը հիմնվում է փոխանակային հարաբերությունների և բոլոր բարիքների ու ծառայությունների վճարովիության վրա:
- Շուկան փոխանակություն է, որը կազմակերպված է ապրանքային արտադրության և շրջանառության օրենքներով կամ ապրանքային փոխանակության հարաբերությունների ամբողջություն է:
- Շուկան փոխանակության ոլորտ է երկրի ներսում և երկրների միջև, որը կապում է ապրանք արտադրողներին և սպառողներին միմյանց հետ:
- Շուկան ապրանքների առք ու վաճառքի գործարքների ամբողջություն է, որն ընդգրկում է գնորդների և վաճառողների տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգը:
- Շուկան պարզապես մի մեխանիզմ է, որը շփում է իրականացնում գնորդների (պահանջարկ ներկայացնողների) և վաճառողների (ապրանք կամ ծառայություն առաջարկողների) միջև, որով ապրանքի կամ ծառայության գնորդներն ու վաճառողները փոխազդում են՝ գինը և քանակությունը որոշելու համար, այլ կերպ ասած, առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությունն է:
- Շուկան տնտեսական ինստիտուտների մեխանիզմ է, որը գնորդներին և վաճառողներին իրենց ապրանքները և ծառայությունները փոխանակվելու հնարավորություն է տալիս:

Հաճախ ասում են, որ շուկան քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է: Դա ճիշտ է, սակայն պետք է հիշել, որ շուկայի ծագումը և կազմավորումը ոչ թե բանականության նվաճումների արդյունք է, այլ շատ երկարատև պատմական զարգացման հետևանք:

Շուկայի ծագման կարևորագույն պայմաններից են.

- աշխատանքի հասարակական բաժանումը, մասնագիտացումը և տնտեսական մասնատվածությունը
- սեփականության տարբեր ձևերի կամ բազմասեփականության առկայությունը
- տնտեսական սուբյեկտների ինքնուրույնությունը և ձեռներեցության ազատությունը
- ռեսուրսների ազատ փոխանակությունը
- տրանսակցիոն ծախքերի մեծությունը:

Շուկայական հարաբերությունների ծավալման ու զարգացման շարժիչ լծակ է մրցակցությունը, քանի որ որքան թույլ է մրցակցությունը, նույնքան անկատար են շուկայական հարաբերությունները:

Ժամանակակից շուկան և շուկայական հարաբերությունները քաոսային վիճակ չեն առաջացնում, այլ ընդհակառակը, կազմավորելով ապրանքների և փողի շրջանառության ոլորտը՝ դրսևորվում են որպես մեկ միասնական ինքնակարգավորվող մարմին, որի օգնությամբ արտադրության և պահանջմունքների կապը հավասարակշռվում է: Դրան չի կարող հասնել ոչ մի պետական ապարատ, օգտագործելով նույնիսկ ժամանակակից ամենակատարյալ էլեկտրոնային հաշվիչ մեքենան:

Այսպիսով, շուկայական համակարգը տնտեսական կապերի բարդ համակարգ է, որի միջոցով անթիվ, ազատ ընտրած անհատական որոշումներ հաշվի են առնվում, գումարվում և փոխադարձ հավասարակշռվում: Նրանք, ովքեր հետևում են շուկայական համակարգի թելադրանքին, պարգևատրվում են, իսկ նրանք, ովքեր արհամարհում են այն, պատժվում են համակարգի կողմից:

Շուկայի մեջ չեն ընդգրկվում պետական նյութական պաշարները, ձեռնարկությունների արտադրանքի մի մասը, որն արտադրվում է ներքին տնտեսական կարիքների համար, ծառայությունների մի զգալի մասը, որը տրվում է անվճար, սննդամթերքների այն մասը, որն արտադրվում է անձնական օժանդակ տնտեսություններում և օգտագործվում անձնական կարիքների համար:

Շուկաներն ընդունում են ամենատարբեր ձևեր: Օրինակ, խորտկարանը, բենզալցման կայանը, կրպակը, խանութը սովորական շուկաներ են: Մինչդեռ Նյու Յորքի ֆոնդային բորսան, Չիկագոյի ցորենի բորսան և Առևտրի պալատն արդեն զարգացած շուկաներ են, ունեն իրենց կոնկրետ տեղադրությունը և այնտեղ կարելի է հաճախել ցանկացած ժամանակ: Սակայն կան շուկաներ, որոնք չունեն որոշակի աշխարհագրական տեղադրություն և գործում են հայտարարությունների, նամակների, հեռախոսային զանգերի, համակարգչային ցանցի և այլնի օգնությամբ: Այստեղ գնորդները և վաճառողները երբեք իրար չեն տեսնում կամ բոլորովին իրար չեն ճանաչում, և

հետևաբար, անձնական շփումը պահանջարկ ներկայացնողների և առաջարկողների միջև բացակայում է: Այդպիսի շուկաները անդեմ են:

Շուկայի գոյության ամբողջ պատմության ընթացքում նրան բնորոշ է եղել էքսպանսիայի (տարածքային ընդլայնման և ազդեցության ոլորտի ավելացման) միտումը, որը և բերել է շուկայական տնտեսական տարածության երեք գոտիների կազմավորմանը՝ տեղային (լոկալ), ազգային և միջազգային (համաշխարհային):

Շուկայական հարաբերությունները մեծ ազդեցություն են թողնում տնտեսական կյանքի բոլոր կողմերի վրա, կատարելով մի շարք էական *գործառույթներ.*

Տեղեկատվական. Մշտապես փոփոխվող գների, տոկոսադրույքների և այլնի միջոցով շուկան արտադրության մասնակիցներին օբյեկտիվ տեղեկատվություն է հաղորդում շուկա մատակարարվող ապրանքների և ծառայությունների անհրաժեշտ քանակի, տեսականու և որակի մասին, տեղեկացնում է ռեսուրսների սպառողներին, արտադրողներին և մատակարարներին յուրաքանչյուրի ընդունած որոշումների մասին:

Միջնորդական. Տնտեսական կապը հասարակական արտադրության կոնկրետ մասնակիցների միջև, նրա փոխշահավետության աստիճանն իրականում անհնարին է որոշել առանց շուկայի, որտեղ գնորդը և վաճառողը գտնում են իրար և փոխանակում իրենց գործունեության արդյունքները:

Գնագոյացնող. Շուկան ընդունում է միայն հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերը, քանի որ գնորդը միայն դրանք է համաձայն վճարել: Մինչդեռ շուկա մտնող միևնույն նշանակության արդյունքները և ծառայությունները պարունակում են տարբեր քանակության նյութական և աշխատանքային ծախսումներ: Հետևաբար, շուկայի միջոցով ճկուն կապ է ստեղծվում արժեքի և գնի միջև, որն անմիջապես հակազդում է արտադրությունում, պահանջմունքներում, ենթակառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների վրա:

Կարգավորող. Այն ամենակարևորն է, որովհետև շուկան կապված է տնտեսության բոլոր ոլորտների, նախ և առաջ՝ արտադրության հետ: Շուկայում ընդունած անտեսանելի որոշումներով ապահովվում է արտադրական նպատակների համաձայնեցումը: Շուկան է պատասխան տալիս այն հարցերին թե ի՞նչ արտադրել, ու՞մ համար արտադրել, ինչպե՞ս արտադրել: Չնայած ժամանակակից պայմաններում տնտեսությունը կառավարվում է ոչ միայն «անտեսանելի ձեռքով», այլ նաև պետական լծակներով, սակայն շուկայի ինքնակարգավորող դերը շարունակում է պահպանվել, մեծամասամբ որոշելով ժողովրդական տնտեսության հաշվեկշռությունը:

Առողջացնող (սանիտարական): Շուկան բարեգործական համակարգ չէ, այն դաժան է: Նրան բնորոշ է սոցիալական շերտավորումը, որովհետև մրցակցության օգնությամբ այն մաքրում է հասարակական արտադրությունը տնտեսապես թույլ, անկայուն սուբյեկտներից, անընդհատ բարձրացնելով տնտեսության կայունության միջին մակարդակն ամբողջությամբ վերցված: Շուկայի բոլոր գործառույթները պատկերված են նկար 18-ում:



Նկար 18. Շուկայի գործառույթները

Շուկայական կապերն ընդգրկում են տնտեսական հարաբերությունների ողջ համակարգը և նրա բոլոր սուբյեկտներին: Շուկան ներգրավում է և՛ ձեռնարկատերերին, և՛ իրենց աշխատանքը վաճառող աշխատողներին, և՛ սպառողներին, և՛ փոխատվական կապիտալի ու արժեթղթերի սեփականատերերին և այլն: Շուկայական տնտեսության հիմնական *սուբյեկտներին* ընդունված է բաժանել 3 խոշոր խմբերի՝՝

- տնային տնտեսություններ
- բիզնես (ձեռնարկատերեր)
- կառավարություն:

Տնային տնտեսությունը տնտեսության սպառողական ոլորտում գործող հիմնական կառուցվածքային միավորն է: Այն կարող է բաղկացած լինել մեկ կամ ավելի մարդկանցից: Տնային տնտեսության շրջանակներում են սպառվում նյութական արտադրության ու ծառայության ոլորտների վերջնական արդյունքները: Տնային տնտեսությունները շուկայական տնտեսության արտադրության գործոնների սեփականատերերը և մատակարարներն են: Դրանց վաճառքից ստացված գումարը նրանք ծախսում են անձնական պահանջմունքների բավարարման և ոչ թե շահույթի մեծացման նպատակով:

Բիզնեսը ձեռնարկատիրական գործունեություն է, որի նպատակը եկամուտ (շահույթ) ստանալն է: Այն նախատեսում է սեփական կամ փոխառու կապիտալի գործադրում, որից ստացված եկամուտը ծախսվում է ոչ միայն անձնական սպառման, այլև արտադրական գործունեության ընդլայնման նպատակով: Շուկայական տնտեսության բիզնեսը հանդես է գալիս որպես ապրանքների ու ծառայությունների հիմնական մատակարարող:

Կառավարությունը գլխավորապես ներկայացվում է տարբեր բյուջետային կազմակերպություններով, որոնք շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում, այլ իրականացնում են տնտեսության պետական կարգավորման գործառույթը:

Միևնույն անձը կարող է լինել և՛ տնային տնտեսության, և՛ բիզնեսի, և՛ կառավարության կազմում: Օրինակ, աշխատելով որպես վարձու պետական ծառայող՝ հանդիսանալ կառավարական կազմակերպության ներկայացուցիչ, միևնույն ժամանակ, տնօրինելով կորպորացիայի արժեթղթերը՝ ներկայացնել բիզնեսը, և ծախսելով ստացած եկամուտը անձնական սպառման նպատակով, հանդիսանալ տնային տնտեսության անդամ:

Այսպիսով, ժամանակակից շուկայական տնտեսությունն ապրանքների ու ծառայությունների, աշխատանքի, կապիտալի, արժեթղթերի, տարադրամի և տարաբնույթ այլ շուկաների մի ամբողջ համակարգ է: Շուկայական սուբյեկտների միջև իրականացվում է եկամտի, ռեսուրսների և արդյունքների շրջապտույտ :



Նկար 19. Եկամտի, ռեսուրսների և արդյունքների շրջապտույտ

Ներկայումս զարգացած երկրներում գործում է *շուկաների լայն համակարգ,* որն իրենից ներկայացնում է ֆունկցիոնալ նշանակության բազմազան շուկաների միասնական ամբողջություն: Այդ համակարգի մեջ ընդգրկված առանձին փոխկապված շուկաները կարելի է դասակարգել մի քանի *հատկանիշներով:*

Ըստ տարածական չափերի (կամ աշխարհագրական դիրքի)՝

- արտաքին (միջազգային կամ համաշխարհային)
- ներքին (լոկալ, ռեգիոնալ):

Ըստ իրացվող արդյունքների (օբյեկտների)՝

- աշխատանքի արդյունքների շուկա

ա) արտադրական նշանակության
բ) սպառողական ապրանքների
գ) ծառայությունների
դ) տեղեկատվական նշանակության
ե) արտոնագրերի (պատենտների)
զ) հոգևոր բարիքների (արվեստի ստեղծագործությունների)

- ֆինանսական շուկա

ա) փոխատվական կապիտալի
բ) արժույթի
գ) արժեթղթերի

- աշխատանքի շուկա

Ըստ սուբյեկտների՝

- գնորդի շուկա
- վաճառողի շուկա
- պետական հիմնարկների շուկա
- միջնորդների շուկա

Ըստ հագեցման մակարդակի՝

- հավասարակշռված շուկա
- պակասորդային (դեֆիցիտային) շուկա
- ավելցուկային շուկա

Ըստ հասունացման աստիճանի՝

- զարգացած շուկա
- չզարգացած շուկա

Ըստ մրցակցության սահմանափակման աստիճանի՝

- ազատ շուկա
- մենաշնորհային (մոնոպոլիստական) շուկա
- խմբատիրային (օլիգոպոլիստական) շուկա
- խառը շուկա

Ըստ գործող օրենսդրության համապատասխանության՝

- օրինական (լեգալ) շուկա
- ապօրինի (սև կամ ստվերային) շուկա

Ըստ ճյուղերի՝

- համակարգչային
- ավտոմոբիլային և այլն

Ըստ իրացման ձևերի՝

- մանրածախ շուկա
- մեծածախ շուկա:



Նկար 20. Շուկայական համակարգ

Հատուկ շուկաների շրջանակներում գործող և որոշակի գործառույթ կատարող փոխկապված ինստիտուտների՝ մասնագիտացված կազմակերպությունների ամբողջությունը կազմում է շուկայական տնտեսության ենթակառուցվածքը՝ աշխատանքի, ֆոնդային և ապրանքային բորսաներ, մեծածախ և մանրածախ առևտրի ձեռնարկություններ, տոնավաճառներ, աճուրդներ, ֆիրմաներ, շուկայական կապերի համազգային ընկերություններ, միջնորդական ընկերություններ, սպասարկման ծառայություններ, ապահովագրական ընկերություններ և այլն: Այս օղակների միջոցով հավաքագրվում ու մշակվում է տեղեկատվությունը, կազմակերպվում է գովազդը, մարքեթինգը, հնարավորություն է ստեղծվում ժամանակին հայտնաբերելու անհամամասնություններն ու այդպիսով պահպանելու անհրաժեշտ հավասարակշռությունը:

ՀՀ-ում շուկայական հարաբերություններին անցմանը բնորոշ են բնական, ազգային տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ առանձնահատկություններ, որոնք էլ պետք է հաշվի առնվեն կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը մշակելու և ծրագրավորելու ժամանակ:

ՀՀ-ի համար առաջնահերթ լուծում պահանջող խնդիրը անցման մոդելի ընտրությունն է: Այն պետք է լինի միանգամից, թե՞ աստիճանաբար, ազատական (լիբերալ), թե՞ կարգավորվող շուկայական հարաբերությունների:

ՀՀ-ի տնտեսության վերակառուցումը շուկայական հարաբերությունների հիմքի վրա անխուսափելի է: Սակայն այն պետք է իրականացնել աստիճանաբար և որքան հնարավոր է, խուսափել հին տնտեսական հարաբերությունների վերափոխման ընթացքում ծագող բացասական ազդեցություններից:

ՀՀ-ի համար, որը տնտեսապես թույլ երկիր է, առավել բնորոշ պետք է լինեն կարգավորվող շուկայական հարաբերությունները:

Պետության կարգավորիչ գործառույթը պետք է ավելի ուժեղ ու հստակ լինի, որպեսզի եղած բնական, աշխատանքային, ֆինանսական միջոցներն օգտագործվեն նպատակային և արդյունավետ, դրա հետ մեկտեղ արտադրողը և սպառողը ձեռք բերեն շուկային տիրապետելու և նրա օրենքներին ենթարկվելու բավականին փորձ, ինչպես նաև ստեղծվի շուկայի կառուցվածք ու ենթակառուցվածք և այլն:

Շուկայական տնտեսությանն անցումն ընդհանուր միտումներ ունի: Այն, մի կողմից, ընդգրկում է կառուցվածքային խորը փոփոխություններ, իսկ մյուս կողմից, նախատեսում է կայունացման միջոցառումների իրականացում (հիմնականում դրամավարկային և ֆինանսական ոլորտում ու գնագոյացման մեջ):

Շուկային անցման գլխավոր խնդիրներն են՝

- տնտեսության ապապետականացումը և սեփականաշնորհումը
- շուկայական ենթակառուցվածքի ստեղծումը
- տնտեսության ապամենաշնորհումը
- գների ազատականացումը, դրանց ձևավորումը առաջարկին և պահանջարկին համապատասխան
- ֆինանսատնտեսական կայունացումը դրամավարկային կոշտ քաղաքականության իրականացման միջոցով
- սոցիալական պաշտպանվածության ուժեղ համակարգի ստեղծումը
- տնտեսության սոցիալական կողմնորոշվածությունը:

Մարքեթինգ

XX դարի սկզբին, երբ ձևավորվեցին խոշոր մենաշնորհային միավորումներ (կարտել, սինդիկատ, տրեստ, կոնցեռն և այլն), բարդացավ ապրանքների իրացումը, կտրուկ սրվեց մրցակցությունը սպառողի համար, անհրաժեշտություն առաջացավ խրախուսել թողարկվող արտադրանքի նկատմամբ պահանջարկը: Այդ գործընթացն ավելի ցայտուն է դրսևորվել ԱՄՆ-ում, որտեղ ֆիրմաների համար գլխավոր հիմնախնդիրը դարձավ արտադրանքի իրացման վերլուծությունն ու կազմակերպումը: ԱՄՆ-ում 1908թ. ստեղծվեց շուկայագիտության առաջին կազմակերպությունը, որը 1926թ. ձևավորվեց որպես «Շուկայավարության և գովազդի ազգային ասոցիացիա», իսկ 1973թ. վերանվանվեց «Շուկայավարության ամերիկյան ասոցիացիայի»: Հետագայում նման ասոցիացիաներ ստեղծվեցին Արևմտյան Եվրոպայում, Ճապոնիայում: Ներկայումս գործում են շուկայավարության միջազգային այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ «Շուկայավարության և հասարակական կարծիքի հետազոտության Եվրոպական միությունը», «Շուկայավարության եվրոպական ակադեմիան» և այլն:

Վերը նշված խնդիրների լուծման ընթացքում, շուկայական հարաբերությունների, շուկայի վերլուծության, պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունը հետազոտելու մասին ձևավորվել են որոշակի պատկերացումներ և գիտելիքներ, որոնք ամբողջացել են ***շուկայավարության*** առարկայի մեջ, որը համաշխարհային գրականության մեջ գործածվում է ***մարքեթինգ*** անվանումով (անգլերեն market շուկա բառից):

Մարքեթինգը ներառում է պահանջարկի հետազոտությունը, շուկայի ենթակառուցվածքի վերլուծությունը, առաջարկի և գների դինամիկայի, ինչպես նաև նոր պահանջարկների կանխատեսման ուսումնասիրումը, ապրանքների ձևն ու արտաքին տեսքը, փաթեթավորման բնույթի որոշումը, ապրանքանիշի ընտրությունը, գնի սահմանումը, առևտրի ցանցի կատարելագործումը, պրոֆեսիոնալ կրթության ու գովազդի կազմակերպումը և այլն: Ամբողջությամբ վերցված, մարքեթինգը ապրանքների արտադրության և իրացման միջոցառումների արդյունավետ կազմակերպման մեխանիզմ է:

Մարքեթինգի միջոցով, որն իրենից ներկայացնում է արտադրողի և սպառողի հետաքրքրությունների փոխկապվածության ամբողջական համակարգ, որոշվում է արդյունաբերական ֆիրմաների ներթափանցման ձևերը և մեթոդները առևտրի ոլորտ: Այսպիսով, շուկայավարությունը չի սահմանափակվում միայն շուկայի պայմանների հետազոտությունով, այլ հիմք ընդունելով մարդկանց պահանջմունքներն ու գնողունակ պահանջարկը՝ ներառում է նաև արտադրության կազմակերպման խնդիրները: Դրանով իսկ մարքեթինգի ավանդական գործառույթը՝ առաջարկի վերլուծությունն արդեն ստեղծված արտադրանքի վրա, մղվում է երկրորդ պլան և առաջնահերթ նշանակություն է ստանում շուկայական պահանջների մինչարտադրական վերլուծությունը, որը և դառնում է արտադրական որոշումների ընդունման հիմք: Մարքեթինգը՝ որպես ֆիրմայի կառավարման հիմնադրույթ, ենթադրում է սերտ կապի ստեղծում ֆիրմայի բոլոր ստորաբաժանումների, վաճառահանող և առևտրական կազմակերպությունների միջև:

Յուրաքանչյուր արտադրանք ունի շուկա մուտք գործելու իր ուղիները, անկախ այն բանից, արտադրանքը արդյունաբերական է, թե գյուղատնտեսական: Զարգացած արդյունաբերական երկրներում յուրաքանչյուր կոնկրետ ապրանքի ուղին դեպի շուկա տարիների ընթացքում հղկվել, հաստատվել է և այն բոլոր հիմնախնդիրները, որ ծագում են ապրանքն արտադրողից մինչև սպառող շուկա տանող ճանապարհին, վաղուց հայտնաբերված և հարթված են: Արդյունքում ապրանքի շարժը հեշտությամբ առաջ է ընթանում:

Ժամանակակից պայմաններում կազմավորվել են խոշորագույն առևտրաարդյունաբերական վերազգային ընկերություններ, օրինակ, «General Motors» - ը 102 մլրդ դոլար վաճառքով (տարեկան 8 մլն մեքենա) և 813 հազար զբաղվածներով, «Sears Roebuck & Company»-ն՝ 25 մլրդ դոլարից ավելի պտույտով, 390 հազար ծառայողներով և 606 մլն դոլար շահույթով, «Safeway stores»-ը՝ 8.2 մլրդ դոլար պտույտով և 121.4 հազար աշխատողներով: Նիդեռլանդներում ձևավորվել է խոշորագույն «Spar» միջազգային միավորումը, որի առևտրական ֆիրմաները գտնվում են 17 երկրներում, «Vege» միջազգային միավորումը, որի տրամադրության տակ են 13 հազար մանրածախ խանութներ և 300 մեծածախ պահեստներ 12 երկրներում:

Այդ տեսակետից Հայաստանը հետաքրքիր և դժվարին վիճակում է գտնվում: Խորհրդային ժամանակաշրջանում ապրանքաշրջանառությունը չէր համապատասխանում առաջարկին և պահանջարկին, ինչպես դա կատարվում է շուկայական տնտեսությունում: Արտադրությունը ընթանում էր ըստ վարչահրամայական մեթոդի: Ապրանքների արտադրության, ինչպես նաև, առաքման վայրը և քանակը որոշվում էր կառավարության կողմից: Տնտեսության այսպիսի համակարգը խոչնդոտ էր հանդիսանում շուկայական ուղիների զարգացման համար:

Քանի որ Հայաստանը մուտք է գործում շուկա ուշացած, ապա ստիպված է մրցել արդեն այնտեղ հաստատուն տեղ ունեցողների հետ: Այդ պատճառով էլ նա պետք է ստեղծի այդ շուկաները տանող նոր ուղիներ, յուրաքանչյուր կոնկրետ արտադրանքի համար քննարկի դրանց կառուցվածքը՝ նախապես որոշելու համար այն խոչնդոտները, որ կարող են ծագել, ինչպես նաև նրանց հարթելու հնարավորությունները մինչև ապրանքի շուկա մուտք գործելը (նկար 21):



Նկար 21 Ուղիներ դեպի շուկա

3.2. Առաջարկի և պահանջարկի տեսություն: Առաձգականություն:

Պահանջարկի և առաջարկի տեսությունը կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից տնտեսագիտության մեջ: Իսկ պահանջարկի և առաջարկի տնտեսական օրենքները ապրանքային արտադրության օրենքներ են, որոնք արտահայտում են արտադրության և սպառման միջև գոյություն ունեցող ներքին կապերն ու հակասությունները փոխանակության ոլորտում: Դրանք կապված են արժեքի օրենքի հետ, գործում են նրա կողքին, սակայն միայն փոխանակության ոլորտում: Այդ օրենքները գործում են շուկայական մեխանիզմի միջոցով, որն արտահայտում է շուկայի հիմնական տարրերի՝ պահանջարկի, առաջարկի, գնի և մրցակցության փոխադարձ կապը:

Քննարկենք շուկայի նշված հիմնական տարրերը.

Պահանջարկը հանդես է գալիս որպես տնտեսական բարիքների (ռեսուրսների, ապրանքների կամ ծառայությունների) նկատմամբ շուկայում ներկայացված պահանջմունք և սահմանափակվում է բնակչության գնողունակությամբ (նրա դրամական եկամուտներով): Այլ կերպ ասած, պահանջարկը գնողունակ պահանջմունք է կամ արտադրված բարիքների այն քանակը, որը գնորդները (այլ հավասար պայմաններում) պատրաստ են և ի վիճակի գնել հնարավոր տարբեր գների դեպքում՝ որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Հետևաբար, դրա ծավալի և կառուցվածքի վրա էականորեն ազդում է բնակչության եկամուտների չափը:

Գների և պահանջարկի մեծության միջև գոյություն ունի հակադարձ կապ, այսինքն՝ գների իջեցումը (այլ անփոփոխ գործոնների դեպքում) հանգեցնում է համապատասխանորեն պահանջարկի քանակական աճին, և հակառակը: Այդ հակադարձ կապը տնտեսագետներն անվանել են ***պահանջարկի օրենք***: Այն արտահայտում է պահանջարկի ֆունկցիոնալ կախվածությունը գների փոփոխությունից և գրաֆիկորեն պատկերվում է հետևյալ կորով. (D - demand) (նկար 22)

Նկար 22.



Պահանջարկի կոր

Պահանջարկի կորը (demand curve) – ցույց է տալիս ապրանքի (ծառայության) պահանջարկի մեծության կախվածությունը դրա գնից: Այլ կերպ ասած, ապրանքի (ծառայության) շուկայական գնի և գնորդների կողմից այդ գնով գնվող քանակի միջև փոխկապի գրաֆիկական պատկերումն է: Պահանջարկի կորը դեպի ներքև թեքված կոր է, որն արտացոլում է այն փաստը, որ ապրանքների և ծառայությունների գների իջեցմանը զուգընթաց դրանց գնումների քանակն աճում է, և ընդհակառակը: Գրաֆիկից երևում է, որ եթե 1 միավորի գինը 5 դոլար է, ապա գնորդը կարող է գնել 10 միավոր, 4-ի դեպքում՝ 20, 3-ի՝ 30, 2-ի՝ 40 և 1-ի՝ 50 միավոր բարիք:

Սակայն պահանջարկի փոփոխությունը կախված է բազմաթիվ ***ոչ գնային դետերմինանտներից***, որոնք անվանվում են ***պահանջարկի փոփոխման գործոններ***:

Դրանցից են.

- սպառողների թիվը շուկայում
- սպառողների միջին եկամուտները
- փոխարինող, ուղեկից կամ համանման ապրանքների և ծառայությունների առկայությունը
- սպառողների նախասիրությունը և ճաշակը
- սպառողական սպասումները և ակնկալիքներն ապագա գների և եկամուտների վերաբերյալ

Եթե մեկ կամ ավելի դետերմինանտներ փոփոխվում են, ապա պահանջարկի կորը տեղաշարժվում է: Գրաֆիկորեն դա պատկերվում է հետևյալ կերպ (նկար 23):



Նկար 23. Փոփոխությունները պահանջարկում

Պատկերված նկարում պահանջարկի աճը արտահայտվում է կորի տեղաշարժով դեպի աջ (D_1-ից դեպի D_2), իսկ նվազումն, ընդհակառակը՝ ձախ (D_1-ից դեպի D_3):

Մինչև այժմ մենք դիտում էինք պահանջարկի հիմնախնդիրը մեկ գնորդի դեպքում, այսինքն ***անհատական պահանջարկը***, սակայն մրցակցության պայմաններում անհրաժեշտ է վերլուծել նաև ***շուկայական պահանջարկը***, երբ շուկայում գնորդները բազմաթիվ են:

Շուկայական պահանջարկը տարբեր հնարավոր գների պայմաններում անհատական պահանջարկների գումարն է: Գրաֆիկորեն շուկայական պահանջարկի կորը (D) կարող է ստացվել օրինակ, երեք անհատական կորերի (D_1, D_2 և D_3) հորիզոնական միատեղումով, ընդ որում, դրա համար օգտագործվում է միայն մեկ գին՝ 3 դոլար (նկար 24):



Նկար 24. Շուկայական պահանջարկի կոր՝ որպես անհատական պահանջարկի կորերի գումար

Իրականում գնորդները բազմաթիվ են և նրանցից յուրաքանչյուրը կարող է գնել տարբեր քանակության ապրանք: Այդ պատճառով անհրաժեշտ է տարբերել նաև ամբողջական պահանջարկը, որը ցույց է տալիս ապրանքների և ծառայությունների տարբեր ծավալները, այսինքն՝ ազգային արտադրության ռեալ ծավալը, որը սպառողները, ձեռնարկությունները և կառավարությունը պատրաստ են գնել գների ցանկացած հնարավոր մակարդակի դեպքում: Գրաֆիկորեն այն կունենա հետևյալ տեսքը (նկար 25):



Նկար 25. Ամբողջական պահանջարկի կոր

(D_1) կորը պատկերում է ամբողջական պահանջարկի նվազումը, իսկ (D_2) կորը, ընդհակառակը՝ աճը:

Առաջարկը ռեսուրսների, ապրանքների կամ ծառայությունների այն քանակն է, որն արտադրողը ցանկանում ու ունակ է արտադրել և առաջարկել շուկայում՝ տարբեր գներով, որոշակի ժամանակահատվածում (այլ անփոփոխ պայմանների դեպքում):

Առաջարկն արտադրության ամբողջ ծավալը չէ, քանի որ սեփական կարիքների համար արտադրված արտադրանքը և պաշարները չեն մտնում դրա մեջ:

Առաջարկի մեծությունն աճում է՝ կախված գների աճից, և հակառակը: Այդ կապը կոչվում է ***առաջարկի օրենք*** : Այն արտահայտում է առաջարկի ֆունկցիոնալ կախվածությունը գների փոփոխությունից և գրաֆիկորեն պատկերվում է հետևյալ կորով (S - supply) (նկար 26).



Նկար 26. Առաջարկի կոր (S-supply)

Առաջարկի կորը (supply curve) ցույց է տալիս ապրանքի (ծառայության) առաջարկի մեծության կախվածությունը դրա գնից: Այլ կերպ ասած, ապրանքի (ծառայության) շուկայական գնի և առաջարկողների կողմից այդ գնով առաջարկվող քանակի միջև փոխադարձ կապի գրաֆիկական պատկերումն է: Առաջարկի կորը դեպի վերև թեքված կոր է, որն արտացոլում է այն փաստը, որ առաջարկի մեծությունն աճում է՝ կախված գների աճից, և հակառակը: Գրաֆիկից երևում է, որ նվազագույն գնի 1 դոլարի դեպքում առաջարկը կլինի նույնպես նվազագույնը՝ 10 միավոր, իսկ առավելագույնի՝ 5 դոլարի ժամանակ՝ 50 միավոր:

Առաջարկի փոփոխությունը նույնպես կախված է տարբեր ոչ գնային գործոններից, որոնք անվանվում են առաջարկի փոփոխման գործոններ: Դրանցից են՝

- ռեսուրսների գները
- տեխնոլոգիան
- հարկերը և դոտացիան
- այլ ապրանքների և ծառայությունների գները
- ակնկալիքները (սպասումները),
- առաջարկողների (վաճառողների) թիվը:

Այդ գործոնների առկայության դեպքում առաջարկի կորը տեղաշարժվում է հետևյալ կերպ (նկար 27).



Նկար 27. Փոփոխություններն առաջարկում

Առաջարկի նվազումն արտացոլվում է առաջարկի կորի (S_1) տեղաշարժով ձախ՝ S_1-ից դեպի S_3, իսկ աճը՝ աջ՝ S_1-ից S_2:

Առաջարկի և պահանջարկի կորերի հատման կետը կոչվում է ***հավասարակշռված կետ (P):*** Միայն այդ կետում է գինը բավարարում գնորդին և վաճառողին միաժամանակ, իսկ առաջարկը համընկնում է պահանջարկի հետ: Տնտեսագետներն այդ գինն անվանում են ***հավասարակշռված գին:*** Գրաֆիկորեն այն պատկերվում է այսպես (նկար 28):



Նկար 28. Հավասարակշռված գին

P կետը վկայում է առավելագույն արդյունավետության մասին, որտեղ արտահայտված է առավելագույն սոցիալական էֆեկտը և չկա *ոչ ավելցուկ, ոչ էլ պակասորդ* (դեֆիցիտ):

Այս դեպքում գործում են շուկայական գնագոյացման հետևյալ օրենքները.

- Գինը
- ձգտում է այնպիսի մակարդակի, որի ժամանակ պահանջարկը հավասար է առաջարկին:
- Եթե ոչ գնային գործոնների ազդեցության տակ տեղի ունենա պահանջարկի աճ՝ անփոփոխ առաջարկի պայմաններում կամ առաջարկի նվազում՝ անփոփոխ պահանջարկի դեպքում, ապա գինը կաճի, և ընդհակառակը, անփոփոխ առաջարկի դեպքում պահանջարկը կկրճատվի կամ անփոփոխ պահանջարկի դեպքում առաջարկը կավելանա, գինը կընկնի (կնվազի):

Այսինքն, եթե պահանջարկի և առաջարկի հիմքում ընկած տարրերը փոխվում են,ապա դա հանգեցնում է առաջարկի և պահանջարկի տեղաշարժերի, ինչպես նաև գնի ու քանակի շուկայական հավասարակշռության փոփոխությունների: Այդ օրինաչափությունները կարելի է արտացոլել գրաֆիկորեն (նկար 29):



Նկար 29. Պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության կետի որոշում

Այստեղ P-ն գինն է, Q-ն պահանջարկի և առաջարկի մեծությունն է, DD_1-ը պահանջարկն է փոփոխությունից առաջ և հետո, SS_1-ը առաջարկն է փոփոխությունից առաջ և հետո: Նկար 29 (ա)-ն ***պահանջարկի ավելացումը***, որը բերում է գնի աճին և առաջարկի ընդլայնմանը, նկար 29 (բ)-ն ***առաջարկի նվազումը*** բերում է գնի աճին և պահանջարկի կրճատմանը, նկար 29 (գ)-ն **պահանջարկի նվազումն** իջեցնում է գինը և կրճատում է առաջարկը, նկար 29 (դ)-ն ***առաջարկի ավելացումն*** իջեցնում է գինը և ընդլայնում պահանջարկը:

Ինչպես արդեն նշել ենք, պահանջարկը և առաջարկը փոփոխվում են բազմազան գործոնների ազդեցության տակ: Այդ փոփոխության աստիճանը, որը կատարվում է այս կամ այն գործոնի ազդեցության ներքո, բնութագրում է ***առաձգականությունը***, օրինակ, գների աճի հետ մեկտեղ այս կամ այն արտադրանքի պահանջարկը տարբեր չափով է կրճատվում: Ընդ որում, ի տարբերություն ոչ առաջին անհրաժեշտության առարկաների, ավանդական և առաջին անհրաժեշտության առարկաների պահանջարկը լուրջ և կտրուկ չի նվազում:

Այն, թե ինչ չափով է շուկայում փոփոխվում պահանջարկի ծավալը, գնի տվյալ փոփոխման և այլ գործոնների անփոփոխ պայմաններում, բնութագրում է պահանջարկի առաձգականությունն ըստ գնի կամ ***պահանջարկի առաձգականության*** (elastic demand): Այն գնորդների արձագանքն է գների փոփոխությանը և արտահայտում է ապրանքների ու ծառայությունների գների և դրանց նկատմամբ պահանջարկի մեծության փոփոխությունների միջև հարաբերակցությունը : Այդ ցուցանիշը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով. $E_d^P = \Delta Q/\Delta P$, որտեղ E_d^P-ն պահանջարկի առաձգականությունն է ըստ գնի, ΔQ-ն պահանջարկի մեծության փոփոխությունն է տոկոսով, ΔP-ն գնի փոփոխությունն է տոկոսով (երկու ցուցանիշներն էլ արտահայտվում են բացարձակ մեծություններով): Հետևաբար, E_d^P-ն իրենից ներկայացնում է պահանջարկի փոփոխության հարաբերությունը այդ փոփոխությունն առաջացնող գնի փոփոխության վրա և ցույց է տալիս, թե քանի տոկոսով է փոխվում պահանջարկը՝ 1%-ով գնի փոփոխման հետևանքով: Օրինակ, եթե որոշ ապրանքի գնի իջեցումը 5%-ով բերում է նրա պահանջարկի 10% ավելացմանը, ապա առաձգականության ցուցանիշը հավասար կլինի՝ $E_d^P = 10/-5 = -2$ կամ $/ E_d^P / = 2$:

Պահանջարկի առաձգականության և ծախսերի ընդհանուր մեծության վրա գների փոփոխության ազդեցության արդյունքների միջև գոյություն ունի փոխկապվածություն (նկար 30):



դեպք ա)՝ պահանջարկն առաձգական է $E_d^P > 1$



դեպք բ)՝ պահանջարկը ոչ առաձգական է $E_d^P < 1$



դեպք գ)՝ պահանջարկի առաձգականությունը հավասար է մեկի $E_d^P = 1$

Նկար 30. Պահանջարկի առաձգականության և ծախսերի ընդհանուր մեծության վրա գների փոփոխության ազդեցության արդյունքների միջև փոխկապվածությունը

Երբ գնի փոփոխությունը բերում է պահանջարկի մեծության ավելի մեծ քանակական փոփոխությանը, ապա $E_d^P > 1$ և գործ ունենք հարաբերականորեն ***առաձգական պահանջարկի*** հետ:

Երբ գնի փոփոխությունը բերում է պահանջարկի քիչ փոփոխությանը, ապա $E_d^P < 1$ և մենք գործ ունենք հարաբերական ***ոչ առաձգական պահանջարկի*** հետ:

Եվ, վերջապես, երբ գնի փոփոխությունը բերում է պահանջարկի նույն քանակական փոփոխությանը, ապա $E_d^P = 1$ և մենք գործ ունենք ***միակ (եզակի) առաձգական պահանջարկի*** հետ:

Գոյություն ունի նաև ***աղեղնավոր պահանջարկ***, որն արտահայտում է առաձգականությունը երկու կետերի միջև՝ որպես նրանց միջև միջին գնի և պահանջարկի միջին ծավալի չափման տոկոսային արտահայտություն $E_d^P = \Delta Q/Q_{միջ}$: $\Delta P/P_{միջ}$, ինչպես նաև ***պահանջարկի խաչաձևվող առաձգականություն***. դա որոշ ապրանքների վրա պահանջարկի ծավալի տոկոսային փոփոխությունն է մեկ այլ ապրանքի գնի 1%-ով ավելացման դեպքում:

Բացի այդ, գոյություն ունի ***կատարյալ առաձգական*** պահանջարկ, երբ ամենաչնչին գնի իջեցումը դրդում է գնորդներին ավելացնելու գնումները 0-ից մինչև իրենց հնարավորությունների սահմանը, և ***կատարյալ ոչ առաձգական*** պահանջարկ, երբ հազվադեպ դեպքերում գնի փոփոխությունը չի բերում պահանջվող արտադրանքի քանակի ոչ մի փոփոխության: Գրաֆիկորեն այն պատկերված է նկար 31-ում:



Նկար 31. Կատարելապես առաձգական D_2 և կատարելապես ոչ առաձգական D_1 պահանջարկի կորեր

Նույնը կարելի է կատարել և առաջարկի վրա գնի ազդեցության վերլուծության կապակցությամբ: ***Առաջարկի առաձգականությունը*** շուկայում առաջարկվող ապրանքի քանակի համեմատական փոփոխության հարաբերության ցուցանիշն է մրցակցային գնի համեմատական փոփոխությանը: ***Առաջարկի առաձգականության գործակիցը՝ E_s^P- ն,*** իրենից ներկայացնում է առաջարկի փոփոխության հարաբերությունը՝ այն առաջացնող գնի փոփոխության վրա: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$E_s^P = \Delta Q/\Delta P,$$

որտեղ

E_s^P - առաջարկի առաձգականությունն է ըստ գնի

ΔQ - առաջարկի մեծությունը տոկոսով

ΔP - գնի փոփոխությունը տոկոսով:



Նկար 32 Առաջարկի առաձգականության կոր

Բոլոր նշված փոփոխությունները տեղի են ունենում *ժամանակի* մեջ, հետևաբար, այն նույնպես դառնում է առաձգականության գործոններից մեկը: Գործոններից է նաև *գնորդի եկամուտների մակարդակը*: Առաձգականությունն, ըստ եկամուտների, ծավալի տոկոսային փոփոխությունն է, որը պայմանավորված է եկամտի 1% փոփոխությամբ:

Առաջարկի առաձգականությունը կախված է նաև տարբեր ձեռնարկություններում անհատական ծախսումների տարբերակումից, արտադրական հզորությունների բեռնվածության աստիճանից, ազատ աշխատուժի առկայությունից, մեկ ճյուղից մյուսը կապիտալի հոսքի արագությունից և այլն:

3.3. Գների էությունը, գործառույթները և համակարգը

Բոլորին հայտնի է, որ գինը դրամի այն քանակն է, որը գնորդը տալիս է վաճառողին ձեռք բերված բարիքի դիմաց կամ որով վաճառողը համաձայն է վաճառել, իսկ գնորդը պատրաստ է ձեռք բերել ապրանքի միավորը: Այսինքն արտադրության արդյունքների առքն ու վաճառքը դրանց արժեքների փաստացի ճանաչումն է: Այդ արժեքն, արտահայտված որոշակի քանակի դրամանիշներով, կոչվում է ապրանքի կամ ծառայության *գին*:

Առավել պատկերավոր և համոզիչ տվյալ տնտեսական կապը ձևավորվել է ոսկու ստանդարտի դարաշրջանում: Այն ժամանակ գինը, որպես ապրանքի փոխանակային արժեք, արտահայտվում էր ազնիվ մետաղի որոշակի քանակի ձևով: Համաձայն արժեքի աշխատանքային տեսության, ապրանքափոխանակային շրջանառության համամասնությունը նշանակում էր փոխանակվող իրերի ըստ մեծության հավասար արժեք, այսինքն՝ փոխանակվում էին հավասար քանակության աշխատանք պարունակող իրեր կամ համարժեքներ: Այսպիսով, գնի տնտեսական սահմանման հիմքում շեշտը դրվում էր նրա օբյեկտիվ բովանդակության վրա:

Ապրանքի կամ ծառայության արժեքը (ապրանքի մեջ մարմնավորված հասարակայնորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումները) արտադրական կատեգորիա է, իսկ գինը՝ շուկայական:

Տնտեսական կյանքում գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք ազդում են արժեքի և գնի կապի վրա: Այդ գործոնները կարելի է բաժանել 2 խմբի.

1. Արժեքագոյացնող գործոններ
2. Գինն արժեքից շեղող գործոններ:

Նախ գինը գոյանում է երկու հիմնական տարրերից՝ ինքնարժեքից և շահույթից: *Ինքնարժեքը (cost)*՝ ապրանքների (ծառայությունների) արտադրության ու իրացման վրա կատարված ծախսերն են դրամական արտահայտությամբ, իսկ *շահույթը (profit)* - սովորաբար, պարզեցված ձևով, ապրանքների (ծառայությունների) վաճառքից ստացված հասույթի և դրանց արտադրության ու իրացման վրա կատարված ծախսերի դրական տարբերությունն է դրամական արտահայտությամբ: Հետևաբար գինը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

$$Գ = Ի + Շ,$$

որտեղ, Գ-ն ապրանքի (ծառայության) գինն է, Ի-ն - ինքնարժեքը, իսկ Շ-ն՝ իրացումից ստացված կամ սպասվելիք շահույթը:

Գինը կարող է որոշվել նաև որպես ինքնարժեքի և շահութաբերության նորմատիվային գործակցի արտադրյալ.

$$Գ= Ի \times Գ_{Շ},$$

որտեղ, Գ-ն ապրանքի (ծառայության) գինն է, Ի-ն՝ ինքնարժեքը, իսկ $Գ_{Շ}$ –ն՝ շահութաբերության նորմատիվային գործակցը, որը հավասար է $Գ_{Շ}=1 + Շ' / 100$, այստեղ Շ –ն *շահութաբերությունն է* - տնտեսական արդյունավետության ամփոփ ցուցանիշ, որը որոշվում է ապրանքի (ծառայության) վաճառքից ստացված շահույթի և դրա ինքարժեքի հարաբերությամբ. $Շ'= Շ / Ի \times 100$:

Գինը շեղվում է արժեքից առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից կախված: Այն շեղվում է արժեքից նաև արտադրության, բաշխման, նյութական խթանման, սպառման և մի շարք այլ գործոնների ազդեցության տակ: Գնի արժեքից շեղվելու կոնկրետ մեխանիզմն ու ձևերը կախված են նաև գների պետական կարգավորման հնարավորությունից, շրջանառության մեջ թղթադրամի քանակից, սոցիալական գործոններից և այլն: Գինը բնակչության կենսամակարդակի չափման գործոն է, քանի որ իրական աշխատավարձը կախված է ապրանքների գների և ծառայությունների սակագների մակարդակից:

Գնագոյացումը տնտեսական և սոցիալական առումով բարդ երևույթ է, ունի որոշակի սկզբունքներ՝ ա) բոլոր ռեսուրսների օգտագործման արդյունավետության հաշվարկումը, բ) արտադրանքի օգտակարության գնահատումը: Համաշխարհային պրակտիկայում հիմնականում շուկայական և վարչական սկզբունքներն են գերակշռում:

ԳՏԱ-ի իրականացումը հնարավորություն է տալիս բացահայտել իրերի նոր հատկություններ, հին արտադրանքը փոխարինվում է նորերով, որից կախված փոփոխվում են նաև գները:

Գնի էությունը, դերը արտահայտվում է նրա կատարած գործառույթների միջոցով: Գինը կատարում է հետևյալ գործառույթները՝

ա) *ծախսերի հաշվառման և չափման* (արտադրության և շրջանառության ծախքերի, շահույթի, աշխատանքի արադրողականության, նոր տեխնիկայի, կապիտալ ներդրումների արդյունավետության)

բ) *խթանման* (բարձր պահանջարկ ունեցող որակյալ արտադրանքի արտադրության, ծառայության մատուցում)

գ) *տնտեսության մեջ հավասարակշռություն պահպանելու* (պահանջարկի և առաջարկի համապատասխանությունը պահպանում է գների հավասարակռշված մակարդակ)

դ) *բաշխման* (ստացված զուտ արդյունքը բաշխվում և վերաբաշխվում է ճյուղերի մարզերի միջև, ինչ-որ չափով կարգավորվում է շահութաբերության մակարդակը)

գ) *տեղեկատվական* (արտադրողներն ու սպառողները գների շարժից որոշակի պատկերացում են ունենում շուկայական իրավիճակի մասին):

Գների բոլոր գործառույթները փոխկապված են, ներգործում են միմյանց վրա և գործում միասնական մեխանիզմի տեսքով:

Ապրանքների և ծառայությունների տարբեր խմբերի համար ձևավորվում է գների միասնական փոխկապակցված համակարգ: Գոյություն ունեն պետական և համաշխարհային, մեծածախ և մանրածախ, կարգավորվող և ֆիքսված, հաշվարկային և շուկայական, ազատ և պայմանագրային, նախահաշվարկային և այլ գներ, ինչպես նաև ծառայությունների սակագներ:

Գների բոլոր տարատեսակները տարբերակվում են որոշակի հատկանիշներով և սերտ կապված են միմյանց հետ ու չնայած գների համակարգը շատ բարդ է, բոլոր գները տնտեսագետները բաժանում են երեք տեսակի՝ «պայմանագրային», «պետական» և «համաշխարհային»:

Պայմանագրային գներ - շուկայական, ազատ գներ են, որոնցում մարմնավորված է ձեռներեցության ազատությունը: Այս գների տեսակարար կշիռը որոշվում է տվյալ երկրի «շուկայական» էկոնոմիկայի զարգացման աստիճանով: Պայմանագրային գները բազմազան են: Դիտարկենք դրանցից մի քանիսը, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ:

Ազատ պայմանագրային գներ, որոնք ձևավորվում են գնորդի և վաճառողի անձնական պայմանավորվածությամբ, այսինքն՝ հաշվի առնելով միայն տվյալ ապրանքի առաջարկը և պահանջարկը: Դրան կարելի է դասել և աճուրդներում կամ մրցույթներում որոշված գները:

Հրապարակային պայմանագրի գներ, որոնք կնքվում են առևտրական կազմակերպության կողմից և սահմանում նրա պարտականությունները ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման կամ ծառայությունների ցուցաբերման բնագավառում:

Ներֆիրմային (տրանսֆերային) գներ, որոնք օգտագործվում են միջազգային և ներազգային կորպորացիաների և ձեռնարկությունների շրջանակներում, ինչպես նաև տարբեր երկրներում տեղաբաշխված նրանց ստորաբաժանումների միջև ապրանքների փոխանակության ժամանակ: Դրանք կիրառվում են առանձին դետալների, հանգույցների, ագրեգատների, կոմպլեկտավորող սարքավորումների, արտաքին առևտրական մատակարարումների ժամանակ: Սովորաբար, տվյալները այդ գների մասին համարվում են առևտրական գաղտնիք:

«*Ֆրանկո*» *գին*՝ մեծածախ գին է, որը սահմանվում է պատվիրատուին արտադրանքը հասցնելու տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նախատեսված կարգը հաշվի առնելով: «Ֆրանկոն» առևտրական տերմին է, որի կիրառությունը արտադրանքի առաքման վերջնական կետի համադրությամբ նշանակում է, որ գնորդն ազատվում է տրանսպորտային ծախսերից մինչև նշված կետը, քանի որ դրանք իր վրա է վերցնում առաքողը: Այդ կետը կարող է լինել վագոն, պահեստ, երկաթգծի կայարան, պետական սահման, կոնկրետ նշված բնակավայր: Իհարկե, արտաքին առևտրական գործարքների ժամանակ տրանսպորտային ծախսերին պետք է ավելացնել ապահովագրական և մաքսային ծախսերը (եթե առաքվող ապրանքը հատում է պետության սահմանը):

«*Դեկորտ*», որը գների այնպիսի համակարգ է, երբ սահմանվում է զեղչ ապրանքի գնից՝ վճարը ժամկետից շուտ կատարելու համար կամ ավելի ցածր որակի ու այլ նմուշի ապրանք առաքելու դեպքում, քան նախատեսված է առաքման համաձայնագրով:

Պետական գներ: Շուկայական տնտեսության մեջ պետական գներ սահմանվում են.

- մենատար ձեռնարկությունների արտադրանքի վրա
- հիմնային (տվյալ երկրի տնտեսության համար) ռեսուրսների վրա
- սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների վրա:

Պետական (վավերացված) գների համակարգը բաղկացած է երկու տարրից՝ կարգավորվող գներ և ֆիքսված գներ:

ա) *կարգավորվող գներ* (որոշ ապրանքների համար կառավարությունը, հաշվի առնելով երկրի տնտեսական վիճակը, սահմանում է գների սահմանային մակարդակ կամ նրա տատանման թույլատրելի սահման, որոշում վերին կամ ներքին սահմանը)

բ) *ֆիքսված գներ* (կառավարության կողմից սահմանված կոշտ գներ, օրինակ՝ հացի, էլեկտրաէներգիայի, բնակվարձի և այլն):

Համաշխարհային գներ, որոնք կիրառվում են միջազգային առևտրում: Այդ գնով իրականացվում են արտահանման և ներմուծման խոշորագույն գործարքները:_Համաշխարհային գինը միշտ հաշվարկվում է ազատ փոխարկելի տարադրամով:

Գների մակարդակը արտահայտվում է ***գների ինդեքսի*** (price index) ձևով, որը գների փոփոխությունն է որոշակի ժամանակաշրջանում: Հաշվարկվում է որոշակի քանակի ապրանքների և ծառայությունների՝ որևէ ժամանակաշրջանի միջին կշռված գները տոկոսային արտահայտությամբ բաժանելով բազիսային ժամանակաշրջանի միջին կշռված գների վրա: Բազիսային տարին ընդունվում է 100%:

$$\text{Տվյալ տարում գների ինդեքսը} = \frac{\text{Տվյալ տարում միջին կշռված գները}}{\text{Բազային տարում միջին կշռված գները}} \times 100$$

Եթե ինդեքսն իջնում է 100-ից մինչև 98, այսինքն՝ 2%-ով՝, ապա տեղի է ունենում ***գնանկում*** (դեֆլյացիա), իսկ եթե ինդեքսն աճում է տվյալ տարում, նախորդ տարվա հետ համեմատած, ապա առկա է ***գնաճ*** (ինֆլյացիա): Օրինակ.՝ (64 միավոր / 50 միավոր) x 100 = 128):

Գների ինդեքսը հաշվարկվում է ամբողջ երկրի, նրա մարզերի, ներքին շուկայի, սպառողական (մանրածախ) ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև մեծածախ գների համար: Կառավարությունների կողմից պարբերաբար հրապարակվում է սպառողական ապրանքների գների ինդեքսը, որը հանդիսանում է տվյալ ժամանակաշրջանի համար որոշակի քանակի ապրանքների և ծառայությունների ամբողջական գների և սակագների «շուկայական զամբյուղի» և բազային ժամանակաշրջանում նույն քանակի ապրանքների և ծառայությունների գների և սակագների հարաբերակցությունը: Այլ կերպ՝ գների ինդեքսը որոշակի ժամանակահատվածում ապրանքների հավաքածուի միջին գնի փոփոխությունը պատկերող համաթիվ է: Միջինը հաշվելիս տարբեր ապրանքների գները սովորաբար կշռվում են ըստ դրանց տնտեսական կարևորության աստիճանի:

$$\text{Տվյալ տարում գների ինդեքսը} = \frac{\text{Տվյալ տարում շուկայական զամբյուղի գինը}}{\text{Բազային տարում նույն շուկայական զամբյուղի գինը}} \times 100$$

Օրինակ, 2002թ. դեկտեմբերին 2001թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ գրանցվեց սպառողական գների ինդեքսի 102,0% ցուցանիշը:

3.4. Մրցակցությունը և նրա տիպերը

Մրցակցությունը հանդիսանում է շուկայական հարաբերությունների գործունեության կոնկրետ ձև, շուկայական մեխանիզմի անհրաժեշտ տարր: Ցանկացած ձեռներեցի հիմնական նպատակը բարձր շահույթի ապահովումն ու արտադրական գործունեության շրջանակների ընդլայնումն է, որն անխուսափելիորեն բերում է նրանց միջև պայքարի սրմանը՝ ապրանքների արտադրության ու իրացման, ծառայությունների մատուցման առավել շահավետ պայմանների համար: Սակայն, մրցակցության բնույթը և ձևը կարող են տարբեր լինել, էականորեն ազդելով շուկայական հավասարակշռվածության վրա:

Մրցակցությունը պատմականորեն շուկայի առաջացման անհրաժեշտ պայմանը և շուկայական հարաբերությունների ծավալման ու զարգացման շարժիչ լծակն է հանդիսացել: Որքան այն թույլ է, այնքան անկատար է շուկայական համակարգը:

Պրակտիկան ապացուցել է, որ ազգային տնտեսության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մրցակցության զարգացման աստիճանով:

Ազնիվ և բաց մրցակցությունը ձեռնտու է բոլորին՝ սպառողին, արտադրողին և հասարակությանը, ամբողջությամբ վերցված:

Սպառողին այն ապահովում է.

- ընտրությունը (ինչ, ումից և ինչ գնով գնելու)
- ազատությունը (արտադրողից) և պարտադրումը արտադրողին՝ բարձրացնել ապրանքի որակը և իջեցնել գինը:

Արտադրողի համար ազատ մրցակցությունը ապահովում է հետևյալ առավելությունները.

- բիզնեսի ոլորտի ընտրություն և կապիտալի ազատ հոսք
- առավելագույն շահույթի ստացում
- արտադրության ծախքերի կրճատում:

Հասարակությանը մրցակցությունը հնարավորություն է տալիս.

- անընդհատ ավելացնել փոխարինող ապրանքները
- իջեցնել գները, ապահովել ապրանքների բազմազանությունը և որակը
- արագ հաղթահարել պարբերաբար ծագող ապրանքների և ծառայությունների պակասորդը (դեֆիցիտ), բարձրացնել երկրի բնակչության կենսամակարդակը:

Ըստ իրականացման մեթոդների, մրցակցությունը լինում է գնային և ոչ գնային: ***Գնային մրցակցությունը*** ենթադրում է ապրանքների կամ ծառայությունների վաճառքը ավելի ցածր գներով, քան այլ մրցակիցներինն է: Քաղաքակիրթ շուկայի պայմաններում գնի իջեցումը տեղի է ունենում կամ ծախքերի, կամ շահույթի իջեցման հաշվին: (Օրինակ, այդպիսի մեթոդ օգտագործել է ամերիկյան «Coca Cola» ընկերությունը, երբ ներթափանցել է լատինամերիկյան երկրների շուկաներ, ավելի ուշ՝ ճապոնական ֆիրմաները, երբ իրենց ապրանքներն արտահանեցին ԱՄՆ և Եվրոպա: Սակայն կատաղի մրցակցության պայքարում հաճախ օգտագործվում են նաև ոչ քաղաքակիրթ նորմեր և օրենքները խախտող մեթոդներ (օրինակ, ***դեմպինգը,*** երբ ապրանքները վաճառվում են ինքնարժեքից ցածր գներով):

Ոչ գնային մրցակցություն - ենթադրում է առավել բարձր որակի և լայն տեսականու ապրանքների առաջարկ: Հատուկ նշանակություն են այս դեպքում ստանում արտադրանքի այնպիսի չափանիշները, ինչպիսիք են՝ էկոլոգիական մաքրությունը, էներգատարությունը, էսթետիկ ցուցանիշները, անվնասությունը և այլն:

Ոչ կատարյալ մրցակցության ժամանակ տնտեսավարող սուբյեկտների ազդեցությունը շուկայի (և առաջին հերթին գների մակարդակի) վրա այնքան է մեծանում, որ առանց այդ սուբյեկտների յուրահատուկ վարվելագծերի իմացության, հնարավոր չէ հասկանալ տվյալ շուկայի բնորոշող գործընթացները: Այս տեսանկյունից տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են 4 հիմնական խմբերի՝1) մենաշնորհ, 2) դուոպոլիա, 3) օլիգոպոլիա և 4) մենաշնորհային մրցակցություն, որոնք մեկը մյուսից տարբերվում են գների վրա վերահսկողության աստիճանով:

1. *«Զուտ», (բացարձակ) մենատիրությունը (մենաշնորհ),* ինչպես և կատարյալ (ազատ) մրցակցությունը տեսական աբստրակցիա է, քանի որ գործնականում հնարավոր չէ ստեղծել մի իրավիճակ, երբ շուկայում լինի իր նմանը չունեցող արտադրող կամ հնարավոր չէ գտնել մի ֆիրմա, որի արտադրանքի նկատմամբ պահանջարկի կորը լինի բացարձակորեն ոչ առաձգական: Մենաշնորհը բնութագրվում է գների վրա խիստ բարձր վերահսկողությամբ: Կատարյալ (ազատ) մրցակցության և «զուտ» (բացարձակ) մենաշնորհի մոդելները արտահայտում են շուկայական իրադրության երկու ծայրահեղ կողմերը:

2. *Երկմենատիրության (դուոպոլիա)* ժամանակ տվյալ արտադրանքի թողարկումը կենտրոնացվում է հիմնականում երկու ֆիրմաներում, գների վրա իրականացվում է մասնակի վերահսկողություն:

3. *Խմբատիրություն (օլիգոպոլիա)* բնութագրվում է նրանով, որ շուկայում գործում են երկուսից ավելի, բայց համեմատաբար քիչ թվով ֆիրմաներ (3-5 խոշոր ֆիրմա) և արտադրում միատիպ արտադրանք, գների վրա նույնպես իրականացվում է մասնակի վերահսկողություն: Գնագոյացման մեխանիզմները օլիգոպոլ շուկայում սահմանափակված են երկու ձևով՝

- օլիգոպոլ արտադրողների կողմնորոշում դեպի այն գները, որոնք սահմանում են առաջատար ֆիրմաները
- համաձայնություն ֆիրմաների միջև միասնական գնի և շուկայի բաժանման վերաբերյալ, որը արգելված է օրենքով: Այս դեպքում գերակշռում է «ոչ գնային մրցակցությունը», երբ գնորդին գրավում են ոչ թե գնի իջեցմամբ, այլ ապրանքի որակի բարելավմամբ: Սակայն, որպես կանոն, օլիգոպոլ ֆիրման ձգտում է սահմանափակել շուկայական մրցակցությունը, իսկ գները չեն արտահայտում արտադրողների իրական ծախքերը և պահանջարկի ազդեցությունը երկրորդական է դառնում:

4. *Մենատիրային մրցակցություն,* երբ շուկայում առկա են բազմաթիվ արտադրողներ, արտադրանքի տարբերություններ և խիստ ցածր է վերահսկողությունը գնի վրա:

Արտադրանքի տարբերակումը՝ խիստ փոխարինող ապրանքների նպատակային թողարկումը (որը հաշվի է առնում գնորդների ամենաչնչին նախասիրությունները) թույլ է տալիս ֆիրմային գտնել իր գնորդների խումբը և միաժամանակ խոչընդոտում է հավասարակշռված գնի սահմանմանը: Ապրանքների և գների տարբերակման շնորհիվ ոչ կատարյալ մրցակցության շուկան ավելի լրիվ է բավարարում սպառողների պահանջները:

Ոչ կատարյալ մրցակցությունը դրսևորվում է նաև *մենավաճառի (մոնոպոնիայի)* ձևով, երբ շուկայում միայն մեկ գնորդ է:

Դեռևս XIX դարի վերջերին Եվրոպայի զարգացած երկրներում և ԱՄՆ-ում սկսեցին որոշակի արգելքներ դնել մենաշնորհացման առջև: Պետությունները մշակեցին ***հակամենաշնորհային օրենսդրություններ***, որոնք կոչված էին թույլ չտալու տնտեսության արդյունավետության տեսանկյունից կործանարար երևույթների առաջացմանը (ճյուղի արտադրության զգալի մասի գրավում, շուկաների բաշխման և գների սահմանման մասին գաղտնի կամ լեգալ համաձայնություն, արհեստական դեֆիցիտի ստեղծում և այլն):

Համեմատաբար մշակված է համարվում ԱՄՆ-ի հակամենաշնորհային օրենսդրությունը, որն ունի ամենահին պատմությունը և հիմնվում է երեք օրենսդրական ակտերի վրա: Դրանք են՝

1. *Շերմանի օրենքը* (1890թ), որով արգելվում է առևտրի գաղտնի մենաշնորհումը, այս կամ այն ճյուղի վրա միանձնյա վերահսկողության սահմանումը, գների մասին պայմանավորվածությունը և այլն:

2. *Քլեյթոնի օրենքն* (1914թ) արգելում է մրցակցության սահմանափակումը իրացման գնային խտրականությունների, սուբյեկտների միավորման պայմանագրերի որոշակի տեսակների կնքման բնագավառներում և այլն:

3. *Ռոբինսոն Պատմանի օրենքն* (1936թ) արգելում է առևտրի բնագավառում մրցակցության սահմանափակումը, գների խտրականությունը և այլն:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են շուկայի տարբեր սահմանումները:
2. Որո՞նք են շուկայի ծագման կարևորագույն պայմանները:
3. Որո՞նք են շուկայի հիմնական ձևերը և էական գործառույթները:
4. Ի՞նչպես կարելի է շուկայական տնտեսության հիմնական սուբյեկտներին առանձնացնել խմբերի և պատկերել նրանց միջև եկամտի, ռեսուրսների և արդյունքների շրջապտույտը:
5. Ի՞նչպես կարելի է դասակարգել շուկաներն ըստ տարբեր հատկանիշների:
6. Որո՞նք են շուկայական տնտեսության առանձնահատկությունները ՀՀ-ում:
7. Ո՞րն է մարքեթինգի էությունը:
8. Ո՞րն է պահանջարկի սահմանումը և ինչպե՞ս կարելի է գրաֆիկորեն պատկերել պահանջարկի օրենքը:
9. Որո՞նք են պահանջարկի փոփոխման գործոնները և ինչպե՞ս կարելի է պատկերել պահանջարկի կորի
10. փոփոխությունները:
11. Ինչպե՞ս կարելի է պատկերել շուկայական և ամբողջական պահանջարկի կորերը:
12. Ո՞րն է առաջարկի սահմանումը և ի՞նչպես կարելի է գրաֆիկորեն պատկերել առաջարկի օրենքը:
13. Որո՞նք են առաջարկի փոփոխման գործոնները և ի՞նչպես կարելի է պատկերել առաջարկի կորի փոփոոխությունները:
14. Ի՞նչպես կարելի է պատկերել հավասարակշռված գինը:
15. Ինչ՞պես է որոշվում պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության կետը:
16. Ի՞նչպես կարելի է որոշել պահանջարկի առաձգականությունը և այն դասակարգել ըստ առաձգականության գործակցի մեծության:
17. Ի՞նչպես է որորոշվում առաջարկի առաձգականությունը և առաձգականության գործակիցը:
18. Ի՞նչպես կարելի է պատկերել առաձգականության կորը:
19. Որո՞նք են գների էությունը և դրանց գործառույթները:
20. Որո՞նք են գների տեսակները:
21. Ի՞նչպես է որոշվում գների ինդեքսը:
22. Ո՞րն է բնութագրել մրցակցության դերը:
23. Որո՞նք են գնային և ոչ գնային մրցակցությունները:
24. Ինչո՞վ է պայմանավորված հակամենաշնորհային օրենսդրության անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 4. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Արտադրության ծախքեր և շահույթ

Ցանկացած ձեռներեց իր գործունեությունը սկսելուց առաջ պետք է հստակ պատկերացնի, թե ինչ օգուտ կարող է ակնկալել: Դրա համար նա կուսումնասիրի պահանջարկը և կորոշի, թե ինչ գնով է իրացնելու արտադրանքը կամ ցուցաբերված ծառայությունը, կհամեմատի սպասվելիք եկամուտները ծախքերի հետ: Արտադրության գործընթացում ծախսումների այն ամբողջությունը, որը կապված է ռեսուրսների և ծառայությունների օգտագործման հետ, կոչվում է ***արտադրության ծախքեր***: Դրանք լինում են՝

Արտաքին, ակնհայտ կամ հաշվապահական ծախքեր՝ այն դրամական ծախսերն են, որոնք ֆիրման կատարում է իրեն անհրաժեշտ ռեսուրսների և ծառայությունների համար վճարումներ կատարելիս:

Ներքին, թաքնված կամ տնտեսական ծախքեր՝ ֆիրմային պատկանող կամ չվճարվող ռեսուրսների ծախսերն են, որտեղ ներառվում է նաև ձեռներեցական տաղանդի դիմաց ստացվող *նորմալ շահույթը:*

Հաստատուն ծախքեր (FC, անգլ. - fixed costs)՝ շինության վարձակալական վճարը կամ ռենտան, սարքավորման ծախսերը, շենքի և սարքավորման ամորտիզացիոն հատկացումների մասը, վարչակառավարչական անձնակազմի վարձատրությունը և այլն, որոնց մեծությունը չի փոփոխվում որոշակի կարճ ժամանակահատվածում, կախված արտադրության ծավալի փոփոխությունից:

Փոփոխուն ծախքեր (VC, անգլ. - variable costs)՝հումքի և նյութի, էլեկրաէներգիայի և վառելիքի ծախսերը, աշխատավարձի վճարումը և այլն, որոնց մեծությունը փոխվում է արտադրության ծավալի ավելացման հետ:

Ընդհանուր ծախքեր (TC, անգլ. - total costs) (գումարային, համախառն)՝ հաստատուն և փոփոխուն ծախքերի գումարն է արտադրության յուրաքանչյուր կոնկրետ մակարդակի դեպքում:

Միջին ծախքեր (AC, անգլ. - average costs) միավոր արտադրանքի արտադրության ծախսերն են, որոնք հաշվարկվում են ծախքերը հարաբերելով թողարկված արտադրանքի ծավալին (Q, անգլ. - quantity): Այդպես կարելի է հաշվարկել *միջին հաստատուն* AFC (average fixed costs), *միջին փոփոխուն* AVC (average variable costs), *միջին համախառն* ATC (average total costs) ծախքերը՝ AFC=TFC/Q, AVC=TVC/Q, ATC=TC/Q=T(FC+VC)/Q=AFC+AVC: Եթե միջին ծախքերը ցածր են գնից, ապա ֆիրման ստանում է ավելի բարձր շահույթ, քան նորմալ շահույթն է, այսինքն՝ գերշահույթ կամ *կվազիռենտա*, իսկ եթե դրանք բարձր են գնից, ապա ֆիրման վնասով է աշխատում և սնանկանալու է:

Սահմանային ծախքեր (MC, անգլ. - marginal costs) (լրացուցիչ), որոնք կապված են առավել էժան եղանակով արտադրանքի լրացուցիչ միավորի արտադրության հետ՝ MC=ΔTC / ΔQ կամ $MC=TC_n - TC_{n-1}$:

Կարճաժամկետ ծախքեր՝ ծախսումներն են, որոնք փոփոխվում են հեշտ և արագ ֆիքսված արտադրական հզորությունների պայմաններում:

երկարաժամկետ ծախքեր՝ ծախսումներն են, որոնց փոփոխվելու համար պահանջում է երկար ժամանակ, օրինակ, արտադրական հզորությունների ձեռքբերմանը հատկացվող ծախսումները:

Թվարկված բոլոր ծախքերը կարելի է պատկերել գրաֆիկորեն (նկար 33):



Նկար 33. Արտադրության ծախքերի ձևերը

ա) հաստատուն FC, փոփոխական VC և ընդհանուր TC
բ) միջին AC, միջին հաստատուն AFC և միջին փոփոխական AVC
գ) սահմանային MC
դ) կարճաժամկետ և երկարաժամկետ:

Սովորաբար, պարզեցված ձևով, ապրանքների և ծառայությունների իրացումից ստացված ամբողջ հասույթի և ծախքերի (արտաքին և ներքին) տարբերությունը կազմում է *շահույթ*: Ինչպես արդեն նշել ենք, բոլոր գործոնների արժեքները (թե՛ շուկայից գնված, թե՛ ֆիրմայի սեփականությունը հանդիսացող), պետք է մտնեն ծախքերի կազմի մեջ: Տարբերակելով արտաքին (ակնհայտ) և ներքին (թաքնված) ծախքերը, կարելի է ճշգրիտ որոշել, թե ի՞նչ է հասկացվում շահույթի տակ, ի՞նչ է հաշվապահական (ֆինանսական) առումով, ի՞նչ է տնտեսական, նորմալ կամ զրոյական շահույթը.

Հաշվապահական (ֆինանսական) շահույթն իրենից ներկայացնում է ֆիրմայի արտադրանքի իրացումից ստացված ընդհանուր հասույթի և ակնհայտ, արտաքին կամ հաշվապահական ծախքերի միջև եղած տարբերությունը:

Նորմալ շահույթը այն եկամուտն է, որը ձեռներեցը ստանում է գործի կազմակերպման և իրականացման իր ջանքերի ու աշխատանքի դիմաց, այսինքն յուրահատուկ գործոնի՝ ձեռնարկատիրության, դրամական փոխհատուցումն է: Այն հավասար է ֆիրմայի տնօրենի կողմից գործի մեջ ներդրված այլընտրանքային ծախքերին և ցույց է տալիս, որ ֆիրմայի արտաքին և ներքին ծախքերը փոխհատուցվում են: Օրինակ, եթե գործի մեջ ներդնելով 1 մլն դրամ, ձեռներեցը ստանում է 5% շահույթ, որը հավասար է տվյալ ժամանակահատվածի բանկի տոկոսադրույքին, ապա ստացված շահույթը կլինի նորմալ կամ զրոյական, արտացոլելով այլընտրանքային ծախքեր՝ կապված բանկում 1 մլն դրամ ներդնելու հետ:

Տնտեսական շահույթը ֆիրմայի ընդհանուր հասույթի և բոլոր ծախքերի տարբերությունն է (նկար 34):



Նկար 34. Արտադրության ծախքերի տիպերի և շահույթի հարաբերակցությունը (փոխադարձ կապը)

Շահույթը կարևոր դեր է կատարում տնտեսության զարգացման և մարդկանց բարեկեցության բարձրացման գործում, քանի որ դրա ակնկալումը խրախուսում է ռեսուրսների առավել արդյունավետ բաշխումն ու օգտագործումը, ծախսերի իջեցումը, տեխնիկական նորամուծությունները, նոր արտադրությունների յուրացումը և, վերջին հաշվով, տնտեսական աճը և պահանջմունքների առավել լրիվ բավարարումը: Սակայն տնտեսական շահույթի ստացումը, որպես ավելցուկային (լրացուցիչ), երկարատև չէ, քանի որ մրցակցությունը բերում է տնտեսվարման պայմանների համահարթեցմանը, տեխնիկական նորարարությունների տարածմանը և այլն:

Այսպիսով, շահույթը խթանում է տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը, իսկ վնասը՝ պատիժ է հանդիսանում անկարող տնտեսվարության և անարդյունավետ մեթոդների կիրառման համար: Սակայն վնասների մշտական վտանգը ևս հզոր խթան է, ինչպես և շահույթ ստանալու ցանկությունը:

4.2. Ձեռներեցության տնտեսական բնույթը, գործառնությունները և ակտիվացման պայմանները

Ձեռներեցության տեսության հիմունքները դրել են դեռ XVIII-XIX դդ. Ֆ. Քենեն, Ա. Սմիթը, Ժ. Սեյը, իսկ այնուհետև այն զարգացրել են Յ. Շումպետերը, Ֆ. Խայեկը, Ա. Չայնովը և ուրիշները: Ձեռներեցությունը շատ գիտությունների ուսումնասիրման առարկա է հանդիսանում: Սրանով է բացատրվում նրա մեկնաբանումների և սահմանումների բազմազանությունը:

Ձեռներեցությունը (ձեռնարկատիրական գործունեությունը) միշտ էլ հանդիսացել է տնտեսագիտական գիտության հետազոտությունների կարևորագույն հարցերից մեկը: Ձեռներեցությունը պատմական կատեգորիա է: Անընդհատ փոխվում են նրա բովանդակությունը և ձևը, ընդլայնվում կիռարման ոլորտը: Ձեռներեցության զարգացումն անխզելիորեն կապված է շուկայական տնտեսության զարգացման հետ: Շուկայական տնտեսության պայմաններում սկզբունքորեն փոխվում են ձեռնարկատիրական գործունեության տեղն ու դերը տնտեսական հարաբերությունների համակարգում, իսկ ձեռներեցը դառնում է շուկայական տնտեսության գլխավոր գործող անձ:

Անցումային տնտեսության տրանսֆորմացիոն փոփոխությունների կարևորագույն պայմանը ձեռներեցության զարգացումն է, որի էական հատկանիշների բացահայտումն ունի չափազանց կարևոր նշանակություն:

Ձեռներեցությունը, որը հիմնված է սեփական կամ փոխառու միջոցների վրա, քաղաքացիների կամ նրանց միավորումների ինքնուրույն նախաձեռնողական գործունեությունն է, որը շահույթ ստանալու և ընդհանրապես հաջողության հասնելու նպատակ է հետապնդում՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման ուղիների որոնման միջոցով: Անկասկած, եկամուտն է հանդիսանում ձեռներեցության նպատակը: Սակայն ցանկացած ձեռներեց հասկանում է, որ նա եկամուտ կարող է ստանալ միայն հաճախորդներին անհրաժեշտ ծառայություններ և օգտակար աշխատանքներ կատարելու, նրանց հետաքրքրող ապրանքը վաճառելու միջոցով: Յուրաքանչյուր գործարքի հաջող կատարումը, այսպես, թե այնպես, արտացոլում է մասնակցող բոլոր կողմերի շահագրգռվածությունը: Եթե գործարքի առարկան կամ ձևը արգելված չեն օրենքով (օրինակ, թմրադեղերի իրացումը, զենքի

վաճառքը, ստրուկի աշխատանքը և այլն), ապա նրա հաջողությամբ շահագրգռված է նաև պետությունը, քանի որ այն նպաստում է տնտեսության արդյունավետ զարգացմանը:

Ձեռներեցությունը մարդու ընդունակությունների դրսևորման և պահանջմունքների զարգացման ձև է: Այն չի կարելի հանգեցնել ցանկացած միջոցներով իր կապիտալը բազմապատկելու առանձին մասնավոր սեփականատիրոջ ջանքերի: Այսօր խոսքը գնում է բանական և նյութական սեփականության տնօրենների բարձրորակ աշխատանքի մասին, որն ընդգրկում է մարքեթինգ-շահագործում (մշակում) -արտադրություն-իրացում-կենցաղային սպասարկում ոլորտները:

Տնտեսավարման պրակտիկայում ձեռներեցությունը հաճախ նույնացվում է «բիզնես» հասկացության հետ, որը նույնպես կիրառվում է շահավետ, եկամտաբեր որևէ գործունեություն իրականացնելու իմաստով:

Սակայն «բիզնես» հասկացությունը ավելի լայն է, քան ձեռնարկատիրական գործունեությունը, քանի որ այն ընդգրկում է շուկայական տնտեսության բոլոր մասնակիցների հարաբերությունները (նկար 35):



Նկար 35. Բիզնեսի համակարգ

Ձեռներեցության ***օբյեկտ*** են ոչ միայն արտադրական, այլ նաև ոչ արտադրական ոլորտները՝ նորաստեղծությունը, առևտրագնումային, միջնորդային գործունեությունը, տուրիզմը, պրոֆեսիոնալ սպորտը, համերգային գործունեությունը, գործարքները արժեթղթերի հետ, իրավաբանական և այլն ծառայությունները: Ընդլայնվում է ձեռներեցությունը հատկապես էկոլոգիայի, մշակույթի, առողջապահության, սոցապահովության և կրթության ոլորտներում:

Ձեռնարկատիրական գործունեության ***սուբյեկտներ*** կարող են լինել տվյալ երկրի և արտասահմանյան պետությունների քաղաքացիները ու նրանց միավորումները (կոլեկտիվ ձեռնարկատերերը): Ձեռնարկատիրոջ իրավական կարգավիճակը (նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, մասնակցությունը շահույթի բաշխմանը) և ձեռնարկատիրական գործունեության երաշխիքները կանոնակարգվում են օրենքով: Մասնավորապես, երաշխավորվում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ձեռնարկություն ստեղծելու և նրա գործունեության համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու իրավունքը: Այնուհետև ձեռնարկատիրական գործունեության բոլոր սուբյեկտները պետք է ունենան շուկա մտնելու և նյութական, ֆինանսական, աշխատանքային, տեղեկատվական ու բնական ռեսուրսների օգտագործման հավասար իրավունք և ձեռնարկությունների գործունեության համար հավասար պայմաններ (անկախ նրանց սեփականության և կազմակերպաիրավական ձևից): Նրանք պետք է պաշտպանված լինեն գույքի անօրեն բռնագրավումից, կարողանան որոշված սահմաններում գործունեության ոլորտի ազատ ընտրություն կատարել: Շուկայում անհանդուրժելի են առանձին ձեռնարկությունների և նրանց միավորումների մենաշնորհային վիճակը, ինչպես նաև, անազնիվ մրցակցությունը:

Ձեռնարկատիրոջ կարգավիճակը ձեռք է բերվում ձեռնարկության գրանցման միջոցով, առանց որի այն արգելվում է: Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող քաղաքացին հանդիսանում է անհատական ձեռնարկատեր:

Ելնելով ձեռնարկատիրական գործունեության բնույթից, այն կարող է իրականացվել սեփականատիրոջ, կամ էլ նրա հանձնարարությամբ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ: Այս դեպքում սեփականատիրոջ և կառավարչի (մենեջերի) միջև հարաբերությունները կանոնակարգվում են պայմանագրով:

Այսպիսով, ձեռներեց հասկացությունը չպետք է նույնացնել սեփականատեր կամ մենեջեր հասկացությունների հետ: Օրինակ, օգտագործելով փոխառու կապիտալ՝ խոշոր ձեռնարկության ղեկավարը, կատարելով ձեռներեցության գործառույթ, կարող է հանդես չգալ որպես սեփականատեր: Դրա հիմքում ընկած է կապիտալ-ֆունկցիայի բաժանումը կապիտալ-սեփականությունից: Իսկ սեփականատերը կարող է ստանալ եկամուտ, չզբաղվելով ձեռներեցությամբ (օրինակ, հողային ռենտան վարձակալական վճարի ձևով, փոխատվական տոկոսը և այլն): Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտները պատկերված են նկար 36 –ում:



Նկար 36. Ձեռներեցությյան սուբյեկտներ

Ձեռներեցությանը բնորոշ են մի շարք ընդհանուր ***հատկանիշներ***՝

- ինքնուրույն կարգավիճակը (սեփականատեր, կամ նրա հանձնարարությամբ գործող անձ)
- գործունեության նպատակը (շահույթի կամ եկամտի ստացումը սոցիալական արդյունքի հետ մեկտեղ)
- գործառույթները՝ ստեղծագործական (տնտեսական ռիսկի հետ կապված կոմերցիոն գաղափարի առաջադրումն ու իրականացումը), ռեսուրսային (տեղեկատվական, ֆինանսական, աշխատանքային և նյութական ռեսուրսների մոբիլիզացում), կազմակերպական (օպտիմալ հարաբերակցությունով ռեսուրսների միացումը և դրանց օգտագործման վերահսկողությունը):

Ձեռնարկատիրական գործունեությունը վերջին հաշվով ուղղված է հասարակական պահանջմունքների բավարարմանը: Սակայն ձեռներեցը ռիսկի է դիմում ոչ թե բարեգործական դրդումներից, այլ ելնելով նյութական շահից: Ձեռնարկատիրական գործունեության ***դրդապատճառը*** եկամուտ ստանալն է: Այնուամենայնիվ, ամեն մի եկամուտ դեռևս ձեռներեցության արդյունք չէ (օրինակ, ռենտան,տոկոսը և այլն):

Ֆիրմաների նպատակները կարող են տարբեր լինել և փոխվել ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ: Սակայն նրանցից յուրաքանչյուրի համար պարտադիր պայմանը շահույթի միջին նորմայի ապահովումն է: Շահույթը ձեռներեցի եկամտի և ֆիրմայի զարգացման աղբյուր է ծառայում: Այն ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ներդրումային հնարավորությունների գնահատման ցուցանիշ է, որի նշանակությունը տնտեսական կյանքում մինչև վերջերս անտեսվում էր մեր տնտեսագիտության տեսության մեջ: Այս ամենը խոսում է այն մասին, որ շահույթը կարևորագույն տեղ է զբաղեցնում ձեռներեցի նպատակների հիերարխիայում:

Անհրաժեշտ է տարբերել ձեռներեցական *գործառույթների* երկու խումբ: Դրանցից մեկը արտացոլում է միջավայրի պայմաններին հարմարեցման ընթացիկ խնդիրները և այդ միջավայրի փոփոխությունների վրա հակազդելու ձեռներեցի ունակությունը: Այս տեսանկյունից ձեռներեցական գործառույթներն իրենցից ներկայացնում են կառավարչական գործունեության առանձնահատուկ ձևեր (նկար 37):



Նկար 37. Ձեռնարկատիրական գործունեության ոլորտները և գործառույթները

Ֆինանսների և արտադրության, կադրերի, նյութական հոսքերի և վաճառահանման կառավարումը ձեռներեցի ֆունկցիոնալ ոլորտն է: Ձեռներեցության գործառույթներն իրենց ձևով և բովանդակությամբ հանդիսանալով կառավարչական, ունեն իրենց առանձնահատկությունները:

Ձեռներեցական գործառույթների մյուս խումբը բնութագրում է նրա ազդեցությունը տնտեսական միջավայրի վրա և դրա հետևանքները: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել ***շուկայական հավասարակշռության հաստատման աջակցությունը***: Մյուսը՝ ***բարեփոխման գործառույթն է*** (հին ոլորտի վերափոխում և նորի ստեղծում) և, վերջապես, երրորդը՝ ***սոցիալական գործառույթը*** (սպառողական ընտրության օպտիմալացում և բարեկեցության աճ, բնապահպանական խնդիրների լուծում):

Քանի որ ձեռնարկատիրական գործունեության վճռորոշ պարամետրերը կարգավորվում են սեփականատիրոջ կողմից, ապա ակնհայտ է, որ նա էլ հանդիսանում է ամբողջ *ձեռնարկատիրական գործառույթի անմիջական կրողը*:

Ձեռներեցությունը բարձր արտադրողական աշխատանքի, շահույթի ստացման և, վերջին հաշվով, հասարակական պահանջմունքների ավելի լրիվ բավարարման առավել գործուն խթան է: Ձեռներեցության հասարակական բնույթն արտահայտվում է ոչ միայն նրա մասնակիցների փոխպայմանավորված գործունեություն մեջ, այլև այն ենթադրում է հասարակական արտադրության մեջ որոշակի պայմանների առկայություն, որոնք թույլ կտան իրականացնել ձեռներեցությանը բնորոշ գործառույթները:

Ձեռներեցության ձևավորման, զարգացման, իրականացման վրա ազդող պայմանների ամբողջությունը կազմում է ***ձեռներեցության միջավայրը***: Այն բաղկացած է մի քանի ելակետային տարրերից (նկար 38):



Նկար 38. Ձեռներեցության միջավայր

Այդպիսով, ձեռներեցության միջավայրը միասեռ չէ: Այն բաղկացած է երկու խոշոր ոլորտներից: Դրանցից մեկի պարամետրերը չեն ենթարկվում ձեռներեցի ազդեցությանը: Այստեղ նա ստիպված է միայն հարմարվել ձևավորված պայմաններին: Մյուսի պարամետրերը հանդիսանում են ձեռներեցի վերափոխման գործունեության օբյեկտ (առարկա):

Ահա թե ինչու ձեռներեցության միջավայրը ձեռնարկատիրական գործունեության և՛ նախադրյալն է, և՛ օբյեկտը:

Հարմարվելով միջավայրին և փոփոխվելով նրա ազդեցության տակ, ձեռներեցությունը վերափոխում է հենց միջավայրը:

Որո՞նք են ձեռներեցության զարգացման և ակտիվացման անհրաժեշտ պայմանները.

1. Մասնավոր սեփականության առկայությունը, սեփականության հարաբերությունների անձնավորումը (սեփականության պահպանման և ազգայնացման բացառման երաշխիքները):

2. Պետության կայուն տնտեսական և սոցիալական քաղաքականությունը:

3. Ֆինանսավարկային և արտարժութային քաղաքականության վերափոխումը:

4. Իրավական քաղաքացիական հասարակության ձևավորումը, կարգավորող օրենքների հուսալի գործողությունը, ձեռներեցների սեփականության և իրավունքների պաշտպանումը, հավասար իրավունքների ապահովումը, ձեռներեցության դեմ ուղղված օրենսդրական որևէ դրույթի բացառումը:

5. Արտադրողների և սպառողների տնտեսական ազատությունը:

6. Շուկայի հավասարակշռությունը և ազատությունը (ապրանքների և ծառայությունների, կապիտալի, տեղեկատվության և աշխատուժի շարժման մեջ արգելքների բացակայությունը, բոլորի համար նույն գնով ապրանքի ձեռքբերման հնարավորությունը):

7. Ձեռներեցության պաշտպանման նպատակով արտոնյալ հարկադրումը ու վարկավորման և տնտեսվարման շուկայական–մրցակցական ռեժիմի ստեղծումը (տարբեր ապրանքներ արտադրողների զգալի քանակի առկայությունը շուկայում), համապատասխան զարգացած ենթակառուցվածքի ձևավորումը և զարգացումը (ապրանքային և ֆոնդային բորսաներ, առևտրային բանկեր, մեծածախ առևտրի ձեռնարկություններ, ապահովագրական ընկերություններ, աուդիտորական ֆիրմաներ և այլն):

8. Բանական սեփականության (նորարար գաղափարներ, հիմնադրույթներ և գործարար ակտիվության մեթոդներ) արդյունավետ համակարգի առկայությունը:

9. Պետության հովանավորումը և օգնությունը տնտեսական գործունեության կարգավորման արարողության ապաբյուրոկրատացմանը (հաշվետվության ձևերի կրճատում, ընկերությունների գրանցման կանոնների հեշտացում և այլն):

10. Առևտրային ռիսկի երաշխավորված ապահովագրման հնարավորությունը:

11. Ձեռներեցության վերաբերյալ դրական հասարակական կարծիքի առկայությունը:

12. Ցանկացած տնտեսական սուբյեկտի ազատ ելքը արտաքին շուկա:

Շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռներեցը կամ ձեռնարկուն համարվում է տնտեսական հարաբերությունների հիմնական սուբյեկտը, որովհետև նրա շնորհիվ է իրականացվում տնտեսվարումը հասարակական արտադրության ստորին օղակներում: Ձեռներեցը այն մարդն է, որը միացնելով արտադրության անձնական և իրային գործոնները, կազմակերպում է որևէ գործ և իրականացնում դրա կառավարումը:

Միաժամանակ նա ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության աղբյուր և շարժիչ ուժ է հանդիսանում: Եկամուտ ստանալու նպատակով նա ստեղծում է պահանջարկ ունեցող ապրանք (ծառայություն), կազմակերպում և ֆինանսավորում է դրա արտադրությունը և իրացումը, որոշում մրցակիցներին, վերցնում իր վրա ֆիրմայի կազմակերպման ռիսկը և պատասխանատվությունը, որոշում գինը, որը կգրավի գնորդներին և միաժամանակ կապահովի շահույթ:

Անգլիացի հանճարեղ տնտեսագետ Ադամ Սմիթը նշում է, որ ձեռներեցը նկատի ունի միայն իր սեփական շահը, սեփական օգուտը, ընդ որում, այդ դեպքում նա անտեսանելի ձեռքով մղվում է դեպի նպատակը, որը բոլորովին չէր մտնում նրա մտադրության մեջ: Հետամուտ լինելով իր սեփական շահերին, նա հաճախ ավելի

գործնական կերպով է ծառայում հասարակության շահերին, քան այն դեպքում, երբ գիտակցորեն ձգտում է ծառայել դրանց:

Ձեռներեցությունը ոչ միայն գործունեության ոլորտ է, այլև առանձնահատուկ ապրելակերպ ու մտածելակերպ: Բիզնեսով զբաղվելու ունակությունը յուրահատուկ տաղանդ է, քանի որ սկսելով գործը սեփական կամ փոխառու կապիտալով՝ բիզնեսմենը հաճախ դիմում է ռիսկի, հետևաբար, նա պետք է անվախ լինի: Շուկայական տնտեսությամբ երկրներում յուրաքանչյուր տարի հարյուր հազարավոր ձեռներեց մարդիկ՝ միայնակ կամ խմբերով, ռիսկի տակ դնելով իրենց նախնական կապիտալը, բացում են նոր ձեռնարկություններ, միջնորդական ֆիրմաներ, խանութներ և այլն: Այդ գործընթացն անընդատ է. մրցակցական պայքարում նրանց մի մասը սնկանում է, իսկ մյուսներն ամրապնդում են իրենց դիրքերը շուկայում:

Բիզնեսմեն դառնալու իղձը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, այդ թվում անձնական անկախության ձգտումը (այսինքն՝ պետ կամ կառավարիչ չունենալ), բարձր եկամուտներ ստանալը, սիրված գործով զբաղվելու հույսը և այլն: Ձեռներեցությունը կապված է ինչպես անձի ընդհանուր (բանական, ստեղծագործական, ֆիզիկական), այնպես էլ հատուկ (տնտեսական գործունեության որոշակի ձևեր) ունակությունների հետ: Մասնավոր ձեռներեցության ունակություններով օժտված է աշխատողների միայն 5-7%-ը: Ձեռներեցը միշտ գտնվում է իր գործունեության այս կամ այն կողմի վրա ազդող ամենատարբեր գործոնների ազդեցության տակ: ***Ձեռներեցության գործոնները***՝ պարամետրեր են, որոնք որոշում են ձերներեցական գործառույթի հատկությունների դրսևորման հնարավորությունները և բնույթը:

Տարբերում են արտաքին (ձեռներեցին շրջապատող միջավայրի բնույթով պայմանավորված) և ներքին (ներքին կազմակերպվածության առանձնահատկություններով պայմանավորված) ձեռներեցության գործոններ: Արտաքին գործոններին են դասվում՝

- *բնական-ժողովրդագրական գործոնները* կանխորոշում են ձեռնարկությունների ճյուղային մասնագիտացումը և տեղաբաշխումը, ծախքերի մակարդակը և աշխատուժի օգտագործման հնարավորությունները
- *սոցիալ-մշակութային գործոններն* ազդում են պահանջմունքների ձևավորման և պահանջարկի յուրահատկության, ձեռներեցության կազմակերպման առանձնահատկության և գործարար էթիկայի վրա
- *տեխնոլոգիական գործոններն*՝ արտացոլում են երկրի ինդուստրիալ և գիտատեխնիկական զարգացման մակարդակը և պայմանավորում ոչ միայն արտադրության իրականացման բնույթն ու ձևերը, այլ նաև ձեռնարկատիրական գործունեության եղանակները
- *տնտեսական գործոնների* մեջ են մտնում շուկաների զարգացման աստիճանը, դրամական համակարգի կայունությունը, եկամուտների ու խնայողությունների մակարդակը, հարկային քաղաքականությունը, որոնք որոշում են սահմանափակ ռեսուրսների բաշխման պայմանները և ձեռնարկատիրական ակտիվության մակարդակը
- *ինստիտուցիոնալ գործոններն* ընդգրկում են բանկային ու ապահովագրական համակարգերը, մատակարարման և իրացման ոլորտները, շուկայական միջնորդների առկայությունը, որոնցով պայմանավորված են ապրանքափոխանակային գործառնությունների ինտենսիվությունը, ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը
- *իրավական գործոնները* կոչված են ապահովել ձեռներեցության օրենսդրական պաշտպանությունը, ստեղծելով ոչ միայն ձեռնարկատիրական գործունեության անհրաժեշտ նախադրյալներ, այլ նաև կանխորոշելով նրա ակտիվության մակարդակը
- *քաղաքական գործոնները*, ինչպես օրինակ՝ հասարակության և պետության համագործակցությունը, քաղաքական կայունությունը, որոշումների ընդունման արդյունավետ եղանակները նպաստավոր պայմաններ են ստեղծում ձեռներեցության զարգացման և սոցիալական արդարության հաստատման համար:

Ձեռներեցության ներքին գործոններն արտացոլում են սեփականության հարաբերությունների զարգացման մակարդակը, ամենից առաջ մասնավոր սեփականության երաշխիքները՝ շուկայի գործակալների տնտեսական մոտիվացիայի և ռեսուրսների արդյունավետ օգտագործման աստիճանը, տնտեսական գործառնությունների իրականացման հնարավորությունները, կապիտալի շարժունությունը, ձեռնարկատիրական գործունեության հատկությունների միավորմանը և մոբիլիզացիային նպաստող սեփականության հարաբերությունների դեմոկրատացումը: Ներքին գործոններից են նաև *տնտեսական բջիջների ներքին կազմակերպման առանձնահատկությունները*, որոնք անմիջականորեն ազդում են ձեռնարկատիրության ֆունկցիոնալ հատկանիշների բովանդակության և իրացման ձևերի վրա (կազմակերպման մասշտաբայնությունը, հիերարխիկ կառուցվածքի առանձնահատկությունները, կազմակերպության կառավարման ձևերը և բնույթը):

Հասարակության տնտեսական զարգացման գործընթացում ցանկացած գործոնի ազդեցությունը կարող է փոխվել: Ավելին, առանձին գործոններ կորցնում են իրենց դերը և, ընդհակառակը, սկսում են գործել նոր գործոններ: Ձեռներեցության աստիճանը որոշող գործոնները, ինչպես նաև դրանց փոխկապվածությունը արմատապես փոխում են իրենց դերն ու նշանակությունը անցումային տնտեսության պայմաններում: Վերոհիշյալ բոլոր գործոնները կարելի է պատկերել հետևյալ կերպ (նկար 39):



Նկար 39. Ձեռներեցության գործոններ

Ձեռներեցությունը պահանջում է գիտելիքների ձեռքբերման և նոր պայմաններին հարմարվելու որոշակի *չափանիշներ*: Այդ թվում՝

- նպատակասլացություն, եկամուտ ստանալու ձգտում, իրեն փորձելու ցանկություն (օպտիմիզմ, պատրաստակամություն, համառություն, կամք)
- տնտեսական մտածելակերպ (իրադարձությունները և փոխկապվածությունները օբյեկտիվ և օպերատիվ գնահատելու, գլխավորը երկրորդականից անջատելու, զարգացման միտումները կանխատեսելու ունակություն)
- նախաձեռնություն (սեփական համարձակ որոշումների ընդունման, ռիսկի գնալու ունակություն)
- նորարարություն և նորաստեղծական ակտիվություն (արտադրանքը, տեխնոլոգիան, արտադրության և կառավարման կազմակերպումը նորացնելու պատրաստակամություն և կարողություն)
- կազմակերպական հատկություններ (մարդկանց գրավելու, գործընկերների հետ համաձայնություն գտնելու, ճշտապահ և սիրալիր լինելու ընդունակություն)
- խնայողականություն (ռեսուրսների մոբիլիզացման, ռացիոնալ բաշխման և խնայողաբար ծախսման կարողություն)
- պատասխանատվություն հասարակության, գործընկերների և աշխատողների առջև (ազնվություն հարաբերություններում)
- արտադրության գործոնների միավորման ունակություն
- հոգեբանական կայունություն (սեփական արժանապատվության զգացում, հավասարակշռություն):

Նշված չափանիշները որոշում են ձեռնարկատիրական գործունեության կուլտուրան՝ որպես հասարակության տնտեսական կուլտուրայի մասի: Ամերիկյան ձեռնարկատերերի շրջանակում հայտնի «7 քայլ դեպի ձեռնարկատերերի հաջողությունը» հանրահայտ ձեռնարկում ներկայացված են ձեռներեցության հաջողության գնահատման 15 հետևյալ չափանիշները.

1. Կապիտալի պահանջմունք:
2. Կայուն դիրք շուկայում (կայուն իրացման շուկայի անհրաժեշտություն):
3. Կայունացած բաշխման համակարգ:
4. Անհրաժեշտության աստիճան:
5. Հումքի և ապրանքի հաստատուն և հուսալի մատակարարում:
6. Կառավարական կարգավորում:

7. Հաստիքների չափ:
8. Գների սահման (անհարաժեշտ է իմանալ կոնկրետ պայմաններում ինքնարժեքի և գնի տիպիկ հարաբերակցությունը):
9. Գնումների հաճախականություն:
10. Նորության մեծ աստիճան:
11. Սպառողի վստահություն:
12. Ապրանքի ֆիզիկական և բարոյական մաշում մաշվածք:
13. Պատասխանատվություն(չի կարելի անվան հետ խաղալ և դիմել ռիսկի արտադրելով անորակ ապրանք):
14. Մրցակցություն (եթե չկա մրցակցություն, ապա դա կարող է նշանակել հետաքրքրության բացակայություն:)
15. Անբասիր, անպախարակելի բարոյականություն:

Այս չափանիշների միջոցով որոշվում է ռիսկի աստիճանը բիզնեսում:

Պետք է նշել, որ ձեռներեցության մեջ ուժեղ են տնտեսական գործունեության հոգեբանական մոտիվները, որոնց առկայությունը և նշանակությունը տնտեսական կյանքում մինչև վերջերս անտեսվում էր մեր տնտեսագիտության տեսության մեջ:

Ձեռներեցական գործունեություն իրականացնելու կարողության կամ ձեռներեցության ընդունակության դերն ու նշանակությունը ազատ շուկայական տնտեսության մեջ այնքան մեծ է, որ ժամանակակից տնտեսագիտության մեջ արտադրության գործոնները դասակարգելիս մարդկանց կամ տնտեսավարող սուբյեկտների ձեռներեցական ունակությունը հաշվի է առնվում որպես 4-րդ գործոն, քանի որ.

- ձեռներեցն իր վրա նախաձեռնություն է վերցնում միացնելու հողի, կապիտալի և աշխատանքի ռեսուրսները միասնական արտադրության գործընթացի մեջ, և միաժամանակ հանդիսանում է նրա շարժիչ ուժը
- ձեռներեցն իր վրա է վերցնում բիզնեսի իրականացման գործընթացում հիմնական որոշումների ընդունման բարդ խնդիրը
- ձեռներեցը հանդիսանում է նորարար մի անձ, որը ձգտում է ներդնել նոր արտադրանք, նոր տեխնոլոգիա, բիզնեսի կազմակերպման նոր ձևեր
- ձեռներեցը դիմում է ռիսկի, քանի որ շահույթը երաշխավորված չէ: Ռիսկի է ենթարկում ոչ միայն իր ժամանակը, աշխատանքը, գործնական համբավը, այլ նաև իր և իր գործընկերների ներդրած գումարն ու բաժնետոմսերը:

4.3. Ֆիրման՝ որպես շուկայական տնտեսության օղակ

Ազգային տնտեսության մեջ բիզնես են իրականացնում միլիոնավոր տնտեսավարող սուբյեկտներ, սակայն շուկայական տնտեսությունը առաջ է քաշել իր տնտեսական գործակալների գործունեության կազմակերպման առավել արդյունավետ ձևը՝ ֆիրման: Ի սկզբանե ֆիրմա բառը (իտալերեն firma-ստորագրություն բառից է) նշանակել է կոմերսանտի առևտրական անուն: Ժամանակակից պայմաններում ֆիրման ցանկացած շուկայական տնտեսության տարր է, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպատնտեսական կառուցվածք, որն ունի տնտեսական և իրավաբանական ինքնուրույնություն:

Ներկայումս աշխարհում հաշվարկվում է մոտ 40 մլն տարբեր ձեռնարկատիրական ֆիրմա, որոնցից 19.5 մլն ԱՄՆ-ում: Նրանք զբաղված են ապրանքների արտադրությամբ ու իրացմամբ, ամենատարբեր ծառայություններ մատուցելով (ֆինանսական, միջնորդային, տեղեկատվական, խորհրդատվական, գիտահետազոտական և այլն):

Ըստ ձեռներկատիրական գործունեության ոլորտների, ֆիրման կարող է լինել արդյունաբերական, ագրոարդյունաբերական, գյուղատնտեսական, շինարարական, տրանսպորտային, առևտրամիջնորդային, գովազդային, իրավաբանական և այլն:

Ֆիրմաների առաջացման և զարգացման մեկնաբանման հարցում կան մի քանի մոտեցումներ:

Նախ՝ ֆիրման իրենից ներկայացնում է շուկայական տնտեսության կազմակերպատնտեսական օղակ, որի միջոցով իրականացվում են արտադրական գործընթացներ՝ ապրանքների և ծառայությունների ստեղծման նպատակով: Դա բացատրվում է երկու հանգամանքով.

1. Ֆիրման ամենադինամիկ օղակն է շուկայական տնտեսության կառուցվածքում: Բոլոր գիտատեխնիկական նվաճումները տեխնոլոգիայի, արտադրության միջոցների, աշխատանքի առարկաների բնագավառներում, առաջավոր արտադրական փորձն իրենց կիրառումն ու արտացոլումն են գտնում, նախ և առաջ, ֆիրմաներում: Ֆիրման բազա է ծառայում մակրո և միկրոէկոնոմիկայի մնացած բոլոր օղակների համար:
2. Ֆիրման այն կիզակետն է, որտեղ արտադրատեխնիկական հարաբերությունների ամբողջ բազմազանությունը մակրո և միկրոէկոնոմիկաներում միատեղվում են: Ֆիրմաների մակարդակով կոնկրետ ձևով են դրսևորվում հասարակական վերարտադրության և շուկայի օրենքները:

Երկրորդ՝ ֆիրման, սոցիալ-տնտեսական հարաբերությունների տեսանկյունից, գործողության միասնական մոտիվներով համախմբված մարդկանց ընդհանրություն է:

Երրորդ՝ ֆիրման փոխշահավետ համաձայնագրերի ամբողջություն է:

Ձեռնարկատիրական ֆիրման քաղաքացիների (ֆիզիկական անձանց) և կազմակերպությունների (իրավաբանական անձանց) կազմակերպաիրավական ձև է, որին համապատասխան ձևավորվում է նրա ներքին կառուցվածքը: Այն բնութագրում է ֆիրմայի կազմակերպական ձևը, նրա կազմը (մեկ կամ մի քանի ձեռնարկություն), ձևավորման եղանակները (անհատական, գործընկերային, կորպորատիվ), սեփական կապիտալի բաշխման հիերարխիան (մեկը մյուսից կապված կամ կախում չունեցող ձեռնարկատիրություններ):

Ֆիրման ենթադրում է վարձու աշխատողների ներգրավում: Ֆիրմաները տարբերվում են իրարից որակական և քանակական պարամետրերով: Հիմնական որակական պարամետրը սեփականության այն ձևն է, որի վրա հենվում է ֆիրման: Դրա հետ մեկտեղ, ձեռնարկատիրական ֆիրմաները տարբերվում են և այլ որակական ու քանակական պարամետրերով (օրինակ, գործունեության բնույթով և բովանդակությամբ, արտադրված

արտադրանքի ծավալներով և տեսականու բազմազանությամբ, տարբեր միջֆիրմային միությունների մեջ մտնելու եղանակներով, մրցակցության մեթոդներով և այլն):

Շուկայական տնտեսության ձեռնարկատիրական ֆիրման միշտ հանդիսանում է արտադրող և սպառող: Նրա գործելակերպն արտադրության և փոխանակության ոլորտներում որոշվում է բազմաթիվ գործոններով, որոնցից են արտադրության և շրջանառության ծախքերը, արտադրանքի օգտակարությունը, հաստատուն և փոփոխուն կապիտալի մեծությունը, արտադրանքի և փոխարինիչների գները, հումքի և կոմպլեկտավորող արտադրանքի ձեռքբերման գները, արտադրանքը ձեռք բերող գնորդների եկամուտները, մրցակցության վիճակը շուկայում, շուկայի հավասարակշռության մակարդակը և այլն:

Ֆիրմայի՝ որպես տնտեսական գործակալի, վերլուծությունը անհրաժեշտ է իրականացնել երկու ուղղությունով. *նախ,* ֆիրմայի ներսում տնտեսական գործընթացների հետազոտման և գնահատման առումով (առավելագույն մեծությունների մաթեմատիկական վերլուծության եղանակների կիրառմամբ «մարժինալիզմ»), *երկրորդ,* ֆիրմայի վրա արտաքին գործոնների ազդեցության տեսանկյունից (ներառելով և պետության տնտեսական քաղաքականությունը):

Ֆիրման կենտրոնացնում և գործնականում իրականացնում է ազգային տնտեսության մեջ ծագող բոլոր տնտեսական շահերը: Ֆիրմայում են իրենց կիրառությունը գտնում աշխատանքը, կապիտալը և ձեռներեցական ներուժը: Ֆիրման գեներացիայի է ենթարկում ինչպես ապրանքները, այնպես էլ նրանց ձեռքբերման գնողունակությունը: Նա ապահովում է սոցիալական ենթակառուցվածքի ընդլայնումը և կապիտալի եկամուտը, ստեղծում աշխատատեղեր հենց ֆիրմայում, նրա մատակարարների մոտ, պետական հատվածում: Նա բազմաթիվ բարդ փոխկապվածություն ունի շրջակա միջավայրի հետ և նրա հաջողությունը մեծամասամբ կախված է նրանից, թե ով և ինչպես է կարգավորում և վերահսկում այդ կապերը:

Ֆիրմայի կառավարման գործառույթը դրված է մենեջերի վրա, որը կարող է լինել ֆիրմայի սեփականատեր կամ էլ բաժնետեր: Իրենց բազմակողմ գործունեությամբ մենեջերները միշտ լուծում են 3 հիմնական հարց՝

1. ի՞նչ արտադրել
2. ի՞նչպես արտադրել
3. ո՞ւմ համար արտադրել:

Ֆիրմաները փորձում են բավարարել հասարակության անսահմանափակ պահանջմունքները և միաժամանակ ավելի ռացիոնալ օգտագործել եղած արտադրության գործոնների սահմանափակ հնարավորությունները: Այն ֆիրմաները, որոնք իրենց գործունեության մեջ հասնում և անցնում են ազգային տնտեսության պայմաններով որոշված, գիտության և տեխնիկայի զարգացման միջին արդյունավետության մակարդակը, գոյատևում են, իսկ մյուսները՝ սնկկանում են: Անընդհատ առաջանում են նոր ֆիրմաներ և վերանում՝ սնկկացածները: Նման մրցակցության պայմաններում լուծվում է հասարակության առաջ կանգնած տնտեսական հիմնախնդիրը՝ ի՞նչ արտադրել, ի՞նչպես արտադրել և ու՞մ համար արտադրել:

Ֆիրման 100-ից ավելի տարիների ընթացքում եղել է սոցիալական առաջընթացի հիմնական գործիք և իր հերթին, էվոլյուցիոն զարգացման արդյունք է հանդիսանում: Զարգացումը տեղի էր ունենում բարենպաստ սոցիալական իրավիճակում, երբ հիմնական արժեքներն էին մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը և անձի ազատությունը, իսկ հիմնական նպատակը՝ տնտեսական առաջընթացը:

Ֆիրման ստացել է իր իրավական կարգավիճակը Ա. Սմիթի այն տեսության հիման վրա, ըստ որի, իր տնտեսական շահերի շրջանակներում գործելու յուրաքանչյուր մարդու ազատությունը շնորհիվ «անտեսանելի ուժի» ապահովում է առավելագույն տնտեսական հաղթանակ ամբողջ հասարակության համար:

Ֆիրմաները կատարում են նվիրաբերություններ բարեգործական նպատակներով, ինչը իրականում անուղղակի ձևով կարող է ավելացնել շահույթը երկարաժամկետ հեռանկարում, քանի որ շնորհիվ դրա, հասարակական միջավայրում, որտեղ գործում է ֆիրման, նրա մասին լավ կարծիք է ստեղծվում: Օրինակ, ԱՄՆ-ի խոշոր ընկերությունների բարեգործական մուծումները կազմում են միջինում իրենց եկամուտների (մինչև հարկերի վճարումը) մինչև 1%:

Ֆիրման արտահայտում է տնտեսական հարաբերությունների լայն շրջանակ, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել հետևյալները՝

1. հարաբերությունները ֆիրմայի և, ամբողջությամբ վերցված, հասարակության միջև
2. հարաբերությունները առանձին ֆիրմաների միջև
3. հարաբերությունները ֆիրմայի և նրա աշխատողների միջև:

Այսպիսով, ինչպիսի տնտեսական հարաբերություններ էլ վերցնենք «աշխատավոր-ֆիրմա-հասարակություն» փոխկապվածության մեջ, պարզ երևում է, որ ֆիրման է կենտրոնական դիրք զբաղեցնում: Մի կողմից, աշխատողի համար ֆիրման հասարակության շահերը արտահայտող ձև է, իսկ մյուս կողմից, հասարակության համեմատությամբ, հանդիսանում է առանձին աշխատողների շահերի ամփոփ արտահայտությունը:

Այս ամենը թույլ է տալիս բնորոշել ֆիրման որպես կազմակերպություն, որը սկզբնական սահմանափակ ռեսուրսները վերածում է վերջնական արդյունքի: Այն բիզնեսի գոյության իրավաբանական ինքնուրույն ձև է, գրանցված ձեռնարկատիրական միավոր, որն օժտված է կոմերցիոն ինքնուրույնությամբ:

Ժամանակակից ֆիրման կարող է ներառել տնտեսության տարբեր ոլորտներում գործող մեկ կամ մի քանի ձեռնարկություններ: Ֆիրմայի տնտեսական գործունեության արդյունքում արտացոլվում են միկրոէկոնոմիկայի բոլոր հիմնախնդիրները: Արտադրելով վերջնական արդյունք, ֆիրման շուկայում մտնում է փոխանակային հարաբերությունների մեջ.

1. փողի փոխանակումը վարձու աշխատողների աշխատանքով
2. փողի փոխանակումը մատակարարների ապրանքներով և ծառայություններով
3. ապրանքների և ծառայությունների փոխանակումը սպառողների փողի հետ
4. փողի փոխանակումը (ուշ վճարվող) տվյալ ժամանակում ներդրողներից ստացված փողով
5. ներկայումս վճարվող փողի փոխանակումը պարտքատերերից հետագայում ստացվող փողով
6. փողի փոխանակումը ապրանքներով և ծառայություններով (ջրի, էլեկտրաէներգիայի, ջեռուցման, տարածքների մաքրման և պահպանման):

Ֆիրմայի՝ որպես շուկայական տնտեսության հիմնական օղակի, ձևը փոխվում է՝ կախված արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և արտադրական հարաբերությունների բնույթից: Արտադրության հասարակական բնույթի խորացման, հանրայնացման մակարդակի բարձրացման և համակենտրոնացման հետ մեկտեղ, հիմնական օղակի դերում առանձին ֆիրմայի փոխարեն հաճախ հանդես են գալիս ֆիրմա-միավորներ, որոնք գործում են բաժնետիրական հիմունքների վրա: Ժամանակակից ֆիրմա-միավորման կազմում դիվերսիֆիկացիայի (տարբեր տիպի արտադրանքների արտադրություն և կապիտալ ներդրումների բաշխում գործունեության տարբեր ձևերով) հետևանքով կարող են ներառվել գործարաններ, ֆաբրիկաներ, գիտահետազոտական, նախագծային և կոնստրուկտորական կազմակերպություններ, բանկեր, առևտրական և կենցաղսպասարկման ձեռնարկություններ, կապի բաժանմունքներ և այլն: Արդյունքում նվաճվում է ֆիրմայի գործունեության արդյունավետության գործնական աճ: Շուկայական տնտեսությամբ երկրներում բոլոր ֆիրմաների գործունեությունը հավասար չափով գտնվում է օրենքի պաշտպանության տակ և օգտակար է համարվում հասարակության համար: Պետության կողմից սահմանվում է ֆիրմաների ստեղծման, վերակազմության և լուծարման կարգը:

Ֆիրմաների ստեղծման ժամանակ ամենաբարդ հարցը սեփականության ձևի ճիշտ որոշումն է: Դա ֆիրմայի հիմնադիրների ներքին գործն է և նրանք պետք է նկատի ունենան, որ ֆիրմայի աշխատանքի արդյունավետությունը և փոխհարաբերությունների կայունությունը այնտեղ մեծամասամբ կախված են այդ ընտրությունից: Հաջորդ փուլը հիմնադրական փաստաթղթերի (կանոնադրություն, հիմնադրական պայմանագիր, գրանցման փաստաթղթեր և այլն) պատրաստումն է: Առավել կարևոր փաստաթուղթ է հանդիսանում կանոնադրությունը, քանի որ հենց այստեղ է որոշվում սեփականության ձևը, ինչպես նաև ֆիրմայի գործունեության նպատակները, խնդիրները և ուղղությունները: Հիմնադրական պայմանագրում որոշվում են հիմնադիրների փոխհարաբերությունները:

Ֆիրմայի պետական գրանցումը իրականացնում են տեղական գործադիր իշխանության մարմինները, որից հետո ֆիրման պետք է գրանցվի հարկային վարչությունում, բացի հաշվարկային հաշիվ բանկում, ստանա կնիք, ֆիրմային բլանկ, շտամպ և ինքնուրույնության այլ ատրիբուտներ: Դրանից հետո ֆիրման կարող է ներգրավվել բիզնեսի համակարգ:

Ֆիրմաները կարող են հիմնել դուստր ձեռնարկություններ, այսինքն՝ միջոցներ ներդնել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ինքնուրույն ֆիրմաներում, ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, սակայն իրավունք ունեն բացելու ընթացիկ և հաշվարկային հաշիվներ:

Ֆիրմաների գործունեության ընդհատումը կարող է լինել հարկադրական (դատարանի որոշմամբ) կամ նախաձեռնող: Դատարանը որոշում է ընդունում ձեռներեցի գործունեության դադարեցման վերաբերյալ, երբ ճանաչում է նրան սնանկ և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ձեռնարկատիրոջ իրավունքի զրկման դեպքերում:

Ֆիրմայի գուրծունեության դադարեցումը տեղի է ունենում նրա լուծարման կամ վերակազմության (միացում, բաժանում, միաձուլում, առանձնացում, ձեռներեցության այլ կազմակերպաիրավական ձևում փոխակերպում) ձևով:

4.4. Բիզնեսի կազմակերպման ձևերը և առանձնահատկությունները տարբեր երկրներում

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրական գործունեությունը դրսևորվում է բիզնեսի կազմակերպման բազմազան ձևերով:

Բիզնեսի կազմակերպման բոլոր ձևերը և դրանց համապատասխան արտադրական ձեռնարկությունների տեսակները տնտեսական վերլուծության նպատակով խմբավորվում են հետևյալ էական հատկանիշներով՝

ըստ սեփականության ձևերի.

1. մասնավոր
2. պետական
3. խառը

ըստ ձեռնարկության չափերի.

1. փոքր
2. միջին
3. խոշոր

ըստ գործունեության բնույթի.

1. նյութական բարիքներ արտադրող
2. ծառայություններ մատուցող

ըստ ճյուղային պատկանելության.

1. արդյունաբերական
2. գյուղատնտեսական
3. տրանսպորտային
4. բանկային
5. ապահովագրական և այլն

ըստ տնտեսական կարգավիճակի.

1. ֆաբրիկա
2. ձեռնարկությունների միավորում կամ ֆիրմա
3. ֆիրմաների համախմբություն կամ արտադրության ճյուղ (կոնցեռն, միջճյուղային, պետական միավորում, տնտեսական ասոցիացիա, կոնսորցիում և այլն)

ըստ ձևավորման և կառավարման եղանակի.

1. միանձյա կամ անհատական
2. գործընկերային (պարտնյորական)
3. կորպորատիվ (միավորական)

ըստ արտադրության գերակշռող գործոնի.

1. աշխատատար
2. նյութատար
3. կապիտալատար և այլն

ըստ իրավական կարգավիճակի.

1. տնտեսական ընկերություններ և միություններ
2. արտադրական կոոպերատիվներ
3. անհատական (մասնավոր) ձեռնարկատերեր
4. պետական և տեղական ինքնավարության (մունիցիպալ), ունիտար (միացյալ) ձեռնարկություններ և այլն:

Պետք է նշել, որ ***ըստ տնտեսական կարգավիճակի*** (տնտեսակազմակերպական ձևի) ձեռնարկությունները տարբերակելիս անհրաժեշտ է հստակություն մտցնել «ձեռնարկություն» և «ֆիրմա» հասկացությունների միջև, որոնք չի կարելի նույնացնել:

*Ձեռնարկությունը կ*ազմակերպություն է (ֆաբրիկայի, ֆերմայի, հանքահորի, խանութի և այլ ձևով), որը կատարում է մեկ կամ մի քանի բավականին միատեսակ սպեցեֆիկ գործառույթներ (ապրանքների արտադրություն և բաշխում, ծառայությունների ցուցաբերում):

Ֆիրման կարող է ունենալ մի քանի ձեռնարկություն, զբաղվել բոլորովին իրար հետ կապ չունեցող գործունեության տարբեր ձևերով (արտադրական, ֆինանսական, առևտրական) և արտադրել բավականին բազմազան արտադրանք: Օրինակ, «3M Minnesota Minning and Manufacturing Co» միջազգային կորպորացիան թողարկում է 60 հազար անուն ապրանք (կինոխցիկներ, դիսկետներ համակարգիչների համար, բժշկական սարքավորումներ և շատ ուրիշ արտադրանք): Եթե ֆիրման ունի միայն մեկ ձեռնարկություն, ապա այդ հասկացությունները համընկնում են:

Բազմաթիվ ձեռնարկություններ ներառող ֆիրման կարող է հանդես գալ «հորիզոնական», «ուղղահայաց» միավորման կամ կոնգլոմերատի ձևով: Օրինակ, «United States Steel», «Bethlehem Steel», «Republic Steel» և այլ ԱՄՆ պողպատածուլական ֆիրմաները իրենցից ներկայացնում են ձեռնարկությունների ուղղահայաց կոմբինավորում, այսինքն ամեն մի ընկերություն տնօրինում է արտադրական գործընթացի տարբեր մակարդակներում գտնվող ձեռնարկություններ:

Հորիզոնական կոմբինավորման ժամանակ բոլոր ձեռնարկությունները գտնվում են արտադրության մեկ մակարդակի վրա, օրինակ, մանրածախ առևտրի ոլորտում խանութների լայն ցանց ունեցող ֆիրմաները՝ «A & P», «Kroger», «Safuey», «JC Penny» և այլն:

Կոնգլոմերատները ընդգրկում են ձեռնարկություններ, որոնք գործում են բազմաթիվ ճյուղերում և շուկայում: Օրինակ, «International Telephone and Telegraph»-ը, բացի այն գործառույթների կատարումից, որոնք արտացոլված են այդ ֆիրմայի անվանման մեջ, ունի բազմաթիվ դուստր ձեռնարկություններ, որոնք զբաղվում են հյուրանոցների շահագործումով, հացաբուլկեղենի արտադրությամբ, ուսումնական նյութերի հրատարակմամբ, առաջարկում են ապահավագրական ծառայություններ և այլն:

Ֆիրմաների խումբը, որը արտադրում է միանման կամ ծայրահեղ դեպքում, նման արտադրանք, կոչվում է *ճյուղ:*

Ինչպես արդեն նշել ենք, ***ըստ ձևավորման և կառավարման եղանակի***, ձեռնարկությունները լինում են միանձնյա (անհատական), գործընկերային (պարտնյորական) և կորպորատիվ կամ բաժնետիրական ընկերության ձևով:

Միանձնյա ձեռնարկությունը մեկ անձի սեփականությունն է, որը լիիրավ տնօրինում է տնտեսական գործունեության հետևանքով ստացված շահույթը և լիովին պատասխանատու է ձեռնարկության ցանկացած վնասի համար:

Գործընկերայինը ձեռնարկություն է, որը իրենց շահաբաժինը ունեցող երկու և ավելի անձերի համատեղ սեփականությունն է: Գործընկերներից յուրաքանչյուրը կրում է համատեղ պատասխանատվություն ձեռնարկության բոլոր վնասների դիմաց:

Կորպորատիվը այնպիսի կազմակերպություն է, որը զբաղվում է գործունեության որոշակի ձևով: Կորպորացիայի տերերը պատասխանատվություն են կրում տվյալ կորպորացիայում միայն իրենց ներդրումների համար, եթե մինչև անգամ դրանք բավարար չեն կազմակերպության կրած վնասները ծածկելու համար:

Ձեռնարկությունների այս բոլոր տեսակների քանակը ԱՄՆ-ում կազմում է շուրջ 19.5 մլն, որից 73%-ը միանձյա ձեռնարկություններ են, 9% -ը՝ գործընկերային, իսկ 18%-ը՝ կորպորացիաներ: Չնայած դրան, կորպորացիաներին բաժին է ընկնում ապրանքների վաճառքի, ծառայությունների ծավալի և միջին եկամուտների մոտ 9/10 (90%), գործընկերայինին՝ 7-8%, իսկ միանձյա ձեռնարկություններին՝ 2-3% (նկար 40):



Նկար 40. Ֆիրմաների ձևավորման և կառավարման եղանակները

Այս ֆիրմաների բնորոշ գծերը, առավելությունները և թերությունները ամփոփված են աղյուսակ 3 -ում:

Աղյուսակ 3. Տարբեր ֆիրմաների բնորոշ գծերը

	միանձյա ձեռնարկություն	գործընկերային	կորպորացիա
կազմավորման բարդությունը	կազմավորման պարզությունը, կազմավորման և ձևավորման ցածր ծախսերը	նույնը, ինչ միանձյա ձեռնարկության դեպքում գումարած պայմանագիրը մասնակիցների միջև	պահանջում է էական ջանքեր և նյութական ծախսեր, ինչը կախված է հատուկ օրենսդրական կարգավորումից
կապիտալի մոբիլիզացման ունակությունը	սահմանափակված է սեփականատիրոջ խնայողությունների չափերով	ավելացնում է կապիտալի ներգրավման հնարավորությունը մասնակիցների խնայողությունների միացման միջոցով	շատ բարձր է, կարող է արագ մոբիլիզացնել կապիտալը արժեթղթերի էմիսիայի միջոցով
սեփականատիրոջ պատասխանատվության մաշտաբները	լրիվ է բոլոր պարտավորություններով՝ ներառյալ գույքային	լրիվ բաժանված է՝ ներառելով մասնակիցների գույքը	սահմանափակված է կուտակված արժեթղթերի արժեքով
սեփականատիրոջ կողմից վերահսկման աստիճանը	լրիվ է ամբողջ գործունեության վրա	բաժանված է մասնակիցների միջև, ինչը և հանդիսանում է տարաձայնությունների աղբյուր	համապատասխան ակցիաների կուտակած մասի
գոյության երկարատևությունը	սահմանափակված է տնօրենի կյանքի տևողությամբ	կախված է գործընկերների համաձայնագրի պայմաններից	անսահմանափակ է, դադարեցումը հնարավոր է միայն սննկանալու դեպքում
հարկահանումը	անձնական եկամուտների վրա հարկի դրույքով	նույնն է, ինչ որ միանձնյայում	երկակի հարկահանում
իրացվելիությունը	ցածր է, վաճառքի բարդություններ կան	բավականին ցածր է, փայի վաճառքի դժվարություններ կան	բարձր է

«Իրավական ձևը»՝ իրավական նորմերի կոմպլեքս է, որը որոշում է ձեռնարկության մասնակիցների վերաբերմունքը շրջապատող աշխարհի հետ: Արևմտյան երկրների իրավական պրակտիկայում «ձեռնարկություն» հասկացությունը չի կիրառվում: Այնտեղ գործ ունեն միայն «ընկերություն» (կոմպանիա) հասկացության հետ, այսինքն՝ այն անձանց միավորման հետ, որոնք կապված են ճանաչված պայմանագրի ձևերից մեկի հետ:

Համաշխարհային պրակտիկայում օգտագործվում են ձեռնարկությունների տարբեր կազմակերպաիրավական ձևեր, որոնք որոշվում են առանձին երկրների ազգային օրենսդրությամբ: Օրենքով նրանց տրվում է իրավաբանական անձի կարգավիճակ (ստատուս), որը ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հանդես է գալիս դատարանում իր անունից և այլն: Օրենսդրությունը առանձնացնում է ձեռնարկությունների տարբեր տեսակներ, որոնք կարող են լինել առևտրային և ոչ առևտրային:

Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

Տնտեսական ընկերություններ և ընկերակցություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները: Հիմնադիրների (մասնակիցների) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը նրան է պատկանում սեփականության իրավունքով:

Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով:

Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

Ոչ առևտրային կազմակերպությունների միությունները ստեղծվում են իրենց գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով:

Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիման վրա ստեղծված ձեռնարկությունները կարող են լինել՝

Անհատական (մասնավոր) ձեռնարկություն, որի միակ սեփականատերը ունի իր գույքով տնօրինելու և տնտեսական գործունեության արդյունքները յուրացնելու բացառիկ իրավունք, ինչպես նաև կրում է ձեռնարկության կրած ցանկացած վնասի համարամբողջ պատասխանատվությունը :

Դասական մասնավոր սեփականությունը (որի ժամանակ սեփականատերը նաև բիզնեսմեն է), շատ հազվադեպ երևույթ է միջին և խոշոր ձեռներեցության բնագավառում: Որպես կանոն, այն բնորոշ է փոքր բիզնեսին: Ընդ որում, հենց սեփականատերը հանդես է գալիս ընտանիքի անունից՝ որպես տնտեսական գործունեության համար պատասխանատու իրավաբանական անձ: Դրանք կարող են լինել ֆերմերային տնտեսություններ: Օրինակ, ԱՄՆ-ում գյուղատնտեսական հատվածում, մոտ 11 մլն մասնավոր ֆիրմաներ բերում են մոտ 50 հազար դոլար միջին տարեկան համախառն եկամուտ, մոտ 5 մլն ՝ 35-65 հազար դոլար և միայն 40 հազարը (այսինքն 0,4 %-ից պակաս)՝ 3 մլն դոլար համախառն և 200-300 հազար դոլար զուտ եկամուտ:

Կոոպերատիվն ընկերություն է, որի գործունեությունը սկզբունքորեն ուղղված է ընկերության անդամներին միջամտության և օգնության ցուցաբերմանը: Կոոպերատիվը հանդիսանում է իրավաբանական անձ, հետևաբար, և իրավունքի սուբյեկտ: Կախված իրենց գործունեության բնույթից, դրանք կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Կոոպերատիվները կազմավորվում են քաղաքացիների կամավոր միավորման միջոցով, նրանց (նյութական և դրամական) փայատիրական մուծումների, ինչպես նաև արդյունքի իրացումից ստացվող եկամտի հաշվին: Կանոնադրությամբ նրանց կազմում կարող է նախատեսվել անբաժանելի ֆոնդերի ստեղծում, որոնք օգտագործվում են այս կամ այն նպատակների համար: Մեզ մոտ լայն տարածում են ստացել, նախ և առաջ, արտադրական, այնուհետև ագրարային, բնակարանային կոոպերատիվները և ծառայության ոլորտի և առևտրամիջնորդական բնագավառի կոոպերատիվները (սպառողական և խառը):

Վարձակալական ձեռնարկությունները հիմնվում են արտադրամիջոցների և արտադրված արդյունքի պայմանագրային, ժամկետային տիրապետության վրա: Վարձակալման պայմանագրով վարձակալը ստանում է որոշ տնտեսական ազատություն՝ ինքնուրույն որոշելու արտադրության զարգացման ուղղությունները, տնօրինելու եկամուտը, ընտրելու աշխատանքի վճարման ձևերը և այլն: Եթե բոլոր արտադրամիջոցները հետ են գնվում , ապա վարձակալը դառնում է սեփականատեր, իսկ վարձակալական ձեռնարկությունը փոխվում է բաժնետիրականի, կոոպերատիվի, կոլեկտիվի:

Կոլեկտիվ կամ ժողովրդական ձեռնարկությունները գործում են աշխատավորների ասոցիացիայի սեփականության հիման վրա, առաջանում են պետական ձեռնարկության գույքի անհատույց փոխանցման կամ հետգնման միջոցով, աշխատողների մասը եկամուտներում որոշվում է նրանց աշխատանքային ներդրումներով: Այդ ձեռնարկության բաժնետեր կարող է լինել միայն այդ ձեռնարկության աշխատողը:

Համատեղ ձեռնարկությունները ստեղծվում են հիմնադիրների (որոնց թվում կարող են լինել արտասահմանյան իրավաբանական անձինք և քաղաքացիներ) արժույթի կամ գույքի միացման հիման վրա: Նրանք կարող են հզոր շարժիչ ծառայել ԳՏԱ-ն, էական նշանակություն ունենալ սպառողական շուկայի հագեցման գործում: Համատեղ ձեռնարկությունը պետք է ունենա առնվազն մեկ օտարերկրյա մասնակից: Եթե արտասահմանյան կապիտալը ներդրվում է առանց ազգային ձեռնարկությունների մասնակցության, ապա այն կոչվում է օտարերկրյա ձեռնարկություն:

Դուստր ձեռնարկությունն իրավաբանական անձ հանդիսացող այնպիսի ձեռնարկություն է, որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով, պատկանում է մեկ այլ ձեռնարկության կամ էլ հասարակական

կազմակերպության: Որոշ դեպքերում դուստր ձեռնարկություններ կարող են հիմնադրել նաև իրենք՝ դուստր ձեռնարկությունները:

Պետական և մունիցիպալ ունիտար ձեռնարկությունները հիմնվում են հասարակական սեփականության վրա: Պետական ձեռնարկությունները գործում են պետական սեփականության հիման վրա: Ունեցվածքը պատկանում է ձեռնարկությանը տնտեսվարման կամ օպերատիվ կառավարման իրավունքով: Տեղական (մունիցիպալ) նշանակության ձեռնարկությունները հանդիսանում են մունիցիպալ սեփականություն և գործում են նույնպես տնտեսվարման կամ օպերատիվ կառավարման հիման վրա:

Շուկայական տնտեսությամբ երկրներում բյուջետային ձեռնարկությունների մի մասը (որոնք մոտ են նախկին խորհրդային ձեռնարկության տիպին) կազմում է ընդհանուր թվի մինչև 2%-ը:

Պետական ձեռներեցությունը բավականին լայն է ներկայացված շուկայական տնտեսությամբ երկրներում, և նախ և առաջ այն ճյուղերում, որոնք կարևոր նշանակություն ունեն երկրի տնտեսության համար, կամ էլ այն ճյուղերում, որոնք պահանջում են մեծ կապիտալ ներդրումներ և որտեղ մասնավոր կամ կոլեկտիվ ֆիրմաները չեն կարող ապահովել շահույթի բարձր նորմա ընդլայնված վերարտադրության համար: Օրինակ, Մեծ Բրիտանիայում պետական հատվածն ընդգրկում է սև մետալուրգիան, ածխի արդյունահանումը, կապի միջոցները, տրանսպորտը, աէրոտիեզերական արդյունաբերությունը, գազի և էլեկտրաէներգիայի մատակարարումը, ներքին համախառն արդյունքի և զբաղվածների մոտ 25%-ը: ԱՄՆ-ում հիմնական կապիտալի մոտ 20%-ը, ամբողջ հողի 40%-ը, էլեկտրակայանների 42%-ը, փոստային սպասարկումը, 300 ռադիո հեռարձակման և 300 հեռուստատեսության կայաններ:

Շուկայական տնտեսությամբ որոշ երկրներում պետական ընկերությունները հանդիսանում են խոշոր արդյունաբերական ֆիրմաների լիդերներ: Օրինակ, «Renault», «Elf-Akiten» Ֆրանսիայում, «IRI», «ANI» Իտալիայում:

Պետական ձեռնարկությունները հետապնդում են ոչ միայն արտադրական, այլ նաև շուկայի կարգավորման և հատուկ այլ նպատակներ: Նրանց տարատեսակներն են զուտ պետական, հատուկ նշանակության և պետական մասնակցությամբ ձեռնարկությունները, պետական բաժնետիրական ընկերությունները և այլն, որոնք հիմնականում տարանջատվում են դրանց գույքի կառուցվածքում պետական բաժնեմասի չափից ելնելով:

Հասարակական միավորումներ են համարվում քաղաքացիների կամավոր միավորումները, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար:

Հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ:

Իրավաբանական անձանց միություններ: Առևտրային կազմակերպությունների միությունները ստեղծվում են իրենց ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով:

Այն դեպքում, երբ այս կամ այն անձանց կապիտալը չի բավարարում գործ բացելու կամ արդեն գործող ձեռնարկությունն ընդլայնելու համար, նրանք միավորում են իրենց կապիտալները և ստեղծում տարբեր բնույթի ընկերություններ: Դրանցից են լրիվ, խառը, սահմանափակ և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունները կամ բաժնետիրական ընկերությունը (բաց կամ փակ): Ձեռնարկության կազմակերպման տվյալ ձևը հիմնվում է արտադրության միջոցների փայատիրական մասնավոր սեփականության վրա: Մի կողմից, ընկերության յուրաքանչյուր մասնակից տնօրինում է սեփականության որոշակի մասով, համաձայն որի էլ յուրացնում է տնտեսական գործունեության արտադրանքից ստացված իր կապիտալին համապատասխան եկամտի մեծությունը, մյուս կողմից, ընկերության գույքի և տնտեսական գործունեության տնօրինման հարաբերությունները իրականացվում են տվյալ ձեռնարկության բոլոր մասնակիցների հետ համատեղ:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) ձևավորվում է ֆիզիկական և իրավաբանական մեկ կամ մի քանի անձանց ներդրումների հաշվին, հետևաբար դրա կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված բաժնեմասերի: Նրա մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորագրերի դիմաց և գործունեության հետ կապված վնասների ռիսկը կրում են իրենց ներդրումների սահմաններում: Նրանց անվանման մեջ (արտասահմանյան ֆիրմաների և մեր) կարելի է տեսնել «limited» (կրճատ «Ltd») բառը, որը նշանակում է «սահմանափակ պատասխանատվություն»:

Այդպիսի ընկերություն ստեղծելու համար անհրաժեշտ է կնքել պայմանագիր, որտեղ որոշվում է ֆիրմայի անվանումը, գտնվելու վայրը, գործունեության ուղղությունը, ինչպես նաև հիմնադիր կապիտալի չափը և նրա անդամների փայատիրական մասնակցությունը: Հիմնադիր կապիտալի նվազագույն չափը տարբեր երկրներում տարբեր է: (Օրինակ, Ավստրիայում՝ 500 000 շիլինգ, Գերմանիայում՝ 50 000 մարկ, Հունգարիայում՝ 1 մլն ֆորինտ: Բացի դրամական միջոցներից, հնարավոր է նաև իրային կամ նյութական արժեքների ընկերության հիմնադրում (ավտոմեքենաների, հողակտորների, լիցենզիայի):

Ընկերության անդամների իրավունքները իրականացվում են նրանց ժողովներում, որոնք անց են կացվում տարին 1-2 անգամից ոչ պակաս: Ժողովը իրավունք ունի ընդունելու առավել կարևոր որոշումներ, մասնավորապես, հաստատելու տարեկան հաշվեկշիռը, որոշելու շահույթի օգտագործման եղանակները, ծախսերի ուղղությունները, ընտրելու կամ վերընտրելու տնօրենին, նրան ցուցումներ տալու ամենատարբեր հարցերի շուրջը: Ընկերության գործունեության վերահսկումը իրականացնում է վերահսկիչ հանձնաժողովը՝ բարձրագույն օրգանը, որի անդամները նշանակվում են ընդհանուր ժողովի կողմից: Մասնակիցների ժողովը համարվում է իրավասու, եթե ներկա մասնակիցները ունեն ձայների մոտ 60 %, իսկ այն հարցերով, որոնք պահանջում են միաձայնություն (օրինակ, երբ որոշվում են ընկերության գործունեության հիմնական

ուղղությունները, պլանների և նրանց կատարման հաշվետվությունների հաստատումները, փոփոխություններ կանոնադրության մեջ, մասնակիցներին հեռացնելու հարցը և այլն)՝ բոլոր մասնակիցները:

Սեփականատերերի կազմը կարող է բազմիցս փոխվել: Որոշ սեփականատերեր կարող են բոլոր կողմերի ընդհանուր համաձայնության հիման վրա ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել ֆիրմայի համատերերի կազմից: Բացի դրանից, ամեն մի համատեր կարող է ցանկացած ժամանակ ուրիշ անձի փոխանցել իր ներդրումը ընկերությունում՝ մյուս համատերերի համաձայնությամբ: Որպես կանոն, փորձը ցույց է տալիս, որ կոնֆլիկտները դուրս չեն գալիս համատերերի անձնական փոխհարաբերությունների շրջանակներից և լուծվում են հենց ֆիրմայի ներսում:

Լրիվ (լիակատար) պատասխանատվությամբ ընկերությունը ենթադրում է ձեռնարկության կազմակերպում, որը կանոնադրությանը համապատասխան գտնվում է ընկերության անունից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող և տնտեսական գործունեության արդյունքների համար նրա պարտավորությունների դիմաց լրիվ պատասխանատվությունը (ոչ միայն իրենց փայի կամ ձեռնարկության գույքի սահմաններում, այլ նաև իրենց ամբողջ ունեցվածքով) կրող երկու և ավելի անձանց կամ լիակատար ընկերների համատեղ սեփականության տակ:

Այն անձիք, որոնք մտնում են արդեն ստեղծված ընկերության մեջ, նույնպես կրում են պատասխանատվություն բոլոր պարտքերի համար, անկախ իրենց փայից, այդ թվում և այն պարտքերի համար, որոնք եղել են իրենց անդամ դառնալուց առաջ: Ընդ որում, լրիվ ընկերությունը՝ որպես իրավաբանական անձ, հանդես չի գալիս, այդպիսիք մնում են նրա մասնակիցները, որոնք պահպանում են իրավական ինքնուրույնություն: Այդ պատճառով էլ լրիվ ընկերությունը տարբերվում է ձեռնարկության կոոպերատիվ ձևից և կարող է օգտագործվել որպես ձեռներեցների ժամանակավոր համաձայնություն: Իսկ ընդհանուրը նրանց միջև՝ նրա մասնակիցների անսահմանափակ պատասխանատվությունն է:

Որպես կանոն, լրիվ ընկերությունները առաջանում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից (մարդկանց և ձեռնարկությունների):

Խառը ընկերությունը հիմնվում է գործընկերային սեփականության վրա: Ի տարբերություն լրիվ ընկերություններից, նրա մասնակիցները բաժանվում են 2 խմբի՝ *կոմպլեմենտարներ,* որոնք պատասխանում են իրենց ռիսկի համար ամբողջ իրենց ունեցվածքով և հանդիսանում են ընկերության ներքին անդամները և մասնակից-ավանդատուներ կամ *կոմանդիտներ*, որոնք ռիսկի են դիմում միայն իրենց ներդրումների սահմաններում և հանդիսանում են ընկերության արտաքին անդամները: Գործերն այդ ընկերություններում ղեկավարում են կոմպլեմենտարները, և սկզբունքայնորեն նրանց վրա տարածվում են այն դրույթները, ինչ որ լրիվ ընկերություններում նրանց անդամների: Օրինակ, հայտնի են «Johnson & Johnson & Co»:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը (ԼՊԸ)՝ մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Նման ընկերության մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով: Մասնակիցներից մեկի սնանկության դեպքում նրա պատասխանատվությունը ընկերության պարտավորությունների համար բաշխվում է մյուս մասնակիցների միջև նրանց ավանդներին համամասնորեն, եթե պատասխանատվության բաշխման այլ կարգ նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:

Վստահության վրա հիմնված ընկերակցություն (կոմանդիտային ընկերակցություն) է համարվում այն ընկերակցությունը, որում ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և իրենց գույքով ընկերակցության պարտավորությունների համար պատասխանատվություն կրող մասնակիցների (լիակատար ընկերներ) հետ միասին կան մեկ կամ մի քանի մասնակից ավանդատուներ (կոմանդիտոստներ), որոնք իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը:

Բաժնետիրական ընկերություն (ԲԸ)՝ (joint-stock company, stock company) Արտադրողական ուժերի զարգացման և արտադրության մաշտաբների խոշորացման հետևանքով առաջանում է անհամապատասխանություն հսկայական կառույցների, ձեռնարկությունների ստեղծման համար անհրաժեշտ կապիտալի մեծության և անհատական կապիտալների սահմանափակության մեջ, որը և պահանջում է կապիտալի կենտրոնացում: Այդ խնդիրը լուծվում է բաժնետիրական (ակցիոներական) ընկերությունների կազմակերպման միջոցով, որոնց կապիտալն առաջանում է *բաժնետոմսերի* կամ *ակցիաների* (share, stock) վաճառքից կամ նրա մասնակիցների, ***բաժնետերերի*** կամ *ակցիոներների* (share holder, stockholder) մուծումներից՝ բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով: ***Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը*** (share authorized capital stock) բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: ԲԸ-ն բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բաժնետիրական ընկերությունները լինում են բաց և փակ:

Բաց բաժնետիրական ընկերության ակցիոները առանց մյուս ակցիոներների հետ համաձայնեցնելու, ինքն է իր հայեցողությամբ տնօրինում իր ակցիաներով:

Իսկ ***փակ բաժնետիրական ընկերության*** ակցիոները իրավունք ունի փոխանցելու (նվիրելու, վաճառելու) իր բաժինը այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, մյուս ակցիոներների համաձայնությամբ, բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Բաց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ձևավորվում է ոչ միայն նրա հիմնադիրների մուծումների հաշվին, այլ նաև իր ակցիոներների հետագա վճարումով, ակցիաների բաժանորդագրության անցկացման ուղիով:

Իսկ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ստեղծվում է միայն նրա մասնակիցների ներդրումների հաշվին, այսինքն՝ ակցիաների բաժանորդագրություն չի անցկացվում:

Պետական և մունիցիպալ ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքում հիմնականում կազմակերպվում են բաց բաժնետիրական ընկերություններ:

Բաժնետիրական ընկերությունների 2 տիպերի ընտրությունը կախված է գործունեության նպատակներից, ծավալներից, տնտեսվարման պայմաններից: Ակցիոներների թիվը բաց բաժնետիրական ընկերությունում չի լիմիտավորվում, իսկ փակում՝ սահմանափակվում է օրենքով: Պետք է նկատի ունենալ, որ փակ բաժնետիրական ընկերությունը միշտ էլ վերածվում է բացի, և ընդհակառակը: Հիսունից ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում ստեղծվում է տնօրենների խորհուրդ, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից:

Նորմալ պայմաններում կանոնադրական կապիտալը քիչ է բաժնետիրական կապիտալից (սեփական կապիտալից, իրեն պատկանող գույքի արժեքից), քանի որ գույքի արժեքը կարող է անընդհատ աճել, իսկ կանոնադրական կապիտալը պարբերաբար է վերանայվում (սովորաբար մի քանի տարին մեկ): Եթե բաժնետիրական կապիտալը մեծ չէ կանոնադրականից, ապա բաժնետիրական ընկերությունը պարտավոր է փոքրացնել վերջինս կամ ակցիոներների բաժնետերերի մուծումների հաշվին լրացնել կապիտալը: Բաժնետիրական ընկերության հիմնական փաստաթղթեր են ***հիմնադրական պայմանագիրը*** և ***կանոնադրությունը***: Հիմնադրական պայմանագրի ազդեցությունն ընդհատվում է ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարման պահից սկսած, որը հայտարարված է եղել հիմնադրման ժամանակ, եթե այլ բան չի նախատեսվել պայմանագրով:

Բաժնետիրական ընկերության սեփական կապիտալը հավասար է ակտիվների և պասիվների տարբերությանը: ***Ակտիվները*** (assets) - ֆիրմային պատկանող ցանկացած նյութական կամ ոչ նյութական օբյեկտներն են, որոնք ունեն շուկայական, փոխանակային կամ հաշվեկշռային արժեք՝ դրամական գնահատում, իսկ ***պասիվները*** (liabilites) - ֆիրմայի պարտքային պարտավորությունների գումարն է: Այլ կերպ ասած *ակտիվը=պասիվ+սեփական կապիտալ:*

Բաժնետիրական ընկերությունների կապիտալը առաջանում է բաժնետոմսերի վաճառքի միջոցով: ***Բաժնետոմսը*** կամ ***ակցիան*** *(share, stock) - բաժնետիրական ընկերությունների* կողմից թողարկվող, առանց շրջանառության ժամկետ սահմանելու ***արժեթուղթ*** (security, paper) է, որը վկայում է այդ ընկերության գույքի մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի, նրա ***կանոնադրական կապիտալում*** ներդրված որոշակի բաժնի մասին: ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն, բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

Բաժնետոմս գնողը ստանում է բաժնետոմսի սեփականատիրության իրավունքը հաստատող սերտիֆիկատ, որը գրանցվում է ընկերության ***բաժնետերերի ռեեստրում*** (share register, stock register): Այն իրենից ներկայացնում է բաժնետիրական ընկերության մատյան, անվանական արժեթղթերի սեփականատերերի մասին ամբողջական տեղեկությունների ցուցակ, որը կազմված է որոշակի օրվա դրությամբ: Վարում է ընկերության կամ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության՝ ռեեստրավարի կողմից: Արժեթղթերի շուկայում ռեեստրավար են համարվում այն կազմակերպությունները, որոնք արժեթղթեր թողարկողի հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում են նրանց ռեեստրը: Ռեեստրավարի հիմնական խնդիրն է ժամանակին ու անսխալ վարել ռեեստրը և այն ներկայացնել թողարկողին, ինչպես նաև հսկել, որպեսզի չթողարկվի ավելի շատ բաժնետոմս, քան որոշվել է թողարկել իրավասու մարմնի կողմից: Թողարկողի աշխատակիցները ռեեստրի տվյալների համաձայն, փոխանցում են շահութաբաժինները կամ, օրինակի համար, բաժնետերերին ծանուցում են բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու մասին և այլն: Բացի դրանից, ռեեստրը կարող է պետք գալ թողարկողի ղեկավարությանը՝ սեփականատերերի կազմը վերահսկելու, ինչպես նաև բաժնետոմսերի զանգվածային առքին և այլ, ոչ ցանկալի գործողություններին հետևելու համար: Համաձայն ՀՀ օրենսդրության, բաժնետերերի ռեեստրում գրանցվում են բաժնետիրոջ մասին հետևյալ տվյալները՝ ֆիրմայի լրիվ անվանումը (ֆիզիկական անձանց համար՝ անունը), իրավաբանական անձանց համար՝ պետական գրացման տվյալները, գտնվելու վայրը (փոստային հասցեն) և հաշվարկային հաշիվը, ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային տվյալները և բնակության վայրը, բաժնետոմսերի քանակն՝ ըստ տեսակների և դասերի, բաժնետոմսերի ձեռքբերման տարին, ամիսը, ամսաթիվը և հիմքերը, բաժնետոմսերի օտարման տարին, ամիսը, ամսաթիվը և հիմքերը, ռեեստրում գրառում կատարելու տարին, ամիսը, ամսաթիվը:

Բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է իրավունք՝ ստանալու բաժնետիրական ընկերության *զուտ շահույթի* մի մասը, սովորաբար՝ ***շահութաբաժնի*** (շահաբաժին) կամ ***դիվիդենտի*** (dividend) ձևով, որը յուրաքանչյուր տարի (կամ այլ պարբերականությամբ) բաժանվում է բաժնետերերի միջև՝ նրանց ունեցած բաժնետոմսերի տեսակներին և քանակին համապատասխան: Տարեկան ***շահութաբաժնային եկամուտները*** վճարվում են հարկերը վճարելուց հետո ընկերության տրամադրության տակ մնացող շահույթից: Այսինքն՝ շահաբաժնի միջոցով իրականացվում է բաժնետիրական ընկերության ստացած շահույթում բաժնետիրոջ մասնակցության իրավունքը: Վճարումը կարող է իրականացվել նաև լրացուցիչ թվով բաժնետոմսեր թողարկելու միջոցով: Դիվիդենտի չափերը կախված են ձեռնարկության եկամտաբերության մակարդակից:

Բաժնետոմսի վրա նշված դրամական գումարը կազմում է նրա անվանական (նոմինալ) արժեքը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

Իսկ այն ընթացիկ գինը, որով բաժնետոմսը վաճառվում է շուկայում, կոչվում է բաժնետոմսի ***փոխարժեք*** կամ ***ակցիայի կուրս*** : Խոշոր ընկերությունների բաժնետոմսերի և մյուս արժեթղթերի փոխարժեքը (կուրսը) որոշվում է ֆոնդային բորսայում և հրապարակվում բորսայի տեղեկագրերում: Ֆոնդային բորսայում բաժնետոմսերի շուկայական գնի սահմանումը կոչվում է բաժնետոմսերի գնանշում կամ փոխարժեքների գնանշում: Բաժնետոմսի փոխարժեքը (կուրսը) ուղիղ համեմատական է շահութաբաժնին կամ դիվիդենտին և հակադարձ համեմատական՝ փոխատվական տոկոսի նորմային՝

$$\text{բաժնետոմսի փոխարժեք} = \frac{\text{շահութաբաժին}}{\text{փոխատվական տոկոսի նորմա}} \times 100$$

(օր.՝ 25x100 % / 5% = 500$ կամ 10x100 % / 5% = 200$):

Բաժնետոմսի փոխարժեքը կախված է նաև նրա առաջարկից և պահանջարկից բորսաներում: Բաժնետոմսի փոխարժեքը կապիտալացված դիվիդենտ է: Շահութաբաժինը կարող է աարտահայտվել տոկոսով՝ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ: Բաժնետոմսի գնի հետ կապված ***հիմնադրական շահույթը***, որը յուրացվում է բաժնետիրական ընկերության հիմնադիրների կողմից և իրենից ներկայացնում է բաժնետոմսերի փոխարժեքի (գինը) և բաժնետիրական ընկերությունում իրականում ներդրված կապիտալի գումարի միջև եղած տարբերությունը:

Բաժնետոմսերը, ըստ *տնօրինման բնույթի*, լինում են ***անվանական*** և ***ներկայացնողի***: Տարբերությունն այն է, որ առաջինների ազատ առք ու վաճառք շուկայում չի իրականացվում: Դրանք սովորաբար թողարկվում են խոշոր, իսկ վերջիններս մանր դրամանիշերի տեսքով:

Ըստ *ստացվող եկամուտի մեծության*, տարբերում ենք ***սովորական*** և ***արտոնյալ*** բաժնետոմսեր: Սովորականի դեպքում դիվիդենտը վճարվում է՝ կախված ընկերության տվյալ տարվա շահույթի մեծությունից, իսկ արտոնյալի դեպքում՝ վճարվում է ֆիքսված (հաստատված) տոկոսով, որը կախված չէ ընկերության ընթացիկ շահույթի չափից:

Արտոնյալ բաժնետոմսերը (prefered stock, prefered share) մյուս բաժնետոմսերի նկատմամբ ունեն նախապատվության իրավունք: Դրանք իրենց սեփականատերերին իրավունք են տալիս առաջնահերթ (սովորական բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ) կարգով ստանալ հաստատագրված շահութաբաժին՝ անկախ ընկերության շահույթներից և եթե բաժնետիրական ընկերությունը լուծարվում է, ապա դրանց սեփականատերերին վերադարձվում են նաև բաժնետոմսերում ներդրված միջոցները իրենց անվանական արժեքով: Արտոնյալ բաժնետոմսերը դրանց տերերին երաշխավորում են շահութաբաժիններ ստանալ, որպես կանոն, բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ որոշված տոկոսներով՝ անկախ ընկերության տնտեսական գործունեության արդյունքից: Շահույթի անբավարարության դեպքում արտոնյալ բաժնետոմսերի դիմաց դիվիդենտը վճարվում է ռեզերվային ֆոնդի հաշվին: Արտոնյալ բաժնետոմսերի մեծ մասի շահութաբաժինների չափը սահմանվում է դրանց թողարկման ժամանակ: Քանի որ արտոնյալ բաժնետոմսերը պարունակում են ավելի փոքր ռիսկ, քան սովորական բաժնետոմսերը, դրանք սովորաբար ձայնի իրավունք չեն տալիս, քվեազուրկ են: Արտոնյալ բաժնետոմսերն իրենցից ներկայացնում են ընկերության սովորական բաժնետոմսերի և պարտատոմսերի միջև ընկած արժեթղթի ձև:

Արտոնյալ բաժնետոմսերը սովորաբար տալիս են ընկերության գույքի որոշակի մասի նկատմամբ սեփականության իրավունք, դրանով նման են սովորական բաժնետոմսերին, ի տարբերություն պարտատոմսերի: Սակայն ընկերության լուծարման դեպքում դրանցով վճարումներն ավելի քիչ են հավանական, քան պարտատոմսերով վճարումները: Արտոնյալ բաժնետոմսերը կարող են լինել ամրագրված կամ չամրագրված ժամկետում մարվող կամ անժամկետ: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները միատեսակ չեն տարբեր ընկերություններում:

Համաձայն ՀՀ օրենսդրության, տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ժողովում, եթե արտոնյալ բաժնետոմսերի որոշակի դասերի համար օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Ընկերության որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատեր բաժնետերերին տրամադրում են միևնույն իրավունքները: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ունեն ձայնի իրավունք, եթե քննարկվում են ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր:

Իրականում սովորական բաժնետոմսերի տերերն ունենում են մեծ առավելություն, քանի որ նրանց դիվիդենտներն աճում են՝ կապված ընկերության շահույթների մեծությունից:

Ըստ բաժնետիրական ընկերության *ընդհանուր ժողովում ունեցած ձայների թվի*, բաժնետոմսերը լինում են **միաձայն, բազմաձայն և անձայն**:

Բաժնետոմսերի այն թիվը, որը հնարավորություն է տալիս տիրապետող դիրք գրավել բաժնետիրական ընկերությունում, ազդել որոշումների ընդունման վրա, կոչվում է ***բաժնետոմսերի հսկիչ փաթեթ*** (controlling interest), իսկ ընկերության մյուս անդամների ձայների թիվը որոշվում է ըստ ներդրված գումարի:

Հսկիչ փաթեթը բաժնետիրական ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի ընդհանուր քանակի այն մասն է, որը կենտրոնացված է մեկ անձի ձեռքում և նրան տալիս է ընկերության գործունեության նկատմամբ փաստացի հսկողություն իրականացնելու, այդ գործունեությունը կառավարելու, անհրաժեշտ որոշումներ ընդունելու հնարավորություն: Տեսականորեն, ընկերության նկատմամբ հսկողություն ստանալու համար սովորաբար բաժնետերը պետք է ունենա կամ հսկի ձայնի իրավունք տվող բոլոր բաժնետոմսերի կեսից ավելին կամ 50%+1 բաժնետոմս: Սակայն իրականում մեկ բաժնետերը կամ անձանց խումբը համատեղ կարող է հսկել ընկերությանը՝ ունենալով ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից պակասը (նույնիսկ 20%-ը կամ 5-10%-ը և

ավելի քիչ), եթե նրան չպատկանող բաժնետոմսերը խիստ փոշիացված են մեծ թվով բաժնետերերի կամ բազմաթիվ փայատերերի միջև, որոնք ակտիվորեն չեն մասնակցում քվեարկությանը: Վկայակոչելով այդ փաստը, որոշ տնտեսագետներ պնդում են, որ տեղի է ունենում «կապիտալի դեմոկրատացում» (սեփականության դիֆուզիա): Սակայն պետք է նշել, որ իրականում աշխատավորական լայն զանգվածները բաժնետոմսերի սեփականատերեր չեն, ովքեր ունեն բաժնետոմսեր, ձեռք են բերում չնչին գումարով և չեն հանդիսանում բաժնետիրական ընկերությունների տերեր:

Բաժնետիրական ձեռնարկությունների հիմնադիրները սովորաբար իրենց են թողնում բաժնետոմսերի մի մասը, իսկ մյուս մասը վաճառում են արժեթղթերի շուկայում՝ *ֆոնդային բորսայում*: Այստեղ որոշվում է կարևորագույն բաժնետոմսերի կուրսերի միջին ցուցանիշը՝ ***բաժնետոմսերի կուրսերի (գների) ինդեքսը*** (share price index), որը հաշվարկվում է առավել խոշոր ընկերությունների կուրսերով: Պարզագույն ձևով որոշվում է արժեթղթերի ընտրված խմբի (զամբյուղի) կուրսերի գումարը՝ բաժանելով թողարկումների քանակի վրա, կամ նրանց ընթացիկ շուկայական գնի հիման վրա: Այն օգտագործվում է որպես որոշակի ընտրությունների սովորական բաժնետոմսերի զամբյուղի արժեքի փոփոխությունը գնահատելու միջոց: Բաժնետոմսերի կուրսերի փոխարժեքների ինդեքսը կազմելիս նշվում է բաժնետոմսերի զամբյուղի արժեքը որևէ պահին: Բաժնետոմսերի զամբյուղի արժեքի աճի կամ նվազման դեպքում ինդեքսը համապատասխանաբար աճում կամ նվազում է: Առավել կիրառվող ֆոնդային շուկայի ինդեքսներն են՝ Մեծ Բրիտանիայում՝ «Ֆայնենշլ Թայմսի» բաժնետոմսերի ինդեքսները, ԱՄՆ-ում՝ Դաու-Ջոունսի, Ճապոնիայում՝ Նիկեյի ինդեքսը և այլն:

Բաժնետոմսերը, պարտատոմսերը և այլ արժեթղթեր սեփական արժեք չունեն, իրենցից ներկայացնում են միայն սեփականության տիտղոս, որ դիվիդենտի կամ տոկոսի յուրացման իրավունք է տալիս և այդ պատճառով կոչվում են ***ֆիկտիվ կապիտալ***, իսկ բաժնետիրական ընկերության իրական կապիտալը գործում է արտադրությունում և առևտրում, կատարում շրջապտույտ, բերում հավելյալ արժեք: Ֆիկտիվ կապիտալի շարժումը փոփոխվում է ռեալ (իրական) կապիտալի շարժից անկախ, այդ պատճառով էլ այն կարող է մի քանի անգամ գերազանցել գործող, իրական կապիտալի չափերը:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում պետական կապիտալով բաժնետիրական ընկերությունները (ԲԸ) 100 % պետական կապիտալով ԲԸ-ի ձևով, որտեղ պետությանն է պատկանում հսկիչ ծրարը կամ այն տնօրինում է «ոսկյա բաժնետոմսով»: Եթե պետական ունիտար ձեռնարկության գույքի սեփականատերը պետությունն է, ապա ԲԸ գույքի սեփականատերն ինքն է: Եթե առաջինը գործում է պետության ֆինանսավորման սկզբունքների հիման վրա, ապա երկրորդը՝ ինքնաֆինանսավորման: Սակայն այս ձեռնարկությունները ենթարկվում են ադմինիստրատիվ լծակների լուրջ ազդեցությանը, քանի որ տնօրենների խորհուրդը ձևավորվում է պետմարմինների կողմից:

Եվ, վերջապես, ըստ ձեռնարկության չափերի, տարբերում ենք փոքր, միջին և խոշոր բիզնեսը: Ձեռնարկության չափերի հիմքում դրվում է երկու հիմնական ցուցանիշ՝

1. զբաղվածների թիվ
2. վաճառքի ծավալ:

Օրինակ, ԱՄՆ-ում այն ձեռնարկությունը, որն ունի ընդամենը 10 աշխատող, ամենափոքրն է, մինչև 20-ը՝ փոքրագույն, մինչև 99-ը՝ փոքր, մինչև 500-ը՝ միջին, 500-ից ավելին՝ խոշոր: Գերմանիայում փոքրը 25 000 մարկից ոչ ավելի տարեկան պտույտով ձեռնարկությունն է, իսկ դրանից ավելին՝ միջին և խոշոր:

Ներկա չափանիշներով մեր տնտեսության մեջ փոքր է կոչվում այն ձեռնարկությունը, որը ունի ոչ ավելի քան.

1. արդյունաբերության և շինարարության ոլորտում՝ 200
2. նյութական արտադրության մյուս ճյուղերում՝ 50
3. գիտության բնագավառում՝ 100
4. այլ ոլորտներում (ծառայության և առևտրի)՝ 15-25 աշխատատեղ և ավելի քիչ:

Փոքր բիզնեսը, որի զարգացման մեջ բավականին շահագրգռված են խոշոր ընկերությունները, մեծ տարածում է ստացել, քանի որ այն ընդունակ է մեղմացնելու լճացման հետևանքները, խթանելու արտադրության և արտադրանքի նորացումը: ԱՄՆ-ում մոտ 20 մլն ձեռնարկություն է զբաղված փոքր բիզնեսով (առկա ձեռնարկությունների 90%-ը), իսկ Ճապոնիայում՝ 6,5 մլն (99%-ը): Աշխատողների միջին թիվը Ճապոնիայի մեկ արդյունաբերական ձեռնարկությունում կազմում է 11 մարդ, իսկ ԱՄՆ-ում՝ 80 մարդ: Անհատական կամ ընտանեկան աշխատանքային գործունեության բազայի վրա ստեղծված փոքր ձեռնարկությունների թիվը շատ երկրներում մշտապես աճում է:

Ճապոնիայում երկրի բնակչության 9/10 մասը զբաղված է փոքր բիզնեսով: Այդ բիզնեսին բաժնին է ընկնում բոլոր վաճառքների 70%-ը: Նրանք տալիս են երկրի ամբողջ արդյունաբերական արտադրանքի մոտ 1/3-ը:

Ռուսաստանում գործում են հարյուր հազար մանր ձեռնարկություններ, սակայն նրանց քանակը հարաբերականորեն դեռ մեծ չէ:

Հայաստանում բիզնեսի կազմակերպման ձևերից ամենատարածվածը փոքր բիզնեսն է:

Ի՞նչ բարդությունների են հանդիպում երիտասարդ բիզնեսմենները:

- Ռիսկ. ամերիկյան վիճակագրությունը վկայում է, որ 3 նոր ձեռնարկություններից 2-ը առաջին չորս տարվա ընթացքում սնանկանում են, իսկ նրանց կազմակերպիչները կրում են լուրջ ֆինանսական կորուստներ:
- Մրցակցություն. ամենասկզբից ձեռնարկատերը բախվում է բազմազան մրցակիցների հետ, որոնցից ամենաանհաղթահարելի հակառակորդները խոշոր ընկերություններն են:
- Անկայունություն. փոքր բիզնեսի ֆինանսական հնարավորությունները շատ սահմանափակ են, այդ պատճառով էլ տնտեսական իրադրության աննշան վատթարացումը դառնում է փոքր ձեռնարկատերերի համար պոտենցիալ սնանկացման պատճառ:
- Հարկեր. չնայած փոքր բիզնեսի արտոնյալ հարկահանմանը, սկսող ձեռնարկատերերը չեն դիմանում անգամ բյուջետային վճարումներին:

▪ Վարկ. ելնելով փոքր բիզնեսի ֆինանսական անկայունությունից, բանկերը դժկամորեն են ֆինանսավորում սկսող ձեռնարկատերերին և, որպես կանոն, բարձր տոկոսաչափերի պայմաններով:

Թվարկված մինուսներին սկսող ձեռնարկատերերը սովորաբար հակադրում են փոքր բիզնեսի հետևյալ պլյուսները.

▪ Հենց փոքր բիզնեսի ձեռնարկություններում են ամենից արագ իրականացվում նախաձեռնությունը և նորացումը:

▪ Փոքր ձեռնարկության տերը իր ձեռքում կենտրոնացնելով կառավարման բոլոր թելերը, ի վիճակի է շեշտակիորեն ինտենսիվացնել աշխատանքը:

▪ Կառավարող և սպասարկող անձնակազմի տնտեսումը էժանացնում է արտադրությունը փոքր ձեռնարկություններում:

Իհարկե, փոքր բիզնեսը կապված է մի շարք հիմնախնդիրների հետ, սակայն հենց այն է ապահովում առավելագույն ազատություն, նախաձեռնության պարզություն անհամբեր և տաղանդավոր մարդկանց համար, որոնց վախեցնում է խոշոր բիզնեսի յուրահատուկ կոշտ և ծանր կարգավորումը:

Ի՞նչ է միջին բիզնեսը:

Միջին բիզնեսը սովորաբար ներկայացված է ընկերությունով (կոոպերատիվներով)՝ արտադրության գործոնների համասեփականատերերի կոլեկտիվով: Միանձնյա բիզնեսի համեմատությամբ կոլեկտիվ ձեռներեցությունը ունի մեկ շատ կարևոր առավելություն՝ ավելի հզոր ֆինանսական բազա, քանզի այդ ձևը հնարավորություն է տալիս միավորելու անձանց խմբերի դրամական միջոցները:

Այսօր ամենատարածված ընկերությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն է, որի տակ հասկացվում է ընկերության ֆինանսական պատասխանատվությունը բիզնեսում ներդրված կամ ընկերության հաշվում եղած միջոցների սահմաններում (այսինքն՝ բացառվում է ընկերությանը մասնակցող անձերի անձնական ունեցվածքը):

Կառավարումը ընկերություններում համատեղ է, շահույթի բաշխումը՝ նախապես պայմանավորված չափերով (բաժիններով): Կոոպերատիվը ընկերության ամենապարզ ձևն է, որը միավորում է միայն այն անձանց, որոնք անմիջական մասնակցություն են ունենում նրա ստեղծմանը և աշխատանքին: Տիպիկ են արտադրական, ագրարային, բնակարանային և սպառողական կոոպերատիվներ:

Ի՞նչ է խոշոր բիզնեսը:

Խոշոր բիզնեսը ներկայացված է, որպես կանոն, բաժնետիրական ընկերություններով:

Մասնավոր բիզնեսի խոշոր ձեռնարկությունների ստեղծումը բաժնետոմսերի վաճառքի միջոցով ունի կարևոր տնտեսական արդյունք.

▪ Ապահովում է համատիրոջ կարգավիճակի ձեռքբերման պարզությունը:

▪ Համատերերի (բաժնետերերի) թիվը գործնականորեն կարող է չսահմանափակվել, ինչը թույլ է տալիս միավորել հսկայական ֆինանսական ռեսուրսներ:

▪ Բաժնետերերի բաժնետոմսի վաճառքը այլ անձի, չի կանգնեցնում բաժնետիրական ձեռնարկության աշխատանքը:

Խոշոր բիզնեսի կարևոր տարբերությունը կայանում է նրանում, որ արտադրանքի արտադրության և իրացման անմիջական կառավարումը փոխանցվում է պրոֆեսիոնալ վարձու անձնակազմին (մենեջերներին և մարկետոլոգներին):

Բիզնեսի կազմակերպումը տարբեր երկրներում ունի իր առանձնահատկությունները: Օրինակ, կոնցեռնները և այլ խոշոր ձեռնարկությունները իրենցից ներկայացնում են Ճապոնիայի տնտեսության միայն «սառցալեռան գագաթը»: Միևնույն ժամանակ, խոշոր և փոքր բիզնեսը այդքան չեն մրցակցում, ինչքան լրացնում են միմյանց, նրանք ուղղակի բաժանում են գործունեության ոլորտները:

ԱՄՆ-ում ֆիրմաների 99%-ը փոքր և միջին են, ընդ որում նրանցից 80%-ում աշխատում են 10 մարդուց պակաս: Փոքր և միջին ֆիրմաները ԱՄՆ-ում արտադրում են համախառն ազգային արդյունքի 40%-ը, այդ թվում շինարարությունում՝ 80%-ը, մեծածախ առևտրում՝ 86%-ը, սպասարկման ոլորտում՝ 81%-ը: Նրանք այստեղ ապահովում են ԳՏԱ-ի ոլորտին պատկանող բոլոր նորամուծությունների ստեղծման և կիրառման կեսը:

Մեկ ԱՄՆ դոլարի ծախսումների հաշվարկով նրանց կողմից ներդրվում է միջինում 17 անգամ ավելի շատ նորմուծություն, քան խոշոր ֆիրմաներում:

Երբ սեփականատերը կառավարման գործառույթը փոխանցում է մենեջերին, նա իրեն է վերապահում զուտ շահույթի վերահսկման և բաշխման գործառույթը: Օրինակ, Ճապոնիայում բիզնեսմենները իրենց են վերապահում ֆիրմաների օպերատիվ կառավարումը: Նրանք մշակել են կառավարման արդյունավետ համակարգ՝ բնորոշ ղեկավարման ոճով (գործելաձևով), որի էությունը կայանում է նրանում, որ հիմնահարցերը նախապես քննարկվում և համաձայնեցվում են կառավարման բուրգի ցածր մակարդակներում, հետո այդ աշխատանքի արդյունքները հասցվում են մինչև ընկերության ղեկավարներին, որոնք էլ դրանով իսկ հնարավորություն են ստանում հաշվի առնել ապագա կատարողների կարծիքը:

Ամերիկյան բիզնեսմենների համար, ընդհակառակը, բնորոշ է միջամտությունը վարձու պրոֆեսիոնալ կառավարողների գործին: Հազվագյուտ չեն նաև վերջիններիս ազատման դեպքերը ֆիրմաների սեփականատերերի կողմից:

Ռուսաստանում, ինչպես նաև մեզ մոտ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» ընդունումով (մաս I) լայն հնարավորություններ են բացվում բիզնեսի ակտիվացման գործում (նախ՝ արտադրական, իսկ հետո և շրջանության ոլորտում): Վերջին տարիներին ստեղծվեցին հազարավոր ընկերություններ, բորսային գրասենյակներ, առևտրի տներ, կոմերցիոն բանկեր, աուդիտորական ֆիրմաներ և այլ ժամանակակից բիզնեսի կառուցվածքի տարրեր:

4.5. Ձեռնարկատիրական գործունեության հիմունքները և զարգացման միտումները ՀՀ-ում

Ձեռնարկատիրական ֆիրմաների գործունեության մեխանիզմը մեր երկրում կարգավորվում է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքով»:

Մեր երկրում «ձեռնարկություն» տերմինի լայն կիրառումը բացատրվում է նրանով, որ սեփականության պետական ձևի գերակայության և տնտեսական պատասխանատվության բացակայության պայմաններում երկար տարիներ ավելի նպատակահարմար էր մասնագիտացված տնտեսական միավորների ստեղծումը (պետպլան, պետմատ, պետգների կոմիտե և այլ պետական ինստիտուտների), որոնք կառավարում էին ձեռնարկությունների կյանքը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, իրավաբանական անձինք ստորաբաժանվում են երկու խմբի՝ իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող *(առևտրային)* կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող *(ոչ առևտրային)* կազմակերպությունների:

ՀՀ-ում գործող օրենսդրությամբ, ներկայումս սահմանված են ձեռնարկության հետևյալ կազմակերպաիրավական ձևերը՝

- լիակատար ընկերակցություն
- վստահության վրա հիմնված (կոմանդիտային ընկերակցություն)
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն
- բաժնետիրական ընկերություն (բաց և փակ)
- կոոպերատիվ
- հասարակական միավորումներ
- հիմնադրամներ
- իրավաբանական անձանց միություններ
- օրենքով նախատեսված այլ առևտրային կազմակերպություններ:

ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումը անց է կացվում 4 հինմական ուղղություններով.

1. Ձեռներեցության սուբյեկտում ներքին հարաբերությունների կարգավորում (աշխատանքի հիմնադրման, կառավարման և կազմակերպման կարգը):

2. Ձեռներեցության սուբյեկտների հարաբերությունների կարգավորումը իշխանության պետական և տարածքային մարմինների հետ:

3. Ձեռներեցության սուբյեկտների հարաբերությունների կարգավորումը ֆինանսական ոլորտի հիմնարկությունների հետ (բանկերի, արտարժույթային կարգավորման և վերահսկման մարմինների, մաքսային ծառայության մարմինների և այլն):

4. Ձեռներեցության սուբյեկտների հարաբերությունների կարգավորումը իրենց գործընկերների՝ մատակարարների, գնորդների, ապահովագրողների, փոխադրողների և ուրիշների հետ:

Ձեռներեցության զարգացումը որոշվում է այս կամ այն երկրում շուկայական հարաբերությունների քաղաքակիրթ մակարդակով և վիճակով: Անկախ ձեռներեցության կազմակերպաիրավական ձևից, ձեռնարկատիրական գործունեության զարգացման հեռանկարների գնահատման համար անհրաժեշտ է հենվել համաշխարհային պրակտիկայով մշակված բիզնեսի չափանիշների վրա:

Մեր երկրում առաջիկայում սպասվում է շուկայական տնտեսության անցման շրջանի ձեռնարկատի-րության տեսության փաստացի ստեղծում: Այդ գործում մեծ տեղ է հատկացվելու ձեռներեցության պետական հովանավորությանը՝ ձեռներեցության խթանմանն ուղղված հատուկ միջոցառումների կիրառմանը: Ձեռներեցության հովանավորությունը ինքնանպատակ չէ, այլ տնտեսական համակարգի ընթացիկ և հեռանկարային զարգացման սոցիալ-տնտեսական նպատակների նվաճման միջոց: Այդ պատճառով էլ ձեռներեցության հովանավորությունը ապահովող միջոցառումները պետք է ուղղվեն.

- ձեռներեցների լայն շերտի ձևավորմանը
- ձեռներեցության հեռանկարային ձևերի և ուղղությունների խթանմանը
- ներդրումային ռեսուրսների կուտակման աջակցությանը և գերակայության ու առաջնային ուղղություններով նրանց օգտագործմանը
- միջազգային մրցակցության պայմաններում հայրենական ձեռներեցության գործունեության կայունության ապահովմանը:

Այս բոլորը օրգանապես փոխկապակցված են, ինչը պահանջում է նպատակաուղղված և համաձայնեցված պետական քաղաքականության անցկացում:

Ձեռներեցության հովանավորման ջանքերը կարող են բերել շոշափելի արդյունքներ այն դեպքում, երբ ունենան համակարգային բնույթ: Մեր հանրապետությունում պետությունը դադարեց սահմանափակել և ուղղակիորեն վերահսկել մասնավոր բիզնեսի գործունեությունը:

Այսօր ՀՀ ձեռներեցները հիմնականում չորս տարատեսակի են.

1. Նոմենկլատուրան, որը վերածվել է բաժնետերերի, ասոցիացիաների ղեկավարների և այլն:
2. Ֆերմերները, արհեստավորները, կոոպերատորները, գործակալները:
3. Նախկին համքարները և ստվերային տնտեսության գործարարները, որոնք գնում են սեփականաշնորհված գույքը, այդ թվում, խանութները և արվեստանոցները, որտեղ նրանք գործնականում տիրակալ էին:
4. Նախկին համքարները և ստվերային էկոնոմիկայի գործարարները, որոնք գնում են սեփականաշնորհված գույքը, այդ թվում, խանութները և արվեստանոցները, որտեղ նրանք գործնականում տիրակալ էին:

Նույնիսկ հանրապետության անկախությունից, տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների հաստատումից հետո արտասահմանյան դրամագլխի (կապիտալի) ներհոսքին մեծ զգուշությամբ էին վերաբերվում, չնայած, որ քաղաքակիրթ հասարակությունում տնտեսական զարգացման մեջ արտասահմանյան կապիտալի մասնակցությունը համարվում է բնականոն երևույթ: Օտարերկրյա ներդրողին անհրաժեշտ է նայել ոչ թե որպես մրցակից, այլ որպես ստեղծագործ օգնական, քանի որ առանց նրա աշխույժ մասնակցության դժվար է ակնկալել տնտեսական խնդիրների արագ և հաջող լուծում: Մանավանդ, որ արտասահմանից ձեռնարկատիրական կապիտալի ներհոսքը բազմիցս ապացուցել է իր ստեղծագործ ուժը՝ խթանելով շատ պետությունների, այդ թվում նաև ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը:

Արտասահմանից կապիտալի ներգրավումը անհրաժեշտ է դիտարկել որպես արտադրության կազմակերպման ձևերի, շուկայական պայմաններում աշխատելու փորձի, ձեռներեցության տարածման, արտադրվող արտադրանքի և ծառայությունների մրցակցության բարձրացման հնարավորություն: Բացի դրանից, օտարերկրյա կապիտալի ներհոսքը, ինչպես վարկային, այնպես էլ ձեռնարկատիրական կապիտալի տեսքով, սովորաբար հանդես է գալիս որպես վճարային հաշվեկշռի կարգավորման կարևորագույն ձևերից մեկը: Այդ ներդրումները պետք է ուղղվեն հետևյալ անհետաձգելի խնդիրների լուծմանը, առանց որոնց, անհնար է լիարժեքորեն ապահովել համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ հետագա համագործակցությունը: Այդ խնդիրներից են արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի զարգացումը, շուկայական տնտեսության առանձին ոլորտների և հիմնարկների համար որակավորված կադրերի պատրաստումը և ուսուցանումը, հաշվապահական և վիճակագրական հաշվառման ձևերի և եղանակների, բանկային գործի, կապի ու հաղորդակցության միջոցների կատարելագործումը, օժանդակությունը մասնավոր ոլորտի զարգացմանը, հատկապես մանր և միջին ձեռներեցությանը:

Տնտեսական աճի ձեռքբերման և նոր աշխատատեղերի ստեղծման առումով Հայաստանի կառավարությունը խիստ կարևորում է ձեռներեցության աջակցությունը և փոքր բիզնեսի զարգացումը:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման աջակցման հարցում պետության հիմնական խնդիրներն են.

- պետության աջակցման ճյուղային և տարածքային գերակայությունների սահմանումը
- փոքր ձեռնարկատիրության գործունեությունը կարգավորող իրավական դաշտի ապահովում, ներառյալ գանձման համակարգի, հարկման և հաշվետվությանների ներկայացման պարզեցված համակարգերի ներդրումը, ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության ապահովումը
- ձեռնարկատիրական գործունեության համար մատչելի և հուսալի տեղեկատվական բազայի ստեղծումը
- անհրաժեշտ մասնագետների պատրաստման խրախուսումը:

Հայաստանում գործում են փոքր և միջին բիզնեսի աջակցման բազմաթիվ տեղական և միջազգային ոչ պետական կազմակերպություններ և նրանց կից բիզնեսի կենտրոններ, միկրովարկեր տրամադրող միություններ: Նրանց գործունեությունը հիմնականում կայանում է հետևյալում՝ տեղական գործարարների համար բիզնես պլանների կազմում, կառավարման և մարքեթինգի դասընթացների և խորհրդատվության կազմակերպում, աջակցում արտասահմանյան գործընկերներ գտնելու գործում, անհատ ձեռներեցներին (հատկապես շրջաններում) սեփական գործ սկսելու համար արտոնյալ պայմաններով փոքր վարկերի տրամադրում:

Նույն նպատակներին են ծառայում մեր ազգի բարերարների կողմից նվիրաբերված և ներդրված միջոցները (օրինակ, մեր ամերիկացի հայրենակցի՝ մուլտիմիլիարդատեր Քըրք Քըրքորյանի կողմից հիմնադրված է ֆոնդ 100 մլն դոլարի չափով՝ փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար, որը ղեկավարվում է սենատոր Բոբ Դոուլի կողմից: Այն սկսել է իր պրակտիկ գործունեությունը 1998թ. առաջին կեսին և կրկնապատկվել է նույն թվականին Հայաստանի Հանրապետություն Քըրքորյանի այցելության ժամանակ, ներկայումս այդ օգնությունը շարունակվում է):

ՀՀ-ի տնտեսական զարգացմանը զուգընթաց պետք է առավել լայն հնարավորություններ ստեղծվեն պետական և մասնավոր առևտրային վարկերի և փոխառությունների ձևով՝ օտարերկրյա կապիտալի ներգրավման համար: Ընդ որում, հատկապես անհրաժեշտ է խթանել մասնավոր օտարերկրյա ներդրումները՝ նրանց տեղական ձեռնարկությունների դրամագլխի մոտ 50%-ին տիրապետելու իրավունք տալու ճանապարհով և այլ ձևերով:

Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել օտարերկրյա ներդրումների համար երաշխիքները և համալրել դրանք արտոնությունների համակարգով (դրանցից է՝ ժամանակավորապես հարկերից լրիվ կամ մասնակի ազատումը): Ընդ որում արտոնությունը անհրաժեշտ է տարբերակել՝ կախված հստակ արտադրության մեջ օտարերկրյա ներդրումների մասնակցության աստիճանից, և առավել արտոնյալ պայմաններ պետք է ստեղծել համատեղ ձեռնարկությունների համար, որոնք կարող են ներկայացնել արևմտյան տիպի ձեռներեցություն և հանդիսանալ շուկայական հարաբերությունների հիմնական դպրոց:

Արտասահմանյան ձեռներեցների համար տնտեսվարման հնարավորությունների ընդհանուր հավասարության և համարժեքության պայմաններում անհրաժեշտ է միջոցառումների որոշակի համակարգ, որը պաշտպան կհանդիսանա նոր ձևավորվող և առաջին անգամ շուկայական հարաբերությունների մեջ մտնող ազգային արտադրության համար: Հատկապես անցանկալի է դիտվում օտարերկրյա արտադրողների կողմից ապրանքների և ծառայությունների շուկայի առանձին կարևոր հատվածների հավանական մենաշնորհը:

Անհրաժեշտ է բոլոր տեսակի ձեռնարկությունների գործունեությանը աջակցելու գիտականորեն մշակված համակարգ, քանի որ առանց դրա հազիվ թե հնարավոր լինի տնտեսության մեջ շոշափելի արդյունքներ ակնկալել:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է արտադրության ծախքերի սահմանումը և դրա դասակարգումը:
2. Ո՞րն է շահույթի (այդ թվում՝ հաշվապահական, նորմալ և տնտեսական շահույթի) սահմանումը: Բացատրել դրա դերը:
3. Ո՞րն է ձեռներեցության սահմանումը և դրա տարբերությունը «բիզնես» հասկացությունից:
4. Որո՞նք են ձեռներեցության սուբյեկտները:
5. Ո՞րն է ձեռնարկատիրական գործունեության նպատակը և ձեռներեցության բնորոշ ընդհանուր հատկանիշները:
6. Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեության ոլորտները և գործառույթները:
7. Ո՞րն է ձեռներեցության միջավայրը:
8. Որո՞նք են ձեռներեցության զարգացման և ակտիվացման անհրաժեշտ պայմանները:
9. Որո՞նք են ձեռներեցության գործոնները:
10. Որո՞նք են ձեռներեցության հաջողության գնահատման չափանիշները:
11. Ի՞նչպես կարելի է բնութագրել ֆիրման՝ որպես շուկայական տնտեսության օղակ:
12. Որո՞նք են բիզնեսի կազմակերպման ձևերը և ձեռնարկություններն ըստ տարբեր հատկանիշների:
13. Որո՞նք են «ձեռնարկություն» և «ֆիրմա» հասկացությունները:
14. Ո՞րն է միանձնյա ձեռնարկությունը, գործընկերությունը և կորպորացիան: Տալ դրանց բնորոշ գծերը:
15. Որո՞նք են անհատական, վարձակալական, կոլեկտիվ համատեղ, դուստր, պետական և մունիցիպալ ձեռնարկությունները, կոոպերատիվը, լրիվ պատասխանատվությամբ, լրացուցիչ պատասխաննատվությամբ, բաժնետիրական և խառը ընկերությունները:
16. Որո՞նք են բիզնեսի կազմակերպման առանձնահատկությունները տարբեր երկրներում:
17. Ո՞րն է փոքր բիզնեսը:
18. Ո՞րն է միջին բիզնեսը:
19. Ո՞րն է խոշոր բիզնեսը:
20. Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեության հիմունքները ՀՀ-ում:
21. Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեության զարգացման միտումները ՀՀ-ում:

ԲԱԺԻՆ III. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԽ 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ: ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ:

5.1. Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները: Համախառն ներքին արդյունքի դինամիկան Հայաստանի Հանրապետությունում

Տնտեսագիտության տեսությունը և վիճակագրությունը կիրառում են տնտեսական գործունեության արդյունքների տարբեր չափումներ, որոնցից կարևորագույնը *համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ)* (gross national product, nominal (GNP)) ցուցանիշն է: ՀԱԱ-ն (GNP) ազգային արտադրության ծավալի չափման առավել ընդհանրական մակրոտնտեսական ցուցանիշներից է, որը լայնորեն կիրառվում է արտասահմանյան պրակտիկայում և առաջին անգամ մեր երկրում տնտեսական հաշվարկների համակարգում մտցվել է 1988թ.: Այն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) տվյալ երկրի քաղաքացիների (ինչպես երկրի ներսում, այնպես է նրա սահմաններից դուրս) արտադրված վերջնական (պատրաստի) ապրանքների և ծառայությունների (ինչպես կարճաժամկետ՝ սնունդ, դեղորայք, հագուստ և այլն, այնպես էլ երկարաժամկետ օգտագործման համար՝ մեքենա, կենցաղային տեխնիկա և այլն) արժեքային հանրագումարը (շուկայական գներով):

Որպես երկրի տնտեսական զարգացման առավել ամփոփ ցուցանիշ, ՀԱԱ-ն արտացոլում է ամբողջ ժողովրդական տնտեսության նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտի միասնականությունը: ՀԱԱ-ի մեջ չեն մտնում տրանսֆերտային վճարները, ստվերային տնտեսության կողմից ստեղծված ապրանքները և ծառայությունները, օրինակ, նարկոբիզնեսը, օղու թորումը, ընդհատակյա խաղային բիզնեսը, ինչպես նաև բնակչությանը կառավարության և այլնի կողմից անվճար տրվող ապրանքներն ու ծառայությունները: Կարևոր է հասկանալ, որ ՀԱԱ-ն չափում է թողարկված զանգվածի մեծությունը (flow of output), այլ ոչ թե կուտակված ազգային հարստության (stock of wealth) մեծությունը: Ընդ որում, ՀԱԱ-ն ներառում է միայն վերջնական ապրանքներն ու ծառայությունները, իսկ ապրանքների և ծառայությունների միջանկյալ վաճառքները տարբեր ֆիրմաների միջև հանվում են՝ «կրկնակի հաշվարկիից» խուսափելու նպատակով: Օրինակ, «ցորեն-ալյուր-հաց» շղթայում միայն հացն է վերջնական արդյունք (final product), որը ներառվում է ՀԱԱ-ում, իսկ ցորենը և ալյուրը՝ միջանկյալ (intermediate products) արդյունքներ են: Ուստի, դրանց արժեքները հաշվի չեն առնվում ՀԱԱ-ի հաշվարկման ժամանակ, այլ հանվում են վաճառքների ծավալներից: Այնպես որ, հաշվի է առնվում միայն ավելացված արժեքը (added value) արտադրության յուրաքանչյուր փուլում: Գումարելով տնտեսական սուբյեկտների կողմից արտադրված ավելացված արժեքները, կարող ենք որոշել բոլոր ապրանքների ու ծառայությունների շուկայական արժեքը: ՀԱԱ -ի մեջ հաշվի են առնվում նաև ամորտիզացիոն հատկացումները: Մեկ շնչին ընկնող ՀԱԱ-ն երկրի բնակչության բարեկեցությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից մեկն է:

ՀԱԱ-ն ունի ինչպես անվանական (դրամական) արտահայտություն, որը չափվում է *ընթացիկ գներով* (current prices), այնպես էլ իրական արտահայտություն, որը չափվում է *անփոփոխ (համադրելի) գներով* (constant prices): Դրանց համադրումը հնարավորություն է տալիս որոշել տնտեսության իրական փոփոխությունները: ՀՆԱ-ի անվանական և իրական ծավալների հարաբերությունը կոչվում է ՀԱԱ *դեֆլյատոր* (gross national product (GNP) deflator): Դեֆլյատորը, որը դրամական արտահայտությամբ հաշվարկված տնտեսական ցուցանիշների անփոփոխ գների վերահաշվարկի համար օգտագործվող գործակից է՝ դրանք նախորդ ժամանակաշրջանի գների մակարդակին բերելու նպատակով վիճակագրության մեջ օգտագործվում է գների աճից «մաքրված», իրական տնտեսական շարժը որոշելու, մասնավորապես ՀԱԱ-ի կամ ՀՆԱ-ի աճը չափելու համար: Այն հաշվարկներում կիրառվող վիճակագրական հնարք է, որի միջոցով ճշգրտվում է իրական կամ հաստատուն արժեքի և ընթացիկ արժեքի (որի վրա ազդել է գնաճը) միջև տարբերությունը: Ի տարբերություն ապրանքների և ծառայությունների գների ինդեքսի՝ ՀԱԱ-ի դեֆլյատորը բնութագրում է աշխատանքի վարձատրության, շահույթի (ներառյալ խառը եկամուտները), հիմնական կապիտալի սպառման փոփոխությունները գների փոփոխման արդյունքում, ինչպես նաև զուտ հարկերի անվանական ծավալի փոփոխությունը:

Այսպիսով, ՀԱԱ դեֆլյատորը (որն ունի գործակցի տեսք)՝ համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) ձևավորող ապրանքների և ծառայությունների գների միջին կշռված ինդեքսն է կամ մակարդակը: Դեֆլյատորը թույլ է տալիս որոշել, թե ինչ կարժենար արտադրության ընթացիկ ծավալը, եթե պահպանվեին նախորդ ժամանակաշրջանի գները: Այլ կերպ ասած, մի գործակից է, որի միջոցով չափվում է *գնաճի* ազդեցությունը համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) հաշվարկներում: Թվապես հավասար է *գների ինդեքսին* և ցույց է տալիս հաշվետու տարում միջին գնի փոփոխությունը՝ *բազիսային տարվա* համեմատությամբ՝

ՀԱԱ դեֆլյատոր = Անվանական ՀԱԱ /Իրական ՀԱԱ կամ ավելի ճիշտ՝

ՀԱԱ դեֆլյատոր = Ընթացիկ տարվա արտադրության ծավալը ընթացիկ գներով / Ընթացիկ տարվա արտադրության ծավալը բազային տարվա գներով:

Եթե ՀՀ-ում մինչև 1996թ. դեֆլյատորը բարձր մակարդակ ուներ (օրինակ, 1995թ. այն 61.2% էր), ապա 1996թ-ին այն կազմեց 19.6%,1997թ.՝ 17.7%, 1998 –ին՝ 10.7%, 1999 –ին՝ 0.1%, 2000 – ին՝ (- 1.3) %, 2001-ին՝ 4.0%, 2002-ին՝ 2.3%, իսկ 2003-ին՝ 3.2%:

Բացի *հավելյալ արժեքների* գումարման մեթոդից, ՀԱԱ-ն կարելի է հաշվարկել *ծախսերի* հոսքի և *եկամուտների* հոսքի մեթոդներով:

ՀԱԱ-ն հաշվարկվում է՝

Ըստ ծախսումների ՀԱԱ որոշվում է որպես որոշակի ժամանակահատվածում հասարակության բարիքների և ծառայությունների վրա կատարված բոլոր ծախսերի գումար: Այլ կերպ՝ անհրաժեշտ է գումարել վերջնական արդյունքի ձեռքբերման բոլոր ծախսերը: Դրանք են.

1. բնակչության սպառողական ծախսերը (C)
2. ազգային տնտեսության մեջ ներգրավված մասնավոր համախառն ինվեստիցիաները (Ig)
3. ապրանքների և ծառայությունների պետական գնումները (G)
4. զուտ արտահանումը (Xn), որն իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման միջև եղած տարբերությունը

Թվարկված ծախսերն արտահայտվում են ՀԱԱ-ում և ցույց են տալիս տարեկան արտադրության շուկայական արժեքը՝

$$C + I_g + G + X_n = \text{ՀԱԱ}$$

Ըստ եկամուտների ՀԱԱ-ն կարող է որոշվել միավորված մեթոդով՝ որպես ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բոլոր կազմակերպությունների ու բնակչության եկամուտների գումար (աշխատավարձ, սոցապ հատկացումներ, շահույթ և այլ եկամուտներ): ՀԱԱ-ն ներկայացվում է նաև որպես առանձին անհատների ու ձեռնարկությունների եկամուտների գումար (աշխատավարձ, տոկոս, շահույթ ու ռենտա): Դրանք արտադրության գործոնների սեփականատերերի ստացած փոխհատուցման ընդհանուր գումարն են: Տվյալ մոտեցմամբ ՀԱԱ-ն կարող է որոշվել նաև որպես տնտեսության ճյուղերի եկամուտների գումար:

ՀԱԱ-ի տարատեսակն է ***համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)*** (gross domestic product (GDP)), որն իրենից ներկայացնում է միայն հայրենական արտադրության արդյունքը (ապրանքները և ծառայությունները): ՀՆԱ-ն (GDP) իր մեջ չի ներառում արտասահմանից մուտք եղած եկամուտները, որը շատ երկներում տատանվում է +- 1 % սահմաններում: Հետևաբար ՀԱԱ-ն համախառն ներքին արդյունքից տարբերվում է այն գումարով, որը հավասար է տվյալ երկրի ռեզիդենտների կողմից արտասահմանում ստացված ու բերված զուտ եկամտին (տոկոսի, շահույթի, շահութաբաժնի, վարձավճարի ձևով): Այդ մնացորդային տարբերությունից կախված ՀԱԱ-ն կարող է մեծ կամ փոքր լինել ՀՆԱ-ից: ՀՆԱ-ն ընդունված է ՄԱԿ-ի կողմից որպես ազգային հաշիվների համակարգի հիմնական ցուցանիշ:

Վիճակագրական տվյալներով 1989թ. հետո մեր հանրապետությունում կտրուկ տնտեսական անկում է տեղի ունեցել, որը տևել է մինչև 1994թ: ՀՆԱ-ն 1993թ. 1989թ. համեմատ կրճատվել է մոտ 60 տոկոսով, սակայն վերջին 9 տարիներին (1994-2002) հաջողվել է կանխել տնտեսական անկումը և ապահովել ՀՆԱ-ի հավելաճ, որը հնարավորություն է տվել 2002թ-ին վերականգնել այդ ցուցանիշի 1990 թվականի մակարդակի 84.2 տոկոսը (նկար 41):



Նկար 41. ՀՀ-ում իրական ՀՆԱ-ի դինամիկան (տոկոսներով 1990=100)

Այդ տվյալների արժանահավատությունը որոշ տնտեսագետներ կասկածանքի տակ են դնում, որը հիմնավորվում է ՀՀ պետական բյուջեի և բնակչության իրական դրամական եկամուտների առավել կտրուկ անկման (ավելի քան 10 անգամ) տվյալներով:

2002թ. իրականացված մակրոտնտեսական քաղաքականության արդյունքում գրանցվեց տարեկան 1357.3 մլրդ դրամի ՀՆԱ և 12.9% տնտեսական աճ՝ նախորդ տարվա 9.6%-ի դիմաց: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, 2002թ. կազմեց 422.7 հազար դրամ, իսկ մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ-ն 1058.8 հազար դրամ (2001թ. համապատասխանաբար 309.7 և 919.7 հազար դրամի դիմաց) :

ԱՊՀ վիճկոմիտեի տվյալներով, 2002թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած ՀՆԱ-ի 12.9% աճը ՀՀ-ում զիջում է միայն Ղազախստանի ցուցանիշին (15.8%): ՀՆԱ-ի աճի տեմպերով Հայաստանը առաջինն է տարածաշրջանում, քանի որ այդ ցուցանիշը Վրաստանում և Ադրբեջանում համապատասխանաբար կազմել է 1.9% և 7.9%:

Անցումային շրջանում (1991-2002թթ.) արմատական փոփոխություն է կրել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը (նկար 42) :



Նկար 42. Հիմնական ճյուղերի թողարկման դինամիկան 1991-2002թթ. (յուրաքանչյուր 4 տարվա նախորդ տարին ընդունված է 100%)

1991-2002թթ. համախառն թողարկման ընդհանուր կառուցվածքի մեջ հատկապես ավելացել է գյուղատնտեսության տեսակարար կշիռը: Կապիտալ շինարարության տեսակարար կշիռը սկսել է ավելանալ միայն վերջին տարիներին և 2003-ի սկզբին նրա իրական աճի ինդեքսը գերազանցել է բոլոր ճյուղերի իրական աճի ինդեքսները, կազմելով 156.2% (նկար 43):



Նկար 43. Համախառն թողարկման կառուցվածքը տոկոսներով ընդհանուրի մեջ 1991-2002թթ. (1990թ. ընդունված է 100%)

Անցման շրջանում Հայաստանը վերածվել է ագրարային երկրի և նրա կախվածությունն արտաքին շուկայից նկատելիորեն ավելացել է: ՀՆԱ ստեղծման գործընթացում դեռևս շարունակվում են սեզոնային խիստ տատանումները: Անցման տարիներին խիստ կրճատվել է ՀՆԱ-ում պետական հատվածի բաժինը և ավելացել մասնավորինը:

ՀԱԱ-ի կամ ՀՆԱ-ի շարժն ակնառու կերպով ներկայացնելու հնարավորություն է տալիս *Ազգային հաշիվների ստանդարտային համակարգ (ԱՀՀ)* (national accounts standard system -NASS): Այն տնտեսական իրավիճակը և դինամիկան նկարագրող վիճակագրական տվյալների համակարգ է, որը պատկերացում է տալիս տվյալ երկրում տեղ գտած տնտեսական գործընթացների վերաբերյալ: Հաշիվների հիմնական տեսակները խմբավորվում են ըստ տնտեսական գործունեություն իրականացնող մասնակիցների կոնկրետ գործառ-նությունների:

Հիմնական հաշիվներից են.

1. արտադրության հաշիվը
2. եկամուտների կազմավորման հաշիվը
3. եկամուտների բաշխման հաշիվը
4. եկամուտների օգտագործման հաշիվը
5. կապիտալի հաշիվը
6. ֆինանսական հաշիվը:

ԱՀՀ-ն Հայաստանում ներդրվել է, ելնելով միջազգային չափանիշներից և մեթոդոլոգիայից: Վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկումը, սակայն հաշվարկման առանձին հատվածներում դեռևս առկա են մի շարք չլուծված հարցեր, որոնց պատճառով միշտ չէ որ ապահովվում է ցուցանիշների համապատասխանությունը և արժանահավատությունը: Դրան հատկապես խանգարում է տնտեսության ոչ ֆորմալ բաժնի (ստվերային տնտեսության) բարձր տեսակարար կշիռը (որոշ գնահատականներում այն կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 50 տոկոսը):

ՀԱԱ և ՀՆԱ ազգային հաշիվների միակ ցուցանիշները չեն, որոնք արտացոլում են ամբողջական մեծությունների (արդյունքների) շարժը, համաշխարհային պրակտիկայում լայնորեն կիրառվում են նաև ազգային հաշիվների փոխկապակցված այլ ցուցանիշներ, որոնք հաշվարկվում են ՀԱԱ-ի հիման վրա, օրինակ, զուտ ազգային արդյունքը՝ ԶԱԱ (NNP), ազգային եկամուտը՝ ԱԵ (NI), անձնական եկամուտը՝ ԱնձԵ (PI) և տնօրինվող եկամուտը՝ ՏԵ (DI):

Զուտ ազգային արդյունքը *(ԶԱԱ)* (net national product (NNP)) - որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) երկրում արտադրված բոլոր վերջնական ապրանքների և ծառայությունների գումարային ծավալն է դրամական արտահայտությամբ՝ հանած *հիմնական միջոցների ամորտիզացիան:* Որոշվում է որպես համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) և ամորտիզացիոն հատկացումների միջև տարբերություն:

Ազգային եկամուտը *(ԱԵ)* (national income (NI)) երկրի տնտեսական զարգացման կարևորագույն ընդհանրական ցուցանիշներից է: Բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը բնութագրում է երկրի ընդհանուր կենսամակարդակը: Ազգային եկամուտը (ԱԵ) - դրամական արտահայտությամբ հաշվարկված որոշակի ժամանակաշրջանում, սովորաբար, մեկ տարվա ընթացքում, երկրում նոր ստեղծված ամբողջական արդյունքի արժեքն է: Այն իրենից ներկայացնում է արտադրության բոլոր գործոնների (աշխատանք, հող, կապիտալ, ձեռնարկատիրություն) բերած եկամուտը: Երկրի ազգային եկամուտը հավասար է համախառն ազգային արդյունքին հանած ամորտիզացիոն մասհանումները (հիմնական միջոցների մաշվածք) և անուղղակի հարկերը: Անուղղակի հարկերի հաշվին ծածկվում են շրջակա միջավայրի պահպանման, տարերային աղետներից կորուստների հատուցման և այլն ծախսերը: Դա պետության եկամուտն է վճարի ձևով՝ այն ծառայությունների դիմաց, որոնք ապահովում են տնտեսության անխափան գործունեությունը: Մյուս կողմից, ազգային եկամուտը կարելի է որոշել որպես մեկ տարում աշխատավարձի, կազմակերպությունների շահույթի, ներդրված կապիտալի դիմաց ստացված տոկոսի, հողի ռենտայի, վարձավճարի, սեփական գործով զբաղվող արհեստավարժների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացված բոլոր եկամուտների գումար: Հետևաբար, ի տարբերություն ՀԱԱ-ի և ՀՆԱ-ի, ազգային եկամուտը չի ընդգրկում արտադրական ու ոչ արտադրական հիմնական ֆոնդերի ամորտիզացիան և այն եկամուտները, որոնք ստացվել են ոչ արտադրական ոլորտում և արտաքին տնտեսական գործունեությունից:

Անձնական եկամուտը *(ԱնձԵ)* (personal income (PI)) նույնպես կարևոր ցուցանիշ է: Այն անձանց տնօրինության տակ մնացած եկամտի գումարն է երկրի ազգային եկամտից սոցիալական ապահովության վճարումները, կորպորացիաների շահութահարկը, կորպորացիաների շահույթների բաշխումից ստացված չբաշխված շահույթը (որը պահվում է տեխնոլոգիայի զարգացման, արտադրության ծավալի ավելացման, որակի բարելավման, հումքի չնախատեսված թանկացման դեպքերի, մրցակցային պայքարին դիմակայելու և այլնի համար) հանելուց և *տրանսֆերտային վճարումները* (transfer payments) (սոցապահովագրային, կենսաթոշակային, գործազրկության և այլն) գումարելուց հետո: Սովորաբար տրանսֆերտ է համարվում այն տնտեսական գործառնությունը, որի ժամանակ մեկ տնտեսվարող սուբյեկտը անհատույց կարգով մեկ այլ տնտեսվարող սուբյեկտին է տրամադրում ապրանք, ծառայություններ, ակտիվներ կամ սեփականության իրավունք:

Տնօրինվող եկամուտը՝ Տ՝ (disposable income (DI)) - տնային տնտեսությունների տնօրինության տակ մնացած ընթացիկ եկամտի գումարն է, որը կստանանք, եթե անձնական եկամտից հանենք գանձվող հարկերը (եկամտահարկ, գույքահարկ, ժառանգության հարկ և այլն): Տնօրինվող եկամուտը իր հերթին բաժանվում է սպառողական ծախսերի և անձնական խնայողությունների:

Այդ ցուցանիշների փոխկապակցությունը համառոտ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

ՀԱԱ (GNP) - ամորտիզացիա = *ԶԱԱ(NNP)* - ձեռնարկատերերի անուղղակի հարկերը կամ կատարած բոլոր վճարումները = ազգային եկամուտ *ԱԵ (NI)* - սոցիալական ապահովության վճարումները - կորպորացիաների շահութահարկը - կորպորացիաների շահույթների բաշխումից ստացված չվերաբաշխված շահույթը + տրանսֆերտային վճարումները (սոցապահովագրային, կենսաթոշակային, գործազրկության և այլն) = *անձնական եկամուտ ԱնձԵ (PI)* - անձնական եկամտից գանձվող հարկերը (եկամտահարկ, գույքահարկ, ժառանգության հարկ և այլն) = *տնօրինվող եկամուտ ՏԵ (DI):* Այս ամենն ավելի պատկերավոր կարելի է ցուցադրել հետևյալ կերպ (նկար 44):



Նկար 44. Ազգային հաշիվների փոխկապված ցուցանիշների համակարգը և որոշումը

5.2. Տնտեսական աճ և անկայունություն

Տնտեսական աճը (economic growth) տնտեսական զարգացման հիմնական չափանիշն է, որն իր արտահայտությունն է ստանում իրական ՀՆԱ-ի ավելացման մեջ (ինչպես բացարձակ, այնպես էլ բնակչության 1 շնչի հաշվով): Այն կարող է չափվել ֆիզիկական *(ֆիզիկական աճ)* և արժեքային *(արժեքային աճ)* արտահայտությամբ: Երկրորդ ցուցանիշն ավելի հաճախ է կիրառվում, չնայած ոչ միշտ է հնարավոր այն «մաքրել սղաճից»: Մակրոտնտեսական մակարդակով տնտեսական աճի դինամիկայի գլխավոր ցուցանիշներն են՝

1. իրական ՀԱԱ-ի, ՀՆԱ-ի, ԶԱԱ կամ ԱԵ-ի ծավալի աճը
2. բնակչության մեկ շնչի հաշվով ՀԱԱ-ի, ՀՆԱ-ի և ԱԵ-ի աճի տեմպերը
3. ամբողջությամբ վերցված արդյունաբերության և նրա հիմնական ճյուղերի աճի տեմպերը:

Սովորաբար, դինամիկայի հետազոտման համար կիրառում են տնտեսական աճի, աճի տեմպի և միջին տարեկան հավելաճի տեմպի գործակիցները: ***Աճի գործակիցը*** (X) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $X=I_1/I_0\%$, որտեղ I_1, I_0- հետազոտվող և բազային ժամանակահատվածների ցուցանիշներն են:

Օրինակ, [ՀՆԱ (2002) / ՀՆԱ (2001)] x 100

Իսկ տնտեսական աճի տեմպը հաշվարկելու համար (օրինակ, ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպը) կիրառում են հետևյալ բանաձևը.

Աճի տեմպ (տարեկան) $= I_1 - I_0 / I_0\%$:

Օրինակ, [ՀՆԱ (2002) - ՀՆԱ (2001) / ՀՆԱ (2001)] x 100:

Ընդ որում, $I_1 - I_0$ **- բացարձակ հավելաճն է:**

ՀՀ-ում ՀՆԱ-ի իրական աճը 1996թ. կազմել է 5.8%, 1997-ին՝ - 3.1%, 1998 թ.՝ 7.2%, 1999 թ.՝ - 3.3%, 2000 - 6.0%, 2001- 9.6%, 2002-ին - 12.9%:

2002թ. տնտեսական աճի վերջին տարիների համեմատ առավել բարձր մակարդակը վիճակագրական տվյալների համաձայն, պայմանավորված էր հիմնականում արդյունաբերական արտադրության և գյուղատնտեսության ծավալների աճով, ինչպես նաև շինարարության և ծառայությունների ոլորտների տնտեսական զգալի աշխուժացմամբ:

Իսկ ***միջին տարեկան հավելաճի տեմպը***՝ բոլոր տարիների համար *հավելաճի տեմպերի* (օրինակ՝ ՀՆԱ-ի հավելաճի տեմպերի) միջին երկրաչափականն է:

Օրինակ, եթե 10 տարում ՀՆԱ-ն աճել է 1%, ապա դա չի նշանակում, որ միջին տարեկան հավելաճի տեմպը այդ ժամանակահատվածում կազմել է 0.1%, այլ հաշվարկվում է բարդ տոկոսներով:

Այն կարող է հաշվարկվել հետևյալ բանաձևով՝ $Q_t = Q_0 (1 + \tau)^t$, որտեղ

Q_t – ՀՆԱ ծավալն է t – րդ տարում (վերջին տարում)

Q_0 _ ՀՆԱ ծավալն է բազային տարում

τ- հավելաճի տարեկան տեմպն է, այն հավասար է $\tau = \sqrt[t]{Q_t / Q_0} - 1$

Տնտեսական աճի վրա ազդում են մի շարք գործոններ: Տնտեսագիտության մեջ լայն տարածում է ստացել արտադրության երեք գործոնների տեսությունը, որի նախահայրը ժան Բատիստ Սեյն է: Նրա կարծիքով, արտադրանքի արժեքի ստեղծմանը մասնակցում են աշխատանքը, հողը և կապիտալը: Ավելի ուշ, արտադրական գործոնների հիմնավորումը ստացավ նոր մեկնաբանություն: Սովորաբար, դրանց են դասում.

- աշխատանքը
- հողը
- կապիտալը
- ձեռնարկատիրական ունակությունը:

Թվարկված գործոնները, հանդիսանալով նաև որպես տնտեսական ռեսուրսներ, անվանվում են աճի գործոններ, որոնք սերտորեն կապված և միահյուսված են: Դրանք կարելի է դասակարգել ըստ առանձին հատկանիշների կամ բաժանել խմբերի: Տնտեսական աճի վրա առաջին հերթին ազդում են *արտաքին և ներքին գործոնները* (տվյալ երկրի բնակլիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը, բնակչության աճն ու կրթական մակարդակը և այլն):

Տնտեսական աճը կարող է լինել նաև ***ինտենսիվ*** (որակական) և ***էքստենսիվ*** (քանակական):

Էքստենսիվ աճի գործոններից են՝

- ինվեստիցիաների ծավալի մեծացումը՝ գործող տեխնոլոգիայի մակարդակի պահպանման պայմաններում
- զբաղվածների թվի ավելացումը
- օգտագործվող հումքի, նյութի, վառելիքի և շրջանառու կապիտալի այլ տարրերի ծավալների աճը:

ինտենսիվ աճի գործոններից են՝

- ԳՏԱ-ի արագացումը
- աշխատողների կրթության և որակավորման բարձրացումը
- տնտեսական գործունեության ավելի լավ կազմակերպման հաշվին արդյունավետության բարձրացումը (ռեսուրսների ճիշտ բաշխումը, տնտեսումը արտադրության մասշտաբների վրա, քանի որ մեկ միավորի հաշվով ծախսերը կրճատվում են):

Եթե գերակշռում են աճի էքստենսիվ գործոնները, ապա գործ ունենք տնտեսության զարգացման էքստենսիվ տիպի, իսկ աճի ինտենսիվ գործոնների գերակշռության դեպքում՝ ինտենսիվ տիպի աճի հետ:

Տնտեսական աճի բազմաթիվ գործոնները բաժանում են նաև երկու խոշոր խմբի:

Առաջին խմբին են դասվում այն գործոնները, որոնք կապված են տնտեսության աճի ֆիզիկական հնարավորությունների հետ: Տնտեսագիտական գրականության մեջ դրանք անվանվում են *առաջարկի գործոններ*: Դրանցից են՝

1. բնական ռեսուրսների քանակը և որակը
2. աշխատանքային ռեսուրսների քանակը և որակը
3. հիմնական կապիտալի առկայությունը
4. տեխնոլոգիայի մակարդակը:

Երկրորդ խմբին են դասվում *պահանջարկի և բաշխման գործոնները*: Քանի որ ամբողջական պահանջարկն անհրաժեշտ է ընդլայնվող արտադրանքի ծավալի ապահովման և դրա ռացիոնալ օգտագործման, իսկ ճիշտ բաշխումը՝ առավելագույն քանակության օգտակար արտադրանք ստանալու համար, ապա այդ գործոնները թելադրում են տնտեսական աճի տեմպերը և համամասնությունները:

Բոլոր գործոնների փոխազդեցության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կարող է տալ արտադրական հզորությունների կորը (նկար 45):



Նկար 45. Տնտեսական աճն արտադրական հզորությունների սահմանի ընդլայնման դեպքում

Ընդհանրապես, մակրոէկոնոմիկային բնորոշ է երկու իրավիճակ՝ 1)*հավասարակշռություն* և 2) *անհավասարակշռություն (անկայունություն):*

Տնտեսական կայուն աճն ապահովվում է հավասարակշռության պայմաններում, իսկ անհավասարակշռության ժամանակ խախտվում են ազգային տնտեսությունում նորմալ կապերը և համամասնությունները: Վրա է հասնում տնտեսական ճգնաժամը: Այդ դեպքում կայուն հավասարակշռության վիճակից շեղվում են տնտեսության կարևորագույն պարամետրերը՝ արտադրության ծավալը, գների մակարդակը, բնակչության

զբաղվածությունը, շահույթի նորման, տոկոսի նորման և այլն: Հասնելով առավելագույն քանակական չափերի, այդ շեղումները կտրուկ ընդհատում են տնտեսական աճը, որին հաջորդում է ***ճգնաժամը*** (հուն. krisis - ելք, շրջադարձային կետ):

Տնտեսական ճգնաժամը հանգեցնում է տնտեսական համակարգում հավասարակշռության էական խախտմանը, որը շուկայական հարաբերություններին բնորոշ երևույթ է, հաճախ խզելով նորմալ տնտեսական կապերը և առաջ բերելով հսկայական կորուստներ: Ճգնաժամերի ամբողջ բազմազանությունը կարելի է դասակարգել երեք տարբեր հիմունքներով.

1. տնտեսական համակարգում հավասարակշռության խախտման մասշտաբներով.
- ընդհանուր (ընդգրկում է ամբողջ ազգային տնտեսությունը)
- մասնակի (տարածվում է տնտեսության առանձին ոլորտի վրա, օրինակ, ֆինանսական, դրամավարկային, արժութային և այլն)

2. տնտեսության մեջ հավասարակշռությունը խախտելու կանոնավորությամբ.
- պարբերական (ցիկլային)
- միջանկյալ (երբ ընդհատվում են ցիկլի ինչ-որ փուլում)
- անկանոն

3. վերարտադրության համամասնությունների խախտման բնույթով.
- ապրանքների գերարտադրության ճգնաժամ
- ապրանքների թերարտադրության ճգնաժամ:

Տնտեսագետներն առանձնահատուկ տեղ են հատկացնում պարբերական ճգնաժամին, որը ներառվում է տնտեսական ցիկլի մեջ: Դարասկզբի և ժամանակակից տնտեսական ցիկլերը էականորեն տարբերվում են միմյանցից: Այդ տարբերություններն արտահայտվում են տնտեսական հավասարակշռության խախտման աստիճանի, ցիկլի տարբեր փուլերի մասնատման, երկարատևության, ցիկլերի կարգավորման գործում պետության մասնակցության մեջ:

Դիտարկենք տնտեսական ցիկլը (այն հաճախ անվանվում է գործարար ցիկլ) դասական տեսանկյունով: Այն հստակ բաժանվում է 4 փուլի, որոնցից յուրաքանչյուրում նկատվում է արտադրության ծավալի, գների մակարդակի, աշխատողների զբաղվածության տարբեր դինամիկա: Այլ կերպ՝ փուլերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Ճգնաժամը՝ (krisis. հուն.- *ելք, շրջադարձային կետ*) ցիկլի ելակետային և գլխավոր փուլն է: Այն բնութագրվում է ապրանքների գերարտադրությամբ և իրացման դժվարությունների զգալի սրումով, ապրանքների գների անկումով, արտադրության ծավալի կտրուկ կրճատումով, առևտրական և արդյունաբերական ֆիրմաների զանգվածային սնանկացմամբ, գործազրկության աճով և աշխատավարձի արժեզրկմամբ, վարկային կապերի խախտմամբ, արժեթղթերի շուկայի քայքայումով, բաժնետոմսերի կուրսի իջեցմամբ, մրցակցային պայքարի սրումով, կապիտալի կենտրոնացման գործընթացի ուժեղացմամբ, բանկային տոկոսի նորմայի կտրուկ անկումով: Այլ կերպ ասած՝ հասարակության տնտեսական կյանքը կազմալուծվում է:

Լճացման (դեպրեսիա, լատ. depressio - իջեցում) փուլը, որը հաջորդում է ճգնաժամին և կարող է կրել բավականին երկարատև բնույթ: Այս փուլում դադարում է գերարտադրությունը, կայունանում է արտադրության մակարդակը, սակայն բավականին ցածր է լինում ճգնաժամի սկզբի համեմատ, պահպանվում է գործազրկության բարձր մակարդակը, կասեցվում է գների շեշտակի իջեցումը, իջնում է փոխատվական տոկոսի նորման, կայունացվում է ապրանքային պահուստը:

Աշխուժացման փուլում արտադրությունն ընդլայնվում է՝ հասնելով մինչճգնաժամային մակարդակին, կրճատվում է գործազրկությունը, նկատվում է աշխատավարձի և գների, դրամական կապիտալի պահանջարկի և փոխատվական տոկոսի նորմայի, ինչպես նաև նոր արդյունաբերական սարքավորումների պահանջարկի աճ:

Վերելք, այդ փուլում արտադրության ծավալը գերազանցում է մինչճգնաժամային առավելագույն մակարդակը, արագ աճում են ապրանքների պահանջարկը, հետևաբար և գները, գործազրկությունը կրճատվում է մինչև նվազագույն չափը, միաժամանակ բարձրանում է իրական աշխատավարձը, ավելանում է փոխատվական կապիտալի պահանջարկը, հետևաբար աճում է նաև բանկային տոկոսի նորման, ինչպես նաև արժեթղթերի կուրսը, կտրուկ բարձրանում է պահանջարկը գիտատեխնիկական առաջընթացն ապահովող արտադրանքի նկատմամբ, աճում են հումքային ռեսուրսները և դրանց գները: Այս փուլում ուժեղանում են անհամամասնությունները, որոնք սկսվում են ի հայտ գալ դեռ աշխուժացման փուլում և տնտեսությունն աստիճանաբար մոտենում է նոր ճգնաժամի:

Տնտեսական ճգնաժամերն ունեն երկու կողմ: Դրանցից մեկը *կործանարարն է*՝ կապված ժողովրդական տնտեսության մեջ ոչ նորմալ ձևավորված համամասնությունների հետ, իսկ մյուսը՝ *առողջարարական է*՝ կապված հիմնական կապիտալի նորացման հետ (ինչը թույլ է տալիս էժանացնելու արտադրանքի արտադրությունը, դարձնելու այն շահութաբեր և դուրս գալու արտադրության նոր, ավելի բարձր սահմանագիծ): Այսպիսով, կարելի է ասել, որ տնտեսական ցիկլի դասական տարբերակի ժամանակ գործում էր մակրէկոնոմիկայի ցիկլային զարգացման ինքնակարգավորվող մեխանիզմը (նկար 46):



Նկար 46. Տնտեսական աճ

Ժամանակակից ազգային տնտեսության ցիկլային զարգացմանը բնորոշ են որակապես նոր առանձն ահատկություններ, որոնք կապված են մակրոէկոնոմիկական մասշտաբի երկու գործոնների հետ: Նախ՝ ԳՏՀ-ի ազդեցության տակ ճգնաժամերի ընթացքը կատարելապես փոփոխվել է և առաջացել են նրա նոր ձևերը (օրինակ, կառուցվածքային): Երկրորդ, պետության ակտիվ միջամտությունը մակրոտնտեսական աճի ընթացքին (ճգնաժամերի կործանարար ներգործությունը մեղմացնելու և տնտեսական զարգացման առավել կայունացման հասնելու նպատակով): Ներկայումս գործարար ակտիվության ցիկլերը հաճախ ընթանում են առանց որոշ ավանդական փուլերի, զարգանում են ավելի համաչափ, ավելի քիչ անկման խորությամբ և ավելի քիչ վերելքի բարձրությամբ:

5.3. Զբաղվածություն և գործազրկություն: Դրանց դինամիկան Հայաստանի Հանրապետությունում

Տնտեսական տեսանկյունից լրիվ զբաղվածության հիմնախնդրի էությունը հասարակական մասշտաբով հանգում է մի կողմից՝ աշխատունակ բնակչության թվի, իսկ մյուս կողմից՝ նրա համար անհրաժեշտ աշխատատեղերի քանակի միջև հավասարակշռվածության հասնելու մեջ: Այդ համամասնության խախտումը բերում է աշխատատեղերի ավելցուկի առաջացմանը կամ կորստին (գործազրկությանը): Շուկայական տնտեսության մեջ գործազրկությունն անխուսափելի է, քանի որ տնտեսական զարգացումը կրում է ցիկլային բնույթ: Սակայն պետությունը կարող է ինչ-որ չափով խուսափել այդպիսի անհամամասնություններից բնակչության զբաղվածության կանխատեսման օգնությամբ: Այդ նպատակներով օգտագործվում է աշխատանքային ռեսուրսների պահանջմունքի և աշխատուժի թվաքանակի վիճակագրական հաշվետվությունը և մակրոտնտեսական կարգավորման այլ գործիքներ: Չնայած՝ աշխատանքային ռեսուրսների հասարակական պահանջմունքի ամենամանրակրկիտ հաշվարկն անգամ ի վիճակի չէ քանակապես ճշգրիտ որոշելու արտադրությունում այնպիսի բացառիկ բարդ սոցիալական գործոնի կիրառումը, ինչպիսին հանդիսանում է մարդկային գործոնը:

Զբաղվածության ժամանակակից տեսության հիմնադիրն է համարվում է Ջ. Քեյնսը, որն իր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատության մեջ կտրականապես մերժեց զբաղվածության տեսության դասական մոտեցումները: Ըստ այդ տեսության, գոյություն չունի լրիվ զբաղվածությունն ինքնակարգավորող ոչ մի մեխանիզմ: Տնտեսությունը կարող է լինել հավասարակշռված նաև գործազրկության զգալի մակարդակի և էական սղաճի ժամանակ: Լրիվ զբաղվածությունն ավելի շատ պատահական է, քան օրինաչափ: Ներքին գործոններն արտաքինների հետ մեկտեղ իրենց ազդեցությունն են թողնում տնտեսության անկայունության վրա:

Ջ. Քեյնսի կողմնակիցները բացառում են այն մեխանիզմը, որի վրա հիմնված է դասական պլատֆորմը՝ տոկոսադրույքի ավտոմատ կարգավորումն ու աշխատավարձի հարաբերակցությունը: Նրանք գտնում են, որ ներդրումները և խնայողությունները չեն համապատասխանում միմյանց և այդ պատճառով էլ կարող են տեղի ունենալ ընդհանուր արտադրանքի ծավալի, եկամտի, զբաղվածության և գների մակարդակի տատանումներ: Բացի այդ, արտադրված ապրանքների և ծառայությունների քանակն ու զբաղվածության մակարդակը գտնվում են ուղղակի կախվածության մեջ ընդհանուր կամ համախառն ծախսերի մակարդակից:

Քեյնսը առաջարկում էր իջեցնել հարկերը, տոկոսներն ըստ վարկերի և այլն, ինչպես նաև դրամավարկային ու ֆինանսական լծակներով խթանել լրացուցիչ տեղերի ստեղծումը: Սակայն դա չարդարացվեց ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, քանի որ հարկային տոկոսադրույքների իջեցումը խթանելով արտադրությունը ոչ միշտ է բերում զբաղվածության համապատասխան աճին, քանզի օգտագործվում է աշխատանք խնայող տեխնիկա:

Այժմ աշխատուժի շուկայում քաղաքականություն է վարվում ավելի շատ երկու հիմնական ուղղություններով՝

1. գործազրկության մակարդակի և երկարատևության կարգավորման
2. գործազրկությունից տուժածների սոցիալական պաշտպանվածության:

Այն իրականացվում է հիմնականում աշխատանքային բորսաների և սոցիալական ապահովագրության միջոցով: Եվրոպական 17 երկրներում գործում են ծրագրեր, որոնցով գործազուրկներին վճարվում են նպաստներ առավելագույն հնարավոր ժամանակով, սակայն պայմանով, որ նրանք պետք է բացեն իրենց սեփական (ընտանեկան) գործը, օրինակ, ծառայությունների ոլորտում: Ընդ որում, պետությունը նաև ֆինանսական և անվճար իրավաբանական խորհրդատվության օգնություն է ցուցաբերում:

Ժամանակակից պայմաններում աշխատանքային զբաղվածությունը հիմնվում է հետևյալ *սկզբունքների* վրա.

1. ազատ ընտրված զբաղվածություն
2. արդյունավետ զբաղվածություն
3. լրիվ զբաղվածություն
4. ոչ լրիվ (մասնակի) և կրկնակի զբաղվածություն
5. զբաղվածության օրենսդրական կարգավորում:

Որոշելու համար, թե պաշտոնապես ում կարելի է դասել զբաղվածների կամ գործազուրկների թվին, սկզբում նշենք, որ երկրի ամբողջ բնակչությունը բաժանվում է երկու մասի.

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության երկրի այն բնակիչները, որոնք չեն ներառվում աշխատուժի կազմի մեջ: Դրանք են՝

1. ուսումնական հաստատությունների ցերեկային բաժինների սովորողները և ուսանողները
2. կենսաթոշակառուները
3. տնային տնտեսությունում զբաղված անձինք (այդ թվում երեխաներ և հիվանդներ խնամող անձինք)
4. անձինք, որոնք աշխատելու անհրաժեշտություն չունեն
5. անձինք, որոնք գտնվում են մասնագիտացված հիմնարկություններում (գժանոց, ուղղիչ հիմնարկներ և այլն):

Տնտեսապես ակտիվ բնակչության (արևմտյան տնտեսագիտական գրականության մեջ՝ «հասարակության ամբողջական աշխատուժ») աշխատունակ քաղաքացիների այն մասն է, որը կարող է և ուզում է աշխատել, առաջարկում է իր աշխատուժը ապրանքների, ծառայությունների արտադրության համար: Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Մ_ա = \frac{Բ - Տ_{ոչ\ ակտիվ}}{Բ} \%,$$

որտեղ՝

Մ$_ա$ - տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակն է

Տ$_{ոչ\ ակտիվ}$ - տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը

Բ - բնակչության թիվը:

ՀՀ-ում 2002թ. այն կազմեց ամբողջ բնակչության 44% - ը կամ 1415.6 հազար մարդ:

Իր հերթին, տնտեսապես ակտիվ բնակչությունը բաժանվում է երկու խմբի.

*Ա. **Զբաղվածներ*** - 16 և բարձր տարեկան (ինչպես նաև փոքր հասակի) անձինք, որոնք ընդգրկված են տնտեսության և կառավարման տարբեր ոլորտներում, ստանում են աշխատավարձ կամ եկամուտ (զբաղվածության աստիճանը ՀՀ-ում միջազգային չափանիշներով բավականին ցածր է, զբաղվածները 2002թ. կազմել են տնտեսապես ակտիվ բնակչության 90.6% կամ 1281.9 հազար մարդ, ընդ որում զբաղված բնակչության միայն 75.6 % -ն ուներ մշտական աշխատանք, իսկ 12.5% - սեզոնային,11.0% - ժամանակավոր և 0.9%-ը՝ միանվագ աշխատանք):

*Բ. **Գործազուրկներ*** - 16 և բարձր տարեկան անձինք, որոնք զրկվել են աշխատանքից, որոնում և պատրաստ են աշխատել ինքնուրույն կամ զբաղվածության ծառայության ուղեգրով (գործազուրկները ՀՀ-ում 2002թ. կազմել են տնտեսապես ակտիվ բնակչության 9.4% - ը կամ 133.7 հազար մարդ):

Լրիվ զբաղվածության հասկացությունը ավելի ճիշտ բնորոշելու համար անհրաժեշտ է հասկանալ գործազրկության էությունը, նրա դինամիկան և տարբեր ձևերը:

Գործազրկությունը բնութագրում է այնպիսի իրավիճակ տնտեսությունում, երբ տվյալ ժամանակահատվածում աշխատանք չունեցող, բայց աշխատանք փնտրող, ընդունակ և աշխատել ցանկացող մարդկանց մի

մասը չի կարողանում իր մասնագիտությամբ աշխատանք գտնել կամ աշխատանքի տեղավորվել ընդհանրապես: Աշխատանք չունեցողները, որոնք աշխատանք չեն փնտրում, աշխատուժից դուրս են:

Գործազրկության մակարդակը (Մգ) կարելի է որոշել հետևյալ բանաձևով

$$Մ_գ = [(Տ_{ակ} - Ձ)/ Տ_{ակ}] \times 100, \text{ կամ } Մ_գ = (Գ / Տ_{ակ}) \times 100$$

որտեղ

$Մ_գ$ - գործազրկության մակարդակն է

$Տ_{ակ}$ - տնտեսապես ակտիվ բնակչության թիվը

Ձ - զբաղվածների թիվը

Գ - գործազուրկների թիվը:

Օրինակ, եթե գործազուրկների թիվը (Գ) հավասար է 6.701.000 մարդ, իսկ տնտեսապես ակտիվ բնակչության ($Տ_{ակ}$) թիվը՝ 121.669.000,ապա $Մ_գ$ կկազմի (6.701.000/121.669.000) x 100 = 5.5%:

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տվյալներով, գործազրկության մակարդակը համարյա բոլոր առաջադեմ երկրներում վերջին տարիներին ավելի բարձր էր, քան նախորդ տասնամյակներում՝ միջինում այն աճեց 3.1%՝ 60-ական թ., մինչև 4.8%՝ 70-ական թ., մինչև 8.2%՝ 80-ական թ., և մինչև 10% - 90-ական թ., չնայած որ 90-ական թ. մի շարք երկրներում նկատվում է որոշակի նվազում (օրինակ, 1992թ. մինչև 2001թ. այն համապատասխանաբար նվազել է ԱՄՆ–ում 7.4%-ից՝ 4.8%, Կանադայում 11.2%-ից՝ 7.2%, Մեծ Բրիտանիայում 9.8%-ից՝ 3.4%, Ֆրանսիայում 10.3%-ից՝ 8.8%, Դանիայում 11.2%-ից՝ 5.1%, Նիդեռլանդներում 5.3%-ից՝ 2.0%, Շվեցարիայում 3.0%՝ 1.9% և այլն)*: Գործազրկության նորմայի փոփոխությունն արդյունաբերապես զարգացած երկրներում բնութագրվում է հետևյալ տվյալներով (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Գործազրկության նորմայի փոփոխությունն (տոկոսներով) արդյունաբերապես զարգացած երկրներում

	1961-1970	1971-1980	1981-1990	1991-2000	2001
ԱՄՆ	4.6	4.8	7.5	5.1	4.8
Ճապոնիա	1.2	1.8	2.5	3.7	5.0
Արևմտյան Եվրոպա	2.7	4.9	8.6	7.4	7.2

Գործազրկության որոշակի մակարդակ հաշվվում է նորմալ, բնական կամ արդարացված: ***Գործազրկության բնական նորման*** տնտեսության մեջ առաջարկի և պահանջարկի տվյալ կառուցվածքի պայմաններում գործազրկության այնպիսի մակարդակ է, որը պահպանում է իրական աշխատավարձը և աշխատանքի արտադրողականության զրոյական հավելաճի պայմաններում անփոփոխ է պահում գների մակարդակը:

Տնտեսագիտական գրականության մեջ նշվում են գործազրկության տարբեր տիպեր և դրանց դրսևորման տարբեր ձևեր, որոնք շատ հաճախ խմբավորվում են ըստ առանձին հատկանիշների: Մասնավորապես, նշվում են՝ ֆրիկցիոն, կամավոր, հարկադրական, տեխնոլոգիական, կառուցվածքային, տարածաշրջանային, թաքնված, սեզոնային, լճացած, ցիկլային (պարբերաշրջանային) և այլ ձևերը:

Չտրվելով դրանց մանրամասն բացատրությանը, նշենք, որ աշխատուժի ժամանակակից շուկայի կառուցվածքը տարբերակելիս տնտեսագետներն ավելի հաճախ առանձնացնում են երեք տեսակի գործազրկություն՝ ֆրիկցիոն, կառուցվածքային և պարբերաշրջանային:

Ֆրիկցիոն գործազրկությունը՝ գործազրկության շատ թե քիչ անխուսափելի ձևն է, որն առկա է շուկայական տնտեսության մեջ այն դեպքերում, երբ.

- մարդիկ փոխում են իրենց աշխատատեղը կամ կամավոր, կամ հարկադրաբար
- մարդիկ ժամանակավորապես հեռացվում են սեզոնային աշխատանքներից
- աշխատանքային ռեսուրսների նոր ներկայացուցիչներ փնտրում են իրենց նախընտրելի աշխատանքը:

Չնայած կոնկրետ մարդիկ, որոնք մնացել են առանց աշխատանքի այս կամ այն պատճառով, փոխում են միմյանց, գործազրկության այս տիպը մնում է, համարվում է նույնիսկ ցանկալի, քանի որ այն նպաստում է նրանց ընդունակությունների և ջանքերի ավելի լավ և շահավետ կիրառմանը, իսկ դա, իր հերթին, նշանակում է աշխատանքային ռեսուրսների ավելի ռացիոնալ բաշխում և, հետևապես, համախառն ազգային արդյունքի ավելի իրական ծավալ: Սովորաբար ֆրիկցիոն գործազրկությունը ընդգրկում է աշխատուժի 2-3% -ը:

Կառուցվածքային գործազրկությունը կապված է ազգային տնտսության մեջ տեղ գտած կառուցվածքային տեղաշարժերի հետ, որոնք ազդում են տնտեսության կառուցվածքի, հետևաբար, և առկա աշխատատեղերի տիպի և տեղաբաշխման վրա: Դրանք, իրենց հերթին, փոփոխում են աշխատուժի ընդհանուր պահանջարկի կառուցվածքը: Արդյունքում որոշ տիպի մասնագիտությունների պահանջարկը քչանում է կամ ընդհանրապես վերանում, իսկ որոշ մասնագիտություններինն, ընդհակառակը, առաջանում կամ ավելանում, ժամանակ պահանջելով վերապատրաստվելու և վերապրոֆիլավորվելու համար: Օրինակ, ՀՀ-ում միայն 1997թ. իր աշխատատեղը փոխել է զբաղվածների 57.6 % -ը: Եթե ֆրիկցիոն գործազրկությունն ունի կարճատև բնույթ, ապա կառուցվածքայինն ավելի երկարատև է և այդ պատճառով էլ համարվում է ավելի լուրջ: Կառուցվածքային գործազրկության տարատեսակ է *տեխնոլոգիական գործազրկությունը,* որը կապված է աշխատանք խնայող նոր սարքավորման ներդրման հետ, հատկապես ինֆորմացիոն տեխնիկայի (օրինակ, համակարգիչների ներդրումը ծառայողական գրասենյակներում, մանրածախ առևտրում):

Պարբերաշրջանային ցիկլային գործազրկությունը կապված է տնտեսական ակտիվության փոփոխությունների հետ: Տնտեսական անկման ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների վրա ամբողջական պահանջարկն ընկնում է, ինչը և պայմանավորում է գործազրկության աճ:

Եթե ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկություններն անխուսափելի են, ապա «լրիվ զբաղվածությունը» կազմում է աշխատուժի 100%-ից քիչ (94-95%): Այսինքն՝ երբ խոսում ենք գործազրկության մակարդակի մասին լրիվ զբաղվածության պայմաններում, ապա հասկանում ենք, որ այն հավասար է ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունների գումարին կամ էլ գործազրկության բնական մակարդակին (5-6%), որին հասնում են այն դեպքում, երբ ցիկլային ճգնաժամը հավասար է զրոյի:

Ազգային արդյունքի իրական ծավալը, որը կապված է գործազրկության նորմալ մակարդակի հետ, կոչվում է *տնտեսության արտադրական պոտենցիալ:* Դա արտադրանքի այն ծավալն է, որը տնտեսությունն ի վիճակի է արտադրել ռեսուրսների «լրիվ օգտագործման» պայմաններում: ՀՆԱ-ի պոտենցիալ (բնական) մակարդակը այն մակարդակն է, որին կարելի է հասնել լրիվ զբաղվածության և ռեսուրսների առավել բեռնվածության պայմաններում:

Քանի որ զբաղվածները մասնակցում են ապրանքների և ծառայությունների արտադրությանը, իսկ գործազուրկները՝ ոչ, ապա կարելի է ենթադրել, որ գործազրկության մակարդակի ավելացումը պետք է զուգորդվի ՀԱԱ-ի իրական ծավալի իջեցմամբ: Այդ փոխկապվածությունը ստացել է Օքնի օրենք անվանումը ամերիկացի տնտեսագետ Արթուր Օքնի պատվին (Արթուր Օքնը 60-ական թվականներին ղեկավարել է ԱՄՆ պրեզիդենտին կից Տնտեսական Խորհրդատուների Խորհուրդը), որն առաջին անգամ դիտարկեց այն:

Օքնի օրենքը պնդում է, որ եթե ՀՆԱ-ն ներուժային ՀՆԱ-ի նկատմամբ նվազում է երկու տոկոսով, ապա գործազրկությունն աճում է մեկ տոկոսով: Օրինակ, եթե ՀՆԱ-ն իր ներուժի 100 տոկոսից հասնում է ներուժի 98 տոկոսի, ապա այդ գործազրկությունն աճում է մեկ տոկոսով, ասենք 6%-ից հասնելով 7-ի: Ներուժային ՀՆԱ-ի և փաստացի ՀՆԱ-ի տարբերությունը ցույց է տալիս ՀՆԱ-ի հետ մնալը իր պոտենցիալից (նկար 47):

Նկար 47.



Գործազրկության մակարդակի դինամիկան (%-ով) (նկարի յուրաքանչյուր կետ համապատասխանում է մեկ դիտարկման արդյունքին)

Նկարից երևում է, որ գործազրկության ավելացումը կապված է ՀԱԱ-ի իրական ծավալի իջեցման հետ: Ընդ որում, երբ գործազրկության մակարդակն անփոփոխ է, գոյություն ունի օրինաչափություն, ըստ որի՝ ՀՆԱ-ի իրական ծավալի աճի տեմպը, որը պայմանավորված է բնակչության աճով, կապիտալի կուտակմամբ և ԳՏՀ-ով, կազմում է 2.5% (ավելի ուշ հետազոտություններում 2.8-3%): Եթե ՀՆԱ-ի իրական ծավալի աճի տեմպը մեծ է 2.5%-ից, ապա գործազրկության մակարդակը կնվազի, այս դեպքում ՀՆԱ-ի աճի տեմպի յուրաքանչյուր 1% -ի ավելացումը կհանգեցնի գործազրկության մակարդակի 0.4% իջեցմանը: Իսկ եթե ՀՆԱ-ի իրական ծավալի աճի տեմպը փոքր է 2.5%-ից, ապա գործազրկության մակարդակը կաճի և ՀՆԱ-ի աճի տեմպի իջեցումը ամեն 1%, կբերի գործազրկության մակարդակի 0.4% աճին:

$$\Delta Մ_գ = (-0,4) \times (\Delta ՀՆԱ / ՀՆԱ \times 100 - 2,5\%)$$

որտեղ

Δ Մ$_գ$ - գործազրկության մակարդակի աճն է

Δ ՀՆԱ - համախառն ներքին արդյունքի աճն է

Օրինակ, եթե գործազրկության փաստացի մակարդակը 10% է, իսկ գործազրկության բնական մակարդակը՝ 6% է, ապա կառավարությունը կարող է որոշում ընդունել ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպը հասցնել 5%-ի: Այս դեպքում յուրաքանչյուր տարի նվազեցնելով 1%, 4 տարում գործազրկության նորման կառավարությունը կարող է հասցնել գործազրկության բնական մակարդակի:

Յուրաքանչյուր երկրում տարբեր ժամանակաշրջաններում գործում է փոխկապված գործոնների համակարգ, որն ազդում է ***աշխատանքի շուկայի*** վրա: Այդ գործոնների՝ պարբերաշրջանների ճգնաժամերի խտությունը, կապիտալ ներդրումների մակարդակը և կառուցվածքը, ճյուղային համամասնությունների փոփոխությունները, զբաղվածության պետական կարգավորման քաղաքականությունը և այլն, ազդեցության ներքո գործազրկության մակարդակը կարող է կայունանալ կամ վատթարանալ: Օրինակ, ԱՄՆ էկոնոմիկայում 1987թ. «ռեյգոնոմիկա» քաղաքականության հետևանքով ստեղծվեց 3.1 մլն նոր աշխատատեղ, իսկ Արևմտյան Եվրոպայի 6 երկրներում, որոնց բնակչությունը համադրելի է ԱՄՆ-ի հետ, այդ ժամանակ ընդհամենը 700 հազար աշխատատեղ:

Մեր հանրապետությունում մինչև 1990թ. ապահովվել է բնակչության լրիվ զբաղվածությունը: Սակայն շուկայական տնտեսության անցման շրջանում, տնտեսության կտրուկ անկման հետևանքով համատարած գործազրկությունը դարձավ սոցիալական ամենասուր չարիք: Ձեռնարկությունների արտադրական կարողությունների օգտագործումը իջավ մինչև 20-25 %, առաջացավ մեծ թաքնված գործազրկություն: Փորձագետների գնահատականներով, հանրապետության ակտիվ բնակչության գրեթե 30%-ն արտագաղթեց և նույնքանն էլ հայտնվեց գործազուրկների բանակում:

2002թ. ՀՀ տնտեսությունում պաշտոնապես գրանցված գործազուրկները կազմել են տնտեսապես ակտիվ բնակչության 9.4%, 2001թ. համեմատությամբ նվազելով 0.9%-ով: Աշխատանքի միջազգային կազմակերպման (ԱՄԿ) տվյալներով, գործազրկության մակարդակը այդ ժամանակահատվածում նույնպես նվազել է 32.8%-ից մինչև 31.4%: Գործազրկության մակարդակը բարձր է հատկապես կրթության ու բժշկության ոլորտում: Զբաղվածության բաշխումը փոխվել է այն ճյուղերի օգտին, որտեղ բարձր է գործարար ակտիվությունը՝ գյուղատնտեսություն, առևտուր, հասարակական սնունդ, միջնորդական և ֆինանսական գործունեություն: Նկատվում է աշխատուժի հոսք պետական հատվածից մասնավոր՝ կապված փոքր և միջին ձեռնարկությունների սեփականաշնորհումից հետո աշխատատեղերի ավելացմամբ: Սեփականաշնորհման հետևանքով տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվաքանակի 53.4%-ը ներգրավված է մասնավոր հատվածում*:

Չնայած պաշտոնական վիճակագրությունն արտացոլում է աշխատանքի շուկայի միայն մի փոքր մասը, գրաֆիկորեն զբաղվածների, աշխատուժի և գործազուրկների թիվը ՀՀ-ում կարելի է պատկերել հետևյալ կերպ (նկար 48):



Նկար 48. Աշխատուժի շուկան ՀՀ -ում

Սովորաբար գործազրկության մակարդակի աճը տագնապալի ահազանգ է, որի դեմ պետք է մշակել պետական տնտեսական քաղաքականություն: Գործազրկության սոցիալական հետևանքները բազմազան են: Այդ պատճառով էլ շուկայական տնտեսությամբ երկրներում գոյություն ունեն գործազրկությունն ապահովագրելու հատուկ համակարգեր: Օրինակ, ԱՄՆ-ում ձեռնարկատերերի և պետության հաշվին բանվորների մեծ մասի համար կիրառվում է գործազրկության հարկադիր ապահովագրում ազգային մասշտաբով: Ընդհանուր առմամբ, գործազուրկներին նպաստ տրամադրելու մեխանիզմը ԱՄՆ-ում գործում է 30-ական թվականներից: Ֆինանսավորվում է այն հիմնականում աշխատողների աշխատավարձից և ձեռնարկատերերի մուծումներից: Շատ նահանգներում այն կազմում է գործազուրկի նախկինում ստացած աշխատավարձի (չհաշված լրացուցիչ եկամուտները՝ վճարովի արձակուրդները և այլն) կեսից քիչ մասը: Ընդ որում, նպաստների վճարման ժամկետը 1983թ-ից սահմանափակված է 39 շաբաթով, և այն ստանալու համար գործազուրկները պետք է նախկինում երկարատև և կայուն աշխատանք ունեցած լինեն: Նպաստ ստացող գործազուրկների թիվը նրանց ընդհանուր թվում ԱՄՆ-ում իջավ 75%՝ 70-ական թ. մինչև 32% 90-ականներին:

Հայաստանի Հանրապետությունում չնայած պաշտոնապես գրանցված գործազուրկների թվին, դեռ առկա է թաքնված գործազրկության երևույթը՝ կապված մի շարք ձեռնարկություններում հարկադիր պարապուրդների, ոչ լրիվ զբաղվածության և գործազրկության ցածր նպաստների հետևանքով զբաղվածության գործակալություններում չգրանցվելու հետ: Հաշվի առնելով, որ գործազրկության նպաստները նշանակվում են 5-10 ամսով (վճարվում են 5 տարուց ավելին աշխատանքային ստաժ ունեցողներին և պետք է ավելացվեն 1 ամսով

յուրաքանչյուր 5 տարվա համար, սակայն չեն կարող գերազանցել 12 ամսից) և միջին ամսական նպաստը այնքան չնչին է, որ պաշտոնապես գրանցված գործազուրկների միայն 10-25 % -ն է գերադասում ստանալ այդ նպաստը:

Ակներև է, որ զբաղվածության պետական ծառայություններ դիմելու դրդապատճառները թույլ են և հետևաբար պաշտոնական վիճակագրությունն ի զորու է արտացոլելու աշխատանքի շուկայի իրական վիճակի միայն աղոտ պատկերը: Չնայած այս ամենին, ուրվագծվում են որոշակի կարևոր միտումներ:

2002 թվականին, նախորդ երեք տարիների հետ համեմատած, դրական տեղաշարժեր են նկատվել զբաղվածության ոլորտում: Ինչպես արդեն նշվել է, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմել է 133.7 հազար մարդ՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով մոտ 10%-ով, որի արդյունքում գործազրկության մակարդակը հասավ 9.4%-ի, նախորդ տարվա 10.3%-ի դիմաց: Վերջին տասը տարիների գործազրկության մակարդակը ՀՀ-ում կարելի է պատկերել հետևյալ կերպ (նկար 49):



Նկար 49. Գործազրկության մակարդակի դինամիկան ՀՀ-ում (%.)

Ընդ որում, պաշտոնապես գրանցված գործազուրկների գերակշռող մասն (37.4%) ունի միջնակարգ կրթություն և կեսից ավելին 31-50 տարեկան է, խիստ բարձր է կանանց տեսակարար կշիռը (մոտ 70 %):

2002թ. ընթացքում գրանցված բարձր տնտեսական աճին զուգընթաց բարելավվեց նաև աշխատանքի շուկայի իրավիճակը. նախորդ տարվա համեմատ գործազրկության մակարդակի նվազման պայմաններում 10.2%-ով աճել է զբաղվածների միջին ամսական աշխատավարձը և կազմել է 26410 դրամ: Ընդ որում, բյուջետային հիմնարկների աշխատողների միջին ամսական աշխատավարձը կազմել է 15948 դրամ, աճելով 9.1%-ով, իսկ ոչ բյուջետային հիմնարկներինը՝ 35847 դրամ, աճելով համապատասխանաբար 12.8%-ով:

Աշխատանքի շուկայի գործունեությունը կարելի է պատկերել նաև աշխատուժի շարժման հոսքերի ձևով (նկար 50):



Նկար 50. Աշխատուժի հոսքեր

5.4. Դրամը և գնաճը: Գնաճի դինամիկան Հայաստանի Հանրապետությունում

Ժամանակակից տնտեսության անկայունությունն արտահայտվում է դրամական շրջանառության ոլորտի քրոնիկ «հիվանդության»՝ չդադարող գնաճի մեջ: Այդ հիվանդության հիմնական պատճառը դրամական շրջանառության կայունությունն ապահովող և ամբողջ ազգային տնտեսությանը կենսական հզոր ուժ տվող մակրոտնտեսական հավասարակշռության խախտումն է:

Մինչև դրամական շրջանառության կայունության բովանդակությունն ուսումնասիրելը, նախ պարզենք դրամի էությունը և նրա գործառույթները (ֆունկցիաները):

Դրամը (փողը) (money, լատ. moneta) - հատուկ ապրանք է, որի ընդհանրական համարժեքի դերի կատարումը ստացել է օբյեկտիվ հասարակական հաստատում, և որը ձեռք է բերել համընդհանուր նշանակություն: Այն բոլոր ապրանքների արժեքների հանրաճանաչ ձև է, ծառայում է որպես հանրորեն ընդունված փոխանակման միջոց ու հանդես է գալիս տարբեր ձևերով:

Դրամը վաղուց ծանոթ է մարդկանց: Տնտեսագետները պնդում են, որ այն ծագել է ավելի քան երեք հազար տարի առաջ: Այդ ժամանակահատվածում նա անցել է չորս փուլ, որոնց էլ համապատասխանում են փողի տարբեր ձևերը՝

1. Ապրանքային փող – ձուլվածք (մինչև VII դարը մ.թ.ա.)
2. Մետաղադրամ – ստակ (VII դարը մ.թ.ա. մինչև XIX դարը մ.թ.)
3. Թղթադրամ- բանկային տոմս – բանկային ավանդ(XIXդ.- XX դ.),
4. Էլեկտրոնային փող (XX դ. կեսերից):

Դրամի հիմնական բնորոշ հատկություններից են բարձր իրացվելիությունը, հեշտությամբ ճանաչելը, որակական համասեռությունը, բաժանելիությունը, պահպանելիությունը և փոքր ծավալի համեմատ բարձր արժեքը: Ժամանակի ընթացքում դրամի դերը համարյա ամենուրեք ամրացավ ազնիվ մետաղներին, սակայն արծաթը դադարեց որպես դրամ ծառայել դեռևս 19-րդ դարի վերջերին, իսկ ոսկին՝ 20-րդ դարի կեսերին: Ազնիվ մետաղների՝ մասնավորապես ոսկու *դրամազրկումը* (որպես վճարամիջոցի շրջանառությունից դուրս հանելը, նրանց կողմից կատարվող դրամի գործառույթների կորուստը, ինչպես նաև որպես դրամական միջոցներ դրանց օգտագործման կրճատումը) կապված էր վարկային դրամի, բանկային տոմսերի (բանկնոտների), անկանխիկ դրամի, չեկերի լայն կիրառման հետ: 1978թ. ապրիլի 1-ից ոսկին բացառվեց Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ-ի) և այդ կազմակերպության անդամների միջև հաշվարկներից:

Ամենից լավ դրամի էությունը արտահայտվում է նրա գործառույթներում (ֆունկցիաներում): Որոշ տնտեսագետներ գտնում են, որ փողն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ արժեչափի, շրջանառության կամ փոխանակման միջոցի և կուտակման կամ խնայողության միջոցի (Կ.Ռ.Մակկոնել, Ս.Լ.Բրյու,Գ.Ի.Ռուզավին), մյուսները՝ չորս ավելացնելով վճարման միջոցի գործառույթը (Ա.Ս.Բուլատով, Մ.Ն.Չեպուրին), իսկ որոշ տնտեսագետներ (օրինակ, Ե.Ֆ.Բորիսով, Ա.Ֆ.Շիշկին), պաշտպանում են մարքսիստական տեսակետը, արդեն թվարկածներին ավելացնելով նաև համաշխարհային փողի գործառույթը:

Արժեչափի գործառույթն արտահայտում է ապրանքների արժեքների մեծության քանակական կողմը գների մեխանիզմի միջոցով: Այն որոշվում է *գների մասշտաբի* հիման վրա, որը սահմանում է պետությունը, ցույց տալով, թե քանի գրամ ոսկի է պարունակում դրամական մեկ միավորը: Այս գործառույթը հնարավորություն է տալիս ապրանքները և այլ ակտիվները գնահատել երկրի դրամական միավորներով:

Շրջանառության կամ փոխանակման միջոցի գործառույթում դրամը կատարում է ապրանքների փոխանակման միջնորդի դեր: Որպես փոխանակման միջոց այն հնարավոր է դարձնում բարտերային փոխանակության անհարմարությունից խուսափումը: Դրամը ազատ կատարում է շրջանառության միջոցի գործառույթ, ընդունվում է մյուս իրերի փոխարեն: Օգտագործվում է դրանց առուծախի ժամանակ որպես փոխանակման միջոց:

Կուտակման կամ խնայողության միջոցի գործառույթը փողը կատարում է այն դեպքում, երբ շուկայական տնտեսության սուբյեկտը այս կամ այն ապրանքի կամ ծառայության վաճառքից հետո ստացած գումարը որոշակի ժամանակահատվածում պահպանում է տանը կամ խնայբանկում:

Վճարման միջոցի գործառույթն իրականացվում է ապրանքների ապառիկ վաճառքի, ինչպես նաև այլ պարտավորությունների մարման ժամանակ (օրինակ, դրամական փոխատվությունների վերադարձի, հողի վարձակալական վճարի մուծման, հարկերի վճարման ժամանակ): Քանի որ դրամը օրինական վճարամիջոց է, այն օգտագործվում է նաև փոխառությունների, վարկերի և ներդրումային գործառնությունների համար:

Յուրաքանչյուր երկրի ***համախառն դրամական զանգվածը*** (gross money supply)՝ շրջանառության մեջ կանխիկ դրամանիշերի (թղթադրամներ, բանկային և գանձապետական տոմսեր և մետաղադրամներ), բանկերում ավանդների, բանկային հաշիվներում միջոցների և այլ անպայման դրամական պարտավորությունների ամբողջությունն է գործարքների կատարման և տնտեսության մեջ ներդրումներ կատարելու համար:

Դրամական զանգվածն (money stock, money supply) ընդգրկում է բանկային համակարգից դուրս շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամը և ներքին տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում (առանց կենտրոնական բանկում Ծրագրերի իրագործման գրասենյակների (ԾԻԳ) իջոցների, որոնք զտված են Կառավարության նկատմամբ զուտ պահանջներից և առանց կուտակված տոկոսների): ՀՀ-ում 2003թ. սկզբին հունվարի 1-ի դրությամբ դրամային զանգվածը կազմել է 211884 մլն դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 34%-ով:

Դրամական զանգվածի կառուցվածքում առանձնացվում են փողի ամբողջական, խմբավորված տեսակներ՝ փողի բաղադրիչներ կամ *դրամական ագրեգատներ* (money aggregate), որոնք դրամական զանգվածի կառուցվածքի և ծավալի ցուցանիշ են: Դրանք ժամանակակից դրամական միջոցների մասերն են կամ տեսակները, որոնք միմյանցից տարբերվում են իրացվելիության աստիճանով, այսինքն՝ կանխիկ դրամի արագ վերածվելու հնարավորությամբ և օգտագործվում են շրջանառության համար միավորելով տարբեր պարտքային պարտավորություններ, կախված նրանց իրացվելիության աստիճանից և բնույթից: Այդ բաղադրիչների հարցում նույնպես տնտեսագետները միակարծիք չեն: Նրանց մի մասը տարբերում է երկու ագրեգատ M_1 և M_2 (Փ.Ա.Սամյուելսոն, Ու. Դ.Նորդհաուս, Մ. Ն. Չեպուրին, Ե.Ա.Կիսելյով և ուրիշներ), իսկ մյուսները՝ երեք և ավելի M_0, M_1, M_2, M_3 և L (օրինակ, Կ.Ռ.Մակկոնել, Ս.Լ.Բրյու, Ջ.Դ. Գորտնի, Ե.Ֆ.Բորիսով)**:

Այսպիսով, տարբեր երկրներում դրամական զանգվածը ներկայացվում է տարբեր բաղադրիչներով և առանձնացվում են տարբեր կազմով դրամական ագրեգատներ: Ամենից հաճախ օգտագործվում են հետևյալ դրամական ագրեգատները՝ M_0 (կանխիկ դրամ), M_1 (կանխիկ դրամ, չեկեր, ցպահանջ ավանդներ), M_2 (կանխիկ դրամ, չեկեր, ցպահանջ ավանդներ և ոչ մեծ ժամկետային ավանդներ), M_3 (կանխիկ դրամ, չեկեր և բոլոր ավանդները), L (կանխիկ դրամ, չեկեր, բոլոր ավանդները, արժեթղթեր):

Արժույթի միջազգային հիմնադրամը *(ԱՄՀ)* բոլոր երկրների համար հաշվարկում է M_1 ցուցանիշը (որին անվանում են նաև գործարքային փող)՝ նեղ իմաստով դրամ (շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամ, չեկեր, ցպահանջ ավանդներ) և ավելի լայն ցուցանիշներ M_2, M_3, որոնք ընդգրկում է M_1–ի բոլոր բաղադրիչները, ցպահանջ, ժամկետային և խնայողական բանկային հաշիվները, բարձր իրացվելի ֆինանսական գործիքները, որոնք շրջանառվում են շուկայում:

M_1 – ում *կանխիկ դրամը* (M_0, սովորաբար 2-3% մետաղադրամ և մոտ 25% թղթադրամ) կազմում է մոտավորապես նրա $^1/_4$ մասը, իսկ ***ցպահանջ վճարագրային (չեկային) ավանդները***, բանկերի ընթացիկ հաշիվներում գտնվող դրամական միջոցները, ճանապարհային չեկերը (վճարագիր) նրա ընդհանուր քանակի $^3/_4$-ը: Դրանք առևտրային բանկերում, խնայողական դրամարկղներում և այլ դրամարկղային ձեռնարկություններում գտնվող ավանդներն են, որոնք կարելի է դուրս գրել չեկերի միջոցով առաջին պահանջի դեպքում: Ավանդատերերի ընթացիկ հաշիվները նույնպես համարվում են առևտրային բանկերի և խնայդրամարկղների պարտավորությունները:

ճանապարհային չեկը (traveler's check, traveler's cheque) վճարային փաստաթուղթ է, ճանապարհորդի վճարագիր, որը նա վերցնում է իր երկրում և կարող է կանխիկացնել արտասահմանում: Ճանապարհային չեկն իրենից ներկայացնում է դրամական պարտավորություն՝ նշանակված գումարը վճարել չեկի տիրոջը, որի ստորագրության նմուշը դրվում է ճանապարհային չեկի վրա դրա վաճառքի պահին: Վճարման ներկայացնելիս չեկի տերը պետք է կրկին ստորագրի չեկի վրա:

Այսպիսով M_1-ը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ՝

$$M_1 = \text{շրջանառության մեջ գտնվող արժույթ} + \text{վճարագրային ավանդներ (ցպահանջ և տոկոսաբեր)} + \text{ճանապարհային վճարագրեր (չեկեր)}$$

M_2 - իրենից ներկայացնում ոչ չեկային խնայողական հաշիվները, կարճաժամկետ ժամկետային ավանդները և կարճաժամկետ պետական արժեթղթերը: Այն ներառում է M_1-ի բոլոր տեսակները՝ գումարած խնայհաշիվների դեպոզիտները և կարճաժամկետ ավանդները (փոքր ժամկետային կամ 100 հազար դոլարը չգերազանցող): Այս ագրեգատը կազմում է բոլոր փողերի $^3/_4$-ից ավելին:

$$M_2 = M_1 + \text{ոչ չեկային խնայողական հաշիվներ} + \text{կարճաժամկետ ժամկետային ավանդներ և պետական արժեթղթեր}$$

M_3- ներառում է M_2-ի բոլոր տեսակները՝ գումարած խոշոր ժամկետային ներդրումները (100 հազար դոլար և ավելին), որոնցով հիմնականում տնօրինում են ձեռնարկությունները դեպոզիտային սերտիֆիկատների ձևով:

$$M_3 = M_2 + \text{խոշոր ժամկետային ավանդներ}$$

ՀՀ-ում վերջին տարիների փողի զանգվածի բաղադրիչների դինամիկան պատկերված է նկար 51 -ում:



Նկար 51. Փողի զանգվածի ագրեգատների դինամիկան ՀՀ-ում 1997-2003թթ. (*2003՝ ծրագր.)

Գծապատկերից երևում է, որ փողի զանգվածի բոլոր բաղադրիչները աճի միտում են ունեցել, որի հետևանքով փողի զանգվածն աճել է՝ 2003թ. կազմելով 238.636 մլն.դրամ:

Անհրաժեշտ է տարբերել ***դրամական բազա*** (monetaey base) հասկացությունը, որը դրամական զանգվածի ցուցանիշ է և ներառում է ՀՀ կենտրոնական բանկից դուրս շրջանառության մեջ կանխիկ դրամական միջոցներն ու ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ոչ բանկային կազմակերպությունների ավանդները: Այլ արտահայտությամբ, դրամական բազան զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների գումարն է: Այն հանդիսանում է դրամական զանգվածի բոլոր ցուցանիշների հիմքը, որի վերահսկողությունը ցանկացած կենտրոնական բանկի կարևոր գործառույթն է: Դրամական բազայի միջոցով չափվում են բանկային պահուստները և կանխիկը, որոնք պոտենցիալ դրամի ստեղծման հիմք են ծառայում: Դրան երբեմն անվանում են նաև մեծ վստահության դրամ: ՀՀ ԿԲ-ի տվյալներով 2003թ. հունվարի 1-ի դրությամբ դրամական բազան կազմել է 111273 մլն դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 38.5%-ով:

Դրամի անընդհատ շարժը շրջանառության և վճարման ոլորտում կանխիկ և անկանխիկ ձևերով, որը պայմանավորված և դրա՝ որպես աշխատանքի, ծառայությունների վճարման, ապրանքների գնման, վճարումների և հաշվարկների իրականացման, թոշակների տրամադրման, պարտքերի վերադարձման միջոց օգտագործմամբ, կոչվում է *դրամաշրջանառություն* (currency circulation): Դրամաշրջանառությունը սպասարկվում է թղթադրամներով (բանկնոտներով), մետաղադրամներով, չեկերով, վարկային (կրեդիտային) քարտերով և այլն: Գոյություն ունեն դրամաշրջանառության երկու տեսակ: Առաջինը կանխիկ դրամի, այսինքն՝ դրամանիշերի (բանկնոտների և մետաղադրամի) շրջանառությունն է: Այս դեպքում որպես վճարամիջոց հանդես են գալիս իրական դրամանիշերը, որոնք մի սուբյեկտի կողմից փոխանցվում են մյուսին, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում (օրինակ՝ տուգանքները և տույժերը): Երկրորդն անկանխիկ դրամաշրջանառությունն է: Այն դրսևորվում է մի սուբյեկտի բանկային հաշվից որոշակի դրամական գումար դուրս գրելու և այն տվյալ բանկում կամ այլ բանկում մեկ այլ սուբյեկտի հաշվին հաշվեգրելու կամ այլ ձևով, որի դեպքում կանխիկ դրամական միջոցները որպես վճարամիջոց բացակայում են: Հաշվարկների կանխիկ կամ անկանխիկ ձևի ընտրության իրավունքը պատկանում է շահագրգիռ կազմակերպություններին, քաղաքացիներին: ՀՀ բանկային օրենսդրության համաձայն, ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից մեկը Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումն է, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը:

Դրամական շրջանառության կայունությունը երկու մակրոտնտեսական հոսքերի (ապրանքների, ծառայությունների և դրամական հոսքի) հավասարումն է: Ամերիկացի տնտեսագետ Ի. Ֆիշերը հետևյալ բանաձևով արտահայտեց այդ հավասարումը, որն անվանեց դրամաշրջանառության օրենք՝

$$M \times V = P \times Q$$

որտեղ՝

M-ն դրամի առաջարկն է (կամ շրջանառության մեջ նրա զանգվածը)

V-ն դրամի շրջանառության արագությունն է (որը ցույց է տալիս շրջանառության և վճարման միջոց օգտագործվող դրամական միավորի լրիվ պտույտների թիվը որոշակի ժամանակաշրջանի, սովորաբար՝ մեկ տարվա ընթացքում)

P-ն նման տիպիկ գործարքի միջին գինն է

Q-ն իրացվող ապրանքների և ծառայությունների քանակը:

Դրամաշրջանառության օրենքը (currency circulation law)– տնտեսական օրենք է, որը թույլ է տալիս որոշել շրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակը: Պարզ տարբերակով՝ բնականոն շրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = P \times Q / V$$

որտեղ՝

M-ը բնականոն շրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակն է,

P x Q-ն՝ բոլոր ապրանքների գների գումարը

V-ն՝ դրամական միավորի շրջապտույտի արագությունը:

Դրամաշրջանառության արագությունը (velocity of money) - այն արագությունն է, որով դրամը շրջանառություն է կատարում տնտեսության մեջ: Այս հասկացությունը ևս առաջին անգամ բացատրել է Ի. Ֆիշերը 1920-ական թվականներին: Նա համարում էր, որ դրամի շրջանառության արագությունն ուղղակի առնչություն ունի համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ-ի) հետ: Դրամի շրջանառության արագությունը տվյալ երկրի կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության կարևոր գործոններից մեկն է, քանի որ դրամի շրջանառության արագության մեծացումը կարող է բացառել դրամական զանգվածի ավելացման անհրաժեշտությունը և ընդհակառակը: Հետևաբար, դրամի շրջանառության արագությունը որոշելու համար մենք կարող ենք ստեղծված ՀԱԱ-ն հարաբերել շրջանառության մեջ դրամի պաշարի մեծությանը: Օրինակ, 1999թ. դրամի շրջապտույտը կազմել է 10.2 միավոր պտույտ/տարի, 2000-ին՝ 8.62, 2001-ին՝ 7.67, 2002-ին- 8.35, իսկ 2003-ին՝ 7.4*:

Դրամական շրջանառության կայունությունը ոսկու ստանդարտի (հիմնօրինակ) և ժամանակակից դրամական միջոցների պայմաններում լրիվ տարբեր ձևով է դրսևորվում:

Ոսկու հիմնօրինակի դարաշրջանում (XIX-XXդար) տվյալ հավասարությունն ապահովվում էր ինքնաբերաբար, գները երկար ժամանակահատվածի ընթացքում մնում էին կայուն և միայն պատերազմների ժամանակ գնաճ էր նկատվում:

Ժամանակակից դրամական միջոցների դարաշրջանում արդեն բացակայում է ապրանքների և դրամական հոսքերի ավտոմատ կարգավորումը: Բնորոշ է դառնում դրամական շրջանառության անկայունությունը, գների անզուսպ աճը:

Ինչու՞մն է կայանում գնաճի էությունը:

Գնաճը կամ ինֆլյացիան (inflation, լատ. inflatio - ուռճացում) տվյալ երկրի ամբողջ տնտեսության մեջ ներքին շուկա ուղղվող ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր միջին մակարդակի երկարատև շարունակվող կայուն բարձրացումն է կամ դրամաշրջանառության գերհագեցումն է դրամով, որը բերում է դրամական միավորի արժեզրկմանը և համապատասխանաբար ապրանքների և ծառայությունների գների ու սակագների աճին, առանց դրանց որակի բարձրացման: Գնաճն առաջանում է, երբ պետությունները փորձում են իրենց տնտեսական դժվարությունները հաղթահարել դրամի տպագրությամբ ստեղծելով ավելցուկային դրամական զանգված ապրանքային զանգվածի ոչ համարժեք ավելացման պարագայում: Այն ուղեկցվում է գների աճով, իրական աշխատավարձի անկմամբ, բնակչության կենսամակարդակի նվազումով: Գնաճը սոցիալ-տնտեսական բարդ երևույթ է, յուրահատուկ է աշխարհի շատ երկրներին, դառնալով ժամանակակից տնտեսության զարգացման ամենասուր հիմնահարցերից մեկը, որն «արթնացնում է» տնտեսական օրենքներում թաքնված բոլոր «կործանիչ ուժերը»: Այն գտնվում է պետությունների ուշադրության կենտրոնում: Տնտեսության գործունեության և բնակչության սոցիալական դրության վրա գնաճի բացասական ազդեցության պատճառով կառավարությունները իրենց վարած տնտեսական քաղաքականությամբ մեծ ուշադրություն են դարձնում գնաճի զսպմանը:

Գնաճի պատճառները բարդ ու բազմազան են, և ըստ երևույթին, դրանք չեն կարող հանգել ինչ-որ մեկ գործոնի: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- *պետական բյուջեի պակասորդը*, որը ծածկելու համար թողարկվում են պետական արժեթղթեր կամ պարզապես թղթադրամ
- պետության *ոչ արտադրողական ծախսերը*, առանձնապես ռազմական
- *շուկայական կառուցվածքի անկատարությունը*, մասնավորապես, մի շարք արտադրողների մենաշնորհային դիրքը, որը նրանց թույլ է տալիս բարձրացնել իրենց արտադրանքի գինը՝ առանց դրա սպառողական որակների համապատասխան բարձրացման
- *կառուցվածքային անհամամասնությունները* ազգային տնտեսությունում (օրինակ, սպառման առարկաների և արտադրության միջոցների կամ արտադրական և ոչ արտադրական նշանակության ապրանքների արտադրության, արդյունաբերության և գյուղատնտեսության, ծառայության և տնտեսական գործունեության այլ ոլորտների, արտադրության և ենթակառուցվածքի միջև)
- *երկարատև կապիտալ ներդրումների չափերի ավելացումը*, որի հետևանքով ծախսված գումարից երկար ժամանակ ոչ մի հատուցում չի ստացվում
- *մեծ և արագ աճող արտաքին պարտքը* (վճարումներն ըստ վարկերի) վարկերի նկատմամբ պահանջարկի ավելացումը, և նորմալ վարկային հարաբերությունների խախտումը
- *դրամի էմիսիան,* դրամական զանգվածի ավելացումը, առաջարկի նկատմամբ պահանջարկի գերազանցումը
- *ձեռնարկությունների ծախսերի աճը, արտադրության միջոցների գների աճը համաշխարհային շուկայում*, որը հանգեցնում է գների բարձրացմանը դրանք ներմուծող երկրների ներսում
- *քաղաքական անկայունությունը*, որն իր արտահայտությունն է գտնում կառավարության անկանխագուշակելի վարքագծում:

Ըստ մոնետարիզմի տեսության, գնաճը դրամական զանգվածի շատ բարձր աճի անխուսափելի հետևանք է: Այսպիսով, մոնետարիստները համարում են, որ շրջանառության մեջ գտնվող դրամի զանգվածի խելամիտ հսկողությամբ կարելի է սահմանափակել գնաճը: Արտադրանքի (ծառայության) ծախսերի աճը սովորաբար պայմանավորված է հումքի ծախսերի ավելացմամբ, աշխատավարձի բարձրացմամբ, աշխատանքի միջոցների գների աճով համաշխարհային շուկայում:

Գնաճն ունենում է իր տնտեսական և սոցիալական հետևանքները:

- Գնաճի ժամանակ թղթադրամն արժեզրկվում է ինչպես ոսկու, այնպես էլ առավել կայուն արտարժույթի նկատմամբ: Ապարանքների գներն ու ծառայությունների սակագները թղթադրամով կտրուկ աճում են:
- Գնաճն ապակողմնորոշում է տնտեսությունը, լուրջ վնաս հասցնելով նրան: Գների աճի բարձր տեմպերը բացասական են ներգործում նաև ֆիսկալ համակարգի վրա, քանի որ գնաճն արժեզրկում է բյուջեների հարկային մուտքերը:
- Գնաճի հետևանքով արժեզրկվում են բնակչության եկամուտները և խնայողությունները, կրճատվում են կապիտալ ներդրումները, վնասներ են կրում բանկերը և այն հիմնարկները, որոնք վարկ են տրամադրում, բարդանում են արժութային և վարկային հարաբերությունները և այլն:

Եթե գնաճի տեմպը դանդաղում է, գների աճի արագությունը կամ գների ընդհանուր մակարդակը նվազում է, ինչը հաճախ ուղեկցվում է ազգային եկամտի կրճատումով, ապա առկա է ***ապագնաճը*** *կամ* ***դեզինֆլյացիան*** (disinflation): Իսկ եթե գնաճին ուղեկցում են տնտեսական ճգնաժամերը և այն ունենում է սովորականից բարձր տեմպեր, ապա մենք գործ ունենք ստագֆլյացիայի (stagflation) հետ, այսինքն՝ գնաճ լճացման պայմաններում:

Գնաճի դեմ պայքարելու համար պետությունը վարում է ***դեֆլյացիոն*** քաղաքականություն, իջեցնելով ամբողջ տնտեսությունում գների միջին մակարդակը, շրջանառության մեջ դրամի զանգվածի սահմանափակման միջոցով: ***Գնանկումը*** (deflation, լատ. deflatio - դուրս փչելը) նախ և առաջ, գների մակարդակի ընդհանուր անկումն է, որը սովորաբար հետևում է ապրանքների և ծառայությունների՝ վաճառքի առաջարկվող ծավալի նկատմամբ հարաբերական պահանջարկի ընդհանուր նվազմանը: Գնանկումը հակադիր է *գնաճին,* այն չի կարելի շփոթել ապագնաճի հետ: Գնանկման պայմաններում ապրանքների պաշար կուտակած առևտրականները, որոնց ապրանքների գներն ընկել են, կարող են կրել զգալի վնասներ և հայտնվել սնանկության եզրին: Մյուս կողմից, դրամի պաշար կուտակած տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակը կարող է կտրուկ լավանալ: Որպես կանոն, գնանկման տնտեսական հետևանքները հակադիր են գնաճի հետևանքներին՝ հետևյալ երկու կարևոր բացառություններով՝ ա) այն գները, որոնք բարձրացել են գնաճի ժամանակ, պարտադիր չէ, որ իջնեն գնանկման ժամանակաշրջանում, օրինակ, աշխատավարձի դրույքները, բ) այն դեպքում, երբ գնաճը կարող է խթանել կամ չխթանել արտադրությունը և զբաղվածությունը, ակնհայտ գնանկումը միշտ բացասական է ազդում դրանց վրա: Եվ բացի վերը նշվածից, գնանկումն ապրանքային զանգվածի համեմատությամբ դրամական զանգվածի փոքրացումն է՝ շրջանառությունից ավելցուկային դրամանիշերը դուրս հանելու ճանապարհով, որն ուղեկցվում է գների մակարդակի անկմամբ, դրամի ***գնողունակության*** բարձրացմամբ: Շրջանառությունից դրամական զանգվածի մի մասի դուրս հանումը կատարվում է նրա աճը կանխարգելելու և գնաճի տեմպերը կասեցնելու նպատակով: Գնանկումն իրականացվում է հիմնականում հարկերի ավելացման, աշխատավարձի աճի կանխարգելման կամ նրա սառեցման, պետական բյուջեի ծախսերի իջեցման, վարկերի ծավալների կրճատման միջոցով, պետական արժեթղթերի վաճառքի ավելացման հաշվին:

Գնաճի վրա ազդում է նաև գործազրկությունը: Վերջին տասնամյակներում ինդուստրիալ երկրներում միաժամանակ առկա են և՛ գնաճը, և՛ գործազրկությունը: Փաստացի տվյալները ցույց են տալիս, որ դրանց միջև գոյություն ունի հակադարձ քանակական կապ՝ որքան բարձր է գործազրկությունը, այնքան ցածր է գնաճը, և, ընդհակառակը: Այդ փոխկապվածությունն ընդհանուր տեսքով արտահայտվում է Ֆիլիպսի կորով, որը 1958թ. ներկայացրեց այն: Ա. Ֆիլիպսը սահմանեց, որ «Մեծ Բրիտանիայում գոյություն ունի կապ անվանական աշխատավարձի և աշխատուժի ընդհանուր թվում գործազուրկների մասի արագության փոփոխման միջև», որը կայուն էր մնացել 1861-1957թթ. (նկար 52):



Նկար 52 . Ֆիլիպսի կորը

Այս վերլուծության հիման վրա զարգացած երկրներում մշակվում է տնտեսական քաղաքականության, ինչպես նաև միջոցառումների համակարգ գնաճի և գործազրկության իջեցման կամ վերացման համար: Պետության քաղաքականության շրջանակներում անցկացվող հակաինֆլյացիոն միջոցառումները (եկամուտների քաղաքականություն, գնագոյացման մեջ մենաշնորհային գործունեության սահմանափակում, դրամական քաղաքականություն և այլն) կարող են գնաճը դարձնել ինչ-որ չափով կառավարելի, իսկ նրա մակարդակը չափավոր:

Գնաճի մակարդակը - որոշվում է հետևյալ կերպ՝

$$Մ_ի = ΔԴՔ\% \ / \ ΔԱՔ\ \%$$

որտեղ՝

$Մ_ի$-ն գնաճի մակարդակն է

ΔԴՔ-ն դրամի քանակի աճն է

ΔԱՔ-ն ապրանքների քանակի աճն է:

Գնաճի մակարդակը կարելի է որոշել նաև տվյալ տարում գների ընդհանուր մակարդակի աճի և բազային տարում գների մակարդակի հարաբերակցությամբ, արտահայտված տոկոսներով.

$$r_i = I^2_p - I^1_p / I^1_p \ \%$$

որտեղ՝

r_i - գնաճի մակարդակն է

I^1_p -- գների ինդեքսն է բազային տարում

I^2_p - I^1_p - գների ինդեքսներն են տվյալ և բազային տարում:

Հաճախ անհրաժեշտություն է առաջանում որոշելու գնաճի միջին տարեկան մակարդակը որոշակի երկարատև ժամանակաշրջանի համար, այսինքն մի շարք տարիների: Այս դեպքում կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\overline{r_i} = \sqrt[t]{r_i^1 \times r_i^2 \times \ldots r_i^t}$$

Այսինքն գնաճի միջին տարեկան մակարդակը (r_i) հավասար է գնաճի տարեկան մակարդակների միջին երկրաչափականին:

Ելնելով ***գնաճի տոկոսից կամ տեմպից***, որը ցույց է տալիս, թե ինչպիսի արագությամբ է փոփոխվում գների դրույքը նախորդ ժամանակահատվածի (տարվա, եռամսյակի, ամսվա կամ այլ ժամանակահատվածի համար) համեմատությամբ, տարբերում են դրա չորս մակարդակ՝

նորմալ (normal) կամ *սողացող* (creeping) գնաճ, որի դեպքում գների աճի միջին տարեկան տեմպը մինչև 5% է

չափավոր (moderate) գնաճ, որի ժամանակ գների աճի միջին տարեկան տեմպը չի գերազանցում 5%-ից մինչև 10% -ը

թռիչքային (runway) կամ *քառատրոփ* (galloping) գնաճ, որի պայմաններում գներն աճում են տարեկան 10%-ից ավելի

գերգնաճ (hiperinflation, հուն. hyper - գեր և լատ. inflatio – ուռճացում) - որն իրենից ներկայացնում է շատ բարձր գնաճ, շրջանառության մեջ փողի քանակի և ապրանքային գների մակարդակի չափից ավելի և անկանխատեսելի աճ: Գերգնաճը դրամի կտրուկ արժեզրկումն է և դրա գնողունակության արագ նվազումը, որի ժամանակ գների աճը լրիվ դուրս է գալիս հսկողությունից և սպառնում ամբողջ տնտեսության կազմալուծմանը: Այն սովորաբար վերաբերում է մի քանի ամիս շարունակվող և սոցիալական ցնցումներով ուղեկցվող գների աճին: Ընդունված է համարել, որ գերգնաճը վրա է հասնում գների մակարդակի ամսական միջինում 50 տոկոսը գերազանցող աճի դեպքում, որը նշանակում է, տարվա ընթացքում գների աճ 129,746 անգամ կամ 12874% գնաճի մակարդակ:

Որոշ տնտեսագետներ առանձնացնում են գնաճի երեք հիմնական տիպ՝ բաց, ճնշված և ինֆլյացիոն սպասումներ, որոնք պայմանավորված են պետության վարկային և բյուջետային էքսպանսիայով:

Բաց գնաճը բնորոշ է շուկայական տնտեսությամբ երկրներին և հանդես է գալիս՝ որպես յուրովի հակաինֆլյացիոն միջոց:

Ճնշված գնաճը բնորոշ է գների և եկամուտների վրա վարչական վերահսկողությամբ, որը թույլ չի տալիս ինֆլյացիոն գործընթացին դրսևորվել իրեն բնորոշ միակ ձևով՝ գների աճով: Այս դեպքում գնաճը ստանում է «ընդհատակյա» բնույթ՝ չնայած թղթադրամի փաստացի աճին, արդյունքում փողի ավելցուկը վերածվում է ապրանքային դեֆիցիտի և դրանով կազմալուծվում է տնտեսության կարգավորումը:

Ինֆլյացիոն սպասումները ինֆլյացիոն շոկ է, երբ գների կտրուկ բարձրացումը, կապված բնակչության կանխատեսման հետ, կարող է բերել գների մակարդակի արագ աճին: Այլ կերպ ասած, փաստացի և նախատեսելի գնային մակարդակների միջև առկա է ակնհայտ կախվածություն՝ գնաճի կանխատեսումը վերածվում է գնաճի:

Ըստ տարածման տեղի, տարբերում են *լոկալ* և *համաշխարհային* գնաճ:

Անցման շրջանի սկզբին գնաճն ընդգրկել էր նախկին ԱՊՀ, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի բոլոր երկրները: Ըստ նրա ազդեցության ինտենսիվության, կարելի է տարբերակել 4 խոշոր խումբ (նկար 53):



Նկար 53. Ինֆլյացիան անցման տնտեսությամբ երկրներում

Գնաճի միջին տարեկան տեմպը վերջին տարիներին նվազել է համարյա բոլոր անցման շրջանի երկրներում (նկար 54):



Նկար 54. Գնածի միջին տարեկան տեմպը անցման շրջանի երկրներում (%-ով)

Իսկ ամբողջ անցման շրջանում ՀՀ-ում գնածի միջին տարեկան տեմպի դինամիկան հետևյալ միտումն է ունեցել (նկար 55):



Նկար 55. Գնաճի միջին տարեկան տեմպի դինամիկան ՀՀ-ում .%-ով.(*2003՝ ծրագր.)

ՀՀ-ում դեռևս 1991թ. սպառողական գների ընդհանուր ինդեքսը, նախորդ տարվա համեմատությամբ բարձրացավ ավելի քան 2.7 անգամ: Սակայն դրանով չհաղթահարվեցին գնագոյացման հետ կապված ծախսերը: Պարենային ապրանքների անկայուն մատակարարումը նպաստեց «սև» շուկայում դրանց գների էլ ավելի բարձրացմանը: Հաջորդ 1992թ. գրեթե երկու անգամ կրճատվեց հանրապետության ՀՆԱ-ն և արդյունաբերական արտադրանքը: Սպառողական գների ամփոփ ինդեքսը, 1991թ.համեմատ կազմեց 828.7%:

1993թ. հանդիսացավ դրամական բարեփոխումների տարի, որը վճռորոշ ազդեցություն ունեցավ սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների թռիչքային աճի, բնականաբար նաև գնաճի մակարդակի վրա: ՀՀ-ում տնտեսական կտրուկ անկման հետ միաժամանակ սկզբում ռուբլին, իսկ 1993թ. նոյեմբերից ազգային դրամը հիմնովին արժեզրկվեց և բնակչությունը կորցրեց մոտ 6 մլրդ ռուբլու խնայողություն, իսկ նրա գնողունակությունն ընկավ ավելի քան 10 անգամ: Գնաճը դարձավ անկառավարելի: 1993թ. ընթացքում տեղի ունեցավ գների ու սակագների ինդեքսի աննախադեպ աճ՝ 110 անգամ, այդ թվում պարենային ապրանքներինը՝ 105.3 անգամ, ոչ պարենային ապրանքներինը՝ 116.7, իսկ ծառայությունների սակագներինը 101.1 անգամ:

1994թ. գների փոփոխությունները հիմնականում կապված էին հացի, էլեկտրաէներգիայի և տրանսպորտի հաստատագրված գների ու սակագների բարձրացման հետ: 1994թ. դեկտեմբերին 1993թ. դեկտեմբերի նկատմամբ սպառողական գներն աճեցին 18.6 անգամ, այդ թվում պարենային ապրանքներինը՝ 14.3, ծառայությունների սակագները՝ 48.2 անգամ:

Հետագա տարիներին աստիճանաբար դանդաղում են գնաճի տեմպերը (1995թ.՝ 276%, 1996թ.՝ 118.7%, 1997թ.՝ 114%, 1998թ.՝ 108.7%, 1999թ.՝ 102%): Միաժամանակ որոշ չափով կայունանում է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը: Գնային փոփոխությունները հիմնականում պայմանավորված են սեզոնայնությամբ, սպառման կառուցվածքի փոփոխությամբ, առաջարկով և պահանջարկով:

Համեմատելով սպառողական գների և արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսները ակնհայտ է դառնում, որ 1991-1995թթ. երկու ուղղություններով էլ տեղի է ունեցել համամասնական աճ, իսկ 1996-1998թթ. գրանցվել է արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսների առաջացիկ աճ: Ընդհանուր առմամբ, 1991-1998թթ. սպառողական գներն աճել են մոտ 90 հազար, իսկ արդյունաբերողների արտադրանքի գները՝ 70 հազար անգամ (նկար 56):



Նկար 56. Սպառողական գների ինդեքսի փոփոխումները

Պետք է նշել, որ 1998թ. անցումային շրջանի առաջին տարին էր, որին բնորոշ էր որոշակիորեն կայուն գների մակարդակ: Նույնիսկ 1998թ. օգոստոսին Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ) ռուբլու կտրուկ արժեզրկումն էականորեն չազդեց ՀՀ սպառողական շուկայում գների ու սակագների վրա: 1998թ. դեկտեմբերին 1997թ. դեկտեմբերի համեմատ առաջին անգամ նշված տարիների ընթացքում նկատվեց դեֆլյացիոն երևույթ (սպառողական գների նվազումը կազմեց 1.3%): Ընդ որում, պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գներն իջել են 4.3% -ով, իսկ ոչ պարենային ապրանքների գներն ու ծառայությունների սակագները համապատասխանաբար աճել են 0.5 և 6.5%-ով: Ելնելով գների դրսևորված դինամիկայից, տարին կարելի է բաժանել երեք հատվածների՝ հունվար-մարտ, երբ գրանցվեց 8.0% սղաճ, ապրիլ-սեպտեմբեր, երբ գրանցվեց 12.7 դեֆլյացիա և հոկտեմբեր-դեկտեմբեր, որի ընթացքում գրանցվեց 4.7% գնաճ: 1998 թվականի ընթացքում ձևավորվել է նաև հետևյալ պատկերը. դեկտեմբերի 31 դրությամբ դրամական զանգվածը կազմել է 95.5 մլրդ դրամ (տարեսկզբի նկատմամբ աճը՝ 36%), որը 13.4 մլրդ դրամով գերազանցել է սկզբնական տարեկան ծրագրային ցուցանիշը: Հարկ է նշել, որ դրամական զանգվածի նման խոշոր աճը էական բարդություններ չի ստեղծել ԿԲ գերխնդրի՝ գների կայուն մակարդակի ապահովման առումով, քանզի ԿԲ կողմից տարվա ընթացքում արդյունավետ կառավարվել է դրամական զանգվածի՝ գների տատանումների տեսանկյունից առավել զգայուն դրամային մասը, որն ամբողջ տարվա ընթացքում գտնվել է ծրագրով նախատեսվածի շրջանակներում:

ՀՀ-ում այդ տարիների ընթացքում սղաճի ձևավորման վրա էականորեն ազդեցին՝

- բարեփոխումները հարկային համակարգում
- նախորդ տարվա ընթացքում ձևավորված բարձր սղաճի սպասումները
- առաջին կիսամյակում էմիսիոն աղբյուրների հաշվին բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը
- պետության կողմից կարգավորվող գների զգալի աճը
- նախորդ տարվա նկատմամբ տնտեսական աճի ցածր մակարդակը
- փոխարժեքի անկայուն վարքագիծը 1996թ. վերջին եռամսյակից մինչև 1997 առաջին կիսամյակը և այլն:

1999թ. վերջի դրամական զանգվածը, ինչպես արդեն նշվել է, աճել է 13.6%-ով, նախատեսված 14 %-ի փոխարեն, սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) 1999թ. վերջի դրությամբ կազմել է 102.0՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, իսկ սղաճը նույն ժամանակաշրջանի համար կազմել է 2%:

2001թ. առաջին ամիսների ընթացքում ՀՀ վիճակագրության ազգային ծառայության տվյալներով գրանցվել է 4,6% ինֆլյացիա: Սպառողական գների ինդեքսը 2001 թ. հունվարին 2000 թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 103,1 %, գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքսը 107,1%, արդյունաբերական ապրանքներինը՝ 106,5 %, ոչ արդյունաբերական ապրանքներինը՝ 100,1 %, իսկ ծառայությունների ինդեքսը 100,4 %:

2002թ. դեկտեմբերին 2001թ. նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 102.0%, որը 0.9%-ով փոքր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (102.9%): Պարենային ապրանքների գների ինդեքսը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) կազմեց 101.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.7%, իսկ ծառայությունների սակագները՝ 101.5%: Սպառողական գների միջին ամսական հավելաճը 2002թ. հունվար-դեկտեմբերին կազմեց 0.15%, որը ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 0.05%-ով (0.2%): 2003թ. սպառողական գների ինդեքսը կազմել է 103.0%, որը 1.0%-ով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (102.0%)*:

Հատկապես տագնապալից են էլեկտրաէներգիայի, բնակարանային և կոմունալ այլ ծառայությունների սակագների, ուսուցման և առողջապահության հետ կապված ծախսերի անընդհատ ավելացումը, որը բնակչության արդարացի բողոքն է առաջացնում, սրելով առանց այն էլ խորը սոցիալական լարվածությունը:

Այսպիսով, գնաճի մեծությունը կարելի է որոշել, մասնավորապես, մանրածախ գների ինդեքսի միջոցով, որը ցույց է տալիս սպառողական գների հարաբերական փոփոխությունը: ՀՀ- ում վերջին տարիների սպառողական գների ինդեքսի դինամիկան կարելի է պատկերել հետևյալ կերպ (նկար 57):

Նկար 57. Սպառողական գների փոփոխությունները ՀՀ-ում 1995-2003թթ.%-ով.(*2003՝ ծրագր.)

Այսպիսով, գծապատկերից երևում է, որ ՀՀ- ում 1997թ. գների անկումից հետո, 1998թ-ից սպառողական գները համարյա կայունացել են և նկատվում է ինչպես գնանկում, այնպես էլ որոշակի գնաճ :

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները:
2. Ի՞նչպես է հաշվարկվում ՀԱԱ-ի դեֆլյատորը, ՀԱԱ-ի մեծությունն ըստ ծախսումների եւ եկամուտների:
3. Ի՞նչպես է հաշվարկվում ՀՆԱ-ն:
4. Ի՞նչպիսին է ՀՆԱ-ի դինամիկան և ճյուղային կառուցվածքը ՀՀ-ում:
5. Որո՞նք են Ազգային հաշիվների ստանդարտային համակարգը և դրա մեջ մտնող հիմնական հաշիվները:
6. Ի՞նչպիսին է մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապակցությունը:
7. Որո՞նք են տնտեսական աճի դինամիկայի գլխավոր ցուցանիշները:
8. տնտեսական աճի գործոնները:
9. Ինչպե՞ս կարելի է պատկերել արտադրական հզորությունների կորը:
10. Ո՞րն է տնտեսության անհավասարակշռությունը (անկայունությունը):
11. Որո՞նք են դասական տնտեսական ցիկլի փուլերը և դրանց առանձնահատկությունները:
12. Ի՞նչպես կարելի է պատկերել տնտեսության ցիկլային զարգացման ինքնակարգավորվող մեխանիզմը (տնտեսական աճը):
13. Ո՞րն է զբաղվածության Քեյնսի տեսությունը և այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է զբաղվածությունը ժամանակակից պայմաններում:
14. Ովքե՞ր են համարվում տնտեսապես ակտիվ, ոչ ակտիվ բնակչություն, զբաղվածներ, գործազուրկներ:
15. Ինչպե՞ս կարելի է հաշվարկել բնակչության տնտեսական ակտիվության և գործազրկության մակարդակները:
16. Ո՞րն է գործազրկության բնական նորմայի սահմանումը:
17. Որո՞նք են գործազրկության առանձին տեսակները (ֆրիկցիոն, կառուցվածքային և ցիկլային):
18. Ի՞նչպիսին է զբաղվածության և գործազրկության դինամիկան ՀՀ-ում:
19. Ի՞նչպիսիք են գործազրկության նորմայի փոփոխության միտումները արդյունաբերապես զարգացած երկրներում:
20. Ի՞նչպես կարելի է պատկերել Օքնի օրենքը:
21. Ի՞նչպիսին է ՀՀ-ում միջին աշխատավարձի իրական աճի և սղաճի դինամիկան:
22. Ի՞նչպես կարելի է պատկերել աշխատանքի շուկայի գործունեությունը աշխատուժի հոսքերի ձևով:
23. Ո՞րն է փողի էությունը և նրա գործառույթները:
24. Որո՞նք են դրամական ագրեգատները:
25. Ի՞նչպիսին է դրամական շրջանառության կայունության հավասարումը:
26. Ո՞րն է սղաճի (ինֆլյացիայի) սահմանումը:
27. Որո՞նք են ինֆլյացիոն գործընթացների պատճառները:
28. Որո՞նք են ինֆլյացիայի հետևանքները:
29. Ի՞նչպես կարելի է պատկերել և բնութագրել Ֆիլիպսի կորը:
30. Ի՞նչպես կարելի է որոշել ինֆլյացիայի մակարդակը:
31. Ո՞րոնք են ինֆլյացիայի երեք մակարդակները:
32. Ո՞րոնք են սղաճի երեք հիմնական տիպերը:
33. Ի՞նչպիսին է սղաճի դինամիկան ՀՀ-ում:

ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. Ֆինանսների էությունը և գործառույթները: Ֆինանսական շուկա

Ֆինանսները՝ (լատ. financia - առձեռն, եկամուտ, ֆրանս. – վճարել, վճարում) որպես տնտեսական կատեգորիա, արտահայտում են դրամական միջոցների կազմավորման, բաշխման և օգտագործման գործընթացում առաջացած տնտեսական հարաբերությունները: Ֆինանսները առաջացել են ապրանքադրամային հարաբերությունների կայուն կարգավորման պայմաններում և մեծ նշանակություն են ունեցել պետության զարգացման գործում, հատկապես այն ժամանակ, երբ պետությունը զգաց դրամական ռեսուրսների պահանջ:

Առաջին անգամ ֆինանսներ տերմինը օգտագործվել է Իտալիայում 13-15 –րդ դարերում, այն ժամանակ, երբ այդ երկրի առանձին քաղաք պետությունները համարվում էին խոշորագույն առևտրական, դրամական հաշվարկների և բանկային գործի կենտրոններ: Մինչդեռ կապիտալիստական արտադրության եղանակների ժամանակ պետությունն իր պահանջները բավարարում էր հիմնականում բնեղեն վճարումների և անվճար ծառայությունների միջոցով: Կապիտալիստական արտադրության եղանակի ծագման ու զարգացմանը զուգնթաց, աստիճանաբար վերանում են բնեղեն վճարումները և անվճար ծառայությունները, դրանց փոխարինում են դրամական եկամուտները և ծախսերը, ինչը պայմանավորված էր ապրանքադրամային հարաբերությունների ընդլայնման ու հաստատման գործընթացով:

Ֆինանսական համակարգը (financial system) ֆինանսական ինստիտուտների (բանկ, ապահովագրական ընկերություն և այլն) և շուկաների (դրամական շուկա, արժեթղթերի շուկա) ամբողջություն է, որոնք տարբեր ֆինանսական գործիքների (ավանդ, արժեթուղթ և այլն) միջոցով զբաղվում են տնտեսության մեջ ֆինանսական միջոցների տեղաշարժով, վերաբաշխմամբ, արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև փոխատվությամբ և վարկ տրամադրելով: Ֆինանսական համակարգը ֆինանսների մեջ մտնող բոլոր օղակների (ինստիտուտների) ամբողջությունն է՝ դրանց փոխադարձ կապի մեջ: Մի շարք երկրների ֆինանսական համակարգը կազմավորվում է հետևյալ օղակներից՝

ա) բյուջետային համակարգից, նրա մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեներով՝ պետական և տեղական

բ) արտաբյուջետային նպատակային հիմնադրամներից

գ) ձեռնարկությունների, միավորումների, կազմակերպությունների, ֆիրմաների, հիմնարկների, առևտրական և ոչ առևտրական կառույցների, տնտեսական ճյուղերի դրամական ֆոնդերից և այլ հատուկ դրամական ֆոնդերից

դ) սոցիալական, գույքային և անձնական ապահովագրման ֆոնդերից

ե) պետության արժութային պահուստներից

զ) վարկերից:

Ֆինանսական համակարգի վերոհիշյալ օղակները գոյություն ունեն ինչպես պետական, այնպես էլ սուբ-յեկտների և տեղական ինքնակառավարման մակարդակի վրա: Ֆինանսական համակարգի գործունեությունն ապահովվում է ինչպես կանխիկ դրամանիշերի շարժով, այնպես էլ մեծամասամբ՝ անկանխիկ դրամական վճարումներով և հաշվարկներով: Ֆինանսական համակարգը կոչված է վերլուծել և վերահսկել բոլոր այն գործընթացները, որոնք կապված են ՀՆԱ և ազգային եկամտի արտադրման և վերաբաշխման հետ: Դա պետությանը հնարավորություն է տալիս անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել և ապահովել ամբողջ հասարակության շահերին համապատասխան ազգային եկամտի բաշխումն ու վերաբաշխումը: Ֆինանսական համակարգը ներառում է նաև կարգավորիչ, տեղեկատվական-տեխնոլոգիական, ռեսուրսների կառավարման և նման այլ ենթակառուցվածքները, որոնք ապահովում են նրա կայուն կենսագործունեությունը:

Ֆինանսական հարաբերությունները (financial relations, truck) ձևավորվում են պետության, երկրի առանձին տարածաշրջանների, տնտեսական ճյուղերի և ոլորտների, առանձին ձեռնարկությունների, քաղաքացիների և այլ սուբյեկտների միջև դրամական ֆոնդերի շարժի կապակցությամբ:

Ներազդելով տնտեսական գործընթացների վրա, ֆինանսները միաժամանակ տարբեր սուբյեկտների տնտեսական շահերի փոխկապակցման միջոց են: Դրանք գործնականում միջնորդավորում են տնտեսության կառավարման բոլոր կողմերը: Ֆինանսների միջոցով ձևավորվում են պետության կենտրոնացված զուտ եկամուտը, աջակցություն է ցույց տրվում տնտեսության տարբեր օղակներին: Ֆինանսներն ակտիվորեն ներգործում են տնտեսական կապերի համակարգում կատարվող փոփոխությունների վրա: Դրանց կատարելիությունից է մեծապես կախված հասարակական արտադրության արդյունավետությունը և տնտեսական առաջընթացի ապահովումը:

Ֆինանսները կատարում են հետևյալ գործառույթները՝

1. Վերարտադրողական: Դրանք ապահովում են հիմնական և շրջանառու ֆոնդերի շրջապտույտի ֆինանսական կողմը, պայմանավորելով դինամիկ, հաշվեկշռված, համամասնական ու ինտենսիվ ընդլայնված վերարտադրություն:

2. Բաշխողական: Դրա էությունն այն է, որ ֆինանսների միջոցով տեղի է ունենում տարբեր ոլորտներում հասարակության սուբյեկտների միջև ՀԱԱ-ի բաշխումը և վերաբաշխումը:

3. Վերահսկողության: Շուկայական հարաբերությունների պայմաններում ֆինանսական վերահսկողությունը իրականացնում են ֆինանսական, բանկային ու հարկային մարմինները:

4. Խթանող: Դրամական միջոցների հավաքագրումը և կենտրոնացումը պետության ու ձեռնարկությունների տրամադրության տակ հնարավորություն է ստեղծում դրանք օգտագործել ԳՏԱ-ի իրականացման նպատակով,

դրանով իսկ նպաստելով հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, արտադրության արդյունավետության աճին:

Ֆինանսների զարգացման մեջ նոր երևույթները պայմանավորված են տնտեսության շուկայական հատվածի ընդլայնումով, ԳՏՀ-ով, արտադրության էլ ավելի ինտերնացիոնալացմամբ, ինչպես նաև, տնտեսության վրա պետության ներգործության ուժեղացումով: Այդ կապակցությամբ կարելի է նշել ֆինանսական կարգավորման մի քանի ժամանակակից ուղղություններ, որոնք պատկերված են նկար 58 -ում:



Նկար 58. Տնտեսության պետական ֆինանսավորման ժամանակակից ուղղությունները

Յուրաքանչյուր երկրում տարվող *ֆինանսական քաղաքականությունը* (financial policy) - կառավարության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Այն իրենից ներկայացնում է իր գործառույթների և խնդիրների իրագործման համար ֆինանսների կազմակերպման և օգտագործման գծով պետության միջոցառումների ամբողջությունը, երկրում տարվող քաղաքականություն, որն ուղղված է պետության ֆինանսական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման գործընթացների կարգավորմանը, ինչպես նաև ազգային տնտեսության զարգացմանը:

Պետության ֆինանսական քաղաքականությունը առաջանում է պետության գործունեության երկու փոխկապված ուղղություններից՝

ա) *ֆիսկալ քաղաքականություն,* որն իրականացվում է հարկման և պետական ծախսերի կառուցվածքի կարգավորման բնագավառում տնտեսության վրա ներազդելու նպատակով

բ) *բյուջետային քաղաքականություն*, որն իրականացվում է պետական տեղական բյուջեների կարգավորման բնագավառում :

Ֆինանսական քաղաքականությունը նաև կազմակերպության ֆինանսական ռազմավարության իրականացման ձև է: Ի տարբերություն ամբողջությամբ վերցված ֆինանսական ռազմավարության, ըստ կազմակերպության, ֆինանսական քաղաքականությունը ձևավորվում է ֆինանսական գործունեության առանձին ուղղությունների համար, որոնք այդ գործունեության գլխավոր ռազմավարական խնդրին հասնելու համար պահանջում են առավել արդյունավետ կառավարում: Կազմակերպության ֆինանսական քաղաքականության ձևավորումն ըստ նրա ֆինանսական գործունեության առանձին կողմերի, կարող է կրել բազմամակարդակ բնույթ: Օրինակ, ֆինանսական ռեսուրսների ձևավորման քաղաքականության շրջանակներում կարող են մշակվել սեփական ֆինանսական ռեսուրսների ձևավորման քաղաքականություն և փոխառու միջոցների ներգրավման քաղաքականություն:

Ֆիսկալ քաղաքականությունը (fiscal policy) - կառավարության քաղաքականությունն է հարկման, պետական ծախսերի, պետական բյուջեի բնագավառում, որն ուղղված է բնակչության զբաղվածության ապահովմանը, գնաճի (սղաճի) երևույթների կանխարգելմանը, զսպմանը, գործարար ակտիվության մակարդակի կարգավորմանը: Ֆիսկալ քաղաքականության միջոցով կառավարությունը իրականացնում է բյուջեի ծախսերի և հարկման կարգավորումը՝ տնտեսության մեջ ծախսերը վերահսկելու նպատակով: Ընդհանուր ծախսերը կարելի է կրճատել, բարձրացնելով ուղղակի հարկերը, որի պատճառով պակասում է բնակչության և տնտեսավարող սուբյեկտների կողմից տնօրինվող եկամուտը, կամ բարձրացնելով անուղղակի հարկերը, որոնք նվազեցնում են գնողունակությունը, ինչպես նաև կարող են սահմանափակել սեփական գնումները և արտադրամիջոցների ներդրումները: Ֆիսկալ քաղաքականությունը պետության ֆինանսական քաղաքականության միջուկն է և տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը:

Հետևաբար, պետության ֆիսկալ քաղաքականության հիմնական լծակը հարկային մեխանիզմների ու դրույքների փոփոխությունն է: Հարկերի ազդեցությունը ՀՆԱ ծավալի վրա իրականացվում է հարկային մուլտիպլիկատորի մեխանիզմի միջոցով: Ֆիսկալ քաղաքականության երկրորդ բաղադրիչը պետական ծախսումներն են, որոնք ազդեցություն են թողնում ամբողջական պահանջարկի վրա և ներդրումների նման ունեն մուլտիպլիկատորի էֆեկտ:

Պետության բյուջետային քաղաքականության հիմքում կարող են դրվել տարբեր մոտեցումներ: Բոլոր դեպքերում, յուրաքանչյուր պետություն ձգտում է ունենալ հավասարակշռված (առանց պակասորդի) բյուջե:

Կապիտալի պահանջարկի և առաջարկի հիման վրա միջնորդների օգնությամբ վարկատուների և փոխառուների միջև կապիտալի վերաբաշխման մեխանիզմն իրենից ներկայացնում է ***ֆինանսական շուկա*** (financial market) կամ փոխատվական կապիտալների շուկա: Ֆինանսական շուկայի հիմնական գործառույթը՝ չգործող դրամական միջոցների ձևափոխումն է փոխատվական կապիտալի: Ֆինանսական շուկաները՝ դրամական միջոցների առաջնային սեփականատերերի և դրանց վերջնական օգտագործողների միջև միջնորդների շուկաներն են: Գործնականում այն իրենից ներկայացնում է դրամական միջոցների հոսքը սեփականատերերից փոխառուներին, և հակառակը, վարկային կազմակերպություններին ուղղող ֆինանսավարկային ինստիտուտների ամբողջությունը: Այստեղ տեղի է ունենում դրամական միջոցների փոխանակում, կապիտալի հավաքագրում և վարկի տրամադրում, ինչպես նաև կատարվում է ֆինանսական միջոցների վերաբաշխում՝ ֆինանսական

գործակալների, հաստատությունների կամ միջնորդների միջոցով: Ֆինանսական շուկան ապահովում է կապիտալների շարժունակությունը, դրանց հոսքը դեպի արտադրության առավել եկամտաբեր ու հեռանկարային ճյուղերը:

Ֆինանսական շուկան ընդհանրական տերմին է կապիտալի և դրամական շուկաների համար, քանի որ այն բաժանվում է դրամական շուկայի և կապիտալի շուկայի, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է սեգմենտների (նկար 59):



Նկար 59. Ֆինանսական շուկայի կառուցվածքը

Դրամական շուկան (money market) - փոխատվական կապիտալների շուկայի մի մասն է, որտեղ գնվում և վաճառվում են կարճաժամկետ վարկային և պարտքային ֆինանսական գործիքներ: ***Դրամական շուկայի գործիքները*** (money market instruments)՝ միջբանկային դեպոզիտներն ու կարճաժամկետ արժեթղթերն են, որոնցից են կարճաժամկետ գանձապետական և առևտրային մուրհակները, կարճաժամկետ գանձապետական պարտատոմսերը, կարճաժամկետ, սակայն չհարկվող արժեթղթերը, ազատ շրջանառվող ավանդային սերտիֆիկատները, եվրոդոլարով ավանդային սերտիֆիկատները, եվրոդոլարով ավանդները, բանկային փոխանցելի մուրհակները, բանկային ակրեդիտիվները, բանկային ակցեպտները, կարճաժամկետ մունիցիպալ պարտատոմսերը, ինչպես նաև կառավարական զեղչով մուրհակները, կարճաժամկետ (սովորաբար մինչև 90 օրը համարվում են բարձրորակ վարկեր) պարտքային պարտավորությունները և այլ գործիքներ: Այս գործիքների ընդհանուր գծերն են՝ ռիսկի ցածր մակարդակը, շարժունակությունը (մինչև մեկ տարի մարման ժամկետ) և իրացվելիությունը (կարող են հեշտությամբ ու արագ իրացվել):

Դրամական շուկայի մասնակիցներն են կենտրոնական և առևտրային բանկերը, բրոքերային և դիլերային ընկերությունները, ֆինանսավարկային այլ հիմնարկները, որոնք մասնակցում են վարկային դրամի, արտարժույթի, արժեթղթերի առք ու վաճառքին: Գործառնությունները դրամական շուկայում կատարվում են, որպես կանոն, առանց ապահովության՝ ի տարբերություն սովորական վարկավորման: Խոշոր դրամական շուկաներում գործող դիլերները մշտապես կապ են պահպանում միմյանց, ինչպես նաև հիմնական փոխառուների և ներդրողների հետ՝ կրկնագործարքի հնարավորությունից օգտվելու համար: Դրամական շուկան սովորաբար չունի ձևական կազմակերպում, առևտրի կենտրոնական վայր: Ըստ ընդունված միջազգային կանոնների, ազգային դրամական շուկայում գործառնությունները պետք է ավարտվեն գործարքի կնքման օրը, իսկ միջազգային շուկայում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կապիտալի շուկան (capital market) – ֆինանսական շուկա է, որն ընդգրկում է միջին և երկարաժամկետ վարկային գործիքներ, պարտատոմսեր, արժեթղթեր, բաժնետոմսեր և ներդրումների այլ տեսակներ՝ վաճառելով դրանք առավելապես երկարաժամկետ ներդրողներին: Հետևապես, կապիտալի շուկան երկարաժամկետ ներդրումային ռեսուրսների կարևորագույն աղբյուր է հանդիսանում կառավարությունների, կորպորացիաների և բանկերի համար: Եթե դրամական շուկան բարձր իրացվելիությամբ օժտված միջոցներ է տրամադրում հիմնականում կարճաժամկետ պահանջմունքների բավարարման համար, ապա կապիտալի շուկան ապահովում է ֆինանսական ռեսուրսների երկարաժամկետ պահանջմունքները: Կապիտալի շուկաներում ընդգրկվում են փոխատվական և բաժնետիրական կապիտալի տեղաբաշխման մասնավոր աղբյուրները, ինչպես նաև կազմակերպված շուկաները և բորսաները:

Հաշվառման շուկան (bill market, discount market) - դրամական շուկայի մի մասն է, որտեղ հիմնական գործիքներն են պետական արժեթղթերը, առևտրային և գանձապետական մուրհակները, ինչպես նաև կարճաժամկետ այլ պարտավորությունները: Այս կարճաժամկետ արժեթղթերի և պարտավորությունների հսկայական ծավալը, որոնց հիմնական հատկանիշը բարձր իրացվելիությունն ու շարժունակությունն է, շրջանառություն են կատարում հաշվառման շուկայում:

Միջբանկային շուկան (interbank market) - փոխատվական կապիտալների շուկայի մաս է, որը նախատեսում է բանկերի միջև ազատ ֆինանսական միջոցների առք և վաճառք: Այստեղ բանկերի կողմից ներգրավվում և տեղաբաշխվում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները՝ կարճաժամկետ միջբանկային ավանդների, վարկերի և փոխառությունների ձևով: Այդ միջբանկային ավանդները և վարկերը տեղաբաշխվում են 1 օրից մինչև 1-5 շաբաթ ժամկետով: Սակայն միջբանկային շուկայի միջոցները բանկերի

կողմից օգտագործվում են ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև միջին և երկարաժամկետ (առավել տարածված ներդրումների ժամկետներն են 1, 3 և 6 ամիսներով, իսկ երբեմն էլ 2 -5 տարի ժամկետով) ակտիվային գործառնությունների, հաշվեկշիռների կարգավորման, պետական կարգավորող մարմինների պահանջների կատարման նպատակով: Միջբանկային փոխառություն տեղի է ունենում, երբ ցածր իրացվելիություն ունեցող բանկը դիմում է ավելցուկային իրացվելիություն ունեցող բանկին՝ միջոցներ ներգրավելու նպատակով:

Ֆինանսական շուկաների օրինակներից է նաև ***արտարժույթի շուկան*** (foreign exchange market, currency market), որտեղ գնվում և վաճառվում են տարբեր երկրների արժույթները, կատարվում է արտարժույթի և դրանով արտահայտված վճարային այլ փաստաթղթերի (մուրհակներ, չեկեր և այլն) առք ու վաճառք՝ պահանջարկի և առաջարկի հիման վրա: Դա ոչ ձևական շուկա է, որն ընդգրկում է ամբողջ աշխարհը, որտեղ կապն իրականացվում է հաղորդակցության տարբեր տեսակի ուղիով և արագ միջոցների օգնությամբ: Արտարժույթի շուկայում հիմնականում գործում են արտարժույթի առևտուր անող դիլերները, առևտրային բանկերը և արտարժույթի առք ու վաճառքի բրոքերները (որոնք գործում են որպես միջնորդներ): Այս շուկան իր ընդհանուր գծերով չի տարբերվում մնացած շուկաներից, սակայն ունի իր առանձնահատկությունները: Ի տարբերություն մյուս շուկաների, դրանք միջազգային վճարային շրջանառությունը սպասարկող պաշտոնական կենտրոններ են՝ կապված տարբեր երկրների իրավաբանական և ֆիզիկական անձանց դրամային պարտավորությունների վճարման հետ: Այստեղ են որոշվում արտարժույթի փոխարժեքները և մի արժույթը փոխանակվում է մեկ այլ արժույթով, պայմանավորված տնտեսական անհրաժեշտությամբ: Այդ մեխանիզմի օգնությամբ փոխանակվում են տարբեր ազգային արժույթներ: Այս շուկայում ընդունված է որպես ապրանք դիտարկել օտարերկրյա պետության արժույթը՝ արտարժույթը:

Արտարժույթի շուկան բաժանվում է բորսայական և արտաբորսայական շուկաների: Արտարժույթի շուկայի հիմնական կառուցվածքային բաղադրամասը բանկերն են, որոնք արտարժույթի առուծախի գործառնություններ են իրականացնում հաճախորդների հանձնարարությամբ կամ իրենց սեփական միջոցների հաշվին: Լինում են ազատ (արտարժութային սահմանափակումներով չսեղմված) և ոչ ազատ (արտարժույթի շուկա, որտեղ արտարժութային գործառնություններ իրականացնելու համար հարկավոր են համապատասխան թույլտվություններ և արտարժույթի պաշտոնական փոխարժեքի պահպանում) արտարժույթի շուկաներ: Արտարժույթի շուկաներում կատարվում են միջազգային հաշվարկներ, փոխարժեքային տարբերություններից շահույթ կորզելու գործառնություններ, սահմանվում են արտարժույթի փոխարժեքներ: Դրանց բնորոշ են երկու տեսակի գործառնություններ՝ *կանխիկ (անհապաղ) և ժամկետային*: Տարբերում են նաև միջազգային, տարածաշրջանային և ազգային արտարժութային շուկաներ: Տարածաշրջանային կարևոր շուկաներ են համարվում Արևմտյան Եվրոպայի երկրների համար գործող *Եվրարժույթի, Եվրադեպոզիտների,* Եվրավարկերի և Եվրաարժեթղթերի շուկաները: Խոշորագույն համաշխարհային արտարժութային շուկաները գտնվում են ԱՄՆ-ում (Նյու Յորքի), Անգլիայում (Լոնդոնի), Ֆրանսիայում (Փարիզի), Շվեյցարիայում (Ցյուրիխի), Ճապոնիայում (Տոկիոյի), Գերմանիայում և Սինգապուրում: Այդ կազմակերպված շուկաներում օրական հարյուր միլիարդավոր դոլարի արժողությամբ արժույթի առևտուր է կատարվում:

Արժեթղթերի շուկան (security market, stock market)՝ ցանկացած երկրի ընդհանուր շուկայի, ինչպես նաև ֆինանսական շուկայի բաղկացուցիչ մասն է, որտեղ գնվում և վաճառվում են կազմակերպությունների, ֆինանսական ինստիտուտների, պետության կողմից թողարկված արժեթղթերի բոլոր տեսակները (կարճաժամկետ և երկարաժամկետ): Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում արժեթղթերի շուկան կատարվող գործարքների ծավալով և դրանում շրջանառվող ֆինանսական գործիքների բազմազանությամբ ամենածավալունն է ֆինանսական շուկայում: Արժեթղթերը, որոնցով կատարվում են գործառնություններ, ներառում են սովորական և արտոնյալ բաժնետոմսերը, պարտատոմսերը և այլն: Արժեթղթերի շուկայի գործունեությունը թույլ է տալիս կարգավորել և բարձրացնել մի շարք տնտեսական գործընթացների արդյունավետությունը, և առաջին հերթին՝ ժամանակավորապես ազատ ֆինանսական ռեսուրսների ներդրման գործընթացը: Տարբերում են արժեթղթերի կազմակերպված (ֆոնդային բորսա) և անկազմակերպ (արտաբորսայական, «փողոցային»), ինչպես նաև առաջնային և երկրորդային շուկաներ: Արժեթղթերի կազմակերպված շուկան՝ արժեթղթերի շրջանառությունն է շուկայի լիցենզավորված արհեստավարժ միջնորդների միջև, շուկայի այլ մասնակիցների հանձնարարությամբ, հիմնված հաստատուն ամրագրված կանոնների վրա: Արժեթղթերի անկազմակերպ շուկան՝ արժեթղթերի շրջանառությունն է, առանց շուկայի բոլոր մասնակիցների կողմից միևնույն կանոնների պահպանման:

Քանի որ ոչ բոլոր արժեթղթերն են իրենց ծագումով սկիզբ առնում դրամական կապիտալից, ուստի արժեթղթերի շուկան էլ ամբողջովին վերցված, չի կարելի վերագրել ֆինանսական շուկային: Շուկայի այն հատվածում, որտեղ արժեթղթերի շուկան որպես կապիտալ հիմնվում է դրամի վրա, կոչվում է ֆոնդային շուկա և իր այս որակով է ֆինանսական շուկայի բաղկացուցիչ մաս կազմում: Այդ արժեթղթերի շուկայում վաճառվում են գլխավորապես ձեռնարկության սեփականության մեջ մասնակցության փայերը: Դա սեփական կապիտալի շուկան է, նրա հիմնական ինստիտուտը՝ ֆոնդային բորսան է:

Ֆոնդային բորսան (stock exchange)՝ արժեթղթերի շուկայի որոշակի ձևով կազմակերպված և կանոնավոր գործող շուկայական ենթակառուցվածքի տարր է, որտեղ կատարվում են այդ արժեթղթերի առք ու վաճառքի միջնորդավորված գործարքները, դրանց բորսայական փոխարժեքի հիման վրա, որը տատանվում է՝ կախված առաջարկի և պահանջարկի հարաբերությունից: Գրանցված բորսայական փոխարժեքները (կուրսերը) հրապարակվում են բորսայական տեղեկագրերում և հանդեսներում: Բորսայի ղեկավարող մարմինը, որպես կանոն, բորսայի կոմիտեն է: Ներկայումս բորսաների աշխատանքում լայնորեն կիրառվում են համակարգչային ցանցեր և կապի ժամանակակից միջոցներ, որոնք թույլ են տալիս կատարել տեղեկատվության օպերատիվ փոխանակում և բարձացնել բորսայական գործառնությունների արդյունավետությունը: Ֆոնդային բորսայի հիմնական գործառույթներն են. արժեթղթեր վաճառելու միջոցով բնակչության և կազմակերպությունների ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրումը, արժեթղթերի շուկայական արժեքի սահմանումը

(գնանշումը), դրամական կապիտալի արդյունավետ վերաբաշխումը տարբեր տնտեսավարող սուբյեկտների, ճյուղերի և ոլորտների միջև: Ֆոնդային բորսան արժեթղթերի ***երկրորդային շուկա է,*** որտեղ շրջանառություն են կատարում նախկինում թողարկված արժեթղթերը:

Ֆոնդային բորսաները շուկայական տնտեսական պայմաններում շատ կարևոր դեր են կատարում, կապելով խնայողությունների տիրոջը ապագա ներդրողի (ինվեստորի) հետ: Դրանց շնորհիվ արտադրությունն ապահովվում է կապիտալով, կատարվում է կապիտալի ռացիոնալ բաշխումը տարբեր ճյուղերի ու ռեգիոնների միջև, թողարկվում են նոր բաժնետոմսեր: Անգնահատելի է ֆոնդային բորսաների դերը նաև մասնավոր խնայողությունները, տնտեսական աճի երկարաժամկետ ֆինանսավորման տրամադրելու հարցում: Կապիտալ ներդրումների շահութաբերության բորսայական գնահատումները կողմնորոշում են հասարակության ինվեստիցիոն ռեսուրսների վերաբաշխումը:

Ֆոնդային միջնորդը բորսայում կարող է գործառնական եկամուտ ստանալ՝ գործելով երկու եղանակով: Նախ, ժամանակավորապես դառնալով իր հաշվին գնված արժեթղթերի տեր, շահույթ ստանալ դրանց գնման ու վաճառքի կուրսերի տարբերությունից: Այս եղանակով գործող միջնորդը գործարքներ է կնքում իր անունից, իր հաշվին, իր ռիսկով, ունի ակտիվների իր պորտֆելը և կոչվում է ***դիլեր*** (dealer) կամ վաճառամիջնորդ:

Դիլերային գործունեությունը ենթակա է լիցենզավորման որպես մասնագիտացված գործունեություն: Դիլերը կարող է դիլերային գործունեություն իրականացնել միայն դիլերային ընկերության կազմում կամ անունից: Մյուս եղանակը ենթադրում է միջնորդի՝ ***բրոքերի*** (stockbroker) վարձատրության գոյացումը գործարքների գումարի որոշակի տոկոսից: Բրոքերները (մակլեր կամ գործակալ) մի դեպքում գործում են, որպես ներդրողի գործակալ, որը գործում է որպես միջնորդ թողարկողի և գնորդների (արժեթղթերի առաջին առաջարկի դեպքում), մյուս դեպքում, ինչպես նաև արժեթղթերի երկրորդային շուկայում այդ արժեթղթերը գնողների ու վաճառողների միջև: Բրոքերի պարտականությունների մեջ են մտնում բորսայում արժեթղթերով գործարքների կատարումը (ինչ-պես կանխիկ, այնպես էլ հաշվապահական գրառումների ձևով) և դրանց ճիշտ շրջանառության ապահովումը: Բրոքերը ֆոնդային բորսայում գնում և վաճառում է արժեթղթեր՝ իր հաճախորդների անունից և նրանց հաշվին: Իր ծառայությունների համար բրոքերը ստանում է վարձատրություն *միջնորդավճարի* ձևով: Բորսայի այն մասնակիցները, որոնք մասնագիտացված են գների բարձրացման մեջ, կոչվում են «ցուլեր», իսկ գների իջեցման մեջ մասնագիտացվածները՝ «արջեր»:

Հարկ է նշել, որ բացի ֆոնդային բորսաներից, որտեղ կատարվում են արժեթղթերի առք ու վաճառքի գործարքները, գործում են նաև արտարժույթի (տարադրամային), ապրանքային (որոնք զբաղվում են հացահատիկի, մետաղների, նավթի և այլ, այսպես կոչված, բորսայական ապրանքների մեծածախ գործարքներով), աշխատանքային և ունիվերսալ (տարբեր ապրանքների) բորսաներ:

XIX-XX դարերի սահմանագծին ֆոնդային բորսաները դարձան ազգային ու համաշխարհային շուկաների կարևորագույն բաղադրամասը: Երկրների տնտեսական կապերի ինտերնացիոնալիզացիայի ուժեղացումն արագացրեց արժեթղթերի միջազգային շուկայի զարգացումը (օրինակ, Լոնդոնի ֆոնդային բորսայում արժեթղթերի ամբողջ պտույտի կեսից ավելին ընկնում է արտասահմանյան արժեթղթերին): Նրա ծավալը ներկայումս 100 մլրդ դոլարից ավելին է կազմում: Այդ շուկայի խոշորագույն կենտրոններն են՝ Նյու Յորքի, Տոկիոյի, Լոնդոնի և Փարիզի ֆոնդային բորսաները:

Վարկային շուկան փոխառու կապիտալի շուկան է, որի գործունեությունն ապահովում են բանկերը, ապահովագրական ընկերությունները, տարբեր ֆոնդերը: Դրանք հավաքագրում են ազատ դրամական նիջոցները՝ վերածելով վարկի:

Հանրապետության ֆինանսական շուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն բնութագրվել է ոչ ռեզիդենտների համար բարձր եկամտաբերությամբ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծել կարճաժամկետ կապիտալի ներհոսքի համար: Ներհոսքը հիմնականում կապված էր ոչ ռեզիդենտների կողմից կառավարության թողարկած պարտատոմսերի ձեռքբերման հետ, որոնց կարճաժամկետությունը և եկամտաբերությունը նպաստեցին դրանց արագ սպառմանը: Այսպես օրինակ, 1997թ. վերջին թողարկված պարտատոմսերի ամբողջ ծավալում ոչ ռեզիդենտների մասնակցությունը կազմել է մոտ 53%:

Անցման շրջանի սկզբում Հայաստանում ֆինանսական շուկա առանց սահմանափակման մուտք գործելու հնարավորությունը և թույլ վերահսկողությունը վտանգեցին որոշ բանկերի հուսալիությունը և տեղ տվեցին տարբեր չարաշահումների՝ մեծ վնաս հասցնելով ֆինանսական հատվածի նկատմամբ երկարաժամկետ վստահությանը: Ֆինանսական համակարգի կարևոր հիմնախնդիրներն են՝ կապիտալի շուկայի թերզարգացածությունը, երկարաժամկետ վարկավորման համար անհրաժեշտ ինստիտուտների (ապահո-վագրական ընկերություններ, կենսաթոշակային և ներդրումային մասնավոր հիմնադրամներ և այլն) բացակայությունը:

Կոշտ ֆինանսական քաղաքականության անցկացումը ՀՀ-ում, նույնիսկ կորուստների կամ տնտեսական ներուժի մի մասի կրճատման գնով, իսկապես հավասարակշռված շուկայական արտադրության ստեղծումը, ըստ էության, լճացման վիճակից դուրս գալու, ինվեստիցիաների, կառուցվածքային վերափոխումների ակտիվացման, դրված գլխավոր նպատակի՝ բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի աստիճանական բարձրացման հասնելու միակ ելքն է: Դրա ճիշտ անցկացման շնորհիվ կհաջողվի հասնել մակրոտնտեսական կայունացման, ամբողջական առաջարկի և պահանջարկի հավասարակշռման, ձեռնարկատիրական գործունեության աշխուժացման և հաստատուն տնտեսական աճի ձեռքբերման:

6.2.Պետբյուջե: Հայաստանի Հանրապետության պետբյուջեն

Պետական ֆինանսների համակարգում կենտրոնական տեղը և դերը պատկանում է բյուջետային համակարգին, մասնավորապես, պետական բյուջեին (անգլ. budget - պայուսակ): Բյուջետային համակարգն բավականին բարդ մեխանիզմ է, որն արտացոլում է այս կամ այն երկրի առանձնահատկությունները, նրա

սոցիալ-տնտեսական կարգը, պետականության կառուցվածքը, ինչպես նաև հասարակական վերարտադրության նյութաիրային դրամաֆինանսական համամասնությունները:

ՀՀ բյուջետային համակարգը բաղկացած է պետական և համայնքային բյուջեներից: Պետական և համայնքային բյուջեն, ՀՀ Սահմանադրության և օրենքներին համապատասխան, պետության և տեղական ինքնակառավարման խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղված դրամական միջոցների հիմնադրամի ձևավորման և ծախսման հիմնական ֆինանսական ծրագիրն է: Հետևապես, պետբյուջեն երկրի ֆինանսական համակարգի կարևորագույն օղակն է, պետության տարեկան ամփոփ ֆինանսական հաշվեկշիռը, որի հիմնական խնդիրն է՝ ֆինանսական միջոցների հավաքագրմամբ նպաստավոր պայմաններ ստեղծել տնտեսության արդյունավետ զարգացման, պաշտպանական, սոցիալ-մշակութային միջոցառումների իրականացման ու սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր մշակելու համար:

Ժամանակակից պայմաններում բյուջեն տնտեսության պետական կարգավորման, տնտեսական իրադրության վրա ներգործելու, ինչպես նաև ակտիվ հակաճգնաժամային միջոցառումների հզոր լծակ է: Պետբյուջեն բարդ բազմապլանային փաստաթուղթ է, որն արտացոլում է պետության գործառույթների բազմազանությունը: Առաջին հերթին բյուջեում իր արտահայտությունն է գտնում պետության եկամուտների ու ծախսերի կառուցվածքը: Ծախսերը ցույց են տալիս բյուջետային հատկացումների նպատակները և ուղղությունները:

Խոշորացված խմբերով բյուջետային ծախսային հոդվածները բաժանվում են՝ պետական կառավարման, ռազմական, սոցիալական, ինչպես նաև պետության տնտեսական գործունեության ֆինանսավորման ծախսերի:

Պետական համախմբված բյուջեյի եկամուտները գոյանում են, նախ և առաջ, հարկերից ու տուրքերից, ոչ հարկային եկամուտներից և գանձույթներից, որոնք գանձում են ինչպես կենտրոնական, այնպես և տեղական իշխանության մարմինները, պաշտոնական անհատույց փոխատվություններից, ինչպես նաև, այսպես կոչված, արտաբյուջետային կամ նպատակային ֆոնդերի մուտքերից:

Բյուջետային գործընթացն ենթադրում է պետական եկամուտների և ծախսերի հաշվեկշռության ապահովում և պահպանում: Սակայն գործնականում գրեթե բոլոր երկրներում պետական ծախսերը գերազանցում են եկամուտները,առաջացնելով ***բյուջեների պակասորդ*** (անգլ. deficit - դեֆիցիտ): Դրա առաջացման և արագ մեծացման պատճառները բազմաթիվ են: Այս հարցում կարևոր նշանակություն ունեն հասարակական կյանքի տարբեր ոլորտներում պետության դերի մշտական մեծացումը, նրա տնտեսական և սոցիալական գործառույթների ընդլայնումը, հսկայական ռազմական ծախսերը, պետական ապարատի ուռճացումը, սոցիալական և այլ ծախսերի մեծացումը, որը ոչ միշտ հատուցվում է հարկային և ոչ հարկային մուտքերի ավելացմամբ:

Յուրաքանչյուր երկրի պետական բյուջեն նրա հզորության արգասիքն է և իրենից ներկայացնում է ֆինանսական բարդ մի մեխանիզմ, որի միջոցով պետությունն իր ձեռքում է կենտրոնացնում տարվա ընթացիկ ստեղծված ՀՆԱ-ի զգալի մասը, իրագործելով սոցիալ- տնտեսական, քաղաքական և ռազմական հիմնախնդիրները:

ՀՀ պետական բյուջեն անկախության տարիներին արմատական փոփոխություն է կրել: Նախ, կտրուկ (14-15 անգամ) պակասել են նրա եկամուտները: Երկրորդ, հիմնովին փոխվել են նաև եկամուտների աղբյուրները, ինչպես նաև ծախսերի կառուցվածքը: Երրորդ, զգալիորեն իջել է ՀՆԱ-ի մեջ պետական բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը և ավելացել է պակասորդը:

ՀՆԱ-ի մեջ բյուջետային ընդհանուր եկամուտների տեսակարար կշռի փոփոխությունը պատկերված է նկար 60 -ում*:



Նկար 60. Ընդհանուր եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (ՀՆԱ=100%)

Վիճակագրական տվյալներով, գների ազատականացումից հետո՝ երկու տարում (1995-1996թթ.) բնակչության դրամական եկամուտներն ընթացիկ գներով ավելացել էին 8 անգամ, իսկ պետական բյուջեի հարկային եկամուտները՝ 3.3 անգամ: Դա նշանակում է, որ երկրի ճակատագիրը հանձնվել էր շուկայական տարերքի քմահաճույքին և նրա գոյությունը պահպանվում էր արտաքին օգնության և վարկերի, առևտրի բացասական հաշվեկշռի հաշվին: Բավական է նշել, որ պետական բյուջեի պակասորդը 1994-1996թթ. կազմել է ՀՆԱ-ի 10.1%-ը, գրեթե այնքան, որքան բոլոր հարկային եկամուտները և մաքսային տուրքերը միասին վերցրած (10.8%):

Այդ տարիներին արտաքին պարտքը հասավ ՀՆԱ-ի 34% (1996թ.), իսկ առևտրական բացասական հաշվեկշիռը երեք տարում ավելացավ 5.8 անգամ, 1996թ կազմելով՝ 565.5 մլն ԱՄՆ դոլար: 1999թ. վերջին եկամուտները և դրամաշնորհները կազմել են 190916 մլն դրամ (որից՝ 158802-ը հարկային եկամուտներն են, 17014-ը՝ ոչ հարկային եկամուտները և 15100-ը՝ դրամաշնորհները), աճելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ 13.2%-ով, իսկ ծախսերը կազմել են 242585 մլն դրամ, աճելով 18.6%-ով: Պետական բյուջեի պակասորդը 1999թ. կազմեց ՀՆԱ-ի 5.2%, 1998-ի 3.7%-ի դիմաց, իսկ առևտրային հաշվեկշռի պակասորդը կազմել է 460.4 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատությամբ նվազելով շուրջ 20.3%-ով:

Բյուջեի եկամուտների մուտքագրման վրա բացասական ազդեցություն էին թողել այնպիսի գործոններ, ինչպիսիք են ձեռնարկությունների զգալի մասի ֆինանսական ծանր վիճակը, ոչ դրամական հաշվարկների ընդլայնվող համակարգը, ստվերային տնտեսության աճը և այլն: Այդ տարիներին (1997-1998 թթ) ձեռնարկվեցին միջոցառումներ, որոնց շնորհիվ 1997թ. 1996-ի համեմատությամբ պետբյուջեի եկամուտները ավելացան 28.4%-ով, իսկ 1998թ.՝ 1997թ. համեմատ՝ 30.8%-ով: Արդյունքում պետական բյուջեն հիմնականում համալրվել էր ներքին աղբյուրների հաշվին (1997թ.՝ 88.8%, 1998թ.՝ 91.2%):

2001թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետության 2001 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում էր եկամուտների և ծախսերի համամասնությունների ապահովում: Այդ տարի գրանցվեց պետբյուջեի եկամուտների ու դրամաշնորհների աճ նախորդ տարվա նկատմամբ, ինչպես նաև որոշակի տեղաշարժեր բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում: Նոր հարկային օրենսդրությամբ շահութահարկի գծով 2001 թ. սահմանվել էր հարկային բեռի թեթևացում:

2002թ. 2001-ի համեմատ պետբյուջեի եկամուտներում ոչ հարկային եկամուտների ու տուրքերի մասը նվազել է, իսկ հարկային եկամուտների ու պաշտոնական անհատույց փոխատվությունների մասը աճել, ընդ որում հարկային եկամուտներում զգալիորեն աճել են անուղղակի հարկատեսակներն ու նվազել ուղղակի հարկատեսակները*:

Վերջին տարիների պետական բյուջեի ընթացիկ եկամուտների կառուցվածքը (առանց պաշտոնական անհատույց փոխատվությունների) կարելի է պատկերել հետևյալ կերպ (նկար 61):



Նկար 61. ՀՀ պետական բյուջեյի ընթացիկ եկամուտների կառուցվածքը 2001 և 2002թթ.

Անցումային շրջանում արմատական փոփոխություն է կրել նաև պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը, մասնավորապես՝ խիստ կրճատվել է պետական բյուջեի հաշվին տնտեսության ֆինանսավորումը: Եթե 1990թ. բյուջեի ծախսերի մեջ տնտեսության ֆինանսավորումը կազմում էր 53%, ապա արդեն 1997թ.՝ միայն 15%: Դրա փոխարեն կտրուկ բարձրացել էին երկրի կառավարման և պաշտպանության հետ կապված ծախսերը (6.8%-ից հասնելով 52.7%-ի): 1998թ. բյուջեի առանձնահատկությունն այն էր, որ կարևորվել էր սոցիալական քաղաքականության գերխնդիրը, մասնավորապես՝ առաջին պլան էր մղվել բնակչության զբաղվածության հարցը, նոր աշխատատեղերի ստեղծումը, զգալիորեն ավելացել էին առողջապահության, կրթության և գիտության ոլորտներին տրամադրվող հատկացումները, առաջին անգամ բյուջեն ներկայացվել էր համախմբված ձևով, որը հիմք էր տալիս տնտեսական կայունությունից անցում կատարել դեպի տնտեսական զարգացումը: 1999թ. հունվարի 1-ից ՀՀ կառավարությունը ներդրել էր նպաստների նոր միասնական ընտանեկան համակարգ, որի

նպատակը բնակչության առավել անապահով խմբերին ցուցաբերվող աջակցության արդյունավետության բարձրացումն էր: Պետական բյուջեի հաշվին կապիտալ ծախսումների կազմում նախապատվությունը տրվել էր ենթակառուցվածքների զարգացմանն ու աղետի գոտու վերականգնմանը:

Հայաստանի Հանրապետության բյուջեի եկամտային մասը 1999, 2000 և 2001թթ. աճել էր, համապատասխանորեն աճել էր և ծախսումների մասը: Սակայն 2002թ. 2001թ. համեմատ բյուջեի եկամտային մասը աճել էր 17.8%, իսկ ծախսումների մասը նվազել 1.7%-ով: 2002թ. վերջին պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը հետևյալն էր (նկար 62):



Նկար 62. ՀՀ պետական ծախսերի կառուցվածքը 2001 և 2002թթ. (մլն.դրամ)

Ընթացիկ ծախսերի աճը ՀՀ պետական ծախսերի կառուցվածքում 2002թ. տեղի է ունեցել հիմնականում փոխատվությունների (տրանսֆերտ), լրահատկացումների (սուբսիդիա) և աշխատավարձի աճի հաշվին:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրի համաձայն, սկսած 1998թ. յուրաքանչյուր գալիք տարի բյուջեի պակասորդը նախատեսվում էր կրճատել ՀՆԱ-ի 0.5%-ի չափով: Ընդ որում ուշագրավ էր այն փաստը, որ առաջին անգամ պակասորդը ծածկվելու էր ոչ էմիսիոն ճանապարհով: Բյուջեի պակասորդի ծածկման աղբյուրներն էին՝

- սեփականաշնորհումից ստացված միջոցները (օրինակ, 1998թ. դրանք կազմել են մոտ 2 մլրդ դրամ)
- պետական արժեթղթերի բացթողումը
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերը (դեռ 1998թ. նախատեսվում էր ներգրավել 100.4 մլն դոլարին համարժեք գումարի վարկեր, որոնց զգալի մասը սպասվում էր Համաշխարհային Բանկից: Նախատեսվում էր ստանալ վարկեր ԱՄՆ, Ֆրանսիայի, Գերմանիայի կառավարություններից, ինչպես նաև Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից):
- ՀՀ ԿԲ վարկը և այլն:

1999թ. պետական բյուջեի կատարման ընթացքում առաջացել էր մոտ 52 մլրդ դրամի ճեղքվածք, որը ստիպեց ՀՀ Ազգային Ժողովին ճշտել և ավելի իրատեսական դարձնել 1999թ. բյուջեի եկամուտների հավաքագրման աղբյուրները: Ակնհայտ էր, որ անհրաժեշտ էր վերականգնել ու կատարելագործել ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը:

2000թ. բյուջեի պակասորդը կազմել էր ՀՆԱ 4.9%-ը, որի ֆինանսավորումը հիմնականում (95%-ը) պետք է ծածկվեր արտաքին աղբյուրների հաշվին: ՀՀ-ում *պետական արտաքին պարտքը* (external public (national) debt) արդեն 2000թ. հասավ 860 մլն ԱՄՆ դոլարի:

2001թ. բյուջեի պակասորդը կազմեց ՀՆԱ 4.6%-ը, կրճատվելով նախորդ ժամանակահատվածի համեմատ 0.3%-ով, իսկ 2002թ. այն կազմեց ՀՆԱ 0.6%-ը: Պակասորդի ֆինանսավորման աղբյուրները բացառապես արտաքին են եղել:

Վերջին տարիների ՀՀ պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և պակասորդի տեսակարար կշիռը ՀՆԱ նկատմամբ պատկերված է նկար 63 -ում:



Նկար 63. ՀՀ պետբյուջեի եկամուտների, ծախսերի և պակասորդի տեսակարար կշիռը ՀՆԱ նկատմամբ (% - ով)

6.3. Հարկերը, դրանց գործառույթները և տեսակները

Պետությունն իր տնտեսական գործառույթները հիմնականում իրականացնում է հարկերի միջոցով, քանի որ դրանք պետության եկամուտների հիմնական աղբյուրներն են: ***Հարկերը*** (անգլ. tax) պարտադիր և չփոխհատուցվող վճարումներ են, որոնք գանձում է պետությունը ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

Յուրաքանչյուր պետություն ինքն է մշակում և կենսագործում իր **հարկային քաղաքականությունը**՝ (անգլ. tax policy), ելնելով երկրի առջև ծառացած սոցիալ տնտեսական և պաշտպանական պահանջներից:

Պետության հարկային քաղաքականությունը շուկայական հարաբերությունների կարգավորման առավել կարևոր լծակներից մեկն է, որը կոչված է խթանելու երկրի տնտեսական զարգացումը և լուծելու սոցիալական և քաղաքական հարցերը:

Հարկային համակարգը (անգլ. tax system) իրենից ներկայացնում է պետությունում գանձվող հարկերի, տուրքերի, մաքսերի և այլ վճարումների, ինչպես նաև դրանց կազմավորման ձևերի և մեթոդների ամբողջությունը: Դրա խնդիրն է ապահովել պետության ֆինանսական պահանջները, սահմանել հարկային դրույթների այնպիսի մակարդակ, որը կստիպի ֆիրմաներին փնտրելու և գտնելու շահույթը մեծացնելու նոր ուղիներ:

Հարկային միասնական քաղաքականությունը միաժամանակ չի բացառում որոշակի արտոնությունների սահմանում առանձին բնագավառների, ճյուղերի և ձեռնարկությունների համար:

Հարկադրման օբյեկտ են՝ բնակչության եկամուտները, տնտեսվարող սուբյեկտների շահույթը, որոշակի ապրանքների ավելացած արժեքը, ակցիզները, մաքսերը, տուրքերը, հարկատուների գործունեության առանձին ձևերը, արժեթղթերի հետ գործարքները, բնական ռեսուրսների օգտագործումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքը, գույքի փոխանցումը, դրամաշնորհներ (գրանտ) և այլն:

Հարկերը կատարում են 3 կարևորագույն գործառույթ.

1. պետական ծախսումների ֆինանսավորում (ֆիսկալ գործառույթ)
2. սոցիալական հավասարակշռության պահպանում (սոցիալական գործառույթ)
3. տնտեսության պետական կարգավորում:

Ցանկացած տնտեսական համակարգի պայմաններում հարկերը, նախ և առաջ կատարել են ֆիսկալ գործառույթ, այսինքն՝ ապահովել են հասարակական ծախսերի, հատկապես պետության ծախսերի ֆինանսավորումը:

Հարկերի ֆիսկալ գործառույթի միջոցով պետությունը մոբիլիզացնում է ֆինանսական ռեսուրսները և պահպանում պետական ապարատը, բնակչությանը տարբեր տեսակի ծառայություններ մատուցում և այլ ծախսեր կատարում:

Վերջին տասնամյակների ընթացքում առավել կարևոր նշանակություն են ստացել սոցիալական (առանձին սոցիալական խմբերի միջև եկամուտների վերաբաշխման և նրանց միջև անհավասարության համահարթեցման) և կարգավորող գործառույթները:

Ցանկացած երկրում որոշակի անհավասարություն է ստեղծվում առանձին սոցիալական խմբերի եկամուտների միջև: Սովորաբար, եկամուտների փաստացի բաշխման օբյեկտիվ գնահատման համար տնտեսագիտության մեջ ընդունված է երկրի բնակչության եկամուտների անհամաչափության աստիճանը որոշել, այսպես կոչված «Լորենցի կորի» և «Ջինի գործակցի» միջոցով, որոնք ցույց են տալիս, թե բնակչության կամ ընտանիքների տվյալ խումբը համախառն եկամտի որ մասին է տնօրինում: Օրինակ, «Լորենցի կորը» ամերիկացի տնտեսագետ և վիճակագիր Մաքս Լորենցի անունով՝ ԱՄՆ-ում 1988թ. ունեցել է հետևյալ պատկերը (նկար 64):



Նկար 64. Լորենցի կոր

Լորենցի կորում անկյան կիսորդը ցույց է տալիս համախառն եկամտի բացարձակ հավասարաչափ բաշխումը բնակչության բոլոր խմբերի միջև: Սակայն իրական բաշխումը միշտ բնութագրվում է շեղումով այդ ուղղագծից: Քանի որ բացարձակ հավասարաչափ բաշխում լինել չի կարող: Եթե անկյան կիսորդի և Լորենցի կորի միջև ընկած հատվածը նշանակենք T-ով, ապա կարելի է պատկերել հետևյալ հարաբերությունը.

$$G = \frac{T}{OFA},$$

որտեղ՝

G-ն եկամուտների անհավասարության աստիճանն արտահայտող ցուցանիշն է:

Այն տնտեսագիտության մեջ անվանվում է Ջինի գործակից՝ իտալացի տնտեսագետ և վիճակագիր Կորրադո Ջինի անունով: Ակնհայտ է, որ որքան շատ է Լորենցի կորի շեղումը անկյան կիսորդից, այնքան շատ է *T*-ի մասը և, հետևաբար այնքան Ջինի գործակիցը կմոտենա մեկի: Իսկ ինչքան Լորենցի կորը հեռանա (OA) կիսորդից, այնքան շատ կլինի անհավասարությունը եկամուտների բաշխման մեջ: Այսպիսով, ինչպես երևում է գծապատկերից, հարկերը կարևորագույն դեր են խաղում սոցիալական կյանքում, քանի որ առանձին սոցիալական խմբերի եկամուտների անհավասարությունն ինչ որ չափով համահարթում են՝ պահպանելով սոցիալական որոշակի հավասարակշռություն: Եկամուտների անհավասարության աստիճանն արտահայտող Ջինի գործակիցը վերջին տարիներին ամենաբարձրն է Հայաստանում մնացած բոլոր անցումային շրջանի երկրների համեմատ (նկար 65):



Նկար 65. Եկամուտների անհավասարությունը (Ջինի գործակիցը) անցման շրջանի երկրներում

Բացի հարկադիր բնույթից, հարկերի տարբերիչ բնութագրերից է նաև գանձման կարգով վճարվող գումարի քանակի և պետության կողմից հարկատուի ստացած ծառայությունների արժեքի միջև եղած անհամապատասխանությունը:

Հարկերը լինում են պրոգրեսիվ, ռեգռեսիվ և համամասնական: *Ռեգրեսիվ* հարկադրումը հարկի վճարման այն ձևն է, որի դեպքում բազիսային եկամտի աճին զուգընթաց հարկադրման նորման աճում է, սակայն նորմայի յուրաքանչյուր հաջորդ աճ ավելի ցածր է, քան նախորդը, այսինքն՝ եկամտի աճին զուգընթաց իջնում է հարկի միջին դրույքը: Օրինակ, եթե մինչև 1000$ հարկադրույքը 15% է, ապա 1000-2000$՝ 10%, 2000-3000$՝ 5% և այլն:

Պրոգրեսիվ հարկադրման դեպքում եկամտի աճին զուգընթաց հարկադրման նորման աճում է: *Համամասնական* հարկադրումը ենթադրում է հարկադրման նույն նորմայի պահպանումը՝ անկախ հարկման ենթակա բազիսային եկամտի չափերից (օրինակ, 10%-ը շահույթից):

Հարկերը լինում են երկու տիպի՝ ուղղակի և անուղղակի: Եկամուտների և գույքի հարկերը գանձվում են կոնկրետ ֆիզիկական և իրավաբանական անձանցից (շահութահարկ, սոցապահովագրության հարկ, գույքահարկ, այդ թվում՝ սեփականության հարկ, ներառելով հողը և անշարժ գույքը և այլն): Դրանք կոչվում են *ուղղակի հարկեր:* Հարկերի երկրորդ տիպը գանձվում է ապրանքներից և ծառայություններից (ավելացված արժեքից հարկ, ակցիզները), որոնք ուղիղ ներառվում են ապրանքների և ծառայությունների գնի մեջ և կոչվում են *անուղղակի հարկեր:*

Զարգացած երկրներում հիմնական հարկերն են *անհատական եկամտահարկը*: Այն գանձվում է ֆիզիկական անձերի եկամուտներից զեղջերը և արտոնությունները հանելուց հետո: Դա ուղղակի հարկ է և չի դրվում ուրիշ անձանց վրա, բայց կարող են լինել բացառություններ (օրինակ, առանձին անձինք կամ մարդկային խմբեր կարող են արդյունավետ վերահսկել իրենց ծառայությունների գինը և երբեմն իրենց հարկերի մի մասը դնել ուրիշների վրա, ասենք բժիշկները, իրավաբանները և այլ մասնագետներ կարող են բարձրացնել իրենց ծառայությունների դրույքները՝ հարկերը փոխհատուցելու համար):

Հարկ կորպորացիաներից կամ շահութահարկ (ֆիրմաների, ձեռնարկությունների շահույթից): Գանձվում է այն դեպքում, երբ կորպորացիան ճանաչված է որպես իրավաբանական անձ: Սակայն պետք է նշել, որ այս հարկը կապված է կրկնակի հարկադրման խնդրի հետ, քանի որ շահույթի այն մասը, որ տրվում է դիվիդենտի ձևով, հարկվում է կրկնակի (առաջին անգամ կորպորացիայի շահույթից և երկրորդ անգամ՝ բաժնետերերի անձնական եկամտից): *Սեփականության հարկը* գանձվում է շարժական, ինչպես նաև անշարժ սեփականությունից, նրա տարատեսակներից է *հողի հարկը*, որը հաշվվում է ելնելով հողի վրա կառուցված տնտեսական օբյեկտների արժեքային գնահատականից:

Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) պատկանում է անուղղակի հարկերի թվին, քանի որ դրա մեծությունը գումարվում է ապրանքի սկզբնական գնին և գանձվում գնորդներից: ԱԱՀ-ն արտադրության տարբեր գործընթացներում ավելացված արժեքի մի մասն է, որը բյուջեի դրամամուտքը լրացնելու լրացուցիչ աղբյուր է: ԱԱՀ-ի աղբյուրը արդյունքի վաճառքից ստացված լրացուցիչ դրամական միջոցներն են, որոնք ի վերջո վճարում է բնակչությունը:

Ակցիզային հարկը (հարկը վաճառքից) անուղղակի հարկ է, քանի որ դրվում է վաճառողների կողմից սպառողների վրա բարձր գների միջոցով: Ակցիզային հարկադրման հատուկ ձև է *ֆիսկալ մենատիրական հարկը (ֆիսկալ մոնոպոլիա)*, որի դեպքում առանձին ապրանքների արտադրությունն ու վաճառքը պետությունը համարում է իր մենաշնորհը և բարձր գներ սահմանելով, բնակչությունից հարկ է գանձում: *Մաքսային տուրքը* գանձվում է ապրանքներն արտասահմանից ներմուծելու կամ դրանք արտահանելու ժամանակ:

2002թ. ՀՀ պետբյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում զգալիորեն աճել էին անուղղակի հարկատեսակները ու նվազել ուղղակի հարկատեսակները: Նրանց տեսակարար կշիռը հարկային եկամուտների կառուցվածքում հետևյալն էր (նկար 66*):



Նկար 66. ՀՀ պետբյուջեի հարկատեսակների տեսակարար կշիռը հարկային եկամուտների կառուցվածքում 2002թ.

Պետական բյուջեի և հարկադրման դինամիկայի միջև կախվածությունն արտահայտվում է գրաֆիկորեն և ունի կորի տեսք, որը ստացել է ամերիկացի տնտեսագետ Ա.Լաֆերի անունը (նկար 67):



Նկար 67. Լաֆերի կոր

Լաֆերի կորն արտահայտում է հարկադրույքի և նրանց հաշվին պետբյուջե մուտք եղած միջոցների փոխկապվածությունը: Հարկադրույքի բարձրացման դեպքում պետության եկամուտները հարկերի հաշվին սկզբում ավելանում են, երբ հարկադրույքը գերազանցում է մի որոշ սահման, եկամուտները հարկային մուտքերի հաշվին սկսում են պակասել: Բարձր հարկերն իջեցնում են արտադրության խթանները և դրանց հաշվին պակասեցնում պետության եկամուտները, և, ընդհակառակը, հարկերի իջեցումը այդ դեպքում բարելավում է պետական ֆինանսների վիճակը: Այդ կորը չի պատասխանում այն հարցին, թե ինչպիսի հարկադրույքի պայմաններում հարկերի մուտքը կլինի առավելագույնը, քանի որ հարկերի այդպիսի դրույքը տարբեր է տարբեր երկրների համար և կախված է շատ գործոններից՝ հարկային քաղաքականությունից, տնտեսության պետական հատվածի կառուցվածքից ու չափերից և այլն:

Հայաստանը սկսել է իրականացնել իր անկախ հարկային քաղաքականությունը սկսած 1992թ. սկզբում նմանակելով Ռուսաստանին, հետագայում վարելով ավելի ինքնուրույն քաղաքականություն, նպատակ ունենալով կրճատել պետության դերը և ստեղծել մասնավոր հատվածի զարգացման համար բարենպաստ միջավայր: Հարկային քաղաքականությունը հիմնականում ունեցել է ֆիսկալ բնույթ, ուղղված է եղել հարկային բազայի ընդլայնմանը և հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը: Սակայն քիչ է հաշվի առնվել հարկային բեռի ազդեցությունը տնտեսավորող սուբյեկտների գործունեության վրա: 1997-ից վերանայելով հարկային քաղաքականությունը, թեթևացվեց հարկային բեռը շահութահարկի, եկամտահարկի և սոցիալական պարտադիր վճարումների գծով, այն հարկատեսակների, որոնք ուղղակիորեն կապված են արտադրողների և բնակչության եկամուտների հետ: Նախատեսվում է առաջիկա տարիներին հարկային բեռի հետագա թեթևացում:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրում մանրամասնորեն շարադրված են ապագայում պետության հարկային քաղաքականության սկզբունքները: Այն հիմնված է հարկային վարչարարության հետագա կատարելագործման և հարկման բազայի ընդլայնման վրա: Միաժամանակ, կառավարությունը գտնում է, որ առաջիկայում ևս պետական բյուջեի հիմնական աղբյուրը կմնան անուղղակի հարկերը, քանի որ «այլընտրանք չկա»:

Վարչական մեթոդների խստացման, անուղղակի հարկերի և տուրքերի կտրուկ ավելացման միջոցով, իրոք, 1998 թվականին հաջողվել էր նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի եկամուտներն ավելացնել 34.3%-ով (91%-ով ներքին աղբյուրների հաշվին):

Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) մեջ պետական բյուջեի եկամուտների ու գրանտների բաժինը 1998 թվականին կազմել էր 17.6%, իսկ հարկային եկամուտները 13.7%՝ նախորդ տարվա 15.8% և 12.9%-ի դիմաց:

Հաշվեկշռված բյուջեյի կազմավորումը և ՀՆԱ-ի մեջ նրա տեսակարար կշռի բարձրացումը դրական միտում է: Պետության բյուջեի եկամուտների գերազանցումով և մեծությամբ է որոշվում յուրաքանչյուր պետության տնտեսական հզորությունը և սոցիալական խնդիրների լուծման հնարավորությունները: Սակայն, ժամանակակից զարգացած երկրներում, պետական բյուջեի կազմավորման հիմնական աղբյուրը ուղղակի հարկերն են, որոնց տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների մեջ գնալով իջնում է, եթե 1998 թվականին դրանք կազմել էին 17%, ապա 1999 թվականին ընդամենը 14%: Համեմատական կարգով նշենք, որ նշված ցուցանիշը 1996 թվականին կազմել է 41%, իսկ 1997 թվականին՝ 32%:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, անուղղակի հարկերը և տուրքերը կամայականությունների, չարաշահումների, կոռուպցիայի հուսալի աղբյուր են հանդիսանում և ոչնչով չեն նպաստում արտադրական ներդրումների ավելացմանը, տնտեսության աշխուժացմանը, սպառողական գների իջեցմանը և սոցիալական շերտավորման մեղմացմանը:

Ինչպես նշվում է ՄԱԿ-ի «Հայաստանի մարդկային զարգացման» զեկույցում (1997թ.), բնակչության եկամուտների մոտ 75%-ը չի հարկվում և մինչև հիմա չկա պետական պաշտոնյաների և ծառայողների կողմից իրենց եկամուտների մասին հայտարագրերի հանձնման կարգ, որի պատճառով էլ «կլանների» դեմ պայքարում պետության քաղաքականության հնարավորությունները զգալիորեն սահմանափակվում են պետության ապարատի ներսում եղած կոռուպցիայով:

Եթե հաշվի առնենք նաև ստվերային տնտեսության եկամուտները, ապա եկամտահարկի ձևով բնակչության եկամուտների 13%-ն էր մուտքագվում պետական բյուջե, այն դեպքում, երբ 10 հազար դրամ աշխատավարձի ձևով ստացվող եկամտից գանձվում էր 15% եկամտահարկ:

Նման պարագայում եկամտահարկից պետք էր ազատել սպառողական զամբյուղը չապահովող եկամուտները և ներդնել ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հայտարարագրման միասնական համակարգ: Արդեն 2000 թվականին պետական բյուջեյի եկամուտների կազմում ապահովվել էր ուղղակի հարկերի, հատկապես շահութահարկի ու եկամտահարկի տեսակարար կշռի զգալի բարձրացումը:

Ժամանակ է մշակել հարկային նոր օրենսգիրք, որի հիմքում պետք է դրվեն զարգացած երկրներում կիրառվող հարկային քաղաքականության սկզբունքները՝ հաշվի առնելով նաև անցման շրջանի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում:

6.4. Դրամավարկային քաղաքականություն և դրամավարկային համակարգ: ՀՀ դրամավարային քաղաքականությունը:

Դրամական շրջանառության և վարկի բնագավառում պետական միջոցառումների ամբողջությունը ստացել է դրամավարկային քաղաքականություն անվանումը: *Դրամավարկային քաղաքականությունը* (monetary policy)՝ կենտրոնական բանկի քաղաքականությունն է, որով նա ձգտում է ազդել մակրոտնտեսական պայմանների վրա՝ մեծացնելով կամ փոքրացնելով դրամական զանգվածը: Դրա նպատակն է նպաստել երկրում տնտեսական իրադրության կարգավորմանը (վարկի և դրամական շրջանառության, այդ թվում և գնաճի, վրա ներգործելու միջոցով), տնտեսական աճին, գների և վճարային հաշվեկշռի կայունությանը, զբաղվածության ապահովմանը, դրամաշրջանառության և բանկային համակարգի իրացվելիության ու վճարունակության վերահսկմանը, ինչպես նաև նրան, որպեսզի դրամի և վարկային ռեսուրսների առաջարկի մակարդակը նպաստի համազգային տնտեսական խնդիրների լուծմանը: Դրամավարկային քաղաքականությունը անմիջական ազդեցություն է թողնում այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ինչպիսիք են ՀՆԱ-ն, գների մակարդակը, գնաճը և զբաղվածությունը: Հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականության հետ միասին դրամավարկային քաղաքականությունը տնտեսության կայունացման կարևոր լծակ է:

Դրամավարկային քաղաքականությունը հետապնդում է կամ վարկի և դրամական էմիսիայի ընդլայնում (վարկային էքսպանսիա), կամ էլ դրանց սահմանափակում (վարկային ռեստրիկցիա): Այսպես, տնտեսության ճգնաժամային իրավիճակում կենտրոնական բանկերը փորձում են աշխուժացնել շուկայական իրադրությունը (կոնյուկտուրան)՝ վարկի ընդլայնման և տոկոսադրույքի իջեցման ճանապարհով, իսկ տնտեսական վերելքի ժամանակ, ընդհակառակը, նրանք սահմանափակում են վարկը և բարձրացնում տոկոսադրույքը: Դրամավարկային ոլորտի պետական կարգավորումը կարող է հաջող իրականացվել այն դեպքում, երբ պետությունը կենտրոնական բանկի միջոցով ազդում է մասնավոր ինստիտուտների գործունեության մասշտաբների և բնույթի վրա: Զարգացած շուկայական տնտեսությունում հենց դրանք են ամբողջ դրամավարկային համակարգի հիմքը:

Բանկային համակարգի պետական վերահսկման նպատակն է ամրապնդել ավանդատուների պահանջ-մունքները ժամանակին բավարարելու ֆինանսավարկային ինստիտուտների կարողությունը: Նույն կարգի միջոցառումներով պետությունը նպաստում է դրամական զանգվածի ընդլայնմանը կամ կրճատմանը: Պետական կարգավորման ուղղություն է հանդիսանում նաև պետական պարտքի կառավարումը՝ քրոնիկ բյուջետային դեֆիցիտի պայմաններում, որը հանգեցնում է արտաքին և ներքին պարտքի աճին: Պետության ներքին պարտքի աճի ժամանակ կտրուկ մեծանում է պետական վարկի ազդեցությունը փոխատվական կապիտալի շուկայի վրա: Դրա համար կենտրոնական բանկն օգտագործում է պետական պարտքի կառավարման տարբեր մեթոդներ՝ գնում կամ վաճառում է պետական պարտավորությունները, փոխում է փոխառությունների գինը, դրանց վաճառքի պայմանները, տարբեր եղանակներով բարձրացնում մասնավոր ներդրողների գրավչությունը:

Իր հիմնական խնդիրներն իրագործելու համար կենտրոնական բանկը թողարկում է նաև պետական արժեթղթեր, կառավարում արժութային պահուստները և ազգային արժույթի փոխարժեքը: Կենտրոնական բանկերը հաճախ վարում են «կոշտ» դրամավարկային քաղաքականություն՝ գնաճը զսպելու նպատակով: Այդ կարգավորումն իրականացվում է մի քանի փոխկապված ուղղություններով:

Դրամավարկային քաղաքականության ***մեթոդները*** բաժանվում են 2 խմբի՝ *ընդհանուր* (ամբողջությամբ վերցված փոխատվական կապիտալների շուկայի վրա ազդեցությունը) և *ընտրովի* (վարկի կոնկրետ ձևերի կարգավորում կամ առանձին ճյուղերի, խոշոր ֆիրմաների և այլնի վարկավորում):

Ընդհանուր մեթոդներից (գործիքներ) են՝

- *պաշտոնական հաշվարկային (վերաֆինանսավորման) տոկոսադրույքի փոփոխություն*: Տոկոսադրույքը (interest rate)՝ որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարում) տոկոսի որոշակի գումար է, որը փոխառուն փոխատուին վճարում է փոխ առնված որոշակի գումարի դիմաց: Այն հաշվարկվում է հիմնական գումարի նկատմամբ տոկոսներով, ելնելով սովորաբար փոխառությունից մեկ տարի օգտվելու հաշվարկից: Այս վարկային կարգավորման մեթոդը հնագույններից է: Տոկոսադրույքի քաղաքականության (interest-rate policy) օգնությամբ կառավարությունը ներգործում է տոկոսադրույքների վրա՝ կարգավորելով իր պարտքի ծավալը: Բարձրացնելով տոկոսադրույքները, կենտրոնական բանկը դրդում է այլ վարկային հիմնարկություններին կրճատել փոխառությունները, դրանով դժվարացնելով բանկային ռեսուրսների համալրումը, ավելացնելով

տոկոսադրույքները և, վերջին հաշվով, կրճատելով վարկային գործառնությունները: Բարձր տոկոսադրույքները զսպում են ներդրումները և իջեցնում դրամի պահանջարկը՝ հանդես գալով որպես զբաղվածության և գների մակարդակի իջեցման գործիք: Ցածր տոկոսադրույքները տալիս են հակառակ արդյունքը:

▪ *բաց շուկայական գործառնությունների* (open market operations) *իրականացում:* Դրանք կնքվում են, երբ առևտրային բանկերից կենտրոնական բանկը գնում կամ վաճառում է պետական արժեթղթեր, բանկային ակցեպտներ և այլ վարկային պարտավորություններ՝ շուկայական կամ նախօրոք հայտարարված կուրսով: Գնման դեպքում կենտրոնական բանկը առևտրային բանկերին համապատասխան գումարներ է փոխանցում՝ դրանով իսկ ավելացնելով մնացորդները նրանց ռեզերվային հաշիվներում, իսկ վաճառքի ժամանակ կենտրոնական բանկը դուրս է գրում այդ գումարները նրանց հաշիվներից: Այսպիսով, նշված գործարքները փոխում են բանկային համակարգի պահուստային դրությունը, հանդիսանալով նրա կարգավորման մեթոդ:

▪ *պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանում*: Պարտադիր պահուստները (required reserves) առևտրային բանկերի միջոցների մի մասն են, որը պահվում է կենտրոնական բանկում՝ սահմանված նորմատիվներին համապատասխան: Սահմանելով այդպիսի նորմատիվներ բանկերի համար, կենտրոնական բանկը նպաստում է բանկային իրացվելիությանը, սահմանափակելով կամ խրախուսելով ներդրումները: Առևտրային բանկերի պարտադիր պահուստավորման նորմատիվների փոփոխությունները հանդիսանում են բանկային պահուստների մեծության վրա ուղղակի ներգործելու մեթոդ:

Դրամավարկային քաղաքականության ընտրովի մեթոդներին են դասվում հետևյալները՝

▪ *Վարկի առանձին ձևերի հսկողություն* (credit control)՝ պետական մարմինների, բանկերի, կենտրոնական բանկի կամ այլ կազմակերպությունների կողմից վարվող վարկի ավելացման կամ փոքրացման քաղաքականություն: Վարկային հսկողությունը սովորաբար ենթադրում է վարկավորման պաշտոնական սահմանափակումների կիրառում, որոնք կարող են վերաբերել որոշակի ճյուղերի կամ փոխառուների տեսակների վարկավորման սահմանաչափերի (լիմիտների) սահմանմանը, վարկերի ծավալների աճին: Այն հաճախ կիրառվում է բորսայական արժեթղթերի գրավադրման տակ տրված վարկերի, ապառիկ ապրանքների գնման նպատակով սպառողական փոխատվությունների, հիպոտեկային վարկի առումով: Սպառողական վարկի վերահսկումը սովորաբար կիրառվում է փոխատվական կապիտալների շուկայում լարված ժամանակահատվածներում, երբ պետությունը ձգտում է վերաբաշխել փոխատվական կապիտալներն առանձին ճյուղերի օգտին կամ սահմանափակել սպառողական պահանջարկի ընդհանուր ծավալը:

▪ Բանկային գործառնությունների ռիսկի և իրացվելիության կառավարում (bank operations risk & liquidity management)՝ միջոցառումների ամբողջություն է, որոնք իրականացվում են բանկերի կողմից՝ իրացվելիության ցանկալի մակարդակ ապահովելու նպատակով, այսինքն՝ բանկի ունակությունը՝ ցանկացած պահին բավարարելու իր ժամկետային պարտավորությունները: Բանկային գործունեության ռիսկը (բանկային գործառնությունների առանձնահատկություններից բխող կորուստների վտանգ, որն արտահայտվում է անորոշությամբ և շահույթ չստանալու հավանականությամբ) որոշվում է ոչ թե պարտատերերի ֆինանսական վիճակի գնահատումով, այլ տրված վարկերի և բանկի սեփական միջոցների գումարի հարաբերակցությամբ:

Շատ տնտեսագետներ դրամավարկային քաղաքականությունը դիտում են որպես երկրի ազգային կայունացման քաղաքականության անբաժանելի մաս: Դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը նրանց կողմից գնահատվում է հետևյալ փաստարկներով՝

▪ ճկունություն և արագություն (ֆիսկալ քաղաքականության հետ համեմատած այն կարող է շատ արագ փոփոխվել)

▪ մեկուսացում քաղաքական ճնշումից (փոփոխությունները պետական ծախսումներում անմիջականորեն ազդում են ռեսուրսների բաշխման վրա, հարկային փոփոխությունները, անկասկած, կարող են ունենալ շատ խոր գնացող քաղաքական հետևանքներ, իսկ դրամավարկային քաղաքականությունն՝ ընդհակառակը, հանդիսանում է ավելի ընդունելի քաղաքական առումով, քանի որ ավելի նրբորեն է ազդում)

▪ մոնետարիզմ (monetarism) (չնայած տնտեսագետները գտնում են, որ ինչպես ֆիսկալ, այնպես էլ դրամավարկային քաղաքականությունը հանդիսանում են կայունացման գործուն միջոց, սակայն նրանցից շատերը, որոնք կոչվում են մոնետարիստներ, ենթադրում են, որ դրամական զանգվածի մեծությունը և փոփոխությունը էականորեն ազդում են երկրի տնտեսության վրա և դրամական առաջարկի փոփոխությունը տնտեսական ակտիվության մակարդակի որոշման վճռական գործոն է, իսկ ֆիսկալ քաղաքականությունը հարաբերականորեն արդյունավետ չէ):

Սակայն անհրաժեշտ է ընդունել, որ դրամավարկային քաղաքականությունն ունի որոշակի սահմանափակումներ և ռեալ իրականությունում բախվում է մի շարք դժվարությունների հետ:

1. *Պարբերաշրջանային անհամաչափություն*, որը դրամավարկային քաղաքականության լուրջ խոչընդոտ է հանդիսանում միայն խորը դեպրեսիայի ժամանակ, իսկ ավելի նորմալ ժամանակահատվածներում ավելցուկ պահուստների աճը հանգեցնում է լրացուցիչ վարկերի տրամադրմանը և դրանով իսկ, դրամի առաջարկի ավելացմանը:

2. *Փողի շրջանառության արագության փոփոխություն,* որը դրամական շրջանառության տեսանկյունից նշանակում է, որ ընդհանուր ծախսերը կարող են դիտվել որպես դրամական առաջարկ բազմապատկած դրամի շրջանառության արագությամբ: Գնաճի ժամանակ, երբ փողի առաջարկը սահմանափակվում է վարած քաղաքականությամբ, դրամի շրջանառության արագությունը ենթակա է աճի, և ընդհակառակը, երբ անկման շրջանում քաղաքական միջոցառումներ են ընդունվում փողի առաջարկի ավելացման համար, դրամի շրջանառության արագությունը կարող է ընկնել:

3. *Ինվեստիցիաների (ներդրումների) ազդեցություն*, որը արտահայտվում է նրանով, որ որոշ տնտեսագետներ կասկածանքի տակ են դնում, դրամավարկային քաղաքականության մեծ ազդեցությունը ինվեստիցիաների վրա: Համախառն ծախսերի կրճատման նպատակով դրամավարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի

տոկոսադրույքների առավել բարձացմանը, և ընդհակառակը, լուրջ անկումը կարող է խախտել վստահությունը ձեռներեցության նկատմամբ, և դրանով իսկ, ի չիք դարձնել էժան փողերի քաղաքականությունը (easy-money policy՝ իշխանության և բանկերի կողմից անցկացվող քաղաքականություն, որն ուղղված է վարկերի տոկոսադրույքների փոքրացման միջոցով բանկային վարկի ընդլայնմանը):

ՀՀ-ում սեփական դրամավարկային քաղաքականության սկիզբը դրվեց այն ժամանակ, երբ ՌԴ կառավարությունը հրաժարվեց նախկին ԽՍՀՄ հանրապետություններին ապահովել դրամական միջոցներով: Հին ռուբլով դրամական զանգվածի չնախատեսված աճը հանգեցրեց նրան, որ ռուբլու փոխանակումը դրամով չիրականացվեց դոլարի նկատմամբ պաշտոնապես սահմանված կուրսով: Դրամը խիստ արժեզրկվեց ռուսական ռուբլու և հատկապես ԱՄՆ դոլարի նկատմամբ:

Առաջին փուլում (մինչև 1994թ. աշուն) ՀՀ ԿԲ-ի դրամավարկային քաղաքականությունը կրում էր գերազանցապես վարչահրամայական բնույթ: Դրամաշրջանառության կարգավորման հիմնական գործիքներն էին առևտրային բանկերի կանխիկ փողի տրամադրման սահմանափակումը, բանկային տոկոսի ստորին սահմանի որոշումը և այլն: Այդ քաղաքականության հետևանքը եղավ շարունակվող տնտեսական անկումը, պետական բյուջեի հսկայական դեֆիցիտը, չկարգավորվող սղաճը, բանկերի սնանկացումը, բնակչության ներդրումների կորուստը և այլն:

ՀՀ-ի ԿԲ-ի դրամավարկային քաաքականության երկրորդ փուլը սկսվեց 1994թ. վերջին, երբ ազգային արժույթի արժեզրկման գործընթացը դարձավ կարգավորվող: Սակայն, քանի դեռ գոյություն ուներ արտաքին առևտրային բացասական հաշվեկշիռ, իսկ պետական բյուջեի պակասորդը (60%) հիմնականում ֆինանսավորվում էր ԿԲ-ի վարկի հաշվին, դրամավարկային քաղաքականության նպատակներն ու խնդիրներն իրականացվում էին ոչ ամբողջությամբ: Արտաքին վարկերի հաշվին բյուջեի պակասորդի ֆինանսավորումը սկսվեց միայն 1994թ. վերջին, որը հնարավորություն տվեց մշակել դրամական բազայի և դրամական զանգվածի կայունացման քաղաքականություն՝ ստեղծել արտարժույթի պահուստներ, նաև միջոցներ ձեռնարկել ֆինանսական շուկայի վրա որոշակի տնտեսական մեթոդներով ներգործելու ուղղությամբ:

Սակայն ֆինանսական շուկայում ազատ գործառնությունները, պարտադիր պահեստավորման նորմերը և հաշվարկային տոկոսադրույքի սահմանումը կիրառվում էին ոչ հետևողականորեն և անհրաժեշտ արդյունք չէին տալիս: Բաց շուկայական գործառնությունների մեխանիզմի միջոցով դրամական շրջանառության փաստացի կարգավորումը ՀՀ-ում սկսվեց իրականացվել 1995թ.: Բնակչությանը վաճառվեցին 1.1 մլրդ դրամի արժեթղթեր, որի շնորհիվ շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածը զգալիորեն կրճատվեց: Չնայած դրան, նույն թվականին դրամական զանգվածն ավելացավ 72.3%-ով: 1996թ. պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) վաճառքը կազմեց 19.4 մլրդ դրամ, իսկ շրջանառության մեջ դրամական զանգվածն ավելացավ ընդամենը 32.8%-ով: 1997թ. ՊԿՊ-ի գումարը հասավ 42 մլրդ դրամի, իսկ դրամական զանգվածը աճեց 29.7%-ով:

1998 թ. ընթացքում տեղի էին ունեցել 44350.0 մլն դրամ ընդհանուր ծավալով ՊԿՊ թողարկումներ: Նախորդ տարվա համեմատությամբ թողարկումների ընդհանուր ծավալն ավելացել էր 2225.0 մլն դրամով

Տարվա ընթացքում տեղաբաշխվեց թողարկման ծավալի 83.3%՝-ը 36935.05 մլն դրամի արժեթուղթ: 1999թ. ՊԿՊ տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման նոր կարգի հաստատումը նպաստեց պետական կարճաժամկետ պարտատոմսերի շուկայի հետագա զարգացմանը: Այդ տարի իրականացվել են 64600.0 մլն դրամ ընդհանուր ծավալով ՊԿՊ թողարկումներ:

Նախորդ տարվա համեմատությամբ թողարկումների ընդհանուր ծավալն ավելացել է 20250.0 մլն դրամով: Տարվա ընթացքում պարտատոմսերի նկատմամբ ձևավորված 86617.5 մլն դրամի պահանջարկի պայմաններում տեղաբաշխվեց թողարկման ծավալի 89.11%՝-ը՝ 57561.945 մլն դրամի արժեթուղթ: Արդյունքում շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը տարվա վերջին կազմեց 23178.52 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 14.57% - ով՝ 2947.72 մլն դրամ:

Տվյալ գործիքի ներգործությունը դրամական շրջանառության կարգավորման վրա չի կարող լիովին իրեն արդարացնել քանի դեռ ներքին ապրանքաշրջանառությունը չի իրականացվում բացառապես սեփական դրամական միջոցներով և չի վերացվել պետական բյուջեի պակասորդի ֆինանսավորումը ԿԲ վարկերի հաշվին:

Դրամական շրջանառությունը կարգավորելու մյուս գործիքները դեռևս ակտիվ դեր չեն կատարում: Այսպես, առևտրային բանկերի պահուստավորման նորմերի ներգործությունը դրամական զանգվածի ավելացման վրա, մի կողմից կախված է կանխիկ փողի և ավանդներում գտնվող փողի հարաբերակցությունից, մյուս կողմից՝ պահուստավորման նորմերի մեծությունից: Ակնհայտ է, որ պահուստավորման նորմերի ավելացման դեպքում դրամական բազմապատկիչը (money multiplier), որը թվային գործակից է և ցույց է տալիս, թե քանի անգամ է աճում կամ կրճատվում դրամի առաջարկը դրամավարկային համակարգում ավանդները մեկ դրամական միավորով ավելանալու կամ պակասելու հետևանքով կամ նոր դրամի հարաբերությունն ընդհանուր պարտադիր պահուստներին, նվազում է, իսկ դրամական բազայի մեծացման դեպքում դրամական զանգվածն ավելանում է համեմատաբար փոքր չափերով:

Դրամաշրջանառության վրա դրամավարկային քաղաքականության գործիքներից առավել արդյունավետ ներգործությունն է թողնում հաշվարկային տոկոսադրույքի սահմանումը: ՀՀ ԿԲ կողմից դրամաշրջանառության կարգավորման այդպիսի մեխանիզմը սկսեց կիրառվել 1996թ. սկզբից: ԿԲ-ն հաստատեց առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի և փաստացի համալրված հիմնադիր կապիտալի միջև հարաբերակցության նորմատիվային ցուցանիշներ, վերացրեց առևտրային բանկերի հայտերի վրա նվազագույն տոկոսադրույքների սահմանման պրակտիկան:

Դեռ 1997թ. ընթացքում դրամի առաջարկի կարգավորման տեսանկյունից ՀՀ կենտրոնական բանկի համար լուրջ խնդիր էր հանդիսացել ավելցուկային իրացվելիության կրճատման դրամավարկային գործիքների սահմանափակության և միատարրության հարցը: Դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվել էր տարվա ընթացքում հնարավորին չափ սահմանափակել որպես ստերիլիզացիոն գործիք արտարժութային ինվեստիցիաների իրականացումը և դրան զուգահեռ, զարգացնելով արժեթղթերի երկրորդային շուկան, հասնել բաց շուկայական գործառնությունների ու հակադարձ ռեպո համաձայնագրերի ծավալների ընդլայնմանը: Սակայն կենտրոնական բանկին չհաջողվեց ձևավորել անհրաժեշտ ծավալի արժեթղթերի պորտֆել, որովհետև խոչնդոտեցին այնպիսի գործոններ, ինչպիսիք էին՝ ՀՀ կառավարության կողմից արժեթղթերի թողարկման հստակ ծրագրի բացակայությունը, արժեթղթերի շուկայի զարգացման ուղղությամբ չձեռնարկված միջոցառումները: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության միջև 1996թ. վերջից բանակցություններ էին ընթանում 1997թ. հունվարի 1-ի դրությամբ վարկային գծի մնացորդի (19.2 մլրդ դրամ) արժեթղթավորման ուղղությամբ, ինչն այդպես էլ տեղի չունեցավ՝ պայմանների շուրջ փոխհամաձայնության չհանգելու պատճառով: Այնուհանդերձ, երրորդ եռամսյակում կենտրոնական բանկին տրամադրվեցին պետպարտատոմսեր, որոնց օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տեղաբաշխումից ստացված 3047 մլն դրամի հասույթի միայն 40%-ը ուղղվեց վարկային գծի մարմանը, իսկ մնացած մասով ֆինանսավորվեց բյուջեի պակասորդը:

Ի թիվս այլ գործոնների, ակտիվացվեցին ավանդային սակարկությունները, չնայած դրանց ստերիլիզացիոն բնույթը մասամբ թուլանում էր՝ կապված կարճաժամկետ միջակայքում ներդրված գումարների վերադարձման հետ: Ինչևէ, այս գործիքն արդյունավետ կիրառվել է երկրորդ և երրորդ եռամսյակներում՝ զուտ ներգրավմանը համապատասխանաբար 820 մլն և 1400 մլն դրամ: Ի դեպ, չորրորդ եռամսյակում մարումներն արդեն 1250 մլն դրամով գերազանցեցին ներգրաված գումարը: Տարեկան կտրվածքով, ավանդային սակարկությունների միջոցով կրճատվել է ընդհամենը 970 մլն դրամի ավելցուկային իրացվելիություն:

Վերջին տարիների (2000-2003թթ.) հանրապետության դրամավարկային քաղաքականության հիմնական առանձնահատկությունն այն է, որ ՀՀ ԿԲ-ն կառավարության հետ համաձայնեցնում է մակրոտնտեսական ցուցանիշների աճի խթանման իր ծրագիրը: Այդ նպատակով ԿԲ-ն սկսեց անցկացնել կոշտ դրամավարկային քաղաքականություն, որի հիմնական նպատակը սղաճի ցածր տեմպերի և ազգային արժույթի կայունացման ապահովումն է: 2002թ. դրամավարկային քաղաքականության ծրագրում, պահպանելով նախորդ տարիներին ընտրված նպատակներն ու քաղաքականության իրագործման սկզբունքները՝ ամրագրվել էր նաև սղաճի ցածր և կայուն մակարդակի ապահովման հիմնական խնդիրը, որին հասնելու համար իրականացվելիք դրամավարկային քաղաքականությունը նպատակաուղղվել էր փողի ագրեգատների ծավալային կարգավորմանը: Այդուհանդերձ, նախորդ տարիների համեմատ դրամավարկային քաղաքականության ռազմավարության հիմնական առանձնահատկությունն այն էր, որ սպասվում էր խոշորածավալ արտարժութային ներհոսք: Ֆինանսական շուկայում 2002թ., ճիշտ է շատ ավելի դանդաղ տեմպերով, բայց շարունակվել են տոկոսադրույքների՝ 2000թ. սկզբից դրսևորված նվազման միտումները: Այդ տարի ԿԲ-ն պասիվ միջամտություն է ունեցել դրամային շուկայում, ինչը մեծապես պայմանավորել է տարվա ընթացքում ԿԲ գործառնությունների տոկոսադրույքների կայուն վարքագիծը: 2003 թ. դրամավարկային քաղաքականությունը նպատակաուղղված է ձեռք բերված մակրոտնտեսական կայունության պահպանմանը և տնտեսական աճի բարձր տեմպերին համահունչ՝ փողի առաջարկի կառավարմանը: Վերջին տարիներին արձանագրված արտարժութային միջոցների մեծածավալ ներհոսքը հանրապետություն և դրա կլանումը տնտեսության կողմից շարունակվելու է, որի հետևանքով ակնկալվում են փողի առաջարկի կտրուկ աճի դրսևորումներ: Չնայած տոկոսադրույքների նվազման ընդհանուր միտումների պահպանմանը, տոկոսադրույքները ՀՀ-ում դեռևս համեմատաբար բարձր մակարդակ ունեն: Ակնկալվում է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների անկման տեմպերի դանդաղում՝ պայմանավորված առաջնային շուկայում տեղաբաշխվող պետական պարտատոմսերի ժամկետայնության երկարացման միտումներով*:

2003թ., ինչպես նաև հետագա տարիներին, ԿԲ-ն հատուկ ուշադրություն կդարձնի դրամավարկային գործիքների ընտրության և դրանց օպտիմալ համադրման խնդրին, ինչի շնորհիվ առավել սահուն կկառավարվի փողի առաջարկը՝ արդյունքում հանգեցնելով դրամավավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Սակայն դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը պետք է գնահատել նաև հանրապետությունում ստեղծված ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի տեսանկյունից: Եթե բնակչության եկամուտներն ավելանում են ավելի դանդաղ, քան սղաճը, ապա դա բացասաբար է անդրադառնում բնակչության կենսամակարդակի վրա: Ուստի դրամավավարկային քաղաքականության հիմքում պետք է դրվի նաև բնակչության, հատկապես բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձի և կենսաթոշակառուների ինդեքսավորումը:

Այսպիսով, եթե անցումային ժամանակաշրջանի սզբում դրամավարկային քաղաքականության առջև տնտեսական կայունացման ու բարեփոխումների արագացնելու խնդիրն էր դրված, ապա ներկայումս անհրաժեշտ է առաջ քաշել և լուծել սոցիալ-տնտեսական զարգացման առավել մասշտաբային ու ռազմավարական խնդիրներ:

Դրամավարկային համակարգը (monetary & credit system) շուկայական տնտեսության հատուկ և առավել բարդ ենթակառուցվածքն է: Այն դիտվում է, որպես.

ա) վարկահաշվարկային հարաբերությունների, վարկավորման ձևերի և մեթոդների ամբողջություն

բ) վարկային կազմակերպությունների (ֆինանսավարկային ինստիտուտների) ամբողջություն:

Դրամավարկային համակարգը օգտագործվում է մի խումբ երկրների արտարժույթի փոխարժեքների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար և ներառում է երկրի տարածքում դրամն օգտագործելու համար բնակչությանը դրամով ապահովելու, այլ երկրների արժույթների ազգային արժույթի փոխանակման նկատմամբ վերահսկողության, իր դրամավարկային քաղաքականությունն իրականացնելու համար երկրի կողմից օգտագործվող համակարգերը:

Վարկային հարաբերությունները կապված են *փոխատվական կապիտալի* (loan capital - սեփականատիրոջ կողմից դրամական ձևով փոխ տրված կապիտալը, որը ձևավորվում է ժամանակավորապես ազատ դրամական միջոցներից և սեփականատիրոջ կողմից տրամադրվում է այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց որոշակի պայմաններով՝ ժամկետայնության, վերադարձելիության և վճարելիության սկզբունքներով շարժի հետ (նկար 68):



Նկար 68. Փոխատվական կապիտալի աղբյուրները

Դրամավարկային համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում վարկային համակարգը: ***Վարկային համակարգը*** **(credit system)** վարկի ձևերի և վարկավորման մեթոդների, ինչպես նաև վարկային հարաբերություններ կազմակերպող ինստիտուտների և վարկային հարաբերությունների ամբողջություն է: Արդյունաբերապես զարգացած երկրների վարկային համակարգի մեջ մտնում են բանկերը և մասնագիտացված ոչ բանկային ֆինանսավարկային կազմակերպությունները՝ ապահովագրական ընկերությունները, թոշակային հիմնադրամները, խնայողական դրամարկղները (որոնք մասնագիտացված են և հասարակության տարբեր շերտերի խնայողությունները փոխարկում են փոխատվական կապիտալի), գրավատները և այլն:

Վարկը (credit, լատ. creditum - փոխատվություն, պարտք) ֆինանսական գործիք է, որն անձին կամ ձեռնարկությանը հնարավորություն է ընձեռում դրամ փոխառել՝ ապրանքներ, հումք և այլն գնելու (այսինքն՝ անմիջապես տիրանալու) համար՝ վճարումը կատարելով որոշ ժամանակահատվածի ընթացքում, սովորաբար տոկոսով: Վարկի դիմաց գանձվող տոկոսադրույքը կարող է լինել հաստատագրված կամ փոփոխական (լողացող)՝ կախված վարկի պայմաններից: Վարկային պայմանագրով առաջացող իրավահարաբերությունների էությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, համաձայն վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպություն (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացած գումարը և տոկոսներ վճարել:

Գոյություն ունեն վարկի տարբեր ձևեր՝ առևտրային (կոմերցիոն), բանկային, միջտնտեսական, սպառողական, հիպոթեքային, պետական, միջազգային (նկար 69):



Նկար 69. Վարկի ձևերը

Առևտրային (կոմերցիոն, ապրանքային) վարկը տնտեսական գործընկերների կողմից տրվող վարկն է կամ ֆիրմաների միջև ապրանքների ու ծառայությունների առք ու վաճառքն է վճարումը հետաձգելու պայմանով: Առևտրային վարկի միջոց է հանդիսանում *մուրհակը*, որը պարտավորություն է որոշակի ժամկետում ու տեղում համապատասխան գումարի վճարման մասին: Առևտրային վարկի չափերը սահմանափակվում են ձեռնարկատերերի պահուստային (ազատ) կապիտալների մեծությամբ:

Դրա նպատակն ապրանքափոխանականության, հետևապես նաև շահույթի իրացման արագացումն է:

Բանկային վարկը տրամադրում են ֆինանսավարկային հիմնարկները (բանկեր, հատուկ վարկային հիմնարկություններ և այլն) փոխառուներին դրամական փոխատվության ձևով: Այն չի սահմանափակվում վարկային գործարքների ուղղվածությամբ, գումարներով, ժամկետներով (կարճաժամկետ՝ մինչև 1 տարի, միջին ժամկետային՝ 1-5 տարի և երկարաժամկետ՝ 5 տարուց ավելի) և ունի ավելի մեծ բանկային երաշխիք: Բանկային վարկը կարող է սպասարկել ոչ միայն ապրանքների շրջանառությունը, այլև կապիտալի կուտակումը, դարձնելով այն հասարակության բոլոր շերտերի և սուբյեկտների դրամական եկամուտներ ու խնայողություններ: Բանկային վարկը վերացնում է առևտրային վարկի սահմանափակվածությունը, դարձնելով այն ավելի ճկուն, ընդլայնելով նրա մասշտաբները և բարձրացնելով ապահովվածությունը:

Ժամանակակից շուկայական տնտեսությանը բնորոշ է առևտրային և բանկային վարկերի միահյուսումը: Սակայն վարկային համակարգում ավելի արագ տեմպերով է աճում բանկային վարկը, կրելով միաժամանակ էական փոփոխություններ: Դրանցից կարևորներն են՝ փոխատվական կապիտալի կենտրոնացումը խոշոր բանկերի ձեռքում և ազգային ու միջազգային վարկային ռեսուրսների զգալի մասի օգտագործումն առաջատար մենաշնորհային ընկերությունների կողմից: Այսպես, աշխարհի 10 խոշորագույն (իրենց հաշվեկշռային գումարով) բանկերը դասվում են առևտրային բանկերին, որոնցից 9-ը ճապոնական են, իսկ 1-ը՝ գերմանական (առաջին տեղը զբաղեցնում է ճապոնական բանկը՝ 773,1 մլրդ դոլարի հաշվեկշռային գումարով, գերմանական բանկը 9-րդ տեղում է)*:

Միջտնտեսական դրամական վարկը (interhousehold money credit) տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից միմյանց բաժնետոմսերի, փոխառությունների, վարկային տոմսերի և այլ արժեթղթերի թողարկմանը մասնակցելու նպատակով: Այդ գործարքներն անվանում են ձեռնարկությունների ապակենտրոնացված ֆինանսավորում կամ վարկավորում:

Սպառողական վարկը (consumer credit)՝ սպառողական ապրանքներ ձեռք բերելու կամ անձնական այլ կարիքների համար բնակչությանը տրամադրվող կարճաժամկետ փոխատվություն է: Սպառողական վարկի դեպքում որպես վարկատու կարող են հանդես գալ բանկերը, մանրածախ առևտրի ձեռնարկությունները, գրավատները, վարձույթի կետերը, վարկային միությունները (կոոպերատիվները), իսկ որպես փոխառու՝ բնակչությունը: Սպառողական վարկը կարող է ունենալ ինչպես դրամական, այնպես էլ ապրանքային ձև: Դրա տրամադրման նպատակն է բնակչության կարիքների բավարարումը: Սպառողական վարկը սովորաբար տրվում է մասնավոր անձանց մինչև 3 տարի ժամկետով՝ երկարատև օգտագործման սպառման առարկաներ ապառիկով գնելու դեպքում, կամ էլ սպառողական նպատակով տնտեսավորող սուբյեկտներին՝ բանկային փոխատվության ձևով և բաժանվում է երկու խմբի՝ ներդրումային բնույթի և ընթացիկ սպառողական կարիքների համար: Առաջին խմբի վարկերին են վերաբերում բնակարանային պայմանների բարելավման և օժանդակ տնային տնտեսության ստեղծման, այգեգործական տնակների շինարարության գծով ծախսերը և այլն: Ընթացիկ սպառողական կարիքների համար տրվող վարկերին են վերաբերում ապրանքների դիմաց տարաժամկետ վճարումները, գրավատանը գրավ դրված գույքի կամ բանկում արժեթղթերի գրավի դիմաց տրված վարկերը: Սպառողական վարկի տարատեսակ է հանդիսանում բնակարանային վարկը, որը տրվում է մասնավոր անձանց բնակարանների ձեռքբերման և կառուցման նպատակով: Վերջին ժամանակահատվածում սպառողական վարկի դերը բարձրացել է, որի հետ միաժամանակ կտրուկ աճել են բնակարանային պարտքերը (օրինակ, ԱՄՆ-ում):

Հիպոտեկային վարկը (mortgage credit, hypothetical credit)՝ երկարաժամկետ փոխատվություն է, որը սովորաբար տրամադրվում է անշարժ գույքի՝ հողի և արտադրական ու բնակարանային նշանակության կառույց-ների գրավադրման դիմաց: Դրանք տրվում են հող, շենքեր, շինություններ ձեռք բերելու կամ տներ կառուցելու համար և հետ են վերադարձվում երկարատև ժամանակաշրջանից հետո: Այս վարկը օգտագործվում է նաև գյուղատնտեսության հիմնական ֆոնդերի նորացման նպատակով, նպաստելով այդ ոլորտում կապիտալի կենտրոնացմանը և համակենտրոնացմանը: Գրավ կարող է լինել նաև գնվող կամ կառուցվող անշարժ գույքը: Վարկի սովորական ապահովումից տարբերվում է նրանով, որ գրավադրված գույքի նկատմամբ փոխառուի (գրավատուի) սեփականության իրավունքը վարկավորման ժամանակահատվածում սահմանափակվում է (նա չի կարող օգտվել այդ գույքը տնօրինելու իրավունքից), թեև այն մնում է նրա օգտագործման ներքո: Այդ իրավունքի սահմանափակումը վերացվում է՝ վարկի գծով ամբողջ պարտքը մարելուց հետո: Վարկը ժամանակին չմարելու դեպքում փոխատուն իրավունք ունի ձեռնարկելու օրենսդրությամբ նախատեսված միջոցները՝ ակտիվը վերականգնելու համար: Եթե գրավադրված գույքը արժեթղթերից տարբեր շարժական գույք է, ապա այդպիսի հիպոտեկը անվանվում է շարժական գույքի դիմաց հիպոտեկային վարկ: Այս վարկի համար տրվում են հիպոտեկային փոխառության պարտատոմսեր, որոնք թողարկում են բանկերը և ձեռնարկությունները:

Պետական վարկ (public credit) այս վարկի հիմնական հատկանիշը պետության, ի դեմս՝ տարբեր մակարդակների գործադիր իշխանության մարմինների, մասնակցությունն է, քանի որ այստեղ որպես փոխառու կամ վարկատու հանդես են գալիս պետությունը և իշխանության տեղական մարմինները: Նրանք փոխ են վերցնում միջոցները փոխատվական կապիտալների շուկայում, որի համար ֆինանսավարկային հիմնարկությունները թողարկում են պետական ներքին փոխառություններ: Իրականացնելով վարկատուի գործառույթներ, պետությունը կենտրոնական բանկի միջոցով կատարում է ֆինանսական դժվարություններ ունեցող ճյուղերի և տարածաշրջանների վարկավորում: Ներկայումս ընդլայնվում է պետության վարկային գործունեությունը հատկապես հավաքագրված դրամական միջոցների (բյուջեի) հաշվին, ցածր շահութաբեր, սակայն վերարտադրության համար անհրաժեշտ ճյուղերը (բնակարանային շինարարություն, ենթակառուցվածք, գյուղատնտեսություն և այլն) ֆինանսավորելու համար: Այն դարձել է պետական ծախսերի ֆինանսավորման

երկրորդ աղբյուրը և պետբյուջեի դեֆիցիտը ծածկելու միջոցներից մեկը: Փոխառուի դերում պետությունը հանդես է գալիս պետական փոխառությունների տեղաբաշխման գործընթացում կամ պետական կարճաժամկետ արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս:

Պետական վարկը պետական ֆինանսների օղակներից մեկն է, երբ պետությունը վարկ է ստանում ֆիզիկական և իրավաբանական անձանցից երկրում և արտասահմանում պետական փոխառությունների տեսքով, ինչպես նաև այլ պետություններից, կամ տրամադրում է դրամական միջոցներ միջպետական հարաբերություններում՝ վերադարձելիության, վճարելիության, ժամկետայնության և կամավորության հիման վրա: Այն դեպքում, երբ պետությունը հանդես է գալիս փոխառուի դերում, պետական վարկը, կախված վարկատուի տեսակից, փոխառությունների տեղաբաշխման շուկայից, արժույթից և այլ գործոններից, ստորաբաժանվում է պետության ներքին և արտաքին պարտքի:

Միջազգային վարկը (international credit) փոխատվական կապիտալի շարժումն ու գործունեությունն է տարբեր երկրների միջև, միջազգային, տնտեսական հարաբերությունների ոլորտում: Այն տրամադրվում է որևէ երկրի պետության, բանկերի, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից այլ երկրների պետություններին, բանկերին, իրավաբանական ու ֆիզիկական անձանց: Այսինքն այս վարկի դեպքում որպես վարկատուներ և փոխառուներ հանդես են գալիս տարբեր երկրների բանկերը, պետությունը, մասնավոր ֆիրմաները և այլն: Միջազգային վարկի համար միջոցները հավաքագրվում են փոխատվական կապիտալների միջազգային շուկայում, ազգային շուկաներում, ինչպես նաև պետական, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների ռեսուրսների օգտագործման հաշվին:

Վարկերը լինում են կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջին ժամկետի (1-5 տարի) և երկարաժամկետ (5 տարուց ավելի): Ապահովման տեսակետից լինում են ապահովված (ապրանքանյութական արժեքներով, առևտրական փաստաթղթերով և այլ արժեքներով) և չապահովված (բլանկային) վարկեր: Իրենց ձևով այս վարկերը լինում են արտարժութային և ապրանքային: Կախված այն բանից, թե ով է վարկատուն, տարբերվում են մասնավոր, կառավարական, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների վարկեր: Ըստ վարկավորման օբյեկտի, միջազգային վարկերը ստորաբաժանվում են ֆինանսականի և առևտրականի:

Միջազգային խոշոր վարկատուներ են հանդիսանում նաև Միջազգային արժութային ֆոնդը (ՄԱՖ), Զարգացման Եվրոպական հինմադրամը (ԶԵՀ), Համաշխարհային բանկը (ՀԲ), Եվրոպական Ներդրումային բանկը (ԵՆԲ) և այլ բանկեր: Տարբերվում են միջպետական, միջազգային բանկային և միջազգային առևտրային վարկեր: Ժամանակակից պայմաններում վարկի այս ձևը մեծ նշանակություն է ստանում:

Վարկը շուկայական տնտեսության անխափան գործունեությունն ապահովելու տեսանկյունից, կատարում է մի քանի *գործառույթ.*

- վերաբաշխման
- շրջանառության ծախքերի տնտեսման
- կապիտալի կենտրոնացման և համակենտրոնացման արագացման
- տնտեսության վարկային կարգավորման:

Վերաբաշխման գործառույթի էությունը կայանում է նրանում, որ վարկի միջնորդությամբ բնակչության, ֆիրմաների և պետության ազատ դրամական միջոցներն ու եկամուտները կուտակվում և վերածվում են փոխառու կապիտալի: Իր հերթին ժամանակավոր օգտագործման դրամական միջոցներն ուղղվում են բարձր շահութաբեր ճյուղեր և ոլորտներ, կամ այնպիսի բնագավառներ, որոնց համազգային ծրագրերում առաջնություն է տրվում:

Շրջանառության ծախքերի տնտեսման գործառույթ: Վարկը կատարում է այդ գործառույթը մասամբ՝ փոխարինելով կանխիկ փողը այսպես կոչված վարկային փողերով (մուրհակ, բանկնոտ, չեկ և այլն), ինչպես նաև անկանխիկ հաշվարկների և դրամի շրջանառության արագացման միջոցով:

Կապիտալի համակենտրոնացումն ու կենտրոնացումը խթանելու գործառույթ: էությունը կայանում է նրանում, որ վարկն օժանդակում է մրցակցային պայքարում ֆիրմաների կլանմանը և միավորմանը, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների և վերազգային կորպորացիաների ստեղծմանը:

Տնտեսության վարկային կարգավորումը միջոցառումների ամբողջություն է, որն իրականացնում է պետությունը՝ տնտեսական գործընթացների վրա ներազդելու նպատակով, փոփոխելով վարկի ծավալը և դինամիկան:

Վարկի տոկոսադրույքների տարբերակման, ինչպես նաև կառավարական երաշխիքների և արտոնությունների տրամադրման միջոցով պետությունը խթանում է այն ձեռնարկությունների և ճյուղերի արտոնյալ վարկավորումը, որոնց գործունեությունը համապատասխանում է տնտեսական զարգացման համազգային ծրագրերին, ընդարձակում արտադրության շրջանակները և ապահովում ընդլայնված վերարտադրության անընդհատությունը:

Այսպիսով վարկային համակարգը կենտրոնացնում է ազատ դրամական կապիտալները և բնակչության տարբեր խավերի խնայողությունները և փոխատվության ձևով դրամը տրամադրում ֆիրմաներին, կառավարությանը և մասնավոր անձանց: Հետևաբար, դրանք արդյունավետորեն ներդնում է այն ճյուղերում և ոլորտներում, որտեղ առկա է լրացուցիչ կապիտալ ներդրումների պահանջը, ապահովելով տնտեսության առանձին ճյուղերի և մարզերի զարգացման գերակայությունը:

Պատմականորեն դրամավարկային համակարգի հիմքն են հանդիսացել ***բանկերը (դրամատները)*** (bank, իտալ. banco-սեղան բառից), որոնք վարկային հարաբերությունների կարգավորման դեր են կատարել: Դրանք հատուկ ֆինանսական կազմակերպություն էին, որոնք ներգրավում են ավանդներ, տրամադրում վարկեր, վճարում չեկեր և մատուցում տարբեր տեսակի ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին և միմյանց:

Բանկերը միջնորդի ֆունկցիա են կատարում դրամական միջոցներ առաջարկողների և օգտագործողների միջև, վարկի և վճարումների միջև, ազատ դրամական միջոցները (որոնք նա հավաքագրում է երեք աղբյուրներից՝ *ցպահանջ, խնայողական* և *ժամկետային ավանդներից*, այլ բանկերից ստացված կարճաժամկետ փոխառություններից և սեփական կապիտալից), վերածելով կապիտալի և շրջանառության վարկային միջոցների (մուրհակների, բանկնոտների, չեկերի):

Բանկերի միջոցով հեշտանում է ազատ կապիտալի կենտրոնացումը և վարկի ձևով նրա շրջանառության իրականացումը: Բանկը եկամուտ է ստանում այդ միջոցները երկարաժամկետ ակտիվների ձևով վերաֆինանսավորելուց: Բանկերը թողարկում, պահպանում, գնում, վաճառում և փոխանակում են դրամական միջոցներ ու արժեթղթեր, հսկում են դրամական միջոցների շարժը, դրամի և արժեթղթերի շրջանառությունը, մատուցում են վճարահաշվարկային ծառայություններ:

ՀՀ բանկային օրենսդրության համաձայն՝ բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն: ՀՀ տարածքում բանկերը կարող են հիմնադրվել որպես բաժնետիրական ընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և կոոպերատիվ բանկ:

Տարբերում են բանկերի (ֆինանսավարկային ինստիտուտներ) երկու հիմնական տարատեսակներ, որոնք միասին կազմում են երկմակարդակ բանկային համակարգը՝ կենտրոնական բանկ և առևտրային (կոմերցիոն) բանկեր: Առևտրային բանկերը կարող են լինել ունիվերսալ և մասնագիտացված (արտաքին առևտրի, հիպոտեկային, ներդրումային (ինվեստիցիոն), ինոովացիոն, ագրարային կամ հողային, խնայողական և այլն) բանկեր: Գոյություն ունեն նաև միջպետական (միջազգային) բանկեր (նկար 70):



Նկար 70. Բանկերի տեսակները

Կենտրոնական բանկը (Central Bank) վարկային համակարգի կենտրոն է, երկրի գլխավոր բանկը, որն օժտված է բանկնոտների մենաշնորհային թողարկման, դրամաշրջանառության կարգավորման, բանկերի և այլ վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և վերահսկման, դրամավարկային և արժութային քաղաքականության մշակման և իրականցման, երկրի պաշտոնական միջազգային պահուստների պահպանման և կառավարման իրավունքով: Այն հանդիսանում է *«բանկերի բանկը»* կառավարության ֆինանսական գործակալը՝ պետական բյուջեն սպասարկելիս, իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը:

Կենտրոնական բանկը պատասխանատու է երկրի օրինական վճարամիջոցի՝ թղթադրամի և մետաղադրամի թողարկման համար: Իրականացնում է դրամավարկային քաղաքականություն, օգտագործելով հետևյալ գործիքները՝ կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նորմատիվի և պաշտոնական տոկոսադրույքների սահմանումը, բաց շուկայական գործառնությունները,

բանկերին վերավարկավորումը և կառավարության վարկավորումը, արժութային ինտերվենցիաները, պետական արժեթղթերով գործառնությունները, դրամական զանգվածի աճի նպատակային կողմնորոշիչների սահմանումը, քանաքական վարկային սահմնափակումները:

Տարբեր երկրներում կենտրոնական բանկերն անվանում են տարբեր կերպ. ազգային, պետական, ռեզերվային, ժողովրդական: Դրանք պատմականորեն առաջացել են որպես բաժնետիրական ընկերություններ, որոնք օժտված էին հատուկ իրավասություններով: Մի շարք երկրներում կենտրոնական բանկի կապիտալի մեծ մասը (կամ ամբողջությամբ) պատկանում է պետությանը, թեև որոշ երկրներում դրանց բաժնետեր կարող են հանդիսանալ խառը սեփականության հիմնարկություններ, ինչպես նաև առևտրային բանկերը և ֆինանսական ինստիտուտները (օրինակ, ԱՄՆ ռեզերվային ֆոնդը):

Առևտրային բանկը (commercial bank) ոչ պետական վարկային հիմնարկություն է, որը հիմնականում ավանդների ձևով ընդունած դրամական կապիտալների հաշվին իրականացնում է արդյունաբերական, առևտրական և այլ կազմակերպություններին վարկավորման ունիվերսալ բանկային գործառնություններ, ինչպես նաև կատարում հաճախորդների ֆինանսական, առևտրային, խորհրդատվական սպասարկում և մատուցում բազմաթիվ այլ ֆինանսական ծառայություններ:

Դրանց հիմնական գործունեությունն են ընթացիկ հաշիվների վարումը, վճարահաշվարկային գործառնությունները, ավանդների ներգրավումը, կանխիկ դրամի ընդունումը և տրամադրումը, առևտրային, սպառողական և հիպոտեկային փոխառությունների տրամադրումը: Լրացուցիչ ծառայություններից են գույքի հավատարմագրային կառավարումը, արտարժույթի և արժեթղթերի առք ու վաճառքը, վարկային քարտերի համակարգը և անձնական թոշակային հիմնադրամների կառավարումը:

Գործառնություններ իրականացնելու համար դրամական միջոցները նման բանկերը ձևավորում են գլխավորապես ավանդների ձևով ներգրավված խնայողությունների, միջբանկային վարկերի սեփական բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման հաշվին: Այս բանկի համախառն եկամտի հիմքը կազմում են տրամադրված փոխատվություններից ստացված տոկոսագումարները: Մեծանում են նաև ոչ դասական գործառնություններից ստացվող եկամուտները (արժեթղթերով գործառնություններ, գույքի հավատարմագրային կառավարում, միջնորդական ծառայություններ և այլն):

Առևտրային բանկերը ստեղծվում են փայատիրական, բաժնետիրական կամ կոոպերատիվ հիմունքներով և կարող են տարբերվել՝ ըստ կանոնադրական կապիտալի ձևավորման եղանակի, մասնագիտացման, գործունեության տարածքների, կատարվող գործառնությունների տեսակների և այլ հատկանիշների: Բազմաթիվ միաձուլումների հետևանքով դրանց թիվը աստիճանաբար կրճատվել է: Առևտրային բանկերի գլխավոր տարբերությունը կենտրոնական բանկերից բանկնոտներ թողարկելու իրավունքի բացակայությունն է:

Ունիվերսալ բանկը (full service bank) իրականացնում է (կամ կարող է իրականացնել) բոլոր կամ գրեթե բոլոր բանկային գործառնությունները՝ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի տրամադրում, տարբեր տեսակի ավանդների ներգրավում, արժեթղթերով, ֆակտորինգային, լիզինգային, հավատարմագրային և այլ գործառնություններ (բացառությամբ բանկնոտների թողարկման): Այստեղ ունիվերսալությունն ունի նաև այլ նշանակություն. այն ենթադրում է գործունեության տեսակ, որը սահմանափակված չէ՝ ըստ տնտեսության ճյուղերի, սպասարկվող հաճախորդների կազմի, տարածաշրջանների և քանակապես: Ռիսկերի դիվերսիֆիկացիայի շնորհիվ ունիվերսալ բանկերն ավելի կայուն են, որը նրանց հնարավորություն է տալիս դուրս մղել մասնագիտացված բանկերին:

Մասնագիտացված բանկերն (specialized bank)՝ առևտրային բանկերն են, որոնք մասնագիտացված են վարկավորման որոշակի ձևերում՝ տնտեսության որևէ ճյուղի (ենթաճյուղի), ձեռնարկությունների խմբերի, իրականացնելով հատուկ մեկ կամ մի քանի տեսակի բանկային գործառնություններ, հաճախորդների որոշակի խմբի սպասարկումներ: Մասնագիտացված բանկերից են՝ ինվեստիցիոն բանկերը, որոնք կապիտալ ներդրումների ֆինանսավորում և երկարաժամկետ վարկավորում են իրականացնում, իննովացիոն (նորարական) բանկերը՝ նորարական նախագծերի, գիտատեխնիկական մշակումների գործառնությունների վարկավորում և ֆինանսավորում են իրականացնում, հիպոթեկային բանկերը՝ անշարժ գույքի (հող, կառույց և այլն) գրավադրման դիմաց վարկեր են տրամադրում, ագրարային բանկերը՝ գյուղատնտեսության վարկավորումով են զբաղվում, արտաքին առևտրի բանկերը՝ արտաքին առևտրի վարկավորումով ու արտասահմանյան գործակալների հետ հաշվարկների իրականացումով են զբաղվում և այլն:

Միջպետական (միջազգային) բանկեր՝ միջազգային և տարածաշրջանային արժութավարկային և ֆինանսական կազմակերպություններ և բանկեր են, որոնք ստեղծվել են միջպետական համաձայնագրերի հիման վրա և կոչված են ապահովելու միջազգային տնտեսական, արժութային և դրամա-վարկային հարաբերությունների կարգավորումը (օրինակ, Համաշխարհային բանկը (ՀԲ), Միջազգային արժութային ֆոնդը (ՄԱՖ), Եվրամիության համակարգում մի շարք բանկեր՝ Եվրոպական Ներդրումային բանկը (ԵՆԲ), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկը, Զարգացման Եվրոպական հիմնադրամը (ԶԵՀ) և այլն):

1999-2003 թթ. ՀՀ տարածքում միջինում գործել են մոտ 30 բանկեր, որոնցից չորսը՝ «Մենատեպ-Երևան» (հետագայում վերանվանվել է Միջազգային առևտրային բանկ), «HSBC-Հայաստան», «Մելլաթ», «Ռոսիյսկի Կրեդիտ-Արմենիա» (հետագայում վերանվանվել է «Առէքսիմբանկ»), հանդիսանում են ոչ ռեզիդենտ բանկերի և կազմակերպությունների դուստր բանկեր:

Վերջին տարիներին ՀՀ բանկային շուկայում նկատվում են բանկերի դիրքերի անընդհատ տեղաշարժեր. որոշ բանկեր շուկայից դուրս են գալիս, որոշ նոր բանկեր մուտք են գործում շուկա և աստիճանաբար ամրապնդում իրենց դիրքերը բանկային մրցակցային շուկայում: Բնականաբար, բանկային համակարգում կարող են ձևավորվել ինչպես խոշոր, այնպես էլ մանր բանկեր:

2002թ. ընթացքում չորս բանկ դադարեցրել է գործունեությունը, իսկ երկու բանկ՝ ժամանակավոր ադմինիստրացիայի շրջանակներում, միաձուլվել են: ՀՀ ԿԲ կողմից, միաձուլման գործընթացը խրախուսելու

նպատակով, տրամադրվել է համակարգային վարկ: Բանկային գործունեությունը կանոնակարգող օրենսդրության պահանջների խախտման, ինչպես նաև ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, տարվա ընթացքում.

- Ուժը կորցրած է ճանաչվել «ՌԻԱ» բանկի բանկային գործունեության լիցենզիան:
- Լուծարվել են «Լենդ», «Տրաստ» և «Ակունք» բանկերը:
- Ժամանակավոր ադմինիստրացիայի շրջանակներում միաձուլվել են «Ադանա» և «Արդշինբանկ» բանկերը և ՀՀ ԿԲ-ի կողմից միաձուլումը խրախուսելու նպատակով տրվել է համակարգային վարկ:

Արդյունքում՝ 2002 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 25 բանկեր (231 մասնաճյուղով), որոնց մեջ կան փակ բաժնետիրական, բաց բաժնետիրական, պետական բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և կոոպերատիվ բանկեր: Դրանցից 20-ը գործում էին ընդհանուր վերահսկողության դաշտում, իսկ 5 բանկ՝ հատուկ վերահսկողության դաշտում:

Ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերը հանդիսանում են իրական ֆինանսական միջնորդներ, և դրանց ֆինանսական ցուցանիշները հիմնականում դրսևորվում են կայուն աճի միտումներ:

Հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ նշանակված ժամանակավոր ադմինիստրացիայի կողմից հաստատված ֆինանսական առողջացման ծրագրով՝ համաձայն «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի պահանջների: Այս դաշտում գործող 5 բանկերից 3-ում 2003թ. նախատեսվում է սկսել լուծարման գործընթաց:

Հատուկ վերահսկողության դաշտում գործող 5 բանկերի ընդհանուր պարտավորությունները 29.0 մլրդ դրամով գերազանցել են ընդհանուր ակտիվները: Տարեվերջին 5 բանկերի կողմից տնօրինվել է բանկային համակարգի պարտավորությունների մոտ 21.5%-ը կամ 51.0 մլրդ դրամ, ակտիվների 8.8%-ը կամ 22.0 մլրդ դրամ (որոնց հիմնական մասը կազմում են խնդրահարույց ակտիվները) և վնասն ամբողջությամբ կազմել է 40.4 մլրդ դրամ:

2002թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի հաշվեկշռային ընդհանուր կապիտալը նվազել է 35,5%-ով (7.2 մլրդ դրամ), իսկ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի հաշվեկշռային ընդհանուր կապիտալն ավելացել է 29.4 %-ով (9.6 մլրդ դրամ): Վերջինիս աճը հիմնականում կանոնադրական հիմնադրամի և ընթացիկ տարվա շահույթի զգալի աճերի արդյունքն է:

Կանոնադրական հիմնադրամի զգալի աճը պայմանավորված է եղել նաև 2002թ. հուլիսի 1-ից 1.650 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի ապահովմամբ: Նշված նորմատիվի նվազագույն սահմանաչափի ավելացումը հետապնդում է բանկերի խոշորացում և բանկային համակարգի հուսալիության մակարդակի բարձրացում:

Իրականացնելով բանկային գործառնություններ՝ վարկային հիմնարկները, որտեղ հիմնական տեղը զբաղեցնում են բանկերը, կատարում են կարևոր ժողովրդատնտեսական գործառույթ, դրանցից են.

- ժամկետների ձևափոխություն (տրանսֆորմացիա)
- դրամական գումարների չափերի ձևափոխություն
- ռիսկի ձևափոխություն:

Ժամկետների ձևափոխության ֆունկցիայի էությունն այն է, որ բանկերը կարճաժամկետ փողերը վեր են ածում երկարաժամկետի, քանի որ մի կողմից շատ վարկատուներ իրենց փողերը բանկերում իրականում պահում են ավելի երկար ժամանակ, քան դա համաձայնեցված է իրավաբանորեն: Բացի այդ ծախսված միջոցները նրանք հաճախ փոխարինում են նորերով: Քանի որ ժամկետների փոփոխումը կապված է ռիսկի հետ, այն պետք է կառավարվի բանկում մեկ կենտրոնից: Որպես կանոն, բանկերի վերահսկողության վերաբերյալ գրավոր հրահանգներում նշվում է, թե ինչ ծավալով կարճաժամկետ փողերը կարելի է օգտագործել ավելի երկար ժամանակների ընթացքում:

Դրամական գումարների չափերի ձևափոխության էությունն այն է, որ վարկային հիմնարկները հաճախ վարկերը տալիս են ավելի մեծ ծավալներով, քան առանձին մանր ներդրումներն են: Եթե բանկերը չզբաղվեն դրանով, ապա վարկատուները ստիպված կլինեն բանակցել բազմաթիվ փոխառուների հետ, որը կլիներ թանկ և ծայրաստիճան անարդյունավետ:

Ռիսկի ձևափոխման ժամանակ վարկային հիմնարկները, կատարելով միջնորդի գործառույթ, պարտատերերի ռիսկը վերցնում են իրենց վրա: Դա հնարավոր է, քանի որ բանկերն իրենց գործառնություններում կարող են ապակենտրոնացնել իրենց ջանքերն ըստ ճյուղերի, ռեգիոնների և օգտագործման նպատակների:

Տարբեր երկրների վարկային հիմնարկները, այդ թվում նաև բանկերը տարբեր պատմական զարգացման և իրավական կարգավորման արդյունք են: Չնայած գոյություն ունեցող առանձնահատկությունների, բոլոր երկրներում կենտրոնական բանկերը կատարում են հետևյալ ընդհանուր գործառնությունները:

- էմիսիոն բանկի գործառնություն
- պետական բանկի գործառնություն (պետության ֆիրմային բանկ)
- բանկերի բանկի գործառնություն
- տնտեսությանը դրամով ապահովելու գործառնություն
- բանկային գործունեության վերահսկողության գործառնություն:

էմիսիոն գործառնությունը կենտրոնական բանկի առավել հին և ամենակարևոր գործառնություններից է: Բոլոր երկրներում կենտրոնական բանկին է մենաշնորհվում դրամի էմիսիայի իրավունքը: Չնայած ժամանակակից պայմաններում անկանխիկ փողերն են գերակշռում, սակայն թղթադրամի էմիսիան պահպանում է իր նշանակությունը, քանի որ կանխիկ փողը ներկայումս էլ անհրաժեշտ է վճարումների զգալի մասի և վարկային համակարգի համար, որը կանխիկ միջոցներ պետք է ունենա պարտքային պարտավորությունների վերջնական մարման համար:

Պետական բանկի գործառնությունը կայանում է նրանում, որ պետությունը նույնպես իրականացնում է իր ֆինանսական գործառնությունները վարկային հիմնարկների միջոցով: Կենտրոնական բանկը հաճախ հանդես է գալիս պետության «ֆիրմային բանկի» դերում, որը վարում է պետության հաշիվները, նրան տրամադրում վարկեր, վաճառում պետական փոխառություններ և բաժնետոմսեր, զբաղվում դրանց կուրսի պահպանմամբ և այլն:

Բանկերի բանկի ֆունկցիան կայանում է նրանում, որ բոլոր առևտրային բանկերը կենտրոնական բանկում ունեն իրենց պահուստային ֆոնդերը: Պահուստային նորմայի փոփոխությունը, հանդիսանում է հզոր հակաինֆլյացիոն միջոց: Պահուստների փոփոխության միջոցով բանկային վարկի կարգավորման օգնությամբ ֆինանսական համակարգը կարող է նպաստել տնտեսության կայունացմանը: Միաժամանակ կենտրոնական բանկն իրականացնում է ոսկու, թանկարժեք քարերի և արտարժույթների պետական պահուստների ձևավորումն ու պահպանումը:

Տնտեսությանը դրամով ապահովելու գործառնությունը կենտրոնական բանկերը կատարում են առևտրային բանկերին ապահովելով կանխիկ փողով: Նրանք շրջանառությունից հանում և ոչնչացնում են մաշված և վնասված թղթադրամները, փոխարինելով դրանք նորերով: Որոշ դեպքերում փոխարինվում է թղթադրամների ամբողջ շարք (սերիա):

Ինչ վերաբերում է անկանխիկ փողերին, ապա դրանցով տնտեսության ապահովումը տեղի է ունենում դրամական քաղաքականության կամ առևտրային բանկերի և կենտրոնական բանկի հետ նրանց բանկային գործառնությունների միջոցով:

Բանկային գործունեության վերահսկողությունը շատ երկրներում իրականացնում է կենտրոնական բանկը, իսկ որոշ երկրներում՝ ֆինանսների նախարարության ենթակա պետական մարմինը:

Վրահսկողություն իրականացնող գերատեսչությունը, պետք է ոչ միայն թույլտվություն (լիցենզիա) տա առևտրային բանկերին այլև պատասխանատվություն կրի վարկավորման համակարգի անխափան գործունեության համար:

Շուկայական տնտեսության պայմաններում բանկերը կարող են սնանկանալ, ինչը կարող է խախտել վստահությունը բանկային համակարգի նկատմամբ: Այդ պատճառով էլ վերահսկող գերատեսչությունը, ձգտում է խուսափել վարկային հիմնարկների անվճարունակությունից, ստեղծելով ստուգման ու վերահսկման միջոցառումների տարբերակված համակարգ:

Առևտրային բանկերի հիմնական ֆունկցիան անժամկետ դեպոզիտների կենտրոնացումը և դուրս գրված չեկերի վճարումն է, ինչպես նաև ձեռնարկատերերին վարկերի տրամադրումը: Այդ բանկերն իրականացնում են նաև հաշվարկներ և կազմակերպում վճարային պտույտն ամբողջ ազգային տնտեսության մասշտաբով: Ներդնելով դեպոզիտները, որոնք ստացել են իրենց հաճախորդներից, նրանք օգնում են տնտեսության վերականգնմանը, ավելացնում աշխատատեղերը և դրանով իսկ նպաստում բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Ներդրումները արժեթղթերում և բաժնետոմսերում կարող են լինել կամավոր և ոչ կամավոր (երբ այն պայմանավորված է պետության պահանջներով կամ պայմանագրային պարտավորություններով, պետբյուջեի ֆինանսավորման նպատակով): Առևտրային բանկերի գործառնությունների հիման վրա ծագում են վարկային փողերը (չեկեր, բանկային մուրհակներ և այլն):

Սովորաբար տարբերում են բանկային գործառնությունների 4 խումբ.

1. պասիվային գործառնություններ (միջոցների ներգրավում)
2. ակտիվային գործառնություններ (միջոցների բաշխում)
3. բանկային ծառայություններ(միջնորդային, հավատարմագրային, լիզինգային, խորհրդատվական և այլն)
4. բանկի սեփական գործառնություններ:

Առաջին երկու խմբերն առավել տարածված են և դրանց բաժին է ընկնում բանկային շահույթի հիմնական մասը: Շուկայական տնտեսությամբ զարգացած երկրներում վերջին տարիներին էականորեն աճել է բանկային ծառայությունների ծավալը: Դրանք աստիճանաբար դառնում են բանկերի եկամուտների՝ ըստ կարևորության երկրորդ աղբյուրը: Սեփական գործառնություններն առաջվա պես ստորադաս դեր են կատարում:

Պասիվային գործառնությունների (bank passive operations) միջոցով բանկերը ձևավորում են իրենց ֆինանսական ռեսուրսները: Այդ գործառնություններն այն դրամական միջոցների ներգրավմանն են ծառայում, որոնք հետագայում օգտագործվում են վարկային և այլ ակտիվային գործառնություններ ֆինանսավորման համար: Այդ միջոցների աղբյուրները բազմազան են: Առևտրային բանկերի «պասիվները» գոյանում են սեփական, ներգրավված և փոխառու այլ միջոցների հաշվին: Սեփական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝ տվյալ բանկի թողարկած բաժնետոմսերի տեղաբաշխումը կամ մասնակիցների ներդրումները կանոնադրական կապիտալում (ներառյալ բաժնետոմսերի հավելավճարը), շահույթի հաշվին գլխավոր և այլ պահուստների ստեղծումը և չբաշխված շահույթը: Բանկի ռեսուրսների աղբյուր կարող են լինել ստացած միջբանկային վարկերը, ինչպես նաև սեփական արժեթղթերի (պարտատոմսերի, մուրհակների և այլն), մուրհակների վաճառքից, մուրհակների հաշվառումից և վերահաշվառումից գոյացած միջոցները: Բանկային բոլոր ռեսուրսների հիմնական մասը կազմում են ֆիզիկական ու իրավաբանական անձանցից ներգրավված ավանդները: Դրանցից են ֆիրմաների, պետական ձեռնարկությունների և հիմնարկների, բանվորների և ծառայողների աշխատավարձի հաշիվներում գտնվող ժամանակավորապես ազատ միջոցները (որոնք բաժանվում են երկու խմբի՝ ցպահանջ կամ ժամկետային) և նրանց ընթացիկ հաշիվների մնացորդները:

Ցպահանջ ավանդներն (demand deposit) այն միջոցներն են, որոնք ներդրվում են բանկում՝ առանց պահպանման ժամկետը նշելու: Դրանք նաև բանկի չեկային հաշվում գտնվող միջոցներն են և հաճախ ավանդների այս տեսակն անվանում են նաև չեկային ավանդներ, քանի որ միջոցները կարող են հաշվից հանվել չեկերի առաջադրման միջոցով: Ցպահանջ ավանդները նախատեսված են գլխավորապես հաշվետիրոջ կողմից կատարվող ընթացիկ հաշվարկների իրականացման համար, տարբեր ձևերով. կանխիկ, չեկերով, փոխանցումով կամ մուրհակով: Բանկային համապատասխան (ցպահանջ) հաշվից ավանդատուն կարող է առանց նախնական

ծանուցման կանխիկ դրամ ստանալ չեկով կամ ավտոմատ գանձապահի միջոցով կամ էլ այլ հաշվի փոխանցել վճարման հանձնարարականի միջոցով: Ավանդը վերադարձվում է ավանդատուին՝ նրա առաջին իսկ պահանջով: Ցպահանջ ավանդների դիմաց հաշվարկվում է համեմատաբար ցածր տոկոս, մի շարք դեպքերում տոկոս ընդհանրապես չի վճարվում: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, բանկը պարտավոր է տոկոս վճարել նաև ցպահանջ ավանդի դիմաց: Բանկն առանց հատուկ դժվարությունների կարող է այդ միջոցներից տրամադրել որոշակի ծավալով կարճաժամկետ վարկեր:

Ժամկետային ավանդները (time deposit)՝ այն միջոցներն են, որոնք ներդրվում են բանկում (ավանդային հաշվում) որոշակի ժամկետով: Դրանք լինում են երկու տիպի: Առաջին տիպի ժամկետային ավանդները վերադարձվում են ավանադատուին նախօրոք պայմանավորված օրը, իսկ մինչ այդ բանկը կարող է լիովին տնօրինել դրանք: Ավանդատուն կարող է հաշվից հանել ավանդը պայմանագրով սահմանված ժամկետը լրանալիս կամ նախնական ծանուցումից հետո (սովորաբար միջոցները պլանավորվող հանումից 30 և ավելի օր առաջ): ԱՄՆ-ում ժամկետային ավանդներն ընդունվում են հանելու մասին առնվազն 30 օր առաջ ծանուցման պայմանի առկայության դեպքում: Երկրորդ տիպի ժամկետային ավանդից գումար ստանալու համար ավանդատուն պետք է բանկ ներկայացնի հատուկ դիմում:

Գործնականում ժամկետային ավանդները հաճախ ներկայացվում են որպես նախնական ծանուցմամբ ավանդներ: Այս երկու խմբից յուրաքանչյուրի համար որոշվում են համապատասխան տոկոսներ: Ժամկետային ավանդների տոկոսադրույքներն ավելի բարձր են, քան ցպահանջ ավանդներինը: Ավանդի վաղաժամկետ հետ վերցնելը կարող է հանգեցնել տոկոսների կորստի:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, ցանկացած տեսակի բանկային ավանդի պայմանագրով բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով, բացառությամբ պայմանագրով նախատեսված՝ վերադարձման այլ պայմաններով իրավաբանական անձանց ներդրած ավանդների: Առաջին իսկ պահանջով ավանդը հետ ստանալու քաղաքացու իրավունքը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է: Այն դեպքերում, երբ ժամկետային կամ այլ ավանդը, որը ցպահանջ չէ, ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուին տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով: Այն դեպքերում, երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Բանկի պասիվային գործառնություններին են դասվում նաև, այսպես կոչված, *ներգրավված միջոցները* (այլ բանկերից ստացված վարկերը) և *փոխառության պարտատոմսերի* (*bond, debt instrument) էմիսիան* (հիպոթեկային և բանկային):

Ակտիվային գործառնությունների (bank active operations) միջոցով բանկերը տեղաբաշխում են իրենց ունեցած ֆինանսական ռեսուրսները՝ սեփական և ներգրավված միջոցները: Որպես կանոն, այդպիսի գործառնություններին են դասվում վարկային (հաշվարկա-վարկային) և արժեթղթերով գործառնությունները, դրամարկղային և ակցեպտային գործառնությունները, գործարքները արտարժույթի և անշարժ գույքի հետ:

Բանկերի ակտիվային գործառնությունների մեջ ամենաբարձր տեսակարար կշիռը (30%) ունեն վարկային գործառնությունները, որոնք հիմնականում բնորոշ են առևտրային բանկերին: Դրանք դասակարգվում են ըստ տարբեր չափանիշների՝ ապահովվածության բնույթի (ապահովված և չապահովված (բլանկային), մարման ժամկետների (ցպահանջ (օնկոլային) և ժամկետային), փոխառուների տեսակների (կազմակերպություններին, բանկերին, ֆոնդային բորսաների միջնորդներին, բնակչությանը): Ակտիվային բանկային գործառնությունների մյուս խոշոր մասը (մինչև 30%-ը) արժեթղթերի գնումն է, այսինքն՝ բանկերի գործառնությունները արժեթղթերի շուկայում: Դրանք ներառում են սեփական միջոցների անմիջական ներդրումն արժեթղթերում (այդ թվում՝ պետական), այլ անձանց կապիտալում, արժեթղթերի առք ու վաճառքը հաճախորդների հանձնարարությամբ, դրանց հավատարմագրային կառավարումը՝ տրաստ-բաժինների միջոցով:

Վարկային գործառնությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ հատկանիշների՝

- *ըստ ապահովվածության՝* փոխատվություններ (վարկեր) առանց ապահովման (բլանկային) և ապահովվածություն ունեցող (մուրհակի, ապրանքի կամ արժեթղթի ձևով): Օրինակ, լոմբարդային (գրավատան) վարկերը, որոնք տրամադրվում են կենտրոնական կամ առևտրային բանկի կողմից, իրենցից ներկայացնում են արժեթղթերի գրավի դիմաց տրված տոկոսային փոխատվություններ
- *ըստ մարման ժամկետների՝* օնկոլային (ցպահանջ, այսինքն՝ մարվում է բանկի կամ փոխառուի պահանջը), կարճաժամկետ (մինչև մեկ տարի) միջին ժամկետային (մեկ տարուց մինչև հինգ տարի) և երկարաժամկետ (հինգ տարուց ավելի)
- *ըստ մարման բնույթի՝* միանվագ և տարաժամկետ մարվող
- *ըստ տոկոսի գանձման մեթոդի՝* տոկոսը պահվում է վարկը տրամադրելու պահին, կամ վարկը մարելու պահին, կամ էլ վարկի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում
- *ըստ կատեգորիաների՝* վարկի տնտեսական բովանդակությունը և նպատակը արտացոլող փոխառուների կատեգորիաներով:

Ինչպես վերը նշվեց, բացի պասիվային և ակտիվային գործառնություններից, բանկերը զբաղվում են նաև մի շարք բանկային ծառայություններով, որոնցից են միջնորդային հավատարմագրային կամ տրաստային, լիզինգային, խորհրդատվական և այլն:

Կարևորագույն միջնորդային գործառնություններն են՝ ինկասո (գանձումները բանկի միջոցով և փաստաթղթերով), ակրեդիտիվ, փոխանցումային և առևտրամիջնորդական (կոմիսիոն) գործառնությունները:

Ինկասո գործառնությունը (collection operations, լատ. incasso) բանկային գործառնության տեսակ է, որի ժամանակ բանկն իր հաճախորդի հանձնարարությամբ դրամական միջոցները փոխանցում է մի հաճախորդից մյուսին կամ իր հաճախորդների անունից դրամներ է ստանում դրամային և ապրանքահաշվարկային տարբեր փաստաթղթերի (մուրհակ, չեկ և այլն) գծով և այն սահմանված կարգով մուտքագրում է միջոցները ստացողի հաշվին: Ինկասոյի հիման վրա ընդունվում են չեկեր, մուրհակներ, արժեթղթեր, արտարժույթ և այլն: Այսպիսով, ինկասոն միջնորդական բանկային գործառնություն է, որի դեպքում միջոցները վճարողից բանկի միջոցով փոխանցվում են ստացողին՝ այդ միջոցները մուտքագրելով ստացողի հաշվին: Հաճախորդը պարտավոր է ապրանքն առաքելուց անմիջապես հետո բանկ ներկայացնել վճարման պահանջները՝ վճարող-հաճախորդին: Վճարման ժամկետը վրա հասնելու և գնորդի միջոցների ժամանակավոր բացակայության դեպքում գնորդի կողմից ակցեպտավորված վճարման պահանջագրերը վճարվում են բանկի կողմից՝ փոխատվության (վարկի) հաշվին (եթե գնորդն իրավունք չունի այն ստանալու, ապա վճարման պահանջագիրը ձեռք է բերում կատարողական փաստաթղթերի ուժ: Ինկասո գործառնությունների կատարման համար բանկը հաճախորդներից գանձում է վճար (միջնորդական վարձատրություն, կոմիսիոն)՝ համաձայն նրանց հետ կնքված պայմանագրերի, որի չափը կախված է գործառնության տիպից: Ինկասո ընդունվում են նաև արժույթ, արժեթղթեր:

Ակրեդիտիվը (վարկագիր, letter of credit (LC)) բանկի կողմից թողարկված վարկային գործիք է, որով երաշխավորվում է որոշակի գումարի վճարումը դրանում նշված անձին (շահառուին, սովորաբար՝ երրորդ կողմին, իսկ երբեմն էլ բանկի հաճախորդին), նշված ժամանակաշրջանի ընթացքում և որոշակի պայմանների ապահովման դեպքում: Այն նաև անկանխիկ հաշվարկների ձև է:

Որպես բանկի պայմանական դրամական պարտավորություն, այն տրվում է գնորդի հանձնարարությամբ՝ հօգուտ վաճառողի, որի հիման վրա դրանում նշված պայմանների կատարման և փաստաթղթերի առկայության դեպքում բանկը կատարում է վճարումը: Ակրեդիտիվը ներառում է բանկային երաշխիքի, ձեռնարկության ուղղակի վճարումների և մուրհակներով հաշվարկների տարրերը: Այն բանկային գործառնություն է, այսինքն՝ բացվում է միայն բանկերի կողմից: Էմիտենտ բանկը գնորդի դիմումի հիման վրա բացում է ակրեդիտիվ, որում տրված են դրամական միջոցները վաճառողի բանկային հաշվին փոխանցելու համար անհրաժեշտ պայմանները և փաստաթղթերի ցանկը: Ակրեդիտիվը հանձնվում է մատակարարին, որն ապրանքների առաքման փաստաթղթերի հետ միասին ակրեդիտիվը ներկայացնում է իր բանկին: Կատարող բանկը՝ մատակարարի բանկը հսկում է նշված պահանջների կատարմանը, իսկ դրանց լրիվ կատարման դեպքում հաշվին հաշվեգրում է գործարքում նշված գումարը: Ակրեդիտիվը գնորդի համար փոխարինում է բանկային վարկին և վերացնում է գնորդի ռիսկը: Այն լայնորեն օգտագործվում է միջազգային առևտրում՝ ներմուծման և արտահանման վճարումներ կատարելիս: Միջազգային հաշվարկներում կիրառվում են ակրեդիտիվների մի քանի հիմնական տարատեսակներ, որոնցից յուրաքանչյուրը ծառայում է տարբեր նպատակի: Դրանք են՝ փաստաթղթային, դրամական, ապրանքային, հետ կանչվող, հետ չկանչվող, հաստատված, չհաստատված, նորացվող, հատուցումային, բաց, «կարմիր պայմանով», պահուստային, ուղղակի, շրջանառվող, մաքուր, փոխանցելի ակրեդիտիվները:

Դրամային ակրեդիտիվն անվանական փաստաթուղթ է, որը տրվում է բանկի կողմից այն անձին, որը մուծելով որոշակի գումար, ցանկանում է ստանալ այն տվյալ երկրի այլ բնակավայրում կամ արտասահմանում:

Իսկ *ապրանքային ակրեդիտիվը* կիրառվում է մեծածախ շրջանառությունում ապրանքի մատակարարների և գնորդների միջև հաշվարկներ կատարելու համար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, ակրեդիտիվով հաշվարկներ կատարելիս ակրեդիտիվ բացելու մասին՝ վճարողի հանձնարարությամբ գործող բանկը (էմիտենտ բանկը) պարտավորվում է միջոցներ վճարել ստացողին կամ վճարել, ակցեպտավորել կամ հաշվառել նրանց փոխանցելի մուրհակը (վճարագիրը) կամ լիազորել այլ բանկի (կատարող բանկին) միջոցներ վճարելու ստացողին կամ վճարելու, ակցեպտավորելու կամ հաշվառելու փոխանցելի մուրհակը (վճարագիրը): Ակրեդիտիվներով հաշվարկների իրականացումը կարգավորվում է օրենքով, ինչպես նաև դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով և բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով:

Փոխանցումային գործառնությունները (transfers operations)՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև դրանց և ֆիզիկական անձանց միջև (այլ վայրում գտնվող ստացողին)՝ բանկ մուծված դրամի փոխանցումներ են: Սուբյեկտներից մեկը մյուսին փոխանցում է դրամական գումար՝ բանկերի կամ կապի ձեռնարկությունների միջոցով: Փոստային փոխանցումը մեկ այլ քաղաքում կամ բնակավայրում գտնվող անձին (կողմին) վճարման ենթակա դրամական գումարի փոխանցումն է բանկի կողմից: Դրամը վճարելու հրամանը այս դեպքում ուղարկվում է սովորական փոստով, որից էլ առաջացել է «փոստային փոխանցում» անվանումը: Երկրի սահմաններում հեռագրային փոխանցումը միջոցների փոխանցումն է մի բնակավայրից մեկ այլ բնակավայր հեռագրով կամ հաղորդակցության այլ ուղիներով: Միջազգային հեռագրային փոխանցումը տվյալ երկրի սահմաններից դուրս գտնվող բնակավայրեր հեռագրով դրամական միջոցների փոխանցումն է: Փոխանցումների բոլոր տեսակների ժամանակ բանկերը գանձում են միջնորդավճար կամ միջոցները փոխանցելու համար վճար: Եթե խոսքը հեռագրային փոխանցման մասին է, ապա այն անձից, որը կատարել է միջոցների փոխանցում, միջնորդավճարից բացի գանձվում է նաև վճար՝ միջոցների վճարումը հեռագրով կատարելու մասին հրամանը փոխանցելու համար:

Հավատարմագրային կամ տրաստային գործառնություններն (trust operations) անձանց միջև հավատարմագրային հարաբերություններ են, որոնց դեպքում մի անձն իրավունք է ստանում կառավարել մեկ այլ անձի գույքը՝ ի շահ վերջինիս: Դրանք իրականացվում են մասնավոր անձանց (իրավունքից զրկված անչափահասների, որբևայրիների և այլ անձանց ունեցվածքով ժամանակավոր կառավարում, հանգուցյալի ժառանգորդների շահերի շրջանակում նրանց ունեցվածքի կառավարում, առավելագույն շահույթ ստանալու ակնկալիքով կապիտալով կառավարում, չհրկիզվող գանձապահարաններում թանկարժեք իրերի պահպանում և այլն) և ընկերությունների համար (բանկը կարող է երաշխիք հանդես գալ ըստ փոխառության բաժնետոմսի, լինել

շուկա, թողարկված բաժնետոմսերի գրանցման գործակալ, ինչպես նաև տրանսֆերտի կամ անվանական ակցիաներով սեփականության փոխանցման գործակալ, կորպորացիաների կենսաթոշակային ֆոնդերի միջոցների կառավարիչ և այլն):

Տրաստը իրավաբանական փաստաթուղթ է, որը դրա տիրոջը տալիս է գույքի, արժեթղթերի, ձեռնարկությունների, ֆիրմաների և այլնի հավատարմագրային կառավարման իրավունք: Լիազորագրի հիման վրա տրաստ կարող են իրականացնել առանձին ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, անձանց խումբ, մասնագիտացված կազմակերպություններ: Վերջիններս արտասահմանում կոչվում են *տրաստային ընկերություններ* (trust company), որոնք սովորաբար գործում են բաժնետիրական ընկերությունների ձևով: Այս դեպքում նրանց կանոնադրական կապիտալում առանձնացվում են իրեն՝ ընկերությանը պատկանող միջոցները (բաժնետիրական կապիտալ) և հավատարմագրային կառավարման վերցված միջոցները (երաշխավորված հիմնադրամները): Տրաստային հարաբերություններում սովորաբար մասնակցում են երեք կողմեր. տրաստի հիմնադիրը, հավատարմագրային սեփականատերը և շահառուն: Տրաստի հիմնումը կատարվում է տրաստի շահառուի օգտին հիմնադրի և հավատարմագրային սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի՝ տրաստային համաձայնագրի (trust agreement) հիման վրա: Սեփականատերը մնում է տրաստի հիմնադիրը, սակայն նա գույքի կառավարման բոլոր իրավունքները պայմանագրով հանձնում է հավատարմագրային սեփականատիրոջը (օրինակ, բանկին): Որպես կանոն, տրաստի հիմնադիրը հավատարմագրային սեփականատիրոջը տրամադրում է հանձնվող գույքը տնօրինելու լրիվ ազատություն, պայմանով, որ գույքի օգտագործումից ստացվող օգուտը, եկամուտները (շահույթը, տոկոսները և այլն) տրամադրվում են շահառուին:

Վերջին տարիներին արդյունաբերական ընկերությունների միջև մեծ համբավ է ստացել *ֆինանսական լիզինգը* (financial leasing), այսինքն՝ համաձայնագիր է, որը նախատեսում է վարձակալի պատվերով վարձատուի կողմից թանկարժեք մեքենաների և սարքավորումների ձեռքբերում և դրանք վարձով վարձակալին հանձնում այնպիսի ժամկետում, որի ընթացքում ծածկվում են սարքավորման լրիվ ամորտիզացիոն արժեքը, լրացուցիչ ծախսերը և վարձատուի շահույթը: Սովորաբար բանկը կամ նրան ենթարկվող լիզինգային ընկերությունը լրիվ արժեքով գնում են մեքենաները ու սարքավորումները և դրանք հանձնում վարձակալին: Վերջինս պարբերաբար մուծում է վճարներ, որոնց հաշվին մարվում է սարքավորման արժեքը և ապահովվում գործարքը վարկավորող հիմնարկության շահույթը: Պայմանագրի ժամկետը լրանալիս վարձակալը կարող է ձեռք բերել սարքավորումը մնացորդային արժեքով, որպես սեփականություն, կամ երկարաձգել դրա օգտագործման ժամկետը՝ նոր պայմաններով կամ այն վերադրաձնել վարձատուին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Ֆինանսական լիզինգի պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած չսպառվող գույք:

Կատաղի մրցակցությունը փոխատվական կապիտալների շուկայում բանկերին ստիպում է ներդնել սպասարկման նոր ձևեր, տրամադրել զուգակցվող և լրացնող, իսկ որոշ դեպքերում՝ նաև անվճար ծառայություններ: Ժամանակակից բանկը կատարում է մինչև 100 տիպի գործառնություններ և ծառայություններ:

XX դարի վերջին տասնամյակներում բանկային համակարգում նկատվում են զարգացման որոշակի նոր միտումներ.

- տարբեր տիպի բանկերի և ոչ բանկային վարկային կազմակերպությունների միջև սահմանների վերացում, նրանց կողմից կատարած գործառնությունների ունիվերսալացում
- տարբեր գործառնությունների (ընթացիկ և ժամկետային հաշիվներով, խնայողական ավանդներով) միատեղում, վարկային գործառնությունների կառուցվածքում միջնաժամկետ և երկարաժամկետ վարկավորման ավելացում
- բանկերի «ոչ ավանդական» գործառնությունների ընդլայնում, օրինակ, տրաստային (հավատարմագրային) գործառնությունների (եթե սկզբնական շրջանում առկա էին հատուկ ֆոնդեր, ապա ներկայումս յուրաքանչյուր կարգային բանկ ունի տրաստային բաժին)
- ֆինանսական լիզինգը, որը կոչված է ֆինանսներով ապահովելու կամ վարկավորելու սարքավորման հանձնումը երկարաժամկետ վարձակալության (արդյունաբերական լիզինգ), լայն տարածում է ստացել
- ֆինանսավարկային հիմնարկների կողմից հոլդինգային (ձեռնարկակալ, մայր բաց բաժնետիրական ընկերություն) ընկերության գլխավորությամբ, բանկային համակարգի խոշոր բազմաստիճանային կառուցվածքի ձևավորում
- բանկային գործունեության ապահովման տեղեկատվածրագրային և կապի ժամանակակից միջոցների լայն կիրառում, բանկային ծառայությունների որակի բարձրացում և այլն:

Բանկային շահույթը փոխառուներից գանձվող (ակտիվային գործառնություններ) և ավանդատուներին վճարվող (պասիվային գործառնություններ) տոկոսների գումարների միջև գոյացած տարբերությունն է: Բանկի զուտ շահույթի գումարի հարաբերությունը նրա սեփական կապիտալին, արտահայտված տոկոսներով, կազմում է բանկային շահույթի նորման:

$$N = P / K \%,$$

որտեղ՝

N-ը բանկային շահույթի նորման է

P-ն՝ բանկի զուտ շահույթը

K-ն՝ բանկի սեփական կապիտալը:

2002 թվականի ընթացքում բանկային համակարգն ապահովել է շահութաբերության բարձր մակարդակ, և հաշվետու տարում բանկային համակարգի չբաշխված շահույթը կազմել է 4.8 մլրդ դրամ, ընդ որում տարվա ընթացքում շահույթով է աշխատել 16 բանկ, իսկ վնասով՝ 4 բանկ: Տարին շահույթով եզրափակած 16 բանկերի չբաշխված շահույթը կազմել է 5.06 մլրդ դրամ, վնասով եզրափակած 4 բանկերի ընդհանուր վնասը կազմել է 221 մլն դրամ:

Նախորդ տարվա համեմատ 2002թ. ընթացքում իրականացված համախառն եկամուտներն ավելանալով 33%-ով, առաջանցիկ աճի միտում են ցուցաբերել համախառն ծախսերի նկատմամբ, որոնք ավելացել են 20%-ով: Արդյունքում, 2002թ. ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում բանկային համակարգի ստացած զուտ շահույթը կազմել է 4.8 մլրդ դրամ, իսկ բոլոր տարիների կուտակված չբաշխված շահույթը կազմել է 3.1 մլրդ դրամ:

Ընթացիկ տարում բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ընդհանուր կապիտալի կազմել է 13.4%, ըստ կանոնադրական կապիտալի՝ 15.8%, իսկ ըստ ակտիվների՝ 2.4%:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են ֆինանսների էությունը և գործառնությունները:
2. Ո՞րն է ֆինանսական համակարգի բովանդակությունը:
3. Որո՞նք են ֆինանսական կարգավորման ժամանակակից մի քանի ուղղությունները:
4. Ո՞րն է ֆինանսական քաղաքականության դերը:
5. Ո՞րն է ֆինանսական շուկայի սահմանումը, ֆինանսական շուկայի կառուցվածքը:
6. Ինչպիսի՞ն է ՀՀ ֆինանսական շուկան:
7. Ի՞նչ է իրենից ներկայացնում բյուջետային համակարգը:
8. Ինչպե՞ս կարելի է ամփոփ նկարագրել պետբյուջեն:
9. Ինչպիսի՞ն էր ՀՀ պետական բյուջեի փոփոխությունները անկախության տարիներին:
10. Որո՞նք են ՀՀ պետբյուջեի հիմնական ցուցանիշները ընթացիկ տարում:
11. Որո՞նք են հարկերի, հարկային քաղաքականության և հարկային համակարգի սահմանումները:
12. Որո՞նք են հարկերի երեք կարևորագույն գործառույթները:
13. Ի՞նչպիսին է բնակչության եկամուտների բաշխման անհամաչափության աստիճանը (Լորենցի կորի եւ Ջինի գործակցի միջոցով):
14. Ի՞նչպես կարելի է դասակարգել հարկերը որո՞նք են հարկերի տարբեր տեսակների սահմանումները:
15. Ի՞նչպես կարելի է պատկերել հարկադրույքի և հարկերի հաշվին պետբյուջե մուտք եղած միջոցների միջև կախվածությունը (Լաֆերի կորը):
16. Ինչպիսի՞ն է հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՀ պետբյուջեի ընդհանուր եկամուտների և ՀՆԱ-ի մեջ:
17. Ո՞րն է դրամավարկային քաղաքականության սահմանումը և նպատակը:
18. Որո՞նք են դրամավարկային քաղաքականության մեթոդները:
19. Ի՞նչպես կարելի է գնահատել դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը:
20. Որո՞նք են այն դժվարությունները, որոնց հետ իրականում բախվում է դրամավարկային քաղաքականությունը:
21. Ի՞նչպիսին է ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացված դրամավարկային քաղաքականությունն անցած ժամանակաշրջանում:
22. Որ՞ն է դրամավարկային համակարգի բնորոշումը:
23. Որո՞նք են փոխատվական կապիտալի աղբյուրները:
24. Որո՞նք են վարկի տարբեր ձևերը:
25. Որո՞նք են վարկի գործառնությունները:
26. Որո՞նք են բանկերի տեսակները:
27. Որո՞նք են բանկերի գործառնությունները:
28. Որո՞նք են բանկերի ակտիվային և պասիվային գործառնությունները:
29. Ի՞նչպես կարելի է դասակարգել վարկային գործառնությունները:
30. Ի՞նչպես է որոշվում բանկային շահույթի նորման:

ԲԱԺԻՆ IV. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 7. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

7.1. Տնտեսության գլոբալացման միտումները

Տնտեսական զարգացման և մասնագիտացման խորացման հետ զուգընթաց լայն թափ ստացավ միջազգային առևտուրը և աստիճանաբար ձևավորվեց տնտեսության համաշխարհային համակարգը:

Միջազգային փոխանակության ընդլայնման միտումը հաճախակի բախվում էր մեկ երկրի կամ երկրների խմբի տնտեսական ինքնապահովման կամ ավտարկիայի հակադիր միտումի հետ իսկ տնտեսական անհամաչափ զարգացումը սրում էր պետությունների հարաբերությունները, առաջ բերելով բախումներ և պատերազմներ: XX դարի երկրորդ կեսին երկրների միջև տնտեսական փոխներգործությունն այնքան ուժեղացավ, որ տարբեր երկրների ու տարածաշրջանների ինտեգրացման գործընթացը դարձավ անխուսափելի: Ի՞նչպես և ինչո՞ւ դա տեղի ունեցավ:

Այս հարցը պետք է քննարկել *գլոբալ* (ֆր. global-համընդհանուր) էկոնոմիկայի և մակրոէկոնոմիկայի տարբերության բացահայտումից: Ազգային մակրոէկոնոմիկան կարող է լինել բաց և փակ: ***Փակ մակրոէկոնոմիկան*** տարբերվում է նրանով, որ բոլոր ապրանքները և ծառայությունները արտադրվում ու վաճառվում են երկրի ներսում: Ներքին բոլոր եկամուտները և ծախսումները կազմում են ՀՆԱ-ն:

Բաց ազգային տնտեսության մեջ արտադրանքի մի մասը ստեղծվում է ներքին սպառման համար, իսկ մյուս մասը վաճառվում է երկրի սահմաններից դուրս: Ընդ որում, դրա հետ մեկտեղ, եկամուտների մի մասը տրամադրվում է այլ երկրներում պատրաստված ապրանքների և ծառայությունների գնումներին: Բոլոր եկամուտները և ծախսումները կազմում են

ՀԱԱ = ՀՆԱ + Ա - Ն,

որտեղ՝

ՀԱԱ-ն համախառն ազգային արդյունքն է

ՀՆԱ-ն համախառն ներքին արդյունքն է

Ա-ն արտահանումն է երկրից (ապրանքների և ծառայությունների)

Ն-ն ներմուծումն է երկիր (ապրանքների և ծառայությունների):

Հետևաբար, միջազգային առևտրի մեջ ընդգրկված տնտեսությունը կոչվում է բաց տնտեսություն: Ակնհայտ է, որ գլոբալ տնտեսության ծագումը և զարգացումը հանդիսանում է փակ ազգային տնտեսություններից բացին երկրների մեծամասնության անցման հետևանք: Ե՞րբ և ի՞նչպես դա տեղի ունեցավ:

Պատմությանը հայտնի է համաշխարհային տնտեսության ձևավորման գործընթացի չորս փուլ:

Առաջին փուլը կապված է արտադրության մինչինդուստրիալ փուլի հետ, երբ ծագեց փոխանակությունը և դրվեցին փոխծեռնտու տնտեսական համագործակցության հիմքերը: Ապրանքային արտադրության զարգացումը հնարավորություն ստեղծեց փոխանակությունը տարբեր պետությունների միջև դարձնել կանոնավոր: Առևտրականների խավի կազմավորումով սկսեց զարգանալ միջազգային առևտուրը:

Երկրորդ փուլը ծագեց արտադրության ինդուստրիալ փուլում, բնափակ տնտեսությունների քայքայման, շուկայական հարաբերությունների բազմակողմանի զարգացման, խոշոր մեքենայական արտադրության կազմավորման պայմաններում, երբ արտաքին առևտուրը դարձավ գործնականում ցանկացած ազգային տնտեսության անբաժանելի բաղադրամաս: Համաշխարհային շուկայի ձևավորումը դասական կապիտալիզմի բարձրագույն տնտեսական նվաճումն է:

Երրորդ փուլը սկսվեց XIX-XX դդ. սահմանագծին: Այն ժամանակ առաջին անգամ ձևավորվում է Համաշխարհային տնտեսության համակարգը, որի համար բնորոշ են մի շարք հատկանիշներ (նկար 71):

Նկար 71. Համաշխարհային տնտեսության համակարգի առանձնահատկությունները XX դարի սկզբին



Կապիտալի արտահանման ուժեղացումն ու լայն միջազգային փոխանակությունը ծնեցին միջազգային մոնոպոլիաներ, որոնք բաժանեցին իրար մեջ վաճառահանման համաշխարհային շուկաները, հումքի աղբյուրները և այլն:

Համաշխարհային տնտեսական բաժանումը խոշոր կապիտալի համար մոնոպոլ գերշահույթ ստանալու հնարավորություն ստեղծեց: Ազատ ազգերի գաղութացումը հզոր թափ ստացավ և ավարտվեց խոշոր

տերությունների միջև ***աշխարհի տարածքային բաժանումը***:

Համաշխարհային տնտեսությունն իրենից ներկայացնում է գլոբալ տնտեսական օրգանիզմ, որում միահյուսվել են մոլորակի բոլոր երկրների և ժողովուրդների փոխկապերն ու փոխկախվածությունները:

Գաղութներն ամուր կապելու և նրանց շահավետ օգտագործելու համար հզոր տերությունները ձևավորեցին յուրահատուկ ***գաղութային միջազգային աշխատանքի բաժանում:***

Սակայն ֆինանսական կապիտալի տիրապետության համաշխարհային համակարգը կրում էր իր մեջ *սուր սոցիալ-տնտեսական հակասություններ*, որոնք նրան դարձրին անկայուն և, վերջին հաշվով, հանգեցրին քայքայման:

XX-դ 60-ական թթ., երբ գաղութային համակարգը վերջնականորեն փլուզվեց և նախկին գաղութային երկրները ազատվեցին քաղաքական կախվածությունից, սկսվեց համաշխարհային տնտեսության զարգացման *ժամանակակից փուլը*:

Այս փուլում առաջացան ժամանակակից գլոբալ տնտեսության առաջադիմական փոփոխությունների նոր միտումներ (նկար 72):

Նկար 72. Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումները



Ժամանակակից գլոբալ տնտեսությունը բացառում է *երկրների արտատնտեսական հարկադրումը*: Ավելի բնորոշ է դառնում երկրների միջև մշտական տնտեսական համագործակցության աճող նյութական շահագրգռությունը: Վերջին տասնամյակներում ձևավորվում է *նոր գլոբալ տնտեսական տարածք:* Տարբեր տնտեսական զարգացման աստիճանի վրա գտնվող երկրներ անցնում են շուկայական տնտեսության, ինչը նպաստում է նրան, որ համաշխարհային մասշտաբով *ավելի ինտենսիվ է զարգանում շուկայական հարաբերությունների ամբողջ համակարգը:* Տնտեսական փոխկապվածությունը դառնում է ավելի բազմակողմանի: Ժամանակակից համաշխարհային տնտեսական կապերի ամբողջությունը ներառում է՝

- արտաքին առևտուրը
- արտադրության կոոպերացումը և մասնագիտացումը
- գիտատեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիական մշակումների ինտենսիվ փոխանակումը
- աշխատուժի միգրացիան մեկ երկրից մյուսը
- միջազգային վարկը և արտասահմանյան ինվեստիցիաները
- պետությունների արժութային փոխհարաբերությունները:

Այդպիսի համաշխարհային տնտեսական կապերը հիմնվում են ***գլոբալ ենթակառուցվածքի*** վրա, որը ներառում է միջազգային տրանսպորտային համակարգը, տեղեկատվական հաղորդակցությունների միջազգային ցանցը և այլն:

Ժամանակակից միջազգային տնտեսությունն անընդհատ փոխվում է: Նրան բարձր դինամիզմ տվող գործոններն են ԳՏՀ-ն, արտադրության աճող ինտերնացիոնալացումը, ազգային տնտեսությունների աճող փոխկապվածությունը, մի շարք երկրներում սոցիալ-տնտեսական հարաբերությունների արմատական վերակառուցումը:

Ազգային տնտեսությունների միջազգային կապերը դառնում են հաստատուն, խորանում է ***աշխատանքի միջազգային բաժանումը (ԱՄԲ),*** առանձին երկրներ մասնագիտանում են այս կամ այն ապրանքների կամ ծառայությունների արտադրության մեջ՝ համաշխարհային շուկայում դրանք վաճառելու նպատակով: ԱՄԲ-ն ընկած է ***միջազգային տնտեսական հարաբերությունների (ՄՏՀ***) հիմքում: ՄՏՀ-ն, նախ և առաջ, արտահայտվում է ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտրի ձևով: ԱՄԲ զարգացման արդյունքում ձևավորվեց ***համաշխարհային շուկան,*** որը ՄՏՀ-ով իրար հետ կապված, առանձին երկրների ազգային շուկաների ամբողջություն է:

7.2. Համաշխարհային շուկա: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը

Միջազգային առևտրի տեսությունները, որոնք իրենց սկիզբն են առնում մերկանտիլիստների և անգլիական դասական քաղաքատնտեսության դպրոցների տեսություններից, համաշխարհային տնտեսագիտական մտքի զարգացմանը համընթաց անցել են մի շարք փուլերով: Սակայն դրանց կենտրոնական հարցերը եղել և մնացել են հետևյալները.

- ի՞նչն է ընկած աշխատանքի միջազգային բաժանման հիմքում
- առանձին երկրների և ռեգիոնների համար ի՞նչպիսի միջազգային մասնագիտացումն է առավել արդյունավետ և բերում է նրանց առավելագույն օգուտներ
- ի՞նչպիսի գործոններով է կանխորոշվում երկրի մրցունակությունը համաշխարհային առևտրում:

Այս բոլոր հարցերն արդիական են նաև Հայաստանի համար՝ նրա զարգացման ներկայիս փուլում: Այդ իմաստով, մեզ համար միջազգային առևտրի տեսությունների նոր միտումները որոշակի գործնական հետաքրքրություն են ներկայացնում:

Ադամ Սմիթը հիմնավորեց այն թեզը, ըստ որի միջազգային առևտրի զարգացման հիմքում ընկած է բացարձակ ծախքերի տարբերությունը, նշելով, որ հարկ է ներմուծել ապրանքներ այն երկրից, որտեղ ծախքերը բացարձակորեն ցածր են, և արտահանել այն ապրանքները, որոնց ծախքերը ցածր են արտահանողների մոտ:

Ա. Սմիթի հայացքները լրացրեց և զարգացրեց Դ. Ռիկարդոն, որը ձևակերպեց համեմատական ծախքերի տեսությունը: Նա հնարավոր էր գտնում փոխշահավետ առևտուրը նաև մեկ երկրի մյուսի համեմատ ապրանքների արտադրության մեջ բացարձակ առավելությունների առկայության դեպքում: Հետևաբար, միջազգային առևտրի գոյության անհրաժեշտ պայման է հանդես գալիս տարբեր երկրներում և տարբեր ծախսումներով միևնույն ապրանքի արտադրությունը:

Ազատ առևտրի ժամանակ համեմատական ծախքերի սկզբունքը ինքնաբերաբար ապահովում է օպտիմալ մասնագիտացում: Ժամանակակից արևմտյան տնտեսագետներն էականորեն մոդիֆիկացրեցին վերը նշված միջազգային առևտրի զարգացման դասական մոդելը: Ժամանակակից մեկնաբանություններում առաջատար տեղ են գրավում ամերիկյան տնտեսագետ Ջ. Հաբերլերի այլընտրանքային ծախսերի մոդելը, շվեդ տնտեսագետ Էլի Հեկշերի և Բերթե լեմ Օլնի նոր մոդելը, որը մինչ 60-ական թվականները տիրապետող էր տնտեսագիտական գրականության մեջ (Օլնը 1977թ. Նոբելյան մրցանակ ստացավ էկոնոմիկայի բնագավառում, դրան արժանացավ նաև Փ. Սամյուելսոնը, որը խոշոր ներդրում ունեցավ այդ մոդելի ճշգրտման և զարգացման մեջ) և հաճախ այն անվանվում է Հեկշեր-Օլին-Սամյուելսոն մոդել, ամերիկացի տնտեսագետ Մայքլ Փորթերի մոդելը, անգլիացի տնտեսագետ Մ. Պոզների մոդելը և ուրիշները:

Յուրաքանչյուր երկրի տնտեսական հզորության կարևորագույն ցուցանիշներից են համարվում արտաքին առևտրի շրջանառությունը, ներմուծման և արտահանման հարաբերակցությունը, առևտրային հաշվեկշռի վիճակը:

Համաշխարհային շուկայում հաջող մասնակցության համար յուրաքանչյուր երկիր պետք է ունենա իր ***արտաքին առևտրի ենթակառուցվածքը***, որը, նախ և առաջ, ներառում է արտաքին առևտրի նյութատեխնիկական բազան: Այդպիսի ենթակառուցվածք չունեցող երկրները մեծ ծախսեր են կրում, որպեսզի ապահովեն մուտքը այլ երկրների արտաքին առևտրի ենթակառուցվածքներ, կատարելով հսկայական ծախսեր իրենց ապրանքաշրջանառությունը սպասարկող օտարերկրյա տրանսպորտային, ապահովագրական կազմակերպությունների, բանկերի, առևտրի տների ծառայությունների վճարման համար:

Ազգային տնտեսության մասնակցության չափը ԱՄԲ-ում բնութագրվում է ***ապրանքայնության ինդեքսով***՝ ***Ա$_{ի}$***, որը ցույց է տալիս ներմուծված (Ն) և արտահանված (Ա) ապրանքների և ծառայությունների մասը տարեկան ՀՆԱ-ում:

$$Ա_{ի} = Ա + Ն / ՀՆԱ \times 100$$

Յուրաքանչյուր պետության արտաքին առևտրի ծավալը որոշվում է բնաիրային և արժեքային ցուցանիշներով: ***Բնաիրային չափման*** ժամանակ հաշվարկվում է արտահանված և ներմուծված արտադրանքի քանակը: Դրան համապատասխան, արտաքին առևտրի ապրանքաշրջանառության դինամիկան արտահայտվում է արտահանման և ներմուծման ***ֆիզիկական ծավալի ինդեքսներով,*** որոնք ցույց են տալիս արտադրանքների իրական ծավալների փոփոխման միտումները: Ի տարբերություն դրանց, ***արժեքային ցուցանիշներն*** արտացոլում են ինչ-որ երկրի կողմից արտահանվող և ներմուծվող բարիքների փոփոխությունները ոչ միայն քանակում, այլ նաև գներում: Հետևաբար, ներմուծման արժեքը կարող է, ենթադրենք, փոքրանալ արտահանվող արտադրանքի քանակի ավելացման դեպքում, եթե նրանց գները նվազեն, և ընդհակառակը:

Համաշխարհային առևտրի ծավալը գնալով աճում է: Այսպես, եթե 1965թ. այն կազմել է 172.0 մլրդ, 1970թ՝ 193.4 մլրդ, 1975թ՝ 816.5 մլրդ, 1980թ՝ 1.9 տրլն, 1990թ՝ 3.3 տրլն և 1995թ՝ 5 տրլն դոլարից ավելի, ապա եղած կանխատեսումներով համաշխարհային առևտրի այդ բարձր տեմպերը կպահպանվեն և արդեն 2003թ. նրա ծավալը կավելանա 50%-ով և կգերազանցի 7 տրլն դոլարը:

Համաշխարհային առևտրի բնորոշ գիծը գների հատուկ համակարգի՝ ***համաշխարհային գների*** կազմավորումն է: Արտաքին առևտրի զարգացումը մեծամասամբ պայմանավորված է համաշխարհային շուկայում գների մակարդակով, որը արտացոլում է ապրանքների և ծառայությունների արտադրության ինտերնացիոնալ ծախքերը, փոփոխություններն առաջարկում և պահանջարկում, ինչպես նաև մենաշնորհի և մրցակցության ազդեցության աստիճանը համաշխարհային շուկայում: Բավական է նշել, որ զարգացող պետություններից արտահանվող ամբողջ արտադրանքի 70-90% - ն իրացվում է մասնավոր մոնոպոլիաների միջոցով: Դրա հետևանքով միջազգային մոնոպոլիաներն իրականացնում են անհամարժեք փոխանակում «գների մկրատի» օգնությամբ:

Արտաքին առևտրի քաղաքականության մեջ գոյություն ունի պատմականորեն ձևավորված երկու հակադիր մոտեցում՝ պրոտեկցիոնիզմ և ազատ առևտուր:

Պրոտեկցիոնիզմը ապրանքների ներմուծումը սահմանափակելու համակարգ է, երբ սահմանվում են բարձր մաքսեր, արգելվում որոշակի արտադրանքի ներմուծումը:

Օգտագործվում են դիսկրիմինացիոն (խտրական) որակական ստանդարտներ և այլ միջոցառումներ, որոնք խոչընդոտում են օտարերկրյա արտադրանքի մրցակցությունը տեղական արտադրության հետ: Այդ քաղաքականությունը պաշտպանում է ազգային արտադրությունը, խթանում նրա զարգացումը:

Ազատ առևտուրը ապրանքների ներմուծման սահմանափակումները վերացնող համակարգ է, որի ժամանակ մաքսային մարմինները կատարում են միայն գրանցման գործառույթև չեն գանձում ներմուծման և

արտահնման մաքսեր: Այդպիսի քաղաքականություն են վարում բարձրարդյունավետ ազգային տնտեսությամբ երկրները, որտեղ ձեռներեցները կարող են ոչ միայն դիմանալ օտարերկրյա մրցակցությանը, այլ նաև անցնել պրոտեկցիոնիստական մաքսային արգելքները՝ ընդլայնելով համաշխարհային շուկայում իրենց ապրանքների ներթափանցումը:

Արտաքին առևտրի այս կամ այն քաղաքականություն վարելը կախված է երկրի զարգացման աստիճանից, ներքին շուկայի գնողունակությունից, տվյալ պետության վարած ընդհանուր քաղաքականությունից և այլն:

Յուրաքանչյուր երկրի արտաքին առևտրի արդյունքներն արտացոլվում են ***առևտրի հաշվեկշռում*** (balance of trade, trade balance)՝ որոշակի ժամանակաշրջանում տվյալ երկրի հաշվետվության մեջ, որն արտացոլում է միջազգային առևտրում տվյալ երկրի մասնակցության արդյունքները՝ այլ երկրների հետ առևտրական կապերը: Այն հաշվարկվում է որպես իրական ապրանքների արտահանման և ներմուծման տարբերություն: *Արտահանման ծավալներում* ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ *ներմուծման ծավալներում*՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար: Արտահանման և ներմուծման ծավալներում չեն ընդգրկվում ծառայությունները, արժեթղթերը, շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները: Առևտրի հաշվեկշիռը բնութագրում է ազգային ապրանքային տնտեսության զարգացման աստիճանը: Հաշվեկշիռը կոչվում է ակտիվային, եթե երկրից արտահանվող ապրանքների արժեքը գերազանցում է ներմուծվող ապրանքների արժեքը, հակառակ հարաբերակցության դեպքում արտաքին առևտրի հաշվեկշիռը կոչվում է պասիվային:

Առևտրի հաշվեկշիռը սերտորեն կապված է երկրի վճարային հաշվեկշռի հետ, այն նրանում կարևոր բաղկացուցիչ մասն ու ամենաշատ օգտագործվող հասկացությունն է: Առևտրի հաշվեկշռում արտացոլված գործառնությունները մտնում են վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի գործառնությունների մեջ: Երկրի միջազգային ***վճարային հաշվեկշիռը*** (balance of payments), որոշակի ժամանակաշրջանում՝ սովորաբար մեկ տարում կամ եռամսյակում (ԱՄՆ) դոլարով, արտասահմանից տվյալ երկիր մուտք լինող և նրա կողմից արտասահման կատարվող վճարումների հարաբերակցությունն է: Դրանով իսկ բնութագրվում է տվյալ երկրի և մնացյալ աշխարհի միջև բոլոր տնտեսական գործարքների համակարգված վիճակագրական հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են տվյալ երկրի ռեզիդենտների և այլ երկրների ռեզիդենտների (ոչ ռեզիդենտների) միջև իրականացվող բոլոր տնտեսական գործառնությունները: Այսպիսով, երկրի միջազգային ֆինանսական վիճակը, երկրների միջև տեղի ունեցած գործառնությունները, ֆինանսական հոսքերը, ընթացիկ անհատույց փոխատվությունները ամփոփվում են վճարային հաշվեկշռում: Նման գործառնությունների թվին են դասվում ապրանքների, ծառայությունների, եկամուտների, արտաքին ֆինանսական ակտիվների ու պահանջների, ինչպես նաև պարտավորությունների հետ կապված գործառնությունները: Հետևապես, չնայած իր անվանմանը, վճարային հաշվեկշիռը ոչ միայն արտացոլում է վճարումները, այլ նաև գործառնությունները: Այն ակտիվ է, եթե երկիրն արտասահմանից ստացել է ավելի շատ վճարումներ, քան կատարել է: Հակառակ հարաբերակցության դեպքում այն պասիվ է:

Վճարային հաշվեկշիռը բաղկացած է բաժիններից, որոնց բոլոր հոդվածների գումարը պետք է հավասարվի զրոյի: Վճարային հաշվեկշռի հիմնական հաշիվներն են՝ *ընթացիկ հաշիվը* (current account balance of payments), *կապիտալի հաշիվը* (capital account balance of payments), ֆինանսական հաշիվը (finance account balance of payments): Որպես կանոն, ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ անհատույց փոխատվությունների հետ կատարված գործառնությունները, այլ կերպ ասած, ընթացիկ հաշվեկշիռը, որտեղ մտնում են արտաքին առևտրային գործառնությունների (առևտրային, ապրանքային հաշվեկշիռ), ծառայությունների, ոչ առևտրային գործառնությունների գծով վճարումներն ու մուտքերը, վարկերի գծով տոկոսագումարները, ներդրումների գծով եկամուտներն ու վճարումները: Տնտեսագիտական գրականության մեջ այս գործառնությունների ամբողջությունն ընդունված է անվանել ընթացիկ հաշվի գործառնություններ, իսկ ամփոփ մնացորդը՝ ընթացիկ հաշվի գործառնությունների գծով մնացորդ: Վճարային հաշվեկշռի կապիտալի և ֆինանսների հաշիվներում ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաև կապիտալ անհատույց փոխատվությունները, այլ կերպ ասած, ներդրումների և վարկերի շարժի հաշվեկշիռը: Արտարժութային պահուստների շարժն արտացոլում է միջազգային արժութային գործառնությունները:

Մեթոդաբանական առումով ընթացիկ հաշվի մնացորդը բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «սխալների և բացթողումների հոդված»:

Վճարային հաշվեկշիռների միասնականությունը և համադրելիությունն ապահովելու համար դրանք կազմվում են Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված Վճարային հաշվեկշռի Ձեռնարկի դրույթներին համապատասխան: Վճարային հաշվեկշիռը կազմվում է նաև եռամսյակային կտրվածքով, ԱՄՆ դոլարով՝ հաշվետու եռամսյակի ավարտին հաջորդող եռամսյակի ընթացքում (մինչև եռամսյակի վերջը):

ՀՀ-ում Ազգային վիճակագրական ծառայությանը ՀՀ վճարային հաշվեկշիռն առաջին անգամ կազմել է 1993 թվականի համար: Սկզբնական շրջանում այն կազմվել է կրճատ տարբերակով , իսկ սկսած 1996 թվականից՝ ԱՄՀ –ի մշակած վճարային հաշվեկշիռի միասնականացված հոդվածների համապատասխան:

ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի տևական դեֆիցիտը նշանակում է, որ արտաքին խնայողություններն չեն ուղղվում կառուցվածքային բարեփոխումների իրականացմանն ու արտադրական ներուժի ստեղծմանը: Հանրապետության վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասորդը (դեֆիցիտ) 2002թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմեց 102.5 մլն դոլար, 2001թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 24.6%-ով կամ 33.4 մլն դոլարով: Ընդհանուր առմամբ, 2002թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասորդի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմեց 6.6%՝ 2001թ. նույն ժամանակահատվածի 9.8%-ի հետ համեմատած: Ինչպես և նախորդ տարիների, այնպես էլ 2002թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասորդը հիմնականում պայմանավորված էր ապրանքների ներմուծման բարձր տեսակարար կշռով՝:

1992-2003թթ. ՀՀ-ում ընդունվել են մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնց մեջ ի հայտ է եկել արտաքին տնտեսական գործունեության ազատականացման միտումը: Առաջիկա տարիներին այդ կուրսը պահպանելու հետ միասին տեղական արտադրանքների համար առնվազն հավասար մրցակցային պայքարի ստեղծման խնդիր է դրվում:

Այդ նպատակով նախատեսվում է ՀՀ արտաքին առևտրի բնագավառում մշակել և ներդնել առավել ճկուն պետական կարգավորման համակարգ, պահպանելով տվյալ բնագավառում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները: Ակնհայտ է, որ պետք է կիրառվի տարբերակված քաղաքականություն, հաշվի առնելով տարբեր երկրներում ընդունված միջազգային նորմերի պահպանումը, սովորությունները և այլն: Որոշ ապրանքների նկատմամբ նախատեսվում է կիրառել ներմուծման բարձր մաքսատուրքեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներմուծման լիցենզավորում և քվոտավորում:

Ներկայումս Հայաստանը կնքել է ազատ առևտրի մասին համաձայնագրեր ԱՊՀ գրեթե բոլոր երկրների հետ: Սակայն ԱՊՀ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացը բավարար համարել չի կարելի: Այդ մասին են վկայում հետևյալ տվյալները: Տես նկար 73



Նկար 73. ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտաքին առևտրի ապրանքաշրջանառության մեջ

Գծապատկերից երևում է, որ ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառությունը կրճատման միտում է ունեցել՝ հատկապես կտրուկ մինչև 2000թ.: Այդ տարիներին ապրանքաշրջանառությունը ԱՊՀ երկրների հետ նվազել էր ինչպես ապրանքների ծավալներով, այնպես էլ տեսակարար կշիռով ընդհանուրի մեջ, այսինքն նվազումը տեղի էր ունեցել ոչ միայն հարաբերականորեն, այլև բացարձակորեն: Եթե 1997թ. այն կազմում էր 393.8 մլն, ապա 2000թ՝ 247.0 մլն դոլար (ԱՄՆ): Հատկապես կրճատվել էր ՌԴ-ն արտահանվող և ներմուծվող ապրանքների ծավալը, որը կապված էր այդ երկրում տնտեսական և ֆինանսական ճգնաժամի խորացման, ռուբլու կտրուկ արժեզրկման հետ: 2000թ. ԱՊՀ երկրներ արտահանվող ապրանքների ծավալները ավելացել են և 2002թ. վերջին ապրանքաշրջանառությունը այդ երկրների հետ կազմել է 403.9 մլն դոլար՝ ընդհանուր 1498.2 մլն դոլար ապրանքաշրջանառության մեջ:

2002թ. ընթացքում ԱՊՀ անդամ երկրներ արտահանվել է ամբողջ արտահանման շուրջ 19.37%-ը (որից 12.78%-ը՝ ՌԴ), որը կազմել է 98.247 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 6.62%-ով, իսկ ԵՄ երկրներ արտահանման ծավալներն աճել են 13.12%-ով՝ կազմելով 197.6 մլն ԱՄՆ դոլար: Նշված երևույթը ևս արտահանման նվազման պատճառ է դարձել, քանի որ, փաստորեն, տարվա ընթացքում անցում է կատարվել ԱՊՀ երկրների շուկաներից դեպի միջազգային նոր շուկաներ, որտեղ գործելու հնարավորությունները սահմանափակ են՝ ավելի մրցունակ ապրանքներ առաջարկելու և վստահություն ձեռք բերելու առումով: Նշված հանգամանքը, ինչ խոսք, դրական երևույթ է և նպաստում է ավանդական ճյուղերի արտադրանքի արտահանման հետագա զարգացմանը և մշտական գործընկեր երկրներ ձեռք բերելուն:

ՀՀ արտաքին տնտեսական կապերի մեջ բավականին բարձր տեսակարար կշիռ ունեն Եվրամիության երկրները, Ռուսաստանը, Բելգիան, Իսրայելը, Իրանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ՄԱԷ, ԱՄՆ (նկար 74):



Նկար 74. ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ հիմնական գործընկեր երկրների, 2002 թ.

Հայաստանը աշխարհի այն երկրներից է, որը ներմուծում է մի քանի անգամ ավելի շատ ապրանք, քան արտահանում է: Արտահանման և ներմուծման ծավալների հարաբերակցությունն ունի հետևյալ պատկերը.1995-ին արտահանումը կազմել է ներմուծման ծավալի 37.3%,1996-ին՝ 38.3%, 1997-ին՝ 31.8%, 1998-ին՝ 24.4%, 1999-ին՝ 28.6%, 2000-ին՝ 33.6%, 2001-ին՝ 39.2%, իսկ 2002 ին՝ 51.2%-ը:

1994-2002թթ. հանրապետությունը ներմուծել է ավելի քան 7.279 մլրդ և արտահանել 2.609 մլրդ դոլարի (ԱՄՆ) արժողությամբ ապրանքներ: Ընդ որում, եթե 1994թ. ներմուծումը գերազանցում էր արտահանումը 1.8,1998-ին՝ 4 անգամ, ապա 2002թ.՝ 1.9 անգամ: Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս ՀՀ առևտրի ցուցանիշների փոփոխությունները 1994-2002թթ. (նկար 75):



Նկար 75. ՀՀ արտահանումը, ներմուծումը և առևտրի հաշվեկշռը 1994-2002թթ. (մլն.դոլար)

2002թ. ընթացքում ապրանքների և՛ արտահանումը, և՛ ներմուծումը՝ աճել էին, սակայն արտահանումը՝ ավելի շատ: Չնայած տարվա ընթացքում ապրանքների արտահանման ծավալների աճին, դրսևորված միտումներն այնքան էլ հուսադրող չեն, քանի որ ծավալային աճը պայմանավորված է եղել նրանում մեծ տեսակարար կշիռ կազմող թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման աճով: Եթե արտահանումը

դիտարկենք առանց նշված հոդվածի, ապա տարվա ընթացքում կունենանք արտահանման մոտ 30% նվազում, ինչը վկայում է, որ արտահանող ճյուղերում արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ չի նկատվել*:

2002 թ. հունվարին առևտրի հաշվեկշիռը դրական էր միայն 2 ապրանքային խմբերով. հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, և արվեստի ստեղծագործությունների գծով: Մնացած բոլոր ապրանքային իրերի գծով՝ մասնավորապես սննդի ապրանքների և հանքահումքային արտադրանքի, առևտրային հաշվեկշիռը բացասական էր:

Արտահանման վերլուծությունն ըստ ապրանքատեսակների ցույց է տալիս, որ դրա կեսից ավելին կազմել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (51.11%), սննդի պատրաստի արտադրանքը (10.82%), ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (8.83%), ինչպես նաև հանքահումքային արտադրանքը (8.37)%: Ներմուծման ծավալի մեծ մասը կազմել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (21.55%), հանքահումքային արտադրանքը (17.58%), մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները (10.45%), սննդի պատրաստի արտադրանքը (7.98%), ինչպես նաև բուսական ծագման արտադրանքները (7.51%) (նկար 76):

2002թ. ընթացքում փաստացի արտահանումը նախորդ տարվա նկատմամբ աճելով 48%-ով, կազմեց 507.2 մլն դոլար, իսկ ներմուծումը աճելով 13.3%-ով, կազմեց 991.0 մլն ԱՄՆ դոլար*:

ՀՀ ատաքին առևտրում, բնականաբար, ավելանում է մասնավոր հատվածի տեսակարար կշիռը: Օրինակ, եթե 1995թ. մասնավոր հատվածի մասնաբաժինը արտահանման ծավալում կազմել է 33.7%, ապա արդեն 1998թ.՝ մոտ 70%: Ներմուծման ծավալում նույն ժամանակահատվածում մասնավոր հատվածի մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 46.8 և 67.9%**:

Արտաքին առևտրի պայմանները բարելավող կարևորագույն գործոն է նաև իրական փոխարժեքը, քանի որ այն ազդում է երկրի մրցունակության վրա, մասնավորապես նպաստում արտահանման զարգացմանն ու ներմուծման կրճատմանը: Այնուհանդերձ հարկ է նշել, որ, պայմանավորված արտաքին առևտրի վրա իրական փոխարժեքի թույլ ազդեցությամբ, վերոհիշյալ միտումներն էական ազդեցություն չեն ունեցել ապրանքների հաշվեկշռի վրա:



Նկար 76. ՀՀ արտահանման և ներմուծման ծավալը և կառուցվածքն ըստ առանձին ապրանքային խմբերի, 2002թ.

Արտաքին տնտեսական հարաբերությունների վրա զգալի ազդեցություն կունենա ՀՀ-ի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), ինչը հնարավորություն կտա ԱՀԿ անդամ-երկրների շրջանակներում ստեղծել արտահանման և ներմուծման համար լավագույն պայմաններ, ինչպես նաև նպաստավոր պայմաններ օտարերկրյա ներդրումների համար՝ կապված շուկաների կանխատեսելիության և ապահովության հետ:

7.3. Ժամանակակից միջազգային արժութային հարաբերությունները

Երկրների միջև առևտրական և ֆինանսական գործարքներ կատարելիս առաջանում են որոշակի արժութային (տարադրամային) հարաբերություններ: Այդ հարաբերությունների բնագավառում պետական մարմինների, կենտրոնական բանկերի, ֆինանսական հիմնարկությունների և միջազգային արժութային-ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական, իրավական և կազմակերպչական միջոցառումների և ձևերի ամբողջությունը անվանվում է *արժութային քաղաքականություն* (currency policy): Երկրի արժութային քաղաքականությունն անցկացվում է նրա կառավարության, կենտրոնական բանկի, կենտրոնական ֆինանսական մարմինների կողմից՝ արտարժույթի, արտարժութային փոխարժեքի, արտարժութային գործառնությունների վրա փոխազդեցության միջոցով: Ընթացիկ արժութային քաղաքականության շրջանակներում իրականացնում են արժութային-շուկայական իրավիճակի օպերատիվ կարգավորում այնպիսի հիմնական գործիքների միջոցով, ինպիսիք են՝ *արտարժութային միջամտությունները, արտարժութային սահմանափակումները, արժութային պահուստների դիվերսիֆիկացիան, արտարժութային օժանդակությունները, արժութային համարժեքությունների սահմանումը*: Երկարաժամկետ արժութային քաղաքականությունը ենթադրում է երկարաժամկետ միջոցառումներ արժութային մեխանիզմի հետևողական փոփոխության ուղղությամբ՝ միջպետական բանակցությունների և համաձայնագրերի միջոցով, առաջին հերթին՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, ինչպես նաև արժութային բարեփոխումների շրջանակներում: Աշխարհի մասշտաբով արժութային քաղաքականությունն անցկացվում է միջազգային արժութային-ֆինանսական կազմակերպությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ, միջազգային բանկեր) կողմից:

Տարբեր երկրների դրամական միավորները, որոնք ունեն իրենց ազգային «համազգեստը», միջնորդավորում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միջազգային շարժը և դրանով իսկ ձևավորում համաշխարհային արժութային համակարգը (ՀԱՀ): *Արժութային համակարգը* (currency system)՝ դրամավարկային հարաբերությունների ամբողջություն է, որը ձևավորվել է տնտեսական կյանքի միջազգայնացման և համաշխարհային շուկայի զարգացման հիման վրա և ամրագրված է պայմանագրային ու պետական-իրավական նորմերով:

Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը մեծամասամբ կախված է ՀԱՀ-ի վիճակից՝ միջազգային դրամական հաշվարկների կազմակերպման ձևից: *Միջազգային հաշվարկները (ՄՀ)*՝ (international settlements) մի երկրի տարածքում գտնվող իրավաբանական և ֆիզիկական անձանց (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) հաշվարկներն են այլ երկրների տարածքում գտնվող իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ՝ նրանց կողմից ձեռք բերված (վաճառված) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) դիմաց: Պետությունների, ինչպես նաև տարբեր երկրների տարածքներում գտնվող կազմակերպությունների, ֆիրմաների և քաղաքացիների միջև հաշվարկներն են տարբեր դրամական պահանջների և պարտավորությունների գծով: Հաշվարկներն իրականացվում են հիմնականում բանկերի միջոցով՝ մեծամասամբ անկանխիկ հաշվարկների ձևով: Ընդ որում, հաշվարկների գլխավոր գործիք հանդես են գալիս առաջատար երկրների արժույթները: Միջազգային հաշվարկները կատարվում են միջազգային բանկային պրակտիկայում ընդունված ձևերով: Դրանք են՝ բանկային փոխանցումները, ինկասոն և ակրեդիտիվները:

ՄՀ-ն վճարումների կարգավորման համակարգ է, որի բնագավառում ծագում են երկու բազիսային խնդիրներ՝

ա) ի՞նչպես սահմանել և կարգավորել ազգային դրամական միավորի փոխանակելիությունը օտարերկրյա արժույթի հետ

բ) ի՞նչպես լուծել արտաքին աշխարհի հետ ազգային տնտեսության հաշվարկների անհաշվեկշռության խնդիրը:

ՄՀ-ի ամբողջ համակարգն իր կենտրոնացված արտահայտությունն է գտնում երկրների վճարային հաշվեկշիռներում: Այս կամ այն երկրի վճարային հաշվեկշռի անհաշվեկշռությունը պահանջում է հավասարեցման նոր մեխանիզմ:

Դեռ XX դարի սկզբին ՀԱՀ հասավ իր զարգացման բարձր աստիճանին: Ինչպես հայտնի է, դրա հիմքը ոսկին էր, որը կատարում էր փողի բոլոր ֆունկցիաները: Արևմուտքի հիմնական երկրներում 1880-1913թթ. հաստատվեց *ոսկու ստանդարտը*, որի շնորհիվ արժութային համակարգը ստացավ կայուն բնույթ: Արևմտյան երկրներն իրենց արժույթը սահմանում էին՝ որպես ոսկու հաստատագրված չափ, որը հիմնված էր ոսկու բնօրինակի վրա: Ամեն ինչի համար կարելի էր վճարել ոսկով: Տարբերություններ առաջ են գալիս միայն այն դեպքում, երբ երկրներն իրենց մետաղադրամների համար տարբեր միավորներ էին ընտրում: Օրինակ, բրիտանական մետաղադրամները (ֆունտ) հավասար էին 1/4 ունցիա ոսկու (1 ունցիան հավասար է 29.86 գրամ ոսկուն): ԱՄՆ-ում 1/20 ունցիա ոսկին հավասար էր 1 դոլարի: Այս դեպքում բրիտանական ֆունտը, լինելով դոլարից 5 անգամ «ծանր», ուներ 5 դոլարի փոխարժեք: Փոխարժեքները տարբեր արժույթների համար որոշվում էին տարբեր երկրների փողի միավորի պարունակած ոսկու չափով:

Հետպատերազմյան շրջանում՝ հատկապես 70-ական թվականներին համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցան արմատական փոփոխություններ, փոխվեց ուժերի հարաբեակցությունը և ուժեղացավ ոսկեարժութային ռեզերվների բաշխման անհավասարաչափությունը, միջազգային արժութային համակարգը սկսեց գործել առանց միասնական հիմքի՝ ոսկու: Դադարեցվեց գլխավոր արժույթների փոխանակությունը ոսկով և միջազգային հաշվարկներում սկսեցին օգտագործվել արժույթի փոխարժեքի (կուրս) ձևերը (հաստատագրված և լողացող):

Արժույթը (իտալ. Valute - գին, արժեք), կախված իր փոխարկելիությունից (դարձունակություն) կարող է օգտագործվել միայն տվյալ երկրի ներսում, մի շարք երկրներում կամ բոլոր երկրներում: *Արժույթի փոխարկելիությունը* (convertibility of currency, convertibility) (լատ. conversio - դառնալ)՝ մեկ արժույթը կամ որևէ

երկրի ազգային արժույթը այլ երկրների արժույթների կամ ոսկու հետ փոխանակելու հնարավորությունն է կամ աստիճանը: Այդ հնարավորությունը կարող է պայմանավորված լինել ինչպես երկրի արժութային կարգավորմամբ, այնպես էլ նրանով, թե երկիրն ինչպիսի դիրք է գրավում միաջազգային տնտեսության մեջ: Ըստ փոխարկելիության աստիճանի, արժույթները կարող են լինել՝ ազատ փոխարկելի, մասնակի փոխարկելի և ոչ փոխարկելի:

Ազատ փոխարկելի (դարձունակ) արժույթն (free convertible currency) ազատ փոխարկվում է ցանկացած այլ արժույթի և առանց որևէ սահմանափակման օգտագործվում տվյալ երկրի քաղաքացիների ու օտարերկրացիների կողմից, ամենուրեք կիրառվում է վճարումների ժամանակ՝ ընթացիկ շուկայական փոխարժեքով: Ազատ փոխարկելիության դեպքում ենթադրվում է, որ գոյություն չունեն օրենսդրությամբ սահմանված էական սահմանափակումներ, որոնք խոչընդոտում են տվյալ արժույթի փոխարկումն այլ արժույթների, այն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին փոխարկելիություն, կատարում է վճարամիջոցի գործառույթներ ցանկացած երկրում: *Ներքին փոխարկելիությունը* ենթադրում է, որ ստեղծված կամ առկա են այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն են ընձեռում երկրի տարածքում փոխարկել ներքին արժույթը օտարերկրյա արժույթներով: *Արտաքին փոխարկելիության* դեպքում արժույթը հեշտությամբ կարող է փոխարկվել նաև երկրի տարածքից դուրս՝ մեկ կամ մի քանի երկրներում: Դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ արտաքին փոխարկելիություն ունեցող արժույթները չլինեն ներքին փոխարկելի:

Կարելի է փաստել, որ արժույթի ներքին փոխարկելիությունը դրա արտաքին փոխարկելիության անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար պայմանն է: Ազատ փոխարկելի արժույթների փոխանակման ոլորտը տարածվում է ինչպես ընթացիկ հաշվի գործառնությունների (կապված արտաքին առևտրային փոխանակման, արտասահմանյան տուրիզմի, ոչ առևտրային վճարումների հետ), այնպես էլ արտաքին վարկերի և օտարերկրյա ներդրումների շարժի գծով գործառնությունների վրա: Ազատ փոխարկելի համարվում են այն երկրների արժույթները, որոնք լրիվ վերացրել են արտարժութային սահմանափակումները առնվազն ընթացիկ հաշվի գործառնությունների գծով: Այդ արժույթներից են՝ ԱՄՆ դոլարը, EURO- ն, բրիտանական ֆունտը և այլն: Ազատ փոխարկելի արժույթներն երբեմն անվանվում են կոշտ արժույթ: Դրանք ամբողջությամբ փոխարկելի արժույթներն են, որոնք փաստացի օգտագործվում են միջազգային արժութային հաշվարկներում, միջազգային արժութային շուկաների գործառնություններում և կուտակվում են աշխարհի երկրների *արժութային պահուստներում:*

Օրենսդրորեն ամրագրվում է ազգային դրամական միավորի փոխարկելիությունը, այսինքն այն արտարժույթների հետ (և ընդհակառակը) փոխանակելու հնարավորությունը բոլոր ցանկացողների համար, առանց փոխանակման գործընթացին պետության մասնակցության*: Արժույթի միջազգային հիմնադրամը* մտցրել է լրացուցիչ հատուկ հասկացություն՝ «ազատ օգտագործվող արժույթներ» և խրախուսում է *ազատ փոխարկելության* մտցնելը, թեև շատ պետություններ ձգտում են իրենց ձեռքում պահել ազգային արժույթի մասնակցությամբ արտարժույթով գործառնությունների նկատմամբ վերահսկողությունը, հատկապես այն դեպքերում, երբ դիտվում է կոշտ արտարժույթով *արժութային պահուստների* անբավարարություն:

Մասնակի փոխարկելիության (մասնակի դարձունակ) արժույթը փոխանակվում է ոչ բոլոր արժութային գործարքներում: Այն սերտորեն կապված է ներքին և արտաքին փոխարկելիության հետ: Մասնակի փոխարկելի արժույթների համար գոյություն ունեն որոշակի սահմանափակումներ, որոնք որոշակի խոչընդոտներ են ստեղծում այդ արժույթներն այլ արժույթներով փոխարկելու համար: Դրանք կարող են լինել ինչպես տնտեսական բնույթի, այնպես էլ պետության կողմից մտցված սահմանափակումներ: Մասնակի փոխարկելի արժույթներից են ռուսական ռուբլին, բրազիլական ռիալը, լեհական զլոտին և այլն: Այս արժույթները, լինելով ներքին փոխարկելի, միաժամանակ ունեն խիստ սահմանափակ արտաքին փոխարկելիություն: Մասնակի փոխարկելի է նաև հայկական դրամը: Փաստորեն այսօր պետության կողմից դրամի փոխարկելիության և կապիտալի շարժի հետ կապված որևէ նշանակալի սահմանափակումների բացակայության, ինչպես նաև ՀՀ տնտեսության միջազգային որոշակի ինտեգրացման պայմաններում ապահովված են դրա ներքին փոխարկելիության պայմանները: Սակայն այն չունի արտաքին փոխարկելիություն, բացի հարևան Վրաստանից:

Երկրների միջև տնտեսական հարաբերությունների կարգավորման ժամանակ որոշվում է արժույթի փոխարժեքը, որով փոխադարձաբար փոխանակվում է ազգային արժույթը: Հետևաբար, արժույթները փոխանակվում են իրենց փոխարժեքներով: ***Արժույթի փոխարժեքը*** (կուրս) (rate of exchange, exchange rate). մի երկրի արժույթի (դրամական միավորի) գինն է՝ արտահայտված մեկ այլ երկրի արժույթով (սովորաբար 1, 100 կամ 1000 միավորի դիմաց) որոշակի ամսաթվի դրությամբ: Հաճախ կիրառվում է ազգային արժույթի փոխարժեքը՝ հաշվարկված միջազգային արժութային միավորների, օրինակ, էքյու-ի նկատմամբ:

Արժութային փոխարժեքը կամ կուրսը լինում է նշանաբանային և փոխանակային:

Նշանաբանային փոխարժեքը ցույց է տալիս, թե որքան միավոր օտարերկրյա արժույթ կարելի է ստանալ հայրենական 1 միավորի դիմաց, այլ կերպ՝ նշանաբանային կուրսը, դա հայրենական արժույթի գինն է՝ արտահայտված օտարերկրյա միավորներով:

Փոխանակային փոխարժեքը ցույց է տալիս՝ ինչպիսի քանակությամբ հայրենական արժույթի միավոր կարելի է ստանալ, փոխանակելով այն մեկ միավոր օտարերկրյա արժույթով: Դա օտարերկրյա արժույթի գինն է (օրինակ, որքան դրամ է փոխանակվում, ասենք, մեկ դոլարի): Սովորաբար այն ցույց է տալիս, թե ազգային արժույթի քանի միավոր է պահանջվում միավոր արտարժույթ գնելու համար: Օրինակ, եթե 1 ԱՄՆ դոլարը = 580 ՀՀ դրամ, ապա դա նշանակում է, որ արտարժույթի շուկայում ԱՄՆ դոլարը և ՀՀ դրամը փոխանակվում են այդ հարաբերակցությամբ: Արտարժույթի փոխարժեքը ձևավորվում է գլխավորապես արտարժույթի պահանջարկի և առաջարկի հարաբերակցության ազդեցության ներքո կամ սահմանվում է վարչական կարգով և շատ փոփոխուն է:

Տարբերում են լողացող (ճկուն), անվանական, իրական և հաստատագրված փոխարժեք:

Լողացող (կամ ազատ տատանվող, ճկուն) փոխարժեքը փոխանակային կուրսն է արժութային շուկայում, որը ձևավորվում է շուկայական տատանումների հետևանքով՝ արտարժույթի առուծախի ազատ շուկայի պայմաններում, կախված է տվյալ արժույթի առաջարկից և պահանջարկից:

Անվանական փոխարժեքը հաշվարկվում է որպես արժույթների արժեքների հարաբերակցություն:

Իրական փոխարժեքը արտացոլում է արժույթների ապրանքային հարաբերակցությունը, այսինքն՝ տարբեր արժույթներով արտահայտված միևնույն ապրանքների գների հարաբերակցությունը:

Հաստատագրված փոխարժեքը ձևավորվում է պետության կողմից խիստ սահմանված փոխանակման հարաբերակցության տեսքով և շահագրգիռ երկրների համաձայնությամբ պահպանվում է որոշակի մակարդակի վրա: Ազգային արժույթի փոխարժեքի շեղման դեպքում համաձայնությանը մասնակից երկրի կենտրոնական բանկը արժութային շուկայում ինտերվենցիա է անցկացնում: Նա գնում կամ վաճառում է ազգային արժույթն՝ իր դրամական միավորի հաստատագրված մակարդակը վերականգնելու նպատակով:

Սովորաբար յուրաքանչյուր երկրում իրավասու մարմնի կողմից (սովորաբար պետության) սահմանվում է պաշտոնապես սահմանվող ազգային արժույթի փոխարժեքը կամ արտարժույթի *պաշտոնական (հաշվարկային) փոխարժեքը* (official rate of exchange, official exchange rate): Այն հիմնականում սահմանում է երկրի կենտրոնական բանկը: Եթե պաշտոնական փոխարժեքը տարբերվում է շուկայական փոխարժեքից, կենտրոնական բանկը պետք է պատրաստ լինի պահելու իր սահմանած փոխարժեքը՝ բաց շուկայում գնումների և վաճառքների միջոցով: ՀՀ օրենսդրության համաձայն, ՀՀ կենտրոնական բանկը հայտարարում է արտարժույթի ամենօրյա առք ու վաճառքի փոխարժեքները նախորդ օրը ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա, որոնց միջնակետը (միջին մեծությունը) համարվում է հաշվարկային փոխարժեքը: ՀՀ կենտրոնական բանկն առք ու վաճառքի փոխարժեքներն օգտագործում է բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի այլ հաճախորդների հետ գործառնությունների իրականացման ընթացքում: Հաշվարկային փոխարժեքն օգտագործվում է հաշվապահական հաշվառման նպատակներով և հիմք է հանդիսանում ՀՀ գանձապետարանի բանկային սպասարկման համար:

Արտարժույթների փոխարժեքների սահմանումը՝ տվյալ երկրում գործող օրենսդրական նորմերին, կանոններին և ձևավորված պրակտիկային համապատասխան անվանվում է ***արտարժույթների գնանշում*** (currency quotation): Այն կատարում են պետական (ազգային) կամ խոշորագույն առևտրային բանկերը:

Տարբերվում են նաև արտարժույթի առքի (գնորդի) և վաճառքի (վաճառողի) փոխարժեքներ: Առքի փոխարժեքով բանկը ձեռք է բերում արտարժույթ, իսկ վաճառքի փոխարժեքով բանկը վաճառում է արտարժույթ: Միջին փոխարժեքը առքի և վաճառքի փոխարժեքների միջին կշռված թվաբանականն է: Այս երկու փոխարժեքների տարբերությունը արտարժույթի փոխարկում կատարող կազմակերպության համար ձևավորում է *ածիր (հավելում)*՝ խրախուսագումար:

Օգտագործելով մեզ ծանոթ առաջարկի և պահանջարկի կորերը՝ մենք կարող ենք իմանալ, թե շուկաներն ինչպես են արձագանքում արտարժույթի գների փոփոխությանը: Արտարժույթի փոխարժեք է հաստատվում այն գինը, որտեղ առաջարկն ու պահանջարկը հավասարակշռված են (նկար 77):



Նկար 77. Արտարժույթի փոխարժեքի գին

Այսպիսով, արտարժույթի առաջարկի և պահանջարկի հավասարակշռությունը որոշում է արժույթի միջազգային փոխարժեքը: Արժեթղթերի մեծ պահանջարկի դեպքում արժեթղթի փոխարժեքը կարող է հավասարվել առաջարկի գնին, իսկ արժեթղթերի ավելցուկի (մեծ քանակի) դեպքում՝ պահանջարկի գնին:

Արտարժույթի փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոններից են վճարային հաշվեկշռի վիճակը, գնաճի մակարդակը, երկրների միջև կարճաժամկետ կապիտալների տեղաշարժը, ինչպես նաև քաղաքական և ռազմական գործոնները: Դրա փոխարժեքի վրա ազդում են նաև հետևյալ *գործոնները.*

- սպառողների ճաշակների փոփոխությունները
- հարաբերական փոփոխությունները եկամուտներում
- գների հարաբերական փոփոխությունները
- հարաբերական իրական տոկոսադրույքները
- սպեկուլյացիան:

Արտարժույթի փոխարժեքի (տարադրամի կուրսի) փոփոխությունները հանգեցնում են արտահանման կամ ներմուծման վիճակի բարելավմանը կամ վատթարացմանը:

Եթե, *ազգային արժույթի փոխանակային փոխարժեքը իջնում է* (արտարժույթը թանկանում է), ապա մի կողմից դա բերում է ներմուծված ապրանքների թանկացմանը, իսկ մյուս կողմից՝ բարելավում արտահանման վիճակը (այն դառնում է ձեռնտու):

Ենթադրենք, *ազգային արժույթի փոխանակային կուրսը բարձրանում է* (արտարժույթն էժանանում և փոխանակվում է ավելի քիչ հայրենական փողերով): Այս դեպքում ներմուծված ապրանքներն էժանանում են, իսկ արտահանումը թանկանում (ինչը հանգեցնում է նրա քչացմանը):

Այսպիսով, մենք կարող ենք ասել, որ առևտրային և արժութային հարաբերությունների միջև գոյություն ունեն որոշակի փոխկապվածություններ, որոնք արտացոլվում են որակապես տարբեր երկու միտումներում՝

1. առևտրի և վճարային ակտիվ հաշվեկշիռը հնարավորություն է տալիս ապահովել ազգային արժույթի փոխարժեքի բարձրացում

2. պասիվ հաշվեկշիռը հանգեցնում է ազգային արժույթի կուրսի իջեցմանը և լրացվում է բյուջետային դեֆիցիտով:

Որևէ արժույթի արժեզրկումը այլ երկրների արժույթների նկատմամբ (երբ որևէ արժույթի տվյալ քանակով հնարավոր է ձեռք բերել ավելի քիչ քանակի այլ արժույթ, քան դա հնարավոր էր նախկինում) կամ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների ամբողջությունը, որն ուղղված է այլ երկրների արժույթների կամ ոսկու նկատմամբ սեփական արժույթի փոխարժեքի նվազեցմանը՝ *հաստատագրված փոխարժեքի* պարագայում անվանվում է ***արժույթի արժեզրկում*** (devaluation of currency, devaluation): Արժույթի արժեզրկում է տեղի ունենում, երբ իրավասու պետական մարմինը մեծացնում է ազգային արժույթի քանակը ընթացիկ փոխարժեքի պայմաններում այլ արժույթներով փոխանակելու համար: *Կենտրոնական բանկը* կատարում է արժեզրկում այն դեպքերում, երբ ազգային արժույթի փոխարժեքը դառնում է արհեստականորեն բարձր, օրինակ, եթե ակնհայտ է դառնում, որ *գնաճի* բարձր տեմպերի պատճառով երկրի արտահանվող արտադրանքը կորցրել է մրցունակությունը: Արժեզրկումը կարող է նպաստել երկրի *վճարային հաշվեկշռի* պակասորդի կրճատմանը՝ ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի փոքրացման պայմաններում երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի բարձրացման միջոցով: Եթե երկրի արժույթը *լողացող փոխարժեքով է*, ապա արժեզրկումը և արժեքավորումը կատարվում են շուկայում մշտապես և ինքնաբերաբար: Որևէ կոնկրետ արժույթ կարող է արժեքավորվել կամ արժեզրկվել մեկ այլ կամ մի քանի արժույթների նկատմամբ միաժամանակ՝ տարբեր արժույթների նկատմամբ տարբեր չափով: Դա նշանակում է, որ եթե որևէ արժույթ արժեզրկվում է մեկ այլի կամ մի քանիսի նկատմամբ, ապա պարտադիր չէ, որ այն արժեզրկվի բոլոր արժույթների նկատմամբ: Ընդհակառակը, հնարավոր է, որ որևէ աժույթի նկատմամբ արժեզրկումը ուղեկցվի մյուսների նկատմամբ արժեքավորումով: Դա պայմանավորված է նրանով, որ փոխարժեքների դինամիկայի վրա ներգործում են մի շարք, հաճախ տարբեր ուղղություններով ազդող գործոններ: Դրա հակառակ երևույթը արժույթի արժեքավորումն է:

Արժույթի արժեքավորումը (revaluation of currency, revaluation) երկրի դրամական միավորի արժեքի փոփոխությունն է կամ ըստ անվանականի ոսկով թղթադրամների փոխանակման նորացումը: Այն ենթադրում է արժույթի փոխարժեքի բարձրացում շուկայում (երբ որևէ արժույթի տվյալ քանակով հնարավոր է ձեռք բերել ավելի մեծ քանակի այլ արտարժույթ, քան դա հնարավոր էր նախկինում), ինչպես նաև արտարժութային ակտիվների և պահուստների վերագնահատում՝ արտարժույթների փոխարժեքների կամ գների փոփոխություններին համապատասխան: Պետությունը ոչ հազվադեպ արժեփոխում իրականացնում է այն դեպքերում, երբ ազգային արժույթը ենթարկվել է հաճախակի և խոշոր արժեզրկման: Օրինակ, նման գործընթաց իրականացվեց ՌԴ-ում 1998թ., երբ հին 1000 ռուբլին հավասարվեց 1 նոր ռուբլուն: Ազգային արժույթի ոսկով պարունակության մեծացումը կամ այլ երկրների արժույթների նկատմամբ դրա փոխարժեքի բարձրացումը, որը պաշտոնապես իրականացվում է պետության կողմից, պայմանավորված է արտարժույթի պահանջարկի փոքրացմամբ և ազգային արժույթի բարձր փոխարժեքով: Այն գնաճը հաղթահարելուց հետո ներքին դրամաշրջաառության կայունացման մեթոդներից մեկն է: Պետական մարմինների կողմից դա սովորաբար կատարվում է վճարային հաշվեկշռի տևական դրական մնացորդի (ավելցուկի) դեպքում: Արժեքավորման հետևանքը լինում է ներմուծման արժեքի էժանացումը՝ արտահանման միաժամանակյա թանկացման պարագայում: Դրանով իսկ իջնում է ազգային տնտեսության մրցունակությունը: Արժեքավորում է տեղի ունենում նաև այն դեպքերում, երբ պետությունը կրճատում է իր արժույթի ծավալը, որը նա կարողէ առաջարկել այլ արժույթի կամ ոսկու որոշ քանակի հետ փոխանակելու համար:

ՀՀ-ում 1993թ. նոյեմբերին ներդրված ազգային դրամի պաշտոնական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ սահմանվել էր 1դոլարը=14դրամ հարաբերակցությամբ: Սակայն արդեն նույն տարվա վերջում իրական փոխարժեքը կազմում էր 1դոլարը=83 դրամի: Այնուհետև սպառողական գների կտրուկ բարձրացման հետ

զուգընթաց տեղի է ունենում նաև դրամի արժեզրկում առավել կայուն արտարժույթների համեմատությամբ: Միայն 1994 թվականի ընթացքում դոլարի նկատմամբ ազգային դրամը արժեզրկվեց ավելի քան 4 անգամ, կազմելով դեկտեմբերին 405,5 դրամը=1 ԱՄՆ դոլար:

Հետագա տարիներին արտարժույթների համեմատությամբ դրամի արժեզրկման տեմպերը դանդաղում են, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ նույնիսկ բարելավվում: ՀՀ-ում 1997 թվականին իրական փոխարժեքի ստանդարտ շեղումը կազմել էր ընդհամենը 0.98՝ ի տարբերություն 1996թ. 4.52-ի: Սա վկայում էր, որ ՀՀ դրամի անվանական փոխարժեքը տատանվել էր ՀՀ-ի և գործընկեր երկրների հարաբերական գներին համապատասխան: 1997թ. իրական փոխարժեքը նախորդ տարվա համեմատ միջին հաշվով արժեզրկվել էր 10%-ով, իսկ 1999-ին փոխարժեքը արժեզրկվել էր 6%-ով, նախորդ տարվա 7.6-ի համեմատ: 1999 թվականին իրական փոխարժեքի միջին մակարդակը նախորդ տարվա նկատմամբ արժեքավորվել էր 5.2%-ով: Այդ տարվա ընթացքում արժութային շուկայի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլար, որը երկու անգամ ավելի է, քան նախորդ տարվանը (1998թ. համախառն ծավալը կազմել է մոտ 498.2 մլն. ԱՄՆ դոլար):

2001 թվականին ՀՀ ԿԲ արժութային քաղաքականությունը, ինչպես նախորդ տարիներին, ելնում էր լողացող փոխարժեքի քաղաքականության սկզբունքներից: Այդ տարում ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար անվանական փոխարժեքի միջին տարեկան արժեզրկումը կազմել է 2.9%: Նախորդ տարվա վերջի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը 2001թ. վերջի դրությամբ կազմել է 1.7%: Տարեկան կտրվածքով, փաստորեն, վերջին մի քանի տարիների ընթացքում ԿԲ-ն առաջին անգամ հանդես է եկել որպես արտարժույթի գնորդ՝ իրականացնելով 1.4 մլն ԱՄՆ դոլարի չափով զուտ առք: 2002 թ. դեկտեմբերին 1 ԱՄՆ դոլարի, 1 ԵՎՐՈ-ի և 1 ՌԴ ռուբլու միջին փոխարժեքները, ըստ ԿԲ կողմից հաստատված հաշվարկային փոխարժեքի կազմել են համապատասխանաբար 584.59; 594.82 և 18.33 դրամ: Ներկայումս դոլարի և դրամի փոխարժեքը կայունացել և տատանվում է 1դոլարը= 585 դրամի սահմաններում: ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքի դինամիկան նշված տարիների համար հետևյալն է (նկար 78):



Նկար 78. ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան ԱՄՆ դոլարի նկատմամբ

Պետք է նաև նշել, որ վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է դոլարիզացիայի ինտենսիվ միտում: «Դոլարիզացիա» տերմինն ավելի լայն իմաստ ունի, քան «արժույթի փոխարինումը»: Արժույթի փոխարինումը գործարք կատարելու ընթացքում արտարժույթի օգտագործումն է: Մինչդեռ «Դոլարիզացիան» ներառում է նաև ռեզիդենտների արտարժութային խնայողությունների ներդրումները, որպես կանոն, բանկային ավանդների կամ արտարժույթով փոխառությունների տեսքով: Դոլարայնացման ցուցանիշը ՀՀ-ում, համեմատած մնացած անցումային շրջանի երկրների հետ, ամենաբարձրն է: Արտարժութային ավանդները ՀՀ փողի զանգվածում գերակշռում են, կազմելով ավելի քան 50%:

Դոլարով ավանդ ներդնելու կամ այն գործարքների համար օգտագործելու շարժառիթները տարբեր են, որոնցից հիմնականը ազգային արժույթի նկատմամբ անվստահությունը և տոկոսադրույքների տարբերությունն է: Ներքին տոկոսադրույքների աճը նվազեցնում է ազգային արժույթով կանխիկ խնայողությունները, որը, սակայն, չի կարելի ասել արտարժույթի համար: Դոլարային ավանդները բանկի միջոցով կարող են վերածվել վարկերի, որոն անմիջականորեն ազդում է բանկերի կապիտալի վրա, նպաստելով տնտեսական աշխուժացմանը:

7.4. Միջազգային տնտեսական ինտեգրացիան

Միջազգային տնտեսական ինտեգրացիան տարբեր երկրների տնտեսաքաղաքական միավորման գործընթաց է, որի հիմքում ընկած են ազգային տնտեսությունների միջև խորը, կայուն փոխկախվածությունները և փոխներգործությունները, աշխատանքի ու կապիտալի ընդհանուր շուկայի ձևավորումը, մաքսային արգելքների վերացումը, միասնական դրամավարկային քաղաքականությունը: Մակրոմակարդակում այդ գործընթացն ընթանում է հարևան երկրների առանձին ֆիրմաների փոխներգործության միջոցով՝ նրանց միջև տարբեր տնտեսական հարաբերությունների ձևավորման, այդ թվում արտասահմանում մասնաճյուղերի ստեղծման հիման վրա: Միջպետական մակարդակով ինտեգրացիան տեղի է ունենում պետությունների տնտեսական միավորումների ձևավորման և ազգային քաղաքականությունների համաձայնեցման հիման վրա:

Միջֆիրմային կապերի բուռն զարգացումն առաջ է քաշում միջպետական կարգավորման անհրաժեշտություն, որն ուղղված է տվյալ տարածաշրջանում ապրանքների, ծառայությունների, կապիտալների և աշխատուժի ազատ շարժի ապահովմանը, պետական արժութաֆինանսական, գիտատեխնիկական, սոցիալական, արտաքին և պաշտպանական քաղաքականության համաձայնեցմանը և համատեղ իրականացմանը: Արդյունքում ստեղծվում են տարածքային տնտեսական համալիրներ՝ իրենց միասնական արժույթով, ենթակառուցվածքով, ընդհանուր տնտեսական խնդիրներով, ֆինանսական ֆոնդերով, միջազգային կամ միջպետական կառավարման մարմիններով:

Տնտեսական ինտեգրացիայի ամենապարզ ձևն ***ազատ առևտրի գոտին է,*** որի շրջանակներում մասնակից երկրների միջև հանվում են առևտրական սահմանափակումները, նախ և առաջ՝ մաքսատուրքերը: Մյուս ձևը ***մաքսային միությունն է,*** երբ ազատ առևտրային գոտու գործունեության հետ մեկտեղ, սահմանվում են արտաքին առևտրական միասնական տարիֆներ և երրորդ երկրների նկատմամբ իրականացվում միասնական առևտրական քաղաքականություն:

Երկու դեպքում էլ միջպետական հարաբերություններն ընդգրկում են փոխանակման ոլորտը, ապահովելով մասնակից երկրների համար փոխադարձ առևտրի զարգացման և ֆինանսական հաշվարկների գործում հավասար հնարավորություններ: Մաքսային միությունը լրացվում է ***վճարային միությամբ,*** որն ապահովում է տարադրամների փոխադարձ փոխանակելիությունը և միասնական հաշվարկային դրամական միավորի գործունեությունը:

Ինտեգրացման առավել բարդ ձևերից է ***ընդհանուր շուկան,*** որը կազմակերպվեց 1957թ. արևմտաեվրոպական վեց երկրների միջև: Այն կոչված է դրա մասնակիցներին ազատ փոխադարձ առևտրի և արտաքին առևտրի միասնական տարիֆների հետ մեկտեղ, ապահովելու կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, ինչպես նաև տնտեսական քաղաքականության համաձայնեցումը:

Սակայն միջպետական տնտեսական ինտեգրացիայի բարձրագույն ձևը ***տնտեսական և արժութային միությունն է,*** որը համատեղում է վերը նշված բոլոր ձևերը և ապահովում ընդհանուր տնտեսական և արժութաֆինանսական քաղաքականության անցկացումը (օրինակ, Եվրամիությունը):

Արժութային միությունը (currency union) պետությունների խումբ է, որոնք պահպանում են միմյանց արժույթների նկատմամբ հաստատագրված փոխարժեքներ, սակայն թույլ են տալիս, որպեսզի այդ խմբի արժույթներն այլ երկրների արժույթների նկատմամբ ունենան լողացող փոխարժեքներ:

Տնտեսական ինտեգրացիան ապահովում է փոխներգործող կողմերի համար մի շարք նպաստավոր պայմաններ.

- ինտեգրացիոն համագործակցությունը ամբողջ տարածաշրջանի տնտեսավարող սուբյեկտներին (ֆիրմաներին) լայն հնարավերություն է տալիս օգտվել տարբեր տիպի ռեսուրսներից (ֆինանսական, նյութական, աշխատանքային) և նորագույն տեխնոլոգիաներից, ինչպես նաև թողարկել արտադրանք ողջ ինտեգրացիոն խմբավորման տարողունակ շուկայի համար
- ռեգիոնալ շրջանակներում երկրների տնտեսական մերձեցումն արտոնյալ պայմաններ է ստեղծում տնտեսական ինտեգրացիայի մասնակից երկրների ֆիրմաների համար, որոշ չափով դրանց պաշտպանելով երրորդ երկրների ֆիրմաների մրցակցությունից
- ինտեգրացիոն փոխներգործությունը դրա մասնակիցներին թույլ է տալիս համատեղ լուծել առավել սուր սոցիալական հիմնախնդիրներ, մասնավորապես,նպաստել հետամնաց շրջանների առավել արագ զարգացմանը,մեղմացնել աշխատանքի շուկայի լարվածությունը, տրամադրել բնակչության քիչ ապահոված խավերին սոցիալական երաշխիքներ, զարգացնել առողջապահության, աշխատանքի պաշտպանության և սոցիալ ապահովության համակարգերը:

Սակայն ազգային տնտեսությունների փոխներգործությունը տարբեր աստիճանի ինտենսիվությամբ և տարբեր ծավալներով է արտահայտվում առանձին ռեգիոններում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է դիտարկել այն օբյեկտիվ գործոնները, որոնք պայմանավորում են ժամանակակից ինտեգրացիոն գործընթացները: Դրանցից կարևորագույներն են.

- տնտեսական կյանքի գլոբալացում
- աշխատանքի միջազգային բաժանման խորացում
- իր բնույթով համաշխարհային գիտատեխնիկական հեղափոխություն
- ազգային բաց տնտեսությունների զարգացում:

Բոլոր այդ գործոնները փոխպայմանավորված են:

Ինտեգրացիայի տնտեսագիտական տեսության մեջ առանձնանում են մի շարք ուղղություններ, որոնք տարբերվում են նախ և առաջ ինտեգրացիոն մեխանիզմի տարբեր գնահատումներով:

Դրանցից են՝ ***նեոլիբերալիզմը*** (Վ. Ռեպկե, Մ. Ալի), ***կորպորացիոնալիզմը*** (Ս. Ռոլֆ, Յ. Ռոստոու), ***ստրուկտուրալիզմը*** (Գ. Մյուրդալ), ***նեոքեյնսականությունը*** (Ռ. Կուպեր), ***դիրիժիզմը*** (Յ. Տինբերգեն, Ռ. Սանվալդ, Ի. Շտոլեր):

Շեշտելով ինտեգրացիոն գործընթացների օբյեկտիվ բնույթը, բոլոր տեսություններն էլ գտնում են, որ դրանք չեն կարող տեղի ունենալ տարերայնորեն, առանց պետությունների և միջպետական մարմինների միջամտության: Տարածքային ինտեգրացիոն համալիրների ձևավորումն ունի իր պայմանագրաիրավական հիմքը: Երկրների ամբողջ խմբեր փոխադարձ պայմանագրերի հիման վրա միավորվում են տարածքային միջպետական խմբավորումներում և իրականացնում համատեղ ռեգիոնալ քաղաքականություն՝ հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում:

Բազմաթիվ ինտեգրացիոն խմբավորումներից կարելի է առանձնացնել Եվրոպական Միությունը (ԵՄ), Ազատ Առևտրի Եվրոպական Ասոցիացիան (ԱԱԵԱ), Ազատ Առևտրի մասին Հյուսիս Ամերիկյան Համաձայնությունը (ԱԱՄՀԱՀ), Խաղաղ Օվկիանոսյան Տնտեսական Միությունը (ՕՏՄ), Համաշխարհային առևտրական կազմակերպությունը (ՀԱԿ):

Զարգացող երկրների ինտեգրացիոն միավորումները յուրահատուկ բնույթ ունեն, քանի որ նրանց համագործակցությունը հնարավորություն է ընձեռում օգտվել արտադրության մասնագիտացման առավելություններից, իրենց զարգացման համար անհրաժեշտ բնական հարստություններից և այլ տնտեսական ռեսուրսներից: Ինտեգրացիան ամրապնդում է այդ երկրների դիրքերը համաշխարհային շուկայում, պաշտպանում նրանց շահերն ավելի ուժեղ գործընկերների հետ հարաբերություններում: Այդպիսի խմբավորումների ձևերը և տիպերը բազմազան են՝ առևտրական դաշինքներ, համատեղ նախագծերի ստեղծման կազմակերպություններ, արժութային միություններ, ինվեստիցիոն կազմակերպություններ և առևտրական ասոցիացիաներ: Ինտեգրացիոն միավորները գործում են արդյունավետության տարբեր աստիճանով. նրանց դժվարություններն արտացոլում են զարգացող պետությունների ծանր վիճակը ժամանակակից աշխարհում: Տնտեսական հզորությամբ օժտված զարգացած պետությունները, խոշոր մասնավոր կորպորացիաները և միջազգային ֆինանսական կազմակեր-պությունները նրանց նկատմամբ ունեն կոշտ դիրքորոշում:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բաց և փակ տնտեսությունները:
2. Որո՞նք են համաշխարհային տնտեսության ձևավորման գործընթացի փուլերը:
3. Որո՞նք են համաշխարհային տնտեսության համակարգի առանձնահատկությունները XX դարի սկզբին:
4. Որո՞նք են համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից (գլոբալացման) միտումները:
5. Ինչ՞պիսին է արտաքին առևտրի շրջանառությունը, ներմուծման եւ արտահանման հարաբերակցությունը եւ առեւտրային հաշվեկշռի վիճակը որպես յուրաքանչյուր երկրի տնտեսական հզորության կարևորագույն ցուցանիշներ:
6. Ի՞նչպիսին է ազգային տնտեսության մասնակցութաան չափը համաշխարհային շուկայում:
7. Ի՞նչպիսին է համաշխարհային գների կազմավորումը որպես համաշխարհային առեւտրի բնորոշ գիծ:
8. Որո՞նք են արտաքին առևտրի քաղաքականության մեջ երկու հակադիր մոտեցումները:
9. Ի՞նչպիսին է առևտրային հաշվեկշիռը և վճարային հաշվեկշիռը:
10. Ի՞նչպիսին է ՀՀ վճարային հաշվեկշիռը և արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը:
11. Ի՞նչպիսին են ժամանակակից միջազգային արժութային հարաբերությունները:
12. Ինչպե՞ս կարելի է պատկերել արտարժույթի փոխարժեքի գինը:
13. Որո՞նք են արտարժույթի փոխարժեքի վրա ազդող գործոնները:
14. Որո՞նք են առեւտրային և արժութային հարաբերությունների փոխկապվածությունները:
15. Ի՞նչպիսին է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի դինամիկան:
16. Որն է միջազգային տնտեսական ինտեգրացիայի բնորոշումը, բնութագրել դրա ձևերը:
17. Որո՞նք են միջազգային տնտեսական ինտեգրացիայի առավելությունները և դրա վրա ազդող օբյեկտիվ գործոնները:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Գործարարություն-տնտեսագիտություն» Անգլերեն-հայերեն բառարան, Աղաբեկյան Ա., Երևան, ՀԱՀ, 1998, 425 էջ
2. «Ժամանակակից տնտեսագիտական բառարան» Երևան, ՀՊԵՀ, 1997, 118 էջ
3. «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք» Նազարյան Վ. Երևան, 1998, 800 էջ
4. «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» 1997, 125 էջ
5. «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» 1998, 129 էջ
6. «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» 1999, 153 էջ
7. «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» 2000, 131 էջ
8. «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» 2001, 154 էջ
9. «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» 2002, 163 էջ
10. «ՀՀ ԿԲ տեղեկագիր» Հունվար, 2003, 192 էջ
11. «ՀՀ 2003 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիր» ՀՀ ԿԲ 2003, 77 էջ
12. «Մարքեթինգ, մենեջմենթ» Մելիքյան Մ., Եդիգարյան Վ.Մ., Հայրումյան Ծ.Ծ., Երևան, 1993, 134 էջ
13. «Շուկայական էկոնոմիկա» Միքայել Քոթանյան, «Գիտություն» 1998
14. «Տնտեսական բարեփոխումները անցումային շրջանում, տեսությունը և արդյունքները» Երևան,1999
15. «Մարդկային զարգացման զեկույց» Հայաստան, 1997
16. «Շուկայական էկոնոմիկա» Սիմոնյան Ս., Համառոտ բառարան, Երևան, «Հայգիտակ» 1992, 195 էջ
17. «Տնտեսագիտություն» մ.1 և 2, Փ.Ա. Սամյուելսոն, Ու.Դ. Նորդհաուս, Երևան, 1995, 532 էջ
18. «Տնտեսագիտություն„ մասնավոր և հասարակական ընտրություն» Ջեյմս Դ. Գոռքնի, Ռիչարդ Լ. Ստրոուպ, Երևան, ԵրՊԺՏի, «Տնտեսագետ» 1999, 1152էջ
19. «Տնտեսագիտության տեսություն» Մ.Ա. Գևորգյան, Երևան, 1997, 324
20. «Տնտեսագիտության տեսություն» Վ.Շ. Գրիգորյան, Երևան, «Նաիրի»1999, 351էջ
21. «Տնտեսագիտության տեսություն» Քաղաքատնտեսություն, հ.1ս ուս. ձեռնարկ Երևան. 1995թ, 170 էջ
22. «Տնտեսագիտության տեսությունը որպես գիտություն և նրա զարգացման փուլերը» Ներսիսյան Կ.Ե., Երևան, 2000, 45 էջ
23. «Տնտեսագիտություն բոլորի համար» Ռոբերթ Լայլբոուն, Լեսթր Թարոու, Երևան, ՀԱՀ, 1994
24. «Տնտեսագիտության ժամանակակից տեսություններ» Կիրակոսյան Գ., Խլղաթյան Ի., Երևան, «Տնտեսգետ» 1995, 70 էջ
25. «Տնտեսական հոդվածների ժողովածու» Երևան, ՀԳԱ, 1998, 298 էջ
26. «Տնտեսական միտումներ» ամսական թուղարկում, Հայաստան, Tacis, 1998
27. Ֆինանսաբանկային բացատրական բառարան, Ավետիսյան Դ., Երևան, 2002,652 էջ
28. “Англо-русский экономический словарь ,, Жданова И.Ф., Вартумян Э.Л., М., “Русский язык,, 1998, 874с
29. “Введение в экономическую теорию ,, , Л.Л.Любимов, книга I и II, Вита-Пресс, 1999
30. “Введение в банковское дело,, Уч. пособие, Рубин Ю.Б., М., МЭСИ, 1997, 623с
31. “Деловые игры и современный бизнес,, М., Биноон 1997, 139с
32. “Исследование о природе и причинах богатства народов,, Смит А. М., 1962
33. “История экономических учений,, Ядгаров Я. С., М., ИНФРА 1999, 320с
34. “Курс экономической теории,, Под ред. Ченурин М.Н., Киселёва Е.А., Киров “АСА,, 1995, 624с
35. “Микроэкономика,, Г. П. Овчинников, Санкт-Петербург, 1992, 127стр.
36. “Маркетинг в странах с переходной экономикой,, Хачатрян Г. Е. Ереван “Нарек,,1992, 255с
37. “Мировая экономика,, Под редакцей Ломанина В., Анкил М. М., 1995
38. “Мировая экономика на рубиже XXI века,, Сборник обзоров, М., 1994
39. “Международная конкуренция:конкурентные преимущества стран,, Портер М. М.,1995
40. “Международные финансовые рынки,, Новосибирск, “Экор,, 1995
41. “Начала полетической экономики и налогового обложения,, Рикардо Д. том1 М. 1995
42. “Основы экономической теории,, С. И. Иванов, М., книга I и II,Вита-Пресс, 2001
43. “Основы экономической теории,, С. И. Иванов, М., Практикум, Вита-Пресс, 2001
44. “Основы экономической теории,, Е.Ф Борисов, М., Высш. шк. 1999
45. “Основы экономической теории,, К. пособие , М., МГТУ им. Н.Э. Баумана, 1996
46. “Основы экономической теории,,:Курс лекции/ Новосибирск, НГАЭ и У 1997
47. “Основы экономической теории,, Под ред. Камолова В.Д. М., МГТУ им. Н. Э. Баумана 1996 283с.
48. “Основы Рыночной Экономики,, Пособие для вузов, Рузавин Г. И., М. Банки и биржи, ЮНИТИ, 1996, 429с
49. “Основы экономики в вопрсах и ответах,, Магомедов О.Ю. Ростов Н/Д “Феникс,, 1996, 448с
50. “Политэкономия,, для вузов М., Бизнес школа, 1999
51. “Политическая экономика,, Дзарасов С.С., М., Полит. издат., 1988, 432с
52. “Рыночная экономика,, Словарь, Под ред. Клинфмана Г.В., М., Республика, 1995, 495с
53. “Рыночная экономика,, Учебник в 3-ёх томах, Смирнов А. Д., Максимова В. Ф. и др. М., 1992, 400 с.
54. “Словарь по экономике,, Collins H., Жукова А.С., М.,1998, 750с

55. “Твоя экономика,, Райзберг Б. А., М., “Ось- 89,, 1996, 200с
56. “Экономика,, А.С. Булатов, М., ДЕК 1997, 785
57. “Экономика,, Войтов А. Г. ,М:инф. внедр. центр “Маркетинг,,1999
58. “Экономика,, С.Фишер, Р.Дорнбуш, Р.Шалензи, М. 1997, 829стр.
59. “Экономикс,, Кемибелл Р. Макконел, Стэнли Л. Брю (1 и 2 том) М., 1995, 400 стр.
60. “Экономическая теория,, В.И.Видяпина, Г.П.Журавлева, М. 1999, 560стр.
61. “Экономическая теория,, Шишкин А.Ф., Том 1 и 2 Москва, “Владос,, 1996, 655с
62. “Экономическая теория,, Добрынин А.И. Тарасевич Л.С. Санкт-Петербург 1997г
63. “Экономическая теория,, Под рук. Банилева Н., Гурко С., Минск, БГЭУ, 1996
64. “Экономическая теория,, В.Я. Иохин, М. 1997, 512стр.
65. “Экономическая теория,, Каснаев В.Ф. Учебник, М. “Владос,, 1998
66. “Экономическая теория,, :К. для вузов, Санкт-Петербург, СПГУЖ и Ф, 1999
67. “Экономическая теория,, (политэкономия):К. Видяпина В.И. Журавлёв Г. П., М., ИНФРА-М, 1999, 560с
68. “Экономическая теория,, Е.Ф. Борисов, М., Юрист, 1997, 139с
69. “Экономическая теория,, Гукасян Г.М. Бородина Т.С.М., ИНФРА-М, 1999, 150с
70. “Экономическая теория в вопросах и ответах,, К. пособие Белоусов В.М.РостовН/Д“Феликс,, 1998,509с
71. “Экономика переходного периода,, Под ред. Радаева В. М., МГУ, 1995
72. “Эффективность малого бизнеса,, Серёгин А.С., М., Экономика, 1990, 23с
73. “A. Survey of International Trade Teory,, Haberler C., Princetone, 1961
74. “Business Associations,, William A Klein, J. Mark Ramseyer, New York, 1997, 831p
75. “Doing Business in the European Community,, Jhon Drew,England, 1979, 272
76. “Economics of the public sector,, Sara Conolly s Alistair Munro, England,1999, 515p
77. “International Financial Statistics Year book,, Washington, 1996
78. “Journal of Economic issues,, 1999, PP. 305-324
79. “Look, Property Rights and Economics Teory,, Jhon F.Henry, Journal of Economic issues, 1999, PP. 609-624
80. “Microeconomics principles and policy,, William J.Baumol, Alan S. Blinder, USA, Florida, 1998, 559 p.
81. “Problems of economic transformation,, Thomas W. Hall and Jhon E. Elliott, Mark Thomass
82. “Principles of Microeconomics,, N. Gregory, Manbi W., The Andye Press, 1998, 488p
83. “Student Guide and Work book,, Roger T. Kanfman, USA, New York, 2000, 346p
84. “The Effect of Foreign Trade on the Disribution of Income Readings in the teory of international trade ,, Hecksher E.F., Harvard University, 1965

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1. Տնտեսական մտածողության տիպերը 11
Նկար 2. Իրականության ճանաչողության ուղին 11
Նկար 3. Ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները 12
Նկար 4. Արտադրության և հնարավորության սահման 15
Նկար 5. Աղքատ երկրի ԱՀՍ 16
Նկար 6. Զարգացած երկրի ԱՀՍ 16
Նկար 7. Բնափակ տնտեսության հիմնական գծերը....17
Նկար 8. Ապրանքային տնտեսության հիմնական գծերը 17
Նկար 9. Տնտեսական համակարգեր և տնտեսության կազմակերպման մոդելներ 20
Նկար 10. Սեփականության հարաբերությունների միասնական համակարգ....21
Նկար 11. Սեփականության ձևերը 22
Նկար 12. Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (ՀՆԱ= 100, տոկոսներով) 23
Նկար 13. Սերտիֆիկատների մարումը 24
Նկար 14. Սեփականաշնորհման սերտիֆիկատների շուկայական գնի դինամիկան 24
Նկար 15. Սեփականաշնորհման սերտիֆիկատների մարումը 1998 թվականին 25
Նկար 16. Սեփականաշնորհումը ըստ ոլորտների 25
Նկար 17. Մասնավորեցման մեթոդները....26
Նկար 18. Շուկայի գործառույթները 29
Նկար 19. Եկամտի, ռեսուրսների և արդյունքների շրջապտույտ 30
Նկար 20. Շուկայական համակարգ 31
Նկար 21 Ուղիներ դեպի շուկա....33
Նկար 22. Պահանջարկի կոր 34
Նկար 23. Փոփոխությունները պահանջարկում....35
Նկար 24. Շուկայական պահանջարկի կոր՝ որպես անհատական պահանջարկի կորերի գումար 35
Նկար 25. Ամբողջական պահանջարկի կոր 36
Նկար 26. Առաջարկի կոր (S-supply) 36
Նկար 27. Փոփոխություններն առաջարկում 37
Նկար 28. Հավասարակշռված գին....37
Նկար 29. Պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության կետի որոշում 38
Նկար 30. Պահանջարկի առաձգականության և ծախսերի ընդհանուր մեծության վրա գների փոփոխության ազդեցության արդյունքների միջև փոխկապվածությունը....40
Նկար 31. Կատարելապես առաձգական D_2 և կատարելապես ոչ առաձգական D_1 պահանջարկի կորեր 40
Նկար 32 Առաջարկի առաձգականության կոր....40
Նկար 33. Արտադրության ծախքերի ձևերը 46
Նկար 34. Արտադրության ծախքերի տիպերի և շահույթի հարաբերակցությունը (փոխադարձ կապը) 47
Նկար 35. Բիզնեսի համակարգ....48
Նկար 36. Ձեռներեցությյան սուբյեկտներ 49
Նկար 37. Ձեռնարկատիրական գործունեության ոլորտները և գործառույթները 50
Նկար 38. Ձեռներեցության միջավայր....51
Նկար 39. Ձեռներեցության գործոններ 53
Նկար 40. Ֆիրմաների ձևավորման և կառավարման եղանակները 58
Նկար 41. ՀՀ-ում իրական ՀՆԱ-ի դինամիկան (տոկոսներով 1990=100) 70
Նկար 42. Հիմնական ճյուղերի թողարկման դինամիկան 1991-2002թթ. (յուրաքանչյուր 4 տարվա նախորդ տարին ընդունված է 100%)....71
Նկար 43. Համախառն թողարկման կառուցվածքը տոկոսներով ընդհանուրի մեջ 1991-2002թթ.....71
Նկար 44. Ազգային հաշիվների փոխկապված ցուցանիշների համակարգը և որոշումը....73
Նկար 45. Տնտեսական աճն արտադրական հզորությունների սահմանի ընդլայնման դեպքում 74
Նկար 46. Տնտեսական աճ 76
Նկար 47. Գործազրկության մակարդակի դինամիկան (%-ով) (նկարի յուրաքանչյուր կետ համապատասխանում է մեկ դիտարկման արդյունքին)....79
Նկար 48. Աշխատուժի շուկան ՀՀ -ում....80
Նկար 49. Գործազրկության մակարդակի դինամիկան ՀՀ-ում (%.) 81
Նկար 50. Աշխատուժի հոսքեր....81
Նկար 51. Փողի զանգվածի ագրեգատների դինամիկան ՀՀ-ում 1997-2003թթ. (*2003՝ ծրագր.) 84
Նկար 52 . Ֆիլիպսի կորը....86
Նկար 53. Ինֆլյացիան անցման տնտեսությամբ երկրներում....88
Նկար 54. Գնաճի միջին տարեկան տեմպը անցման շրջանի երկրներում (%-ով)....89
Նկար 55. Գնաճի միջին տարեկան տեմպի դինամիկան ՀՀ-ում .%-ով.(*2003՝ ծրագր.)....90
Նկար 56. Սպառողական գների ինդեքսի փոփոխումները....90
Նկար 57. Սպառողական գների փոփոխությունները ՀՀ-ում 1995-2003թթ.%-ով.(*2003՝ ծրագր.)....91
Նկար 58. Տնտեսության պետական ֆինանսավորման ժամանակակից ուղղությունները....94
Նկար 59. Ֆինանսական շուկայի կառուցվածքը....95

Նկար 60. Ընդհանուր եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (ՀՆԱ=100%).....98
Նկար 61. ՀՀ պետական բյուջեյի ընթացիկ եկամուտների կառուցվածքը 2001 և 2002թթ.....99
Նկար 62. ՀՀ պետական ծախսերի կառուցվածքը 2001 և 2002թթ. (մլն.դրամ) 100
Նկար 63. ՀՀ պետբյուջեի եկամուտների, ծախսերի և պակասորդի տեսակարար կշիռը ՀՆԱ նկատմամբ (% - ով) 101
Նկար 64. Լորենցի կոր 102
Նկար 65. Եկամուտների անհավասարությունը (Ջինի գործակիցը) անցման շրջանի երկրներում 103
Նկար 66. ՀՀ պետբյուջեի հարկատեսակների տեսակարար կշիռը հարկային եկամուտների կառուցվածքում 2002թ. 104
Նկար 67. Լաֆերի կոր 105
Նկար 68. Փոխատվական կապիտալի աղբյուրները 110
Նկար 69. Վարկի ձևերը.....110
Նկար 70. Բանկերի տեսակները 113
Նկար 71. Համաշխարհային տնտեսության համակարգի առանձնահատկությունները XX դարի սկզբին121
Նկար 72. Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումները.....122
Նկար 73. ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտաքին առևտրի ապրանքաշրջանառության մեջ..125
Նկար 74. ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ հիմնական գործընկեր երկրների, 2002 թ. 126
Նկար 75. ՀՀ արտահանումը, ներմուծումը և առևտրի հաշվեկշռը 1994-2002թթ. (մլն.դոլար) 126
Նկար 76. ՀՀ արտահանման և ներմուծման ծավալը և կառուցվածքն ըստ առանձին ապրանքային խմբերի, 2002թ. 127
Նկար 77. Արտարժույթի փոխարժեքի գին 130
Նկար 78. ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան ԱՄՆ դոլարի նկատմամբ 132

ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ա

Ազատ առևտուր, 210
Ազատ փոխարկելի (դարձունակ) արժույթ, 219
Ազգային եկամուտ, 120
Ազգային հաշիվների ստանդարտային համակարգ, 119
Ակտիվային գործառնություններ, 197
Ակտիվներ, 101
Ակրեդիտիվ, 198
Ակցիայի կուրս, 103
Անվանական, 103
Ապագնած, 144
Ապապետականացում, 33
Առաձգականություն, 60
Առաջարկի առանձգականությունը, 62
Առաջարկի կոր (supply curve), 57
Առաջնային, 162

Առևտրային բանկ, 191
Առևտրի հաշվեկշռում, 211
Առտրային (կոմերցիոն, ապրանքային) վարկ, 185
Արդյունավետություն, 22
Արժեթուղթ, 102
Արժեթղթերի շուկա, 162
Արժութային համակարգ, 217
Արժութային միություն, 226
Արժութային պահուստներ, 217, 219
Արժութային քաղաքականություն, 217
Արժույթ, 218
Արժույթի արժեքավորում, 223
Արժույթի արժեզրկում, 224
Արժույթի Միջազգային Հիմնադրամ (ԱՄՀ-ի), 137, 219,138
Արժույթի փոխարժեք (կուրս), 220
Արժույթի փոխարկելիություն, 218
Արտադրական ռեսուրսներ, 21
Արտադրության ծախքեր, 72
Արտարժութային միջամտություններ, 217
Արտարժութային սահմանափակումներ, 217
Արտարժույթի շուկա, 161
Արտարժույթների գնանշում, 221
Արտոնյալ, 103
Արտոնյալ բաժնետոմսեր, 103

Բ

Բանկային ավանդի պայմանագիր, 197
Բանկային երաշխիք, 185, 199
Բանկային վարկ, 185
Բանկերի բանկ, 194
Բանկեր, 189
Բաժնետերերի, 100
Բաժնետերերի ռեեստրում, 102
Բաժնետիրական, 100

Բաժնետիրական ընկերություն (ԲԸ), 100
Բաժնետոմսերի կուրսերի (գների) ինդեքս, 105
Բաժնետոմսերի հսկիչ փաթեթ, 104

Ձ

Ձարգացման Եվրոպական հիմնադրամ (ՁԵՀ), 188, 192
Ձուտ ազգային արդյունք, 119

Է

Բաժնետոմս, 100, 102

Բաց բաժնետիրական ընկերություն, 101
Բաց շուկայական գործառնություններ, 178
Բարիքներ, 20
Բիզնես, 45
Բյուջեների պակասորդ, 165
Բրոքեր, 163

Գ

Գանձապետական մուրհակները, 160
Գին, 63
Գնանկում, 67, 144
Գնաճ. 67,115
Գնաճը կամ ինֆլյացիան, 142
Գնաճի մակարդակ, 145
Գնաճի տոկոսից կամ տեմպից, 146

Գնանշում 162
Գների ինդեքս, 66,67
Գների մակարդակ, 66
Գնողականության, 144
Գործազրկություն, 129
Գործառնական եկամուտ, 163
Գրավ, 186

Դ

Դեզինֆլյացիա (desinflation), 144
Դեֆլյատոր, 115
Դեֆլյացիոն, 144
Դիլեր, 163
Դիլերային գործունեություն, 163
Դիվիդենտ, 102
Դրամ, 136
Դրամազրկում, 137
Դրամական ագրեգատներ, 138
Դրամական բազա, 140
Դրամական բազմապատկիչը, 181
Դրամական զանգված, 138
Դրամական միավոր, 181
Դրամական միջոցներ, 159
Դրամական շուկա, 160
Դրամական շուկայի գործիքներ, 160
Դրամաշրջանառության արագություն, 141
Դրամաշրջանառության օրենք, 141
Դրամաշրջանառություն, 140
Դրամավարկային համակարգ, 183
Դրամավարկային քաղաքականություն, 177

Ե

Եկամուտներ, 72, 202
Երկարաժամկետ վարկային գործիքներ, պարտատոմսեր, 160
երկրորդային շուկա, 162, 163
ԵՎՐՈ, 224
Եվրոպական Ներդրումային Բանկը (ԵՆԲ), 188,192

Ճ

Ճանապարհային չեկ, 139

Մ

էժան, 180
էմիսիոն բանկ, 194

Ը
Ընդհանուր ծախքեր, 72
Ընթացիկ հաշիվ, 196, 212
Ընթացիկ հաշվեկշիռ, 212

Ժ
Ժամկետային ավանդներ, 196

Ի
Ինկասո, 198
Ինկասո գործառնություն, 198
Իննովացիոն(նորարական) բանկեր, 192
Իրական փոխարժեք, 224
Իրացվելիություն, 160

Լ
Լողացող փոխարժեք, 220, 223

Օ
Օախքեր, 72

Կ
Կանխիկ դրամ, 139
Կանոնադրական կապիտալ, 100, 102
Կապիտալի հաշիվ, 160, 211
Կապիտալի շուկա, 160
Կարճաժամկետ այլ պարտավորություններ, 160
Կարճաժամկետ արժեթղթեր, 160
Կենտրոնական բանկ, 190, 223
Կոոպերատիվ, 96

Հ
Համախառն ազգային արդյունք, 114
Համախառն ազգային արդյունքի դեֆլյատոր,115
Համախառն դրամական զանգված, 137
Համախառն ներքին արդյունք, 114, 116
Համաշխարհային բանկ (ՀԲ), 188
Հաշվառման շուկա, 160
Հաստատագրված փոխարժեք, 220, 223
Հավատարմագրային կամ տրաստային գործառնություններ, 200
Հարկ, 169
Հարկային համակարգ, 170
Հարկային քաղաքականություն, 170
Հիպոտեկային վարկ, 186

Ձ
Ձեռնարկություն, 92

Ձեռներեցություն, 75

Սեփականություն, 31
Սղաճ, 142
Սպառողական վարկ, 186
Սովորական, 103

Վ
Վարկային համակարգ , 184
Վարկային հսկողություն, 179
Վարկային շուկա, 164

Մակրոտնտեսական վերլուծություն, 11
Մասնագիտացված բանկեր, 191
Մարքեթինգ, 50
Մենաշնորհ, 68
Մենավաճառ, 69
Միջազգային հաշվարկ, 199, 217
Միջազգային վարկ, 187
Միջազգային տնտեսական ինտեգրացիա, 225
Միջբանկային շուկա, 161
Միջնորդ, 161
Միջնորդավճար, 163
Միջնորդավորված գործարք, 162
Միջպետական (միջազգային) բանկեր, 192
Միջտնտեսական դրամական վարկ, 186
Մոնետարիզմ, 10, 179, 143
Մրցակցություն, 67
Մուրհակ, 185

Ն
Ներդրումային բանկ (ՆԲ), 192
Ներկայացնող, 103

Շ
Շահառու, 198, 200
Շահութաբաժնային եկամուտներ, 102
Շահութաբաժին 102
Շահութաբերություն, 64
Շահույթ, 42, 64, 73, 79
Շուկա, 42

Չ
Չապահովված (բլանկային), 197
Չբաշխված շահույթ, 120, 192

Պ
Պահանջարկ, 53
Պահանջարկի առանձգականություն, 60
Պահանջարկի կոր, 54
Պահանջմունք, 20
Պաշտոնական (հաշվարկային) փոխարժեք, 221
Պասիվային գործառնություններ, 196
Պասիվ, 101
Պարտադիր պահուստներ 178

Պետական արտաքին պարտք, 169
Պետական վարկ, 187
Պետբյուջե, 164

Ս
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, 98

Փ
Փակ բաժնետիրական ընկերություն, 101
Փաստաթղթային, 198, 199
Փոխանցումային գործառնություններ, 199
Փոխատվական կապիտալ, 184
Փոխարժեք, 103
Փող, 136, 180
Փոստային փոխանցում, 199
Փոփոխուն ծախքեր, 72

Վարկ, 184
Վճարային հաշվեկշիռ, 211

Տ
Տարածաշրջանային, 192
Տնային տնտեսություն, 45
Տնտեսական համակարգ, 29
Տոկոսադրույք, 178
Տոկոսադրույքի քաղաքականություն, 178
Տոկոսի, շահույթի, շահութաբաժնի, 116
Տրանսֆերտային վճարներ, 114
Տրանսֆերտային վճարումներ, 120
Տրաստային ընկերություն, 200
Տրաստային համաձայնագիր, 200

Ց
Ցպահանջ ավանդ, 196
Ցպահանջ վճարագրային (չեկային) ավանդներ, 139

Ու
Ունիվերսալ բանկ, 191
Ունցիա, 218

Օ
Օնկոլային, 197

Ֆ
Ֆինանսական գործիք, 160, 184
Ֆինանսական լիզինգ, 200
Ֆինանսական համակարգ, 156
Ֆինանսական հարաբերությունները, 157
Ֆինանսական միջնորդներ, 194
Ֆինանսական շուկա, 159, 160
Ֆինանսական շուկայի ինդեքսներ, 105
Ֆինանսական քաղաքականություն, 158
Ֆինանսներ, 156
Ֆիսկալ քաղաքականություն, 158
Ֆիրմա, 87
Ֆոնդային բորսա, 162
Ֆոնդային բորսաների միջնորդներ, 197
Ֆոնդային միջնորդ, 163, 193

Թամարա Տոնոյան

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Խմբագիր՝ Լարիսա Նադարյան

Համակարգչային ձևավորում՝ Յուլյա Ստակյան, Աննա Գևորգյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

© Copyright Ֆինանսաբանկային քոլեջ